

Դիմակայելու նպատակով

Գրքի արժանիքները

Այս մատչելի ձեռնարկն ուղեցույց է այն հասարակական կազմակերպությունների աշխատակիցների և նրանց գործընկերների համար, ովքեր հետաքրքրված են աղետների և կլիմայի փոփոխության հետ կապված հարցերով: Ձեռնարկում ներկայացված են ոչ միայն աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության տաս ընդհանուր սկզբունքները, այլև անդրադարձ է կատարված բնակչության խոցելի խմբերի, այդ թվում նաև երեխաների կարիքներին՝ նպատակ ունենալով վերջիններիս ընդգրկել աղետներին և կլիմայի փոփոխությանը դիմակայելու գործընթացներում:

Դոկտոր Նիք Դոլ

ԱՌՆ և ԿՓՅ ղեկավար, Save the Children

Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի խոցելի համայնքների համար, որոնք արդեն իսկ ենթարկվել են աղետների և կլիմայի փոփոխության լուրջ ազդեցության, այս ձեռնարկը հրաշալի ուղեցույց է: Այն կարևորում է ոչ միայն աղետների դիմակայմանը նախապատրաստվելու և կլիմայի փոփոխությանը հարմարվելու նպատակով տեղերում բնակչության ներգրավման ապահովումը առկա կարողությունների զարգացման գործընթացում, այլև գործնական ցուցումներ է առաջարկում բարձր ռիսկային խմբերը բացահայտելու (ներառյալ երեխաներ, երիտասարդներ, կանայք, ծերեր, հաշմանդամներ) և վերջիններիս հետ արդյունավետ աշխատանք տանելու ուղղությամբ:

Շնորհավորում եմ հրաշալի ուղեցույց ստեղծելու կապակցությամբ:

Մարիա Թիմոն

Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի իրազեկման հարցերով պատասխանատու, «Pacific Calling Partnership» գործընկերություն, Edmund Rice Centre

Այն դեպքում, երբ աշխարհում շատերի համար դժվարություններ հաղթահարելը կապված է անասելի բարդությունների հետ, քաղաքացիական և միջազգային հասարակական կազմակերպությունները, կիրառելով այս բավականին լավ մշակված ուղեցույցը, հնարավորություն կունենան ցուցաբերել լիովին համակարգված մոտեցում աղետների ռիսկի նվազեցման, կլիմայի փոփոխության հարմարվողականության և կենսապահովման բարելավման գործընթացներին: Եվս մեկ անգամ Արտակարգ իրավիճակներում կարողությունների զարգացման ծրագիրը (ECB) փայլուն աշխատանք կատարեց:

Դոկտոր Բեն Վիսներ

Աոն Բենֆիլդի Վտանգների հետազոտության կենտրոն, Լոնդոնի համալսարանական քոլեջ

Դիմակայելու նպատակով

Աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի
փոփոխության հարմարվողականության
ուղեցույց

Մարիլիզ Թորնբուկ, Շառլոթ L. Ստերեթ
Էմի Զիլբոու

Practical Action Publishing LTD The Schumacher Centre
Bourton on Dunsmore, Rugby, Warwickshire CV23 9QZ, GB
www.practicalactionpublishing.org
Catholic Relief Services, United States Conference of Catholic Bishops 2013

ISBN 978-1-85339-786-8 Paperback
ISBN 978-1-78044-786-5 Ebook
ISBN 978-1-78044-002-6 Library Ebook

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Սույն հրատարակման որևէ հատված չի կարող վերատպվել, վերարտադրվել կամ օգտագործվել առկա կամ հետագայում ստեղծվող որևէ այլ եղանակով, էլեկտրոնային, մեխանիկական կամ այլ միջոցներով, ներառյալ ֆոտոպատճենահանումը կամ գրանցումը տեղեկատվական որևէ շտեմարանում կամ համակարգում՝ առանց հրատարակիչների գրավոր համաձայնության:

Գրքի կատալոգային արձանագրությունը պահպանվում է Բրիտանական գրադարանում: Գրքի հեղինակների իրավունքները պաշտպանված են Զեդինակային և արտոնագրային իրավունքների պաշտպանության օրենքի համաձայն (1988թ.)

Practical Action Publishing ընկերությունը
(պաշտոնապես՝ Intermediate Technology
Publications and ITDG Publishing) գրքեր և տեղեկատվական նյութեր է
հրատարակում

1974 թվականից, դրանք տարածելով ամբողջ աշխարհում՝ զարգացման
միջազգային գործընթացներին օժանդակելու նպատակով:

Practical Action Publishing անվանումը
Practical Action Publishing LTD-ի առևտրային անվանումն է (Գրանցման թիվը՝
1159018), որի մենաշնորհային իրավունքը պատկանում է Practical Action
հրատարակչական ընկերությանը: Practical Action Publishing ընկերությունը
իրականացնում է միայն բարեգործական նախաձեռնություններին օժանդակող
առևտրային գործունեություն և ցանկացած շահույթ վերադարձվում է
Practical Action ընկերությանը
(Գրանցման թիվը՝ 247257, Group VAT Registration No. 880 9924 76):

Կազմի լուսանկարը՝ Էրվին Գրեյի/Mercy Corps
Դիզայնը՝ Սոլվեյգ Մարինա Բանգի
Ինդեքսավորումը՝ Լիզ Ֆոսերի
Հավաքումը՝ Wildfire Press Limited հրատարակչություն
Տպագրումը՝ Hobbs the Printer, GB

Թարգմանությունը՝ Գայանե Պետրոսյանի
խմբագրումը՝ Հասմիկ Սարգսյանի
Հավաքումը՝ Լուսինե Սարգսյանի
Տպագրումը՝ «ԷԴԳՐ ՓԱՐԹՆԵՐՍ» ՍՊԸ տպագրատուն

Բովանդակություն

Ներածություն	vi
Ուղեցույցի նպատակը	vi
Ուղեցույցի բովանդակությունը և կառուցվածքը	vi
Ինչպես է ստեղծվել ուղեցույցը	viii
1. Աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության ըմբռումը	1
1.1 Աղետների և կլիմայի փոփոխության ռիսկի հայեցակարգեր	1
1.2 Աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման ձևավորում	9
1.3 Աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման սկզբունքները	15
2. Աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության հիմնական խմբերը	25
2.1 Երեխաներ	25
2.2 Կանայք և տղամարդիկ	31
2.3 Բարձր ռիսկային խմբեր	36
2.4 Հիմնական խմբերի մասնակցության և գործողությունների ստուգաթերթիկ	46
3. Ծրագրի փուլային կառավարում աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության նպատակով	47
3.1 Ծրագրի փուլային կառավարման ընդհանուր բնութագիրը	47
3.2 Վերլուծություն	50
3.3 Ծրագրի մշակում	56
3.4 Իրականացում	65
4. Աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության հիմնական ոլորտները	73
4.1 Սննդի անվտանգություն	73
4.2 Կենսապահովում	87
4.3 Բնական ռեսուրսների կառավարում	100
4.4 Ջրամատակարարում, ջրահեռացում և հիգիենա (WASH)	115
4.5 Կրթություն	124
4.6 Առողջապահություն	133
4.7 Շահերի պաշտպանություն	143
5. Աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության հիմնական համատեքստերը	152
5.1 Հակամարտություններ	153
5.2 Արագ վերականգնում մարդասիրական ճգնաժամերից	162
5.3 Զաղաքային համատեքստեր	172
5.4 Դանդաղ վրա հասնող աղետներ	183
6. Բարենպաստ միջավայրի ստեղծում աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համար	198
6.1 Կառավարում	199
6.2 Շահերի պաշտպանություն	209
6.3 Շահերի պաշտպանության ցանցեր	217
Հավելվածներ	218
Գործիքներ և ռեսուրսներ	218
Տերմինների բառարան	244
Բառարանի հղումներ	260
Հապավումներ և կրճատումներ	262
Ծանոթագրություն	272

Բառարանում ընդգրկված տերմինները նշված են «G» ցուցիչով:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ուղեցույցի նպատակը

«Դիմակայելու նպատակով» ձեռնարկն աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության ուղեցույց է զարգացման և մարդասիրական կազմակերպությունների աշխատակիցների համար, ովքեր աշխատում են այն մարդկանց հետ, ում կյանքն ու իրավունքները վտանգի են ենթարկվում աղետների և կլիմայի փոփոխության հետևանքով:

Ուղեցույցը ներառում է անհրաժեշտ ներածական տեղեկատվություն, արդյունավետ փորձի սկզբունքներ, տարբեր ոլորտներում իրականացվող գործողությունների վերաբերյալ ցուցումներ, դեպքերի ուսումնասիրություններ, ինչպես նաև օգտակար գործիքների և ռեսուրսների հղումներ՝ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության նպատակով համալիր և իրավունքների պաշտպանության վրա հիմնված մոտեցում կիրառելու համար:

Ուղեցույցը նախատեսված է նաև այլ շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ տեղական, շրջանային և ազգային պետական մարմինների, ՄԱԿ-ի, դոնոր կազմակերպությունների, ինչպես նաև հասարակական և բնական գիտություններով զբաղվող գիտնականների համար:

«Դիմակայելու նպատակով» ուղեցույցը նախատեսված չէ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության նպատակով առանձին կազմակերպությունների կողմից մշակված քաղաքականությունների կամ ուղեցույցների փոխարինման համար: Այն, ավելի շուտ, կոչված է նպաստելու ընդհանուր նպատակ հետապնդող տարբեր դերակատարների միջև միմյանց լրացնող փորձի փոխանակման ու աշխատանքների համակարգման գործընթացին:

Ուղեցույցի բովանդակությունը և կառուցվածքը

Գլուխ 1. Պարզաբանվում է աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականությանն գործընթացների առաջացումն ու զարգացումը և դրանց դիմակայելու նպատակով համալիր մոտեցման ցուցաբերման հիմնավորումը, ինչպես նաև ներկայացվում են արդյունավետ պլանավորման և շահերի պաշտպանության այն 10 սկզբունքները, որոնք հիմնված են լայնածավալ ուսումնասիրությունների և փորձի վրա:

Գլուխ 2. Նկարագրվում է աղետների և կլիմայի փոփոխության

ազդեցությունը երեխաների, կանանց, տղամարդկանց, ինչպես նաև բարձր ռիսկային խմբերում գտնվող անձանց վրա, ինչպիսիք են հաշմանդամները, քրոնիկ հիվանդություններով տառապողները, ծեղերը և բնիկ ազգաբնակչությունը: Այստեղ ներկայացվում է նաև ստուգաթերթիկ, որի նպատակն է խթանել ռիսկերի վերլուծության և դիմակայունության ամրապնդմանն ուղղված գործողություններում հիմնական խմբերի մասնակցությունը:

Գլուխ 3. Անդրադարձ է կատարվում աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերը նվազեցնելու նպատակով ծրագրի տարբեր փուլերի կառավարման հարցերին: Ներառում է այն հիմնական խնդիրները և քայլերը, որոնք պետք է նախաձեռնվեն ծրագրի յուրաքանչյուր փուլում և ընդհանուր ցուցումներ է պարունակում գիտելիքների ստեղծման և արդյունավետ կառավարման համար:

Գլուխ 4. Լուսաբանվում է աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցների համախմբման անհրաժեշտությունը զարգացման և մարդասիրական օգնության այն հիմնական ոլորտներում, ինչպիսիք են սննդի անվտանգությունը, կենսապահովումը, բնական ռեսուրսների կառավարումը, ջրամատակարարումը, ջրահեռացումն ու հիգիենան, կրթությունը, առողջապահությունն ու պաշտպանությունը: Տրվում են նաև ծրագրերի արդյունավետ պլանավորման և պաշտպանության սկզբունքները կիրառելու հանձնարարականներ՝ յուրաքանչյուր ոլորտում համապատասխան դիմակայում ապահովելու համար:

Գլուխ 5. Ներկայացվում է աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերի նվազեցմանն ուղղված համակարգված միջոցառումների կարևորությունը զարգացման և մարդասիրական օգնության այնպիսի չորս հիմնական համատեքստերում՝ իրականացվող գործողություններում, ինչպիսիք են հակամարտությունների կարգավորումը, արագ վերականգնումը, քաղաքային բնակավայրերի բնապահպանությունը և դանդաղ զարգացող աղետները:

Գլուխ 6. Լուսաբանվում է դիմակայունության զարգացման նպատակով բարենպաստ միջավայր ստեղծելու համար անհրաժեշտ կառավարման և պաշտպանության կարևորությունը: Հանձնարարականներ է տրվում, թե ինչպես կիրառել համապատասխան սկզբունքները սերտորեն փոխկապակցված աշխատանքներում՝ արդյունավետ գործունեություն ծավալելու նպատակով: Յուրաքանչյուր գլխում ներկայացվում է պրակտիկ գործունեությամբ զբաղվող աշխատակիցների փորձից դեպքերի ուսումնասիրություններ, իրականացված ծրագրերի, լավագույն

փորձի և քաղած դասերի վերաբերյալ օրինակներ:

Գործիքների և ռեսուրսների բաժնում ցուցումներ է տրվում պրակտիկ գործունեությամբ զբաղվող աշխատակիցներին, ինչպես օգտագործել համապատասխան նյութերն իրենց հատուկ կարիքների համար:

«Դիմակայելու նպատակով» աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության ուղեցույցը առկա է ձեռնարկի տեսքով և հասանելի՝ www.ecbproject.org կայքում:

Ինչպես է ստեղծվել ուղեցույցը

Աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համար մշակված «Դիմակայելու նպատակով» ուղեցույցը աղետների և կլիմայի փոփոխության ազդեցության վտանգին ենթակա բնակչության հետ աշխատող Արտակարգ իրավիճակներում կարողությունների զարգացման ծրագրում (ECB) ընդգրկված կազմակերպությունների երեք տարվա համագործակցության և փորձի փոխանակման արդյունք է:

Տարբեր կազմակերպությունների աշխատանքային խմբերը հստակորեն սահմանել են, որ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համար անհրաժեշտ է միավորել պլանավորման և շահերի պաշտպանության սկզբունքները: ECB ծրագրի կազմակերպություններն ունեն խորհրդատվության և փորձի փոխանակման ոլորտի 160 աշխատակից, ովքեր ընդգրկված են 12 երկրի զարգացման և մարդասիրական օգնության ծրագրերում:

Միաժամանակ հավաքվել և վերլուծության են ենթարկվել աղետների ռիսկի նվազեցման, կլիմայի փոփոխության հարմարվողականության և դիմակայման ոլորտում գործունեություն ծավալող այլ համապատասխան դերակատարների, դոնորների, դաշինքների, այդ թվում՝ Միավորված ազգերի աղետների նվազեցման միջազգային ռազմավարության (UNIS-DR), Կլիմայի փոփոխության միջկառավարական հանձնաժողովի (IPCC), Միացյալ Թագավորության միջազգային զարգացման դեպարտամենտի (DFID) և Եվրամիության մարդասիրական օգնության և քաղաքացիական պաշտպանության գլխավոր տնօրինության (ECHO) կողմից կատարված ուսումնասիրությունները, որոնք օգտագործվել են սույն ուղեցույցի մշակման համար:

«Դիմակայելու նպատակով» աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության ուղեցույցը լույս է տեսել 2012թ.՝ Աղետների ռիսկի նվազեցման միջազգային օրը:

ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱՁԵՑՄԱՆ ԵՎ ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՄՔՈՆՈՒՄԸ

Գլուխ 1. Նախատեսված է օժանդակել զարգացման և մարդասիրական ոլորտի պրակտիկ գործունեության մեջ ընդգրկված աշխատակիցներին՝ ըմբռնելու աղետների ռիսկի նվազեցման⁶ և կլիմայի փոփոխության հարմարվողականության⁶ ապահովման հիմնական հայեցակարգերը, ինչպես նաև համալիր մոտեցման առավելություններն ու առանցքային տարրերը՝ աղետների և կլիմայի փոփոխության հետ կապված ռիսկերին դիմակայելու⁶ նպատակով: Այս գլուխը ներառում է.

- *Բացատրություններ.*
 - Աղետների և կլիմայի փոփոխության հետևանքով առաջացած խնդիրները,
 - Աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության գործընթացի զարգացումը որպես հայեցակարգ և նրա կիրառումը պրակտիկայում,
 - Աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման տրամաբանական հիմնավորումը:
- Աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման *10 սկզբունքները:*
- Հաճախ տրվող հարցերի *պատասխաններ:*

1.1 Աղետների և կլիմայի փոփոխության ռիսկի հայեցակարգեր

Աղետների ռիսկը

Չարգացման և մարդասիրական ոլորտի պրակտիկ գործունեության մեջ ընդգրկված աշխատակիցներն ունեն մեկ ընդհանուր նպատակ, այն է՝ մարդու իրավունքներից օգտվելու հնարավորության ընձեռում կանանց, տղամարդկանց և երեխաներին, և այդ իրավունքների շարունակական պաշտպանություն⁶: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է զարգացման

ռազմավարությունների և մարդասիրական օգնության գործողությունների միավորում՝ այդ նպատակին խոչընդոտող բոլոր ռիսկերը նվազեցնելու համար:

Սակայն աղետների⁶ ազդեցությունը շարունակում է մնալ այդ նպատակին հասնելու հիմնական խոչընդոտը: Տարեկան կտրվածքով 2001 թվականից մինչև 2010թ. միայն գրանցված աղետներից տուժել է 232 մլն. մարդ, զոհվել է 106 մլն և հասցվել է 108 մլրդ ԱՄՆ դոլարի տնտեսական վնաս: Ի լրումն վերոհիշյալի, բազմաթիվ փոքրածավալ չգրանցված աղետներ ընդհանուր բացասական ազդեցություն են գործել մարդկանց առողջության, կյանքի և կենսապահովման⁶ վրա:

Այժմ համընդհանուր ճանաչում է ստացել այն միտքը, որ աղետները զարգացման գործընթացին խոչընդոտող անխուսափելի երևույթներ չեն, որոնց կարելի է դիմակայել միայն արտակարգ իրավիճակներում օգնություն ցուցաբերելու միջոցով, այլ զարգացման գործընթացում չկառավարվող ռիսկերի⁶ արդյունք են: Այդ ռիսկերն առաջանում են այնպիսի վտանգների⁶ ժամանակ, ինչպիսիք են ջրհեղեղը կամ երկրաշարժը, երբ մարդիկ, գույքը և այլ համակարգեր վտանգի են ենթարկվում և դառնում խոցելի դրանց ազդեցությունից:

Իր հերթին, աղետների ռիսկը կարելի է զգալիորեն կրճատել այնպիսի ռազմավարությունների միջոցով, որոնք կոչված են նվազեցնել խոցելիության⁶ և վտանգների ազդեցությանը ենթարկվելու⁶ աստիճանը՝ աղքատության և անհավասարության խնդիրներին ուղղված մեծ ջանքերի շնորհիվ: Մարդասիրական օգնությունն աղետների և այլ ճգնաժամերի պայմաններում կարելի է կազմակերպել և իրականացնել այնպես, որ հնարավոր լինի պաշտպանել տուժած մարդկանց կյանքի և այլ հիմնական իրավունքները՝ կարճատև և երկարաժամկետ հեռանկարում: Այս մոտեցումը հայտնի է որպես աղետների ռիսկի նվազեցում:

1.1 Աղետների և աղետի ռիսկի սահմանումները

Աղետները⁶ մարդասիրական գործունեության և զարգացման ոլորտում բնութագրվում են որպես իրավիճակներ, որոնք զգալիորեն խաթարում են համայնքի կամ հասարակության կենսագործունեությունը, և որոնց ազդեցությունը մարդիկ չեն կարող հաղթահարել սեփական ուժերով, առանց համայնքին կամ հասարակությանը դրսից տրամադրվող օգնության: Աղետները սովորաբար ուղեկցվում են կյանքի, ենթակառուցվածքների և այլ միջոցների կորստով, ինչպես նաև մարդկանց բարեկեցության, անվտանգության, առողջության և կենսապահովման միջոցների վրա ունեցած ազդեցությամբ: Աղետի հետևանքով առաջացած որոշ ազդեցություններ անմիջական բնույթ են կրում, այն դեպքում, երբ այլ ազդեցություններ կարող են սրանալ՝ ելնելով մարդկանց կողմից իրավիճակին արձագանքելու եղանակից և այն հաղթահարելու փորձից:

Աղետի ռիսկը⁶ կյանքի, առողջական վիճակի, կենսապահովման միջոցների, գույքի և ծառայությունների հնարավոր կորուստն է, որը կարող է առաջանալ որևէ առանձին համայնքում կամ հասարակությունում որոշակի ժամանակահատվածում:

Աղետի ռիսկի նվազեցում

Աղետի ռիսկի նվազեցումը սահմանվում է որպես՝ «*Աղետի ռիսկը նվազեցնելու հայեցակարգ և գործելակերպ պարբերաբար գործադրվող ջանքերի միջոցով աղետների պատճառ հանդիսացող գործոնների վերլուծության և կառավարման համար՝ վտանգների ազդեցության կրճատման, մարդկանց և գույքի խոցելիության նվազեցման, հողի և շրջակա միջավայրի խելամիտ կառավարման և բացասական հետևանք ունեցող իրադարձությունների նկատմամբ բարելավված պատրաստվածության միջոցով*»:

Ամբողջ աշխարհում մարդիկ մշտապես ուղիներ են փնտրում նվազեցնելու աղետների ռիսկը: Մի տարածաշրջանում կորուստների հանդեպ խոցելիությունը նվազեցնելու նպատակով ոմանք միավորում են կենսապահովման տարբեր ռազմավարություններ, ինչպիսիք են ձկնորսությունը, գյուղատնտեսական աշխատանքները, ձեռքի աշխատանքի վաճառքը, մյուսներն օգտագործում են սոցիալական ցանցերը՝ բարենպաստ արոտավայրերի մասին տեղեկություններ ստանալու կամ այնպիսի վտանգներին դիմակայելու համար, ինչպիսին է, օրինակ՝ գետերի վարարումը, և համապատասխանաբար պլանավորում են իրենց գործողությունները: Սակայն շատ դեպքերում աղքատությունը և բևեռացումը սահմանափակում են նման գործունեության արդյունավետությունն ու ընտրությունը, իսկ միգրացիան գյուղական բնակավայրերից դեպի քաղաքային բնակավայրեր մարդկանց կանգնեցնում է անծանոթ իրավիճակների առջև, որտեղ վերջիններս

չեն տիրապետում նոր ռիսկերի կառավարման համար պահանջվող համապատասխան գիտելիքների և միջոցների:

Այսօր մարդիկ շարունակաբար իրազեկվում են այն մասին, որ պետությունները մարդու իրավունքները հարգելու, դրանք կյանքի կոչելու և պաշտպանելու պարտականությունների սահմաններում, ուղղակի պարտավոր են նվազեցնել աղետների ռիսկը, ինչպես նաև այն, որ միջազգային հանրությունը պարտավոր է աջակցել և ստեղծել այդ պարտականությունների իրականացման համար անհրաժեշտ բարենպաստ միջավայր: 2005թ. Աղետների նվազեցման համաշխարհային համաժողովի ժամանակ՝ ստորագրելով Յոգոյի գործողությունների ծրագիրը (ՅԳԾ), 168 երկրի կառավարություններ և զարգացման ու մարդասիրական ոլորտի բոլոր առաջատար կազմակերպությունները պարտավորություն են ստանձնեցին բազմաթիվ շահագրգիռ կողմերի ներգրավմամբ իրականացնել 10 տարվա բազմօլորտային ծրագիր, որի նպատակն է ներդրումներ կատարել աղետների ռիսկի նվազեցման ոլորտում՝ որպես աղետներին դիմակայելու կարողունակ հասարակության ստեղծման միջոց:

Համաձայն Յոգոյի գործողությունների ծրագրի, շատ պետություններ մշակել են աղետների ռիսկի նվազեցման օրենսդրական դաշտ և համապատասխան քաղաքականություն, ստեղծել վաղ ազդարարման համակարգեր⁶ և բարձրացրել են աղետներին արձագանքելու պատրաստվածության⁶ մակարդակը: Սակայն ՅԳԾ-ի կողմից սահմանված նպատակները դեռևս հեռու են իրականացված լինելուց, մասնավորապես կապված ռիսկի պատճառների վերհանման, ինչպես նաև ռիսկի գնահատման, գործողությունների ու ծրագրերի պլանավորման գործընթացներում վտանգի ենթակա բնակչության լիակատար մասնակցության ապահովման հարցերի հետ: Աղետների ռիսկի նվազեցման նպատակով յուրաքանչյուր երկրի «զարգացման համակարգում» փոփոխություններ կատարելու համար անհրաժեշտ է առելի ջանքեր գործադրել՝ այդ գործընթացում ներգրավելով բոլոր ոլորտներն ու տեղական և ազգային մակարդակի բոլոր շահագրգիռ կողմերին⁶:

1.2 Հյոգոյի գործողությունների ծրագիր

Հյոգոյի գործողությունների ծրագրով սահմանված է հինգ առաջնահերթ գործողություն.

1. Աղետների ռիսկի նվազեցման գերակայության հաստատում՝ ապահովելով բարձրակարգ կառավարում, սահմանելով և մշակելով համապատասխան քաղաքականություններ ու ծրագրեր և տրամադրելով դրանց իրականացման համար պահանջվող ռեսուրսներ:
2. Աղետների ռիսկի բացահայտում, գնահատում և մշտադիտարկում, ինչպես նաև վաղ ազդարարման համակարգերի բարելավում:
3. Աղետների ռիսկի վերաբերյալ հասարակության բոլոր շերտերի իրազեկման ապահովում և այդ ռիսկի նվազեցման ուղիների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում:
4. Սոցիալական, տնտեսական և բնապահպանական, ինչպես նաև հողի օգտագործման հետ կապված խոցելիության մակարդակի կրճատում՝ բոլոր ոլորտներում իրականացվող զարգացման գործընթացների պլանավորման և աղետներից հետո վերականգնողական գործունեության միջոցով:
5. Աղետներին արդյունավետ արձագանքելու պատրաստվածության աստիճանի բարելավում բոլոր մակարդակներում:

Կլիմայի փոփոխության ռիսկեր

Քանի որ կլիմայի գլոբալ փոփոխությունների⁶ վերաբերյալ ի հայտ են գալիս նոր գիտական տվյալներ և այդ փոփոխությունների ազդեցությունը կրում է որչ աշխարհը, հստակ անհրաժեշտություն է առաջանում ավելի լայնածավալ մոտեցում ցուցաբերել դրանց հետևանքով առաջացած ռիսկերի նվազեցման խնդիրներին:

1.3 Կլիմայի փոփոխության սահմանում

Գոյություն ունեն կլիմայի փոփոխության տարբեր սահմանումներ, սակայն այս ուղեցույցում օգտագործվող սահմանումը ներկայացնում է կլիմայի փոփոխությունը որպես եղանակի միջին վիճակի փոփոխություն երկար ժամանակահատվածում, որը, որպես կանոն, տևում է տասնամյակներ կամ ավելի երկար:

Համարվում է, որ կլիմայի ներկայիս գլոբալ փոփոխություններն արդյունաբերական հեղափոխության ժամանակներից ի վեր մարդկային գործունեության արդյունք են, երբ սկսվեց հանածոներից ստացվող վառելիքի⁶ օգտագործումը և կատարվեցին հողօգտագործման փոփոխություններ⁶ (օրինակ՝ անտառազրկում⁶), ինչի հետևանքով

տեղի ունեցավ ջերմոցային գազերի⁶, օրինակ, ածխածնի երկօքսիդի⁴ արտանետումների զգալի աճ: Թեև ջերմոցային գազերը կազմում են երկրագնդի մթնոլորտի բնական մասը և նպաստում կյանքի համար անհրաժեշտ ջերմաստիճանի պահպանմանը, այդ գազերի չափազանց մեծ ծավալով արտանետումներն արտադրում են ջերմություն, ինչը հանգեցնում է ջերմաստիճանի բարձրացմանը:

Կլիմայի կանխատեսվող փոփոխությունները ներառում են հողի և ծովի ջերմաստիճանի բարձրացում, սառցադաշտերի և սառցային ծածկույթների հալոցք, տեղումների քանակի փոփոխություն և անկանոնություն: Այս փոփոխություններն ազդում են մարդու կյանքի գրեթե բոլոր կողմերի և այն էկոհամակարգերի վրա, որոնցից կախում ունի մարդը:

Կլիմայի փոփոխության արդյունքում կավելանան եղանակային ծայրահեղ դրսևորումների հաճախականությունն ու ուժգնությունը, ինչպես նաև կլիմայի աստիճանական փոփոխությունները պատճառ կդառնան⁶ զգալի հարվածների: Կլիմայի փոփոխության բնույթի, աստիճանի և տևողության ազդեցությունները տարբեր տարածաշրջաններում տարբեր են: Ջանքերն ուղղված կլիմայի փոփոխության ազդեցությունների նվազեցմանը համարվում է կլիմայի փոփոխության հարմարվողականություն:

Կլիմայի փոփոխության հարմարվողականություն

Կլիմայի փոփոխության հարմարվողականության գործընթացն ընդգրկում է մի շարք դերակատարների կողմից իրականացվող գործողություններ, որոնք ուղղված են կլիմայի փոփոխության հետ կապված ռիսկերի կրճատմանը: Գոյություն ունեն տարբեր տեխնիկական և գիտական սահմանումներ՝ կլիմայի փոփոխության ոլորտում ընդգրկված տարբեր դերակատարների նպատակներին լավագույնս ծառայելու համար:

Սույն ուղեցույցի շրջանակներում օգտագործվում է կլիմայի փոփոխության հարմարվողականության հետևյալ պարզ աշխատանքային սահմանումը.

- ա) զարգացումների հարմարվողականությունը միջին ջերմաստիճանի, ծովի մակարդակի և տեղումների աստիճանական փոփոխություններին,
- բ) ավելի հաճախակի դարձած, խիստ և անկանխատեսելի եղանակային ծայրահեղ դրսևորումների հետ կապված ռիսկերի նվազեցում և կառավարում:

Մարդիկ միշտ հարմարվել են կլիմայի փոփոխություններին⁶ բազմաթիվ միջոցների կիրառման շնորհիվ, օրինակ, աճեցնելով ուշ ցանվող բրինձ կամ այլ արագ աճող մշակաբույսեր: Ինչևէ, կլիմայի փոփոխությունը դրդում է ռիսկի առջև կանգնած մարդկանց անել իրենց հնարավորություններից⁶ ավելին՝ հաղթահարելու և հարմարվելու այն փոփոխություններին, որոնց հետ ավանդաբար առնչվել են, ինչպես նաև

այն շատ մարդկանց դարձնում է առավել խոցելի՝ զգայունության աճի և կլիմայի փոփոխության ազդեցություններին ենթարկվելու պատճառով:

Կառավարություններն ու տարբեր հաստատություններ սկսում են գիտակցել, որ անվտանգությունը, աղքատության կրճատումը և բարեկեցությունը կախված է կլիմայի փոփոխության հարմարվողականության բոլոր ոլորտների համալիր ռազմավարություններից և տարբեր մակարդակներում դրանց իրականացումից: Չարգացման և մարդասիրական գործունեության ոլորտի աշխատակիցները նույնպես պետք է կարևոր դեր խաղան առավելագույն ռիսկի ենթարկվող երեխաների, կանանց և տղամարդկանց իրավունքներին առաջնահերթություն տալու հարցում և ներառեն կլիմայի փոփոխության հարմարվողականության ռազմավարություններն իրենց կողմից իրականացվող ծրագրերում:

Որպես մոտեցում, կլիմայի փոփոխության հարմարվողականությունը դիմամիկ գործընթաց է և չի գտնվում ավարտուն վիճակում՝ հաշվի առնելով կլիմայական փոփոխությունների ազդեցության անկայունությունը և վտանգի ենթակա բնակչությանն աջակցելու անհրաժեշտությունը, որի նպատակն է արձագանքել ներկավտանգներին, աճող փոփոխություններին, նոր միտումներին և ստեղծել դրանց հարմարվելու կարողություններ:

Աղյուսակ 1.1 Կլիմայի փոփոխության հետ կապված վտանգներ ու ազդեցություններ և հարմարվողականությանն ուղղված գործողություններ *

Վտանգ կամ ազդեցության հետևանք	Ազդեցություն	Հարմարվողականության օրինակներ
Վտանգ՝ հորդառատ անձրև	<ul style="list-style-type: none"> • Աճող հաճախականություն/ ուժեղ ջրհեղեղներ • Վնասի պատճառում տներին, ենթակառուցվածքներին և կենսապահովման միջոցներին 	<ul style="list-style-type: none"> • Դրենաժային համակարգերի բարելավում գյուղական և քաղաքային տարածքներում • Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի պաշտպանություն, արդիականացում՝ վնասներն ու աղտոտումը կանխելու նպատակով • Մարգային գյուղատնտեսության զարգացման խթանում⁶ • Կենսական նշանակության ենթակառուցվածքների տեղահանում ջրհեղեղների հակված տարածքներից

Աղյուսակ 1.1 Կլիմայի փոփոխության հետ կապված վտանգներ ու ազդեցություններ և հարմարվողականության ուղղված գործողություններ *

Վտանգ կամ ազդեցության հետևանք	Ազդեցություն	Հարմարվողականության օրինակներ
Վտանգ՝ փոթորիկ	<ul style="list-style-type: none"> Վնասի պատճառում տներին, ենթակառուցվածքներին և կենսապահովման միջոցներին 	<ul style="list-style-type: none"> Ենթակառուցվածքների և տների արդիականացում/կառուցում՝ փոթորիկների նկատմամբ կայուն կառուցվածքների և նյութերի կիրառմամբ Վաղ ազդարարման համակարգերի ներդրում/հզորացում՝ վտանգի ենթակա բնակչությանը զգուս պահելու համար
Հետևանք՝ ջերմաստիճանի աճ	<ul style="list-style-type: none"> Ջերմային ճնշում գյուղատնտեսական մշակաբույսերի վրա Գյուղատնտեսական մշակաբույսերի ջրի պահանջի աճ և (կամ) ջրի առկայության նվազում 	<ul style="list-style-type: none"> Տեխնիկական մեթոդների խրախուսում՝ հողում օրգանական նյութերի պարունակությունն ավելացնելու համար խոնավությունը հնարավորինս երկար պահելու նպատակով) Ազդանախառնաբուծության և (կամ) ռեսուրսախնայողական գյուղատնտեսության խրախուսում՝ հողի միկրոկլիման բարելավելու և ընդհանուր գոլորշացումը նվազեցնելու նպատակով
Հետևանք՝ ծովի մակարդակի բարձրացում	<ul style="list-style-type: none"> Աղաչերի ներթափանցում Մերձափնյա տարածքների էրոզիա Փոթորկաբեր ալիքների հաճախականության/ ուժգնության աճ⁶ 	<ul style="list-style-type: none"> Սպառման և կենսապահովման համար անհրաժեշտ այլընտրանքային, կայուն ջրաղբյուրների բացահայտում Աղաղիմացկուն գյուղատնտեսական մշակաբույսի տեսակների հասանելիություն Պաշտպանության ուժեղացում (բնական եղանակով՝ մանգրային թփուտների, ինչպես նաև ինժեներական կառույցների միջոցով)

* Ներկայացված օրինակները ամբողջական չեն: Հարմարվողականության տարբերակները սահմանելիս անհրաժեշտ է հաշվի առնել տվյալ կոնկրետ համատեքստը:

1. 4 Աղետների ռիսկի փոփոխական բնույթը

Կլիմայի փոփոխությունը փոխում է աղետների ռիսկի բնույթը ոչ միայն եղանակի, ծովի մակարդակի և ջերմաստիճանի բարձրացման, այլ նաև սոցիալական խոցելիության մակարդակի բարձրացման առումով, օրինակ, ջրի հասանելիության, գյուղատնտեսության և էկոհամակարգերի հետ կապված լարված իրավիճակների առաջացման պատճառով: Աղետների ռիսկի նվազեցմանը և կլիմայի փոփոխության հարմարվողականության գործընթացներին առնչվող ընդհանուր մտահոգությունը մեկն է՝ նվազեցնել համայնքների խոցելիությունը և ապահովել կայուն զարգացում:

1.2 Աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման ձևավորում

Չարգացման և մարդասիրական գործունեության մեջ ներգրավված աշխատակիցները աստիճանաբար էլ ավելի են կարևորում աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության հայեցակարգերն ու գործելակերպը միավորելու անհրաժեշտությունը, որի բացատրությունը ներկայացվում է ստորև:

Ընդհանուր մտահոգություններ

Այն խնդիրները, որոնց փորձում են անդրադառնալ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության գործընթացներում շատ նման են: Ինչպես ցույց է տրված Նկար 1.1-ում, ռիսկի աստիճանն ավելի մեծ է այն բնակչության շրջանում, որը կլիմայի փոփոխության հետևանքով արդեն իսկ վտանգի է ենթարկված⁶ և կրում է այդ փոփոխության ազդեցությունը՝ գլոբալ կլիմայական փոփոխությունների արդյունքում այդ վտանգների և ազդեցությունների կանխատեսվող հաճախականության և(կամ) ուժգնության պատճառով:

Հարմարվողականություն կլիմայի փոփոխությունների նկատմամբ



Աղետների ռիսկի նվազեցում

Նկար 1.1 Ընդհանուր մտահոգություններ կլիմայի փոփոխության հարմարվողականության և աղետների ռիսկի նվազեցման վերաբերյալ


Ավելին, վտանգի ենթակա բնակչությունը կարող է հայտնվել սթրեսային⁶ իրավիճակում կլիմայի այնպիսի երկարատև փոփոխությունների արդյունքում, ինչպիսիք են սեզոնայնության փոփոխությունը, անկանխատեսելի տեղատարափ անձրևները, ծովի մակարդակի բարձրացումը, որոնք ազդում են այդ մարդկանց կենսապահովման և առողջության վրա և վերջիններիս առավել խոցելի դարձնում բոլոր տեսակի ցնցումային երևույթների⁶, իրադարձությունների և հետագա փոփոխությունների նկատմամբ:

Ռիսկի ընդհանուր հայեցակարգային ըմբռնում

Աղետների ռիսկի նվազեցումը և կլիմայի փոփոխության հարմարվողականությունը նույնպես ունեն ռիսկի բաղադրիչների և դիմակայելու կարողությունների ստեղծման գործընթացների ընդհանուր հայեցակարգային ըմբռնում: Երկու մոտեցումներն էլ ռիսկը դիտարկում են որպես կլիմայի փոփոխության վտանգի(ների) կամ ազդեցության(ների) ենթարկման և խոցելիության արդյունք, կամ երկուսը միասին: Որքան մեծ է խոցելիության, վտանգի ենթարկման աստիճանը և հզորությունը կամ վտանգի/կլիմայի փոփոխության ազդեցության հավանականությունը, այնքան մեծ է ռիսկը:

Եվ վտանգի ենթակա լինելը, և խոցելիությունը բարդանում են այլ հասարակական և սոցիալական միտումների արդյունքում, ինչպիսիք

են ուրբանիզացիան, շրջակա միջավայրի դեգրադացիան⁶, շուկաների գլոբալիզացիան: Այսպիսով, աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերը կրճատելու համար անհրաժեշտ է նվազագույնի հասցնել վտանգի ենթակայության և խոցելիության աստիճանը, ուժեղացնել դիմակայելու կարողություններն այնպիսի եղանակներով, որոնք միաժամանակ կազդեն աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերի վրա, իսկ մոտեցումներից և ոչ մեկը չպետք է բացասաբար անդրադառնա մյուսի վրա: Սա դիմամիկ գործընթաց է, որը շարունակական ջանքեր է պահանջում տնտեսական, սոցիալական, մշակութային, բնապահպանական, հաստատութենական և քաղաքական ոլորտներում՝ խոցելիությունից դեպի դիմակայունություն անցում կատարելու համար:



Նկար 1.2 Աղետների և կլիմայի փոփոխության ռիսկեր

1.5 «Դիմակայելու նպատակով» ուղեցույցում օգտագործված առանցքային տերմինները

- **Վտանգները** բնության կամ մարդկային գործունեության այն հնարավոր կործանարար երևույթներն են, որոնց դրսևորումը կարող է հանգեցնել կյանքի կորստի, մարմնական վնասվածքների կամ առողջության վրա այլ ազդեցության, նյութական վնասների, կենսապահովման միջոցների և ծառայությունների կորստի, սոցիալական և տնտեսական ցնցումների, բնապահպանական վնասների: Վտանգների թվում են երաշտը, ջրհեղեղը, երկրաշարժը, հրաբխային ժայթքումները, համաճարակները, փոթորիկները, ուժեղ տեղումները, քիմիական նյութերի արտանետումները, հակամարտությունները⁶ և այլն:
- **Կլիմայի փոփոխության ազդեցության հետևանքները** կլիմայի այն փոփոխություններն են, որոնք առաջանում են չափազանց մեծ ծավալի ջերմոցային գազերի արտանետումների արդյունքում: Այդ հետևանքները ներառում են հողի և ծովի ջերմաստիճանի բարձրացում, ծովի մակարդակի բարձրացում, սառցադաշտերի և սառցե ծածկույթների հալոցք, փոփոխվող ու անկանոն տեղումներ: Կլիմայի փոփոխության ազդեցության արդյունքում կանխատեսվում է գոյություն ունեցող կլիմայական վտանգների՝ երաշտի, ջրհեղեղի, փոթորիկների հաճախականության և(կամ) ուժգնության աճ: Երկրագունդը դատապարտված է որոշակի կլիմայական փոփոխությունների, սակայն դեռևս հնարավոր է տեխնոլոգիական և քաղաքական բնույթի որոշումներով այդ փոփոխությունները նվազեցնել:
- **Ենթակայությունը** վերաբերում է այն մարդկանց, ունեցվածքին, կենսապահովման միջոցներին, համակարգերին և այլ տարրերին ամկա այն տարածքներում, որոնք հավանական է ենթակա են կլիմայի փոփոխության վտանգների ազդեցությանը և(կամ) ներգործությանը:
- **Խոցելիությունն** անհատի, տնային տնտեսության, բնակչության որևէ խմբի, համակարգի կամ ունեցվածքի բնութագրիչ հատկանիշների կամ շրջապատող հանգամանքների շարք է, որոնք կլիմայի փոփոխության սպառնալիքի և(կամ) ներգործության արդյունքում դառնում են անկայուն (կամ զգայուն՝ Էկոհամակարգերի դեպքում): Այդ բնութագրող հատկանիշները կամ հանգամանքները կարող են լինել ֆիզիկական, հաստատութենական, քաղաքական, մշակութային, սոցիալական, բնապահպանական, տնտեսական և մարդկային:

1.5 «Դիմակայելու նպատակով» ուղեցույցում օգտագործված առանցքային տերմինները (շարունակություն)


- **Դիմակայունությունը** անհատի, տնային տնտեսության, բնակչության որևէ խմբի կամ համակարգի կարողությունն է՝ կանխագգալու, դիմանալու և հաղթահարելու կլիմայի փոփոխության վտանգները և(կամ) ազդեցությունները, ինչպես նաև ցնցումային և սթրեսային այլ իրավիճակները՝ առանց վնաս հասցնելու երկարաժամկետ հեռանկարներին: Դիմակայունությունը ամրագրված վերջնական վիճակ չէ, այլ դինամիկ պայմանների և գործընթացների շարք: Սկար 1.3-ում ներկայացված են դիմակայունության վրա ազդող գործոնները:



Սկար 1.3 Դիմակայունության վրա ազդող գործոնները


Ազդեցությունների նմանությունը

Աղետների⁶ և կլիմայի փոփոխության ազդեցությունները համանման հետևանքներ ունեն ինչպես մարդկանց կյանքի, այնպես էլ նրանց կողմից իրենց իրավունքներն ըմբռնելու և դրանցից օգտվելու աստիճանի վրա: Տես՝ նկար 1.4: Կլիմայի փոփոխության ազդեցության հետևանքով առաջացած աղետները, ինչպես նաև ցնցումային և սթրեսային իրավիճակները կարող են հանգեցնել զգալի կորուստների, ինչն, իր հերթին, մեծացնում է խոցելիության աստիճանը՝ խորացնելով աղքատության միտումները և դառնալով իրավունքների ժխտման պատճառ:



Նկար 1.4 Աղետների և կլիմայի փոփոխության ազդեցությունների նմանությունը

Աղետների ռիսկի նվազեցումը և կլիմայի փոփոխության հարմարվողականությունը ընդհանուր նպատակ են հետապնդում: Երկու մոտեցումների նպատակն էլ մարդկանց և հասարակության դիմակայունության հզորացումն է այնպես, որ նրանց ջանքերի և զարգացմանն ուղղված գործընթացների շնորհիվ հնարավոր լինի ապահովել մարդու իրավունքների լիակատար իրականացումը:



Նկար 1.5 Աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության նպատակների նմանությունը

1.3 Աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման սկզբունքները

Քանի որ աղետների ռիսկի նվազեցման հանդեպ համընդհանուր պատասխանատվությունը և ներդրումների ծավալը մեծացել է, հարստացել է նաև պրակտիկ գործունեության մեջ ընդգրկված անձանց և քաղաքականություն մշակողների գիտելիքներն ու փորձը, ավելացել են նպաստող գործոնները, ինչպես նաև հաջողության հասնելու խոչընդոտները: Միաժամանակ կլիմայի փոփոխության հարմարվողականության ոլորտում իրականացվող նորարարական հետազոտություններում ակտիվորեն մշակվում են հիմնական տարրերի արժեքավոր ցուցանիշներ՝ հարմարվողականության արդյունավետ ծրագրեր մշակելու համար:

Վերջերս զարգացման և մարդասիրական օգնության դերակատարների հետաքրքրությունը ցնցումների և սթրեսային իրավիճակների, ինչպես նաև վտանգներին և կլիմայի փոփոխության ազդեցություններին արդյունավետ դիմակայելու գործընթացի բարելավման հանդեպ հանգեցրել է կառուցողական քննարկումների: Այս ոլորտներից յուրաքանչյուրից բխող դասերի, առաջարկների և մարտահրավերների միջև կան նմանություններ և համալիր մոտեցում ցուցաբերելու անհրաժեշտություն:

Աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման հետևյալ 10 սկզբունքները հիմնված են այս ընդհանուր գիտելիքների վրա: Այս սկզբունքները զարգացման և մարդասիրական օգնության ոլորտի գործիչներին տրամադրում են աղետներին և կլիմայի փոփոխությանը դիմակայելու համար կարողությունների ստեղծմանն ուղղված մի շարք չափանիշներ, որոնք կիրառելի են բազմաթիվ ոլորտներում և տարբեր համատեքստերում իրականացվող ծրագրերում:

1. **Բարձրացնել վտանգի և կլիմայի փոփոխության համատեքստի ըմբռնման մակարդակը.** Ցանկացած որոշման կամ գործողության հիմքում, որն ուղղված է աղետներին և կլիմայի փոփոխությանը դիմակայելու նպատակով կարողությունների զարգացմանը, ընկած է վտանգների ծագման, կլիմայի փոփոխականության և տվյալ տարածքի ու բնակչության վրա կլիմայի փոփոխության ազդեցությունների անցյալի միտումների, ներկայիս փորձի և ապագա կանխատեսումների ըմբռնումը: Այն պետք է ներառի տարբեր մասշտաբի քարտեզագրում՝ տարածաշրջանային և տեղական վտանգները, կլիմայի փոփոխության ազդեցությունները դիտարկելու նպատակով: Ռիսկի վերլուծության գործընթացն ինքնըստինքյան բարձրացնում է ըմբռնման մակարդակը բոլոր շահագրգիռ կողմերի⁶ շրջանում՝ մասնակցային բնույթի և արդյունքների փոխանակման շնորհիվ:
2. **Բարձրացնել վտանգի ենթարկվելու, խոցելիության և կարողությունների ըմբռնման մակարդակը.** Բնակչության, համակարգերի և ռեսուրսների խոցելիության ու կարողությունների գնահատումը, (ներառյալ խոցելիության տարբեր տեսակների ըմբռնումը), պետք է հիմք հանդիսանա տվյալ տեղանքի, թիրախային բնակչության, նպատակների և միջոցների վերաբերյալ որոշումներ կայացնելու համար՝ ուղղված աղետներին և կլիմայի փոփոխությանը դիմակայելու համապատասխան կարողությունների զարգացմանը: Այն պետք է ներառի կլիմայի փոփոխության կանխատեսվող, ինչպես նաև ներկայումս նկատվող ազդեցությունների վերլուծություն: Գնահատումը, որպես մասնակցային գործընթացի արդյունք, ինչպես նաև փոխանակվող արդյունքները պետք է բարձրացնեն շահագրգիռ կողմերի շրջանում վտանգների ազդեցությանը ենթարկվելու պատճառների, խոցելիության և կարողությունների ըմբռնման մակարդակը:
3. **Ճանաչել իրավունքներն ու պարտականությունները.** Աղետների ռիսկի նվազեցումը և կլիմայի փոփոխության հարմարվողականության

գործընթացը պետք է դիտարկվի պետությունների և կառավարությունների պատասխանատվության շրջանակում, որոնք մարդու իրավունքների իրականացման իրավասու մարմիններն են: Կառավարման⁶ համակարգը և քաղաքական դաշտը պետք է հնարավորություն ստեղծեն վտանգի ենթակա կամ աղետների և կլիմայի փոփոխության ազդեցությունները կրած մարդկանց համար կայացրած որոշումների, գործողությունների և բացթողումների հաշվետվողականության համար: Մյուս շահագրգիռ կողմերի, այդ թվում նաև հասարակական կազմակերպությունների (ՀԿ) դերը լիազորված մարմինների և իրավունքի սուբյեկտների միջև հարաբերություններում, պետք է լինի փոխլրացնող:

4. Խրախուսել ռիսկի ենթակա բնակչության մասնակցությունն ու գործունեությունը. Վտանգի ենթակա բոլոր մարդիկ իրավունք ունեն մասնակցելու իրենց կյանքի վրա ազդող որոշումների կայացման գործընթացին: Առաջին աղբյուրից ստացված տվյալներն այն իրավիճակների վերաբերյալ, որոնց ազդեցությունը մարդիկ անմիջականորեն իրենց վրա են կրում ունի էական նշանակություն, ինչը հնարավորություն է տալիս ապահովել համապատասխան վերլուծությունների և հետագա գործողությունների իրականացումը՝ հիմնվելով փաստացի վկայությունների վրա: Ի լրումն, դիմակայման կարողությունների զարգացման կայուն ռազմավարությունների մշակումը կախված է այդ մարդկանց մասնակցությունից և կազմակերպվածությունից: Այդ իսկ պատճառով, որոշումների կայացման գործընթացն ու գործողությունները պետք է ներգրավեն վտանգի ենթակա բնակչությանը՝ ապահովելով կանանց, տղամարդկանց, երեխաների, ինչպես նաև բարձր ռիսկային խմբերի մասնակցությունը:

5. Խրախուսել համակարգված ներգրավման և փոփոխության գործընթացները. Քանի որ գոյություն ունեն խոցելիության, վտանգի ու կլիմայի փոփոխության ազդեցությանը ենթարկվելու բազմաթիվ պատճառներ, աղետներին և կլիմայի փոփոխությանը դիմակայելու կարողությունների զարգացման ռազմավարությունները պետք է ներառեն հասարակության բոլոր ոլորտներն ու պետական մարմինները: Տարբեր ոլորտների և շահագրգիռ կողմերի ներգրավման նպատակը պետք է լինի զարգացման պլանավորման գործընթացում աղետներին և կլիմայի փոփոխությանը դիմակայելու կարողությունների ստեղծմանը առանցքային դեր հատկացնելը: Այս նպատակի իրականացմանն ուղղված բոլոր դերակատարների պարտականությունները պետք է սահմանվեն համապատասխան քաղաքականությամբ, ծրագրով և բյուջեով:

- 6. Նպաստել տարբեր մակարդակների համատեղ գործունեությանը.** Բարենպաստ քաղաքական դաշտն էական նշանակություն ունի տնային տնտեսությունների, համայնքների և տեղական մակարդակներում կայացրած որոշումների համար: Զաղաքականության կամ օրենքի ազդեցությունը կախված է կառավարության տարբեր մակարդակներում դրա իրականացումից, ինչպես նաև վտանգի ենթակա բնակչության նկատմամբ կիրառման անհրաժեշտությունից: Յուրաքանչյուր մակարդակում կայացրած որոշումները և գործողությունները պետք է լինեն փոխադարձաբար տեղեկատվական և նպաստեն հետևողական և համալիր մոտեցման իրականացմանը:
- 7. Կիրառել և զարգացնել տարբեր աղբյուրներից ստացված գիտելիքներ.** Աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերի վերլուծությունը՝ հիմնվելով գիտական հետազոտությունների արդյունքների վրա պետք է լրացնի տեղեղում առկա և ավանդական գիտելիքների ծավալը՝ համատեղ ուժերով Նոր գիտելիքների ստեղծման գործընթացը շարունակելու համար: Աղետներին և կլիմայի փոփոխություններին դիմակայելու կարողությունների զարգացման միջոցները պետք է նպաստեն արդյունավետ փորձի կիրառմանը, խթանեն նորարարական մոտեցումները և, որտեղ անհրաժեշտ է, ներդնեն արտաքին տեխնոլոգիաներ՝ Նոր կամ ուժեղացող մարտահրավերներին արձագանքելու համար: Ռազմավարությունները և ծրագրերը պետք է ենթարկվեն մշտադիտարկման և գնահատվեն, համոզվելու համար, որ ուսուցման նպատակներն իրականացվել են և մատչելի են բոլորի համար:
- 8. Ապահովել ճկունություն և արձագանքման հնարավորություն.** Զանի որ կլիմայի փոփոխության ազդեցության հետևանքներն ու հարվածները մոտում են անորոշ, մասնավորապես, տեղական մակարդակում և շատ դինամիկ գործընթացներ (ինչպիսիք են ուրբանիզացիան և շրջակա միջավայրի դեգրադացիան⁶) ազդում են վտանգի ենթարկվելու և խոցելիության վրա, աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերի վերլուծությունը պետք է արագ արձագանքի Նոր տվյալներին: Աղետներին և կլիմայի փոփոխությանը դիմակայելու նպատակով կարողությունների զարգացման ռազմավարություններն ու ծրագրերը՝ Նոր առաջարկությունները դիտարկելու առումով, պետք է լինեն բավականաչափ ճկուն:
- 9. Դիտարկել տարբեր ժամանակահատվածներ.** Վերլուծությունները, ռազմավարությունները և ծրագրերը պետք է անդրադառնան ներկա, բացահայտված և ապագա հնարավոր սցենարներին: Չպետք է աչքաթող անել արդեն իսկ հայտնի վտանգներին նախապատրաստվելու գործընթացը՝ առաջնահերթությունը տալով

կլիմայի փոփոխության և այլ հնարավոր անհայտ ցնցումների կամ սթրեսային իրավիճակների միջնաժամկետ կամ երկարաժամկետ ազդեցություններին հարմարվելու համար կարողությունների ստեղծմանը: Ռեսուրսների հատկացումը և գործողությունները պետք է համապատասխանաբար պլանավորվեն:

- 10. Զվնասել.** Աղետներին և կլիմայի փոփոխություններին դիմակայելու նպատակով կարողությունների զարգացման ռազմավարությունների և ծրագրերի սահմանման գործընթացը պետք է ներառի դրանց հնարավոր բացասական ազդեցությունների գնահատումը, այդ թվում՝ հակամարտություններին նպաստելը ու բնապահպանական ազդեցությունները: Այն դեպքերում, երբ հնարավոր վտանգը բացահայտված է, այն էականորեն նվազեցնելու կամ վերացնելու միջոցառումները պետք է ընդգրկվեն ռազմավարության և ծրագրերի նախագծերում: Ծրագրերը միշտ պետք է հիմնված լինեն տարբեր վտանգների և տարբեր ազդեցությունների գնահատման վրա՝ անվտանգության անհրաժեշտ զգացումը կամ անբավարար հարմարվողականության⁶ խրախուսումը կանխելու համար:

Սույն Ուղեցույցի 3-6 գլուխները ցույց են տալիս, թե ինչպես ցուցաբերել համալիր մոտեցում աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության գործընթացներին ծրագրային տարբեր փուլերում, տարբեր ոլորտների միջամտության պայմաններում և տարբեր իրավիճակներում:

ԴԵՊԵԻ ՌԻՍԻՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ. ԶԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԿԼԻՄԱՅԻ ԱՃՈՂ ՓՈՓՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԿԻԵՏՆԱՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԵՐՁԱՓՆՅԱ ՆԱՅԱՆԳՆԵՐՈՒՄ

Վիետնամ, World Vision International կազմակերպություն

Վիետնամի 3,000 կմ երկարությամբ ձգվող մերձափնյա տարածքներում և ցածրադիր գետաբերաններում կլիմայի փոփոխության հետևանքով ծովի մակարդակի բարձրացումը և աղաջրային հեղեղումները զգալիորեն վտանգում են բրնձի արտադրությունը և վնաս հասցնում գյուղատնտեսությանը, որից կախված է մարդկանց կենսապահովումը: Ավելի մեծ անմիջական վտանգ են ներկայացնում աստիճանաբար սաստկացող թայֆուններն ու ավելի հաճախակի դարձող ջրհեղեղները:

2005թ. World Vision կազմակերպությունը սկսեց աշխատել Զուանգ Նգեի կենտրոնական մերձափնյա նահանգում, որտեղ համայնքներն աղետների հետևանքները հաղթահարելու համար զգալի դժվարությունների էին հանդիպում: Տեղերում հարմարվողականության կարողությունների զարգացմանն օժանդակելու նպատակով ծրագիրն ուշադրությունը կենտրոնացրեց առկա

հնարավորությունների բարելավման վրա՝ համայնքներում ստեղծելով կարողություններ աղետների և կլիմայի ծայրահեղ դրսևորումներին դիմակայելու համար: Երեսուկոթ փոքր գյուղերում ստեղծվեցին 43 փոքր և միջին չափի ենթակառուցվածքներ, բարեկարգվեցին և բետոնապատվեցին հողային ճանապարհները՝ անձրևային եղանակներին երթևեկությունը կանոնավորելու համար, բարեկարգվեցին դպրոցների տարածքները՝ երեխաների շփումը վարակված ջրի հետ կանխելու նպատակով: Զառասուկինը փոքր գյուղերի ավելի քան 1,000 տնային տնտեսություն վարկեր ստացան իրենց ապրելու պայմանները բարելավելու համար: Ծրագրի ուշադրության կենտրոնում էր նաև եկամտի աղբյուրի այլընտրանքային հնարավորությունների ստեղծումը, որպեսզի տնային տնտեսություններն այլևս կախված չլինեն մեկ տեսակի մշակաբույս աճեցնելուց: 2,583 տնտեսություններ աջակցություն ստացան լրացուցիչ եկամտի աղբյուր ստեղծելու համար, օրինակ, բամբուկ կամ կենցաղային ապրանքների վաճառք կազմակերպելու համար, որի նպատակը տնային տնտեսությունների գործունեությունը բազմակերպ դարձնելն էր՝ բրնձի մշակումից և գյուղատնտեսությամբ զբաղվելուց զատ:

Դպրոցական ծրագրերի նպատակն էր ապահովել երեխաներին համապատասխան գիտելիքներով և տեղեկատվությամբ՝ ողջամիտ որոշումներ կայացնելու և աղետների ժամանակ ինքնապաշտպանություն իրականացնելու համար: Կարմիր խաչը տրամադրեց ակաբ կապի համակարգեր և հեռաձայնման կայաններ՝ համայնքներին աղետներին նախապատրաստվելու համար տեղեկացնելու նպատակով: Ծրագիրը նպաստեց նաև ճկուն և հեռատես որոշումների կայացման և կառավարման գործընթացին՝ բնակիչների և համայնքների համար մշակելով աղետների ռիսկի նվազեցման պլաններ (ԱՌՆՊ), ինչպես նաև նպաստեց **տարբեր մակարդակների համատեղ գործունեությանը**՝ ընդգրկելով դրանք համայնքային, շրջանային և Նահանգային մակարդակի պլաններում: **Ռիսկի ենթակա բնակչության մասնակցությունը և գործողությունները խթանելու**, ու բնական աղետների ազդեցությունը մեղմելու և առաջին բուժօգնություն ցույցաբերելու նպատակով՝ նշանակվեց 100 համակարգող և ստեղծվեց 10 փրկարարական ջոկատ: Վերջիններս օգնեցին ավելի քան 7,000 բնակչի մշակել աղետների ռիսկի նվազեցման սեփական պլաններ, ինչպես նաև օժանդակեցին 10 համայնքի և 50 գյուղի ստեղծել իրենց ԱՌՆ պլանները, որոնք ընդգրկվեցին տարածաշրջանային և ազգային մակարդակների գործող ծրագրերում: Երեխաների բարեկեցությունն անմիջականորեն բարելավվեց աղետներին նախապատրաստվելու դպրոցական ծրագրերի իրականացման շնորհիվ, որոնց մասնակցեցին 500 ուսուցիչ և 20,000 աշակերտ:

Զաղված դասերը հետևյալն են. (ա) Տեղական մակարդակի պլանները կյանքի կոչելու համար Էսական նշանակություն ունի գործող կառավարական կառույցներում աշխատելը, ինչը կխթանի և կնպաստի կառավարության կողմից աջակցության ձեռք բերմանը և ռեսուրսների մատչելիության ապահովմանը՝ տեղական մակարդակի նախաձեռնություններ իրականացնելու համար, (բ) Համապատասխան միջավայր ստեղծելու և նորարարությունները խրախուսելու նպատակով, կարևոր է խրախուսել այլընտրանքային կենսապահովման միջոցների ստեղծումը, քանի որ վարկ ստացած տնային տնտեսությունների մեծ մասը ներդրումներ է կատարում միայն սահմանափակ ոլորտներում (ցախավելների պատրաստում, ձկնային սոուսների արտադրություն, բանջարեղենի աճեցում), որը և հանգեցնում է շուկայի լճացման: Իրավիճակը սրվում է Զուանգ Նգեի նահանգի և խոշոր տնտեսական կենտրոնների միջև հեռավորության պատճառով, (գ) Անիրաժեշտ է, որպեսզի կենսապահովման միջոցների բազմազանության խթանումն ուղեկցվի տեխնիկական հմտությունների ուսուցմամբ՝

հարմարվողականության կարողությունների զարգացման նպատակով, քանի որ կենսապահովման բարելավման ոչ բոլոր նախաձեռնություններն են հաջողությամբ ավարտվում աշխատուժի, գիտելիքների, հողի, շուկայի հետ կապի բացակայության պատճառով, որոնք անհրաժեշտ են կենսապահովման կայուն միջոցների ստեղծման համար:

Մասնակիցների կողմից եկամուտ ստեղծելու որոշ նախաձեռնություններ, ինչպիսին է, օրինակ, գետի ափամերձ տարածքներում բամբուկ աճեցնելը, անհաջողության են մատնվում, քանի որ մինչև բամբուկի հասունանալն այդ տարածքները հեղեղվում են ջրով: Սա վկայում է, որ միայն միջոցների հասանելիությունը բավարար չէ հարմարվողականության կարողություններ ստեղծելու համար: Այս ծրագրի իրականացումը ենթադրում է, որ բամբուկի և կենցաղային ապրանքների վաճառքից եկամուտ ստանալու համար պետք է ունենալ աշխատուժ, գիտելիքներ, հող, ինչպես նաև՝ կապ շուկայի հետ: Բամբուկի աճեցման համար անհրաժեշտ են համապատասխան տեխնիկական գիտելիքներ և երկարատև ներդրումներ: Սա բարդ խնդիր է այն համայնքների համար, որոնք ժամանակ չունեն կենտրոնանալ երկարաժամկետ ներդրումների վրա, քանի որ ունեն արագ եկամուտ ստանալու կարիք:

Չաճախ տրվող հարցեր (ՅՏՊ)

Ո՞րն է աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության միջև եղած տարբերությունը:

Աղետների ռիսկի նվազեցումը և կլիմայի փոփոխության հարմարվողականությունն ունեն սերտորեն փոխկապակցված, նմանատիպ նպատակներ և փոխադարձ շահեր: Երկուսն էլ ուղղված են մարդկանց խոցելիությունը վտանգների նկատմամբ նվազեցնելու նպատակին՝ վտանգների ազդեցությունը կանխատեսելու, դրանք հաղթահարելու և վերականգնվելու ունակությունները բարելավելու միջոցով և, քանի որ կլիմայի փոփոխության պայմաններում վտանգների հաճախականությունը և ուժգնությունը ավելանում է, աղետների ռիսկի նվազեցման մոտեցման կիրառումը կենսական նշանակություն ունի համայնքների կլիմայի փոփոխության հարմարվողականության գործընթացին աջակցելու համար:

Ոչ բոլոր աղետներն են կապված կլիմայի փոփոխության հետ: Կլիմայի փոփոխության հետ կապված (կամ հիդրոոգերառաքանական) վտանգներն են՝ ջրհեղեղը, երաշտը և փոթորիկը, թեև աղետների ռիսկի նվազեցումը հավասարապես վերաբերում է նաև երկրաբանական վտանգներին (օրինակ՝ երկրաշարժ, ցունամի, հրաբխային ժայթքում), տեխնոլոգիական վտանգներին (արդյունաբերական, քիմիական արտանետումներ) և հակամարտություններին: Կլիմայի փոփոխության ոչ բոլոր ազդեցություններն են իրենցից վտանգ ներկայացնում: Դրանք ներառում են այն ազդեցությունները, որոնք համայնքները կարող են զգալ ժամանակի ընթացքում, ինչպիսիք են ջերմաստիճանի բարձրացումը,

սեզոնայնության փոփոխությունը, անկանխատեսելի ուժգին տեղումները, ծովի մակարդակի բարձրացումը և ընդհանուր ազդեցությունները պարենի և սննդի անվտանգության, առողջության և աղքատության վրա:

Ո՞րն է տարբերությունը կլիմայի և եղանակի միջև:

Տարբերությունը ժամանակային գործոնն է: Եղանակը վերաբերում է այնպիսի վիճակի, ինչպիսին է, օրինակ, անձրևը, ջերմաստիճանը և քամին ժամերի կամ օրերի կտրվածքով: Կլիման այն միջին եղանակային պայմանն է, որ չափվում է շատ ավելի երկար ժամանակահատվածի կտրվածքով (30 և ավելի տարի):

Ինչպե՞ս վերաբերվել կլիմայի կանխատեսումների անորոշությանը:

Թեև կլիմայի կանխատեսումներն անորոշ են, կլիմայական փոփոխություններն ուսումնասիրող գիտության եզրակացությունները հիմնված են բազմաթիվ փաստերի վրա, որոնք վստահորեն վկայում են երկրագնդի տաքացման մասին՝ մարդու գործունեության արդյունքում մթնոլորտում ջերմոցային գազերի ծավալների ավելացման պատճառով: Մասամբ ելնելով գիտական տվյալների անորոշությունից, ինչպես նաև նրանից, որ այստեղ ներգրավված են նաև մարդկային կյանքի տարբեր կողմեր, կլիմայի փոփոխության հետ կապված որոշումներում, բացի գիտական տվյալներից, պետք է հաշվի առնվեն բազմաթիվ այլ խնդիրներ, այդ թվում նաև՝ սոցիալական, տնտեսական և բնապահպանական:

Արդյո՞ք կլիմայի փոփոխության հարմարվողականությունը միակ տարբերակն է:

Ոչ: Կլիմայի փոփոխությանը արձագանքելու նպատակով աշխարհը պետք է անդրադառնա դրա խորքային պատճառներին՝ ջերմոցային գազերով մթնոլորտի աղտոտման խնդիրներին: Եթե արտանետումների ներկայիս ծավալները պահպանվեն, հաջորդ 50 տարիների ընթացքում երկրագնդի միջին ջերմաստիճանը կբարձրանա երկուսից երեք աստիճանով, ըստ Ցելսիուսի սանդղակի, իսկ այս դարի վերջում այն կարող է գերազանցել հինգ կամ վեց աստիճանը: (Ստեռնի զեկույցը՝ կլիմայի փոփոխության տնտեսական ազդեցության վերաբերյալ, 2006թ): Սա կարող է հանգեցնել մի շարք ծանր հետևանքների՝ սկսած հավերժական սառույցների հալոցքից մինչև տրոպիկական անտառների կորուստ (ածխածնի պաշարներ), ինչպես նաև գրեթե բոլոր տրոպիկական սառցադաշտերի վերացում և բևեռային սառցադաշտերի հալոցք: Երկուսից երեք աստիճանի շեմն անցնելուց հետո, արագ ընթացող տաքացման գործընթացը կանգնեցնելը չափազանց դժվար կլինի:

Արտանետումների ծավալի էական կրճատումը մարդկության առջև ծառայած խնդիրներից է՝ ուղղված երկրագնդի տաքացումը վտանգավոր մակարդակից ցածր պահելուն, ինչը պահանջում է բոլոր երկրների ջանքերի համախմբում:

Այնուհանդերձ, յուրաքանչյուր ոք կարող է նպաստել արտանետումների ծավալի կրճատմանը: Շատ մարդիկ, ովքեր կրում են կլիմայի փոփոխության ամենամեծ ազդեցությունը, արտադրում են երկրագնդի ընդհանուր արտանետումների միայն մի փոքր տոկոսը, և այդ մարդկանց հարմարվողականությունը կլիմայի փոփոխության հնարավոր ազդեցություններին պետք է դարձնել գերակա խնդիր:

Իրատեսակ՝ան է արդյոք նվազեցնել աղետների ռիսկը մարդասիրական օգնության շնորհիվ:

Նույնիսկ ծայրահեղ անհրաժեշտության պայմաններում մարդասիրական օգնությունը կարելի է այնպես ցուցաբերել, որ այն նպաստի անհատների, տնային տնտեսությունների և համայնքների սեփական կարողությունների զարգացմանը, դրանով իսկ հզորացնելով տեղական հաստատությունների կարողությունները: Օրինակ, կանխիկ գումարի բաշխումը հնարավորություն է տալիս մարդկանց հավասարակշռել արտակարգ իրավիճակներում առաջացող կարիքների բավարարումը կենսապահովման միջոցների պահպանման հետ՝ կանխելով այն գործողությունները, որոնք կարող են նրանց առավել խոցելի դարձնել: Երբ արտակարգ իրավիճակներում միջազգային կազմակերպություններն աշխատում են տեղական կազմակերպությունների հետ օգնություն բաշխելու նպատակով, ինչպես, օրինակ՝ ժամանակավոր կամ անցումային կացարանների համար նախատեսված նյութերի բաշխումն է, ոչ միայն օգնություն բաշխողներն են օգտվում տեղացիների գիտելիքներից, այլև տեղական կազմակերպություններն են ձեռք բերում աղետների ժամանակ օգնություն ցուցաբերելու փորձ, ինչը կարող է օգնել վերջիններիս իրենց համայնքներում աղետներին նախապատրաստման միջոցառումներ⁶ իրականացնելու համար: Մարդասիրական օգնությունը նման եղանակով արդյունավետորեն ցուցաբերվում է աղետային տարբեր իրավիճակներում, որն իրատեսական է: *Տես «Արագ վերականգնում մարդասիրական ձգնաժամերից» բաժնի 5.2 կետը:*

Դանդաղ վրա հասնող աղետների ժամանակ ներկա և ապագա ռիսկերի նվազեցման հնարավորությունները նույնիսկ ավելի շատ են: Չարգացման և մարդասիրական օգնության կազմակերպությունները կարող են օգնություն ցուցաբերելով նվազեցնել ջրից վարակվելու վտանգը, օրինակ՝ ջրաղբյուրների վերակառուցում երաշտից տուժած տարածքներում, ջրիեղեղների ժամանակ տեղեկատվության և բլրի տրամադրում՝ խմելու ջուրն անվտանգ դարձնելու նպատակով: Այս

24 Դիմակայելու նպատակով

կազմակերպությունները կարող են տրամադրել նաև տեխնիկական աջակցություն՝ վաղ ազդարարման համակարգերն⁶ ամրապնդելու համար, բարելավել տարհանման գործընթացները և ստեղծել ռիսկերի գնահատման և նվազեցման կարողություններ տեղական մակարդակում: *Տե՛ս «Դանդաղ վրա հասնող աղետներ» բաժնի 5.4 կետը:*

«Sphere» ծրագրի մարդասիրական օգնության մի շարք առանցքային չափորոշիչներ կիրառելի են աղետների ռիսկի նվազեցման համար: Համապատասխան և իրատեսական գործողությունների, ցուցանիշների վերաբերյալ ղեկավար ցուցումները ներկայացված են «Sphere» ձեռնարկում: *Տե՛ս Գործիքներ և ռեսուրսներ, էջ 258:*

Գործիքներ և ռեսուրսներ

Տեղեկատվության և հղումների համար *տե՛ս Գործիքներ և ռեսուրսներ:*

ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՐՄԱՐԿՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՄԲԵՐԸ

Գլուխ 2. Նախատեսված է օգնել զարգացման և մարդասիրական ոլորտի պրակտիկ գործունեության մեջ ընդգրկված աշխատակիցներին ըմբռնելու, թե՛ ինչպես կարող են դիմակայել աղետների և կլիմայի փոփոխության վտանգներին բնակչության առանձին խմբեր, ինչպիսիք են երեխաները, տղամարդիկ, կանայք ու որոշ ռիսկային խմբեր և, թե՛ ինչպես կարող են վերջիններս նպաստել դիմակայման կարողությունների զարգացմանը⁶: Ընտրված օրինակների միջոցով նախատեսվում է բարձրացնել մարդկանց իրազեկումը խոցելիության⁶ տարբեր տեսակների վերաբերյալ: Պրակտիկ գործունեության մեջ ընդգրկված աշխատակիցներին խորհուրդ է տրվում կիրառել սույն գլխի վերջում ներկայացված ստուգաթերթիկը՝ որոշակի համատեքստում այլ բարձր ռիսկային խմբերի հետ կապված խնդիրները վերլուծելու համար: Այս գլուխը ներառում է.

- *Բացատրություններ* յուրաքանչյուր խմբին սպառնացող ռիսկի բնույթի և պատճառների վերաբերյալ,
- *Օրինակներ* ծրագրերի տեսակների և այդ ծրագրերի պաշտպանության օգտին տարվող գործունեության վերաբերյալ, որոնք կարող են օգտակար լինել բոլոր խմբերի համար,
- *Պատասխաններ* հաճախ տրվող հարցերին,
- *Ստուգաթերթիկ* բնակչության հիմնական ռիսկային խմբերի մասնակցությունը և գործունեությունն ապահովելու համար:

2.1 Երեխաներ

Այնտեղ, որտեղ աղետի ռիսկը⁶ ընդհանուր առմամբ, մեծ է բնակչության համար, խիստ հավանական է, որ այն ավելի մեծ կլինի երեխաների համար:

Հանկարծակի վրա հասնող աղետների ժամանակ, ինչպիսիք են երկրաշարժը և սողանքները, խոցելի են հատկապես այն աշակերտները, որոնց դպրոցի շենքը չի կարող դիմակայել վտանգին: Բոլոր տեսակի աղետային իրադարձությունները⁶, այդ թվում նաև, թույլ և փոքր ազդեցությամբ աղետները, ինչպիսիք են պարբերաբար տեղի ունեցող

ջրհեղեղները և երաշտները, կարող են բացասաբար անդրադառնալ երեխաների բարեկեցության վրա՝ ընտանիքի եկամտի նվազման, կրթության ընդհատման, ընտանիքի անդամի մահվան կամ հիվանդության պատճառով: Այն տնային տնտեսությունները, որոնք հայտնվում են ծանր տնտեսական իրավիճակում, անչափահաս աղջիկներին կարող են դրդել վաղ ամուսնության կամ մարմնավաճառության, իսկ տղաներին՝ հանցագործության:

Կլիմայի հետ կապված վտանգների ուժեղացումը⁶ և հաճախականության աճը, ինչպես նաև երկարաժամկետ կլիմայական փոփոխությունները⁶ և դրանց հնարավոր վնասը պարենի և սննդի անվտանգության, առողջության և կենսական ծառայությունների վրա, նույնպես կարող են ծանր վնաս հասցնել երեխաներին, քանի որ թերսնումը և վատ առողջական վիճակը մանկահասակ տարիքում խոչընդոտում են երեխաների հետագա ֆիզիկական զարգացումն և ուսումը:

Երեխաներն իրավունք ունեն լինել պաշտպանված և մասնակցել իրենց կյանքի վրա ազդող որոշումների կայացմանը: Նրանք ունակ են նաև ընտանիքում, դպրոցում և համայնքում հանդես գալ որպես աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության գործընթացների ակտիվ և ազդեցիկ մասնակիցներ, և նրանց մասնակցությունը դիմակայման կարողությունների ստեղծման գործում պետք է խրախուսվի:

2.1 Աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագրերի մշակման օրինակներ, որի կենտրոնում գտնվում են երեխաները

- Վերապատրաստում և ռեսուրսների հատկացում այն հաստատություններին, որոնք պատասխանատու են աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագրերի մշակման, իրականացման, մշտադիտարկման և քաղաքականության ձևավորման գործընթացներում երեխաներին ընդգրկելու համար:
- Դպրոցներում սննդի բաշխման ծրագրերի իրականացում պարբերաբար սպառնացող վտանգների ժամանակ և հետագա թերսնումը կանխելու նպատակով, ինչպես նաև ընտանիքներին խրախուսում երեխաներին դպրոցում պահելու համար:
- Սոցիալական պաշտպանություն/կանխիկ գումարի փոխանցման հնարավորության ապահովում՝ առկա խոցելիության աստիճանը նվազեցնելու համար:
- Երիտասարդական ակումբների և երեխաների խմբերի մասնակցություն ռիսկերի գնահատման գործընթացին:

2.1 Աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագրերի մշակման օրինակներ, որի կենտրոնում գտնվում են երեխաները (շարունակություն)

- Նպաստել, որպեսզի երեխաներն ընդգրկվեն աղետների կառավարման, երեխաների բարեկեցության և կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային քաղաքականությունների մշակման և իրականացման գործընթացներում:
- Դպրոցական կառույցների ամրացում՝ հայտնի վտանգներին և կանխատեսված կլիմայական փոփոխություններին դիմակայելու համար:
- Արտակարգ իրավիճակների գործողությունների պլանի մշակում՝ հայտնի վտանգներին և կլիմայի կանխատեսված փոփոխություններին դիմակայելու նպատակով կրթելու և ծառայություններ մատուցելու համար:
- Երեխաների համար նախատեսված ներկայացումների կազմակերպում, ծիծաղաշարժ գրքերի և այլ դիդակտիկ նյութերի տրամադրում՝ աղետի պատճառներն ու ազդեցությունները, ինչպես նաև կլիմայի փոփոխության ռիսկերը բացատրելու համար:
- Պաստառների պատրաստում, որոնք կներկայացնեն ռիսկերի նվազեցման և հարմարվողականության փորձը, ինչպիսիք են տարիանումը, ջրի պահեստավորումն ու մաքրումը, հիգիենան, անասունների պաշտպանությունը և այլն:
- Համապատասխան տարիքի երեխաների և երիտասարդների մասնակցության ապահովում տարածքների մանգրային թփուտների խնամքի, երաշտի հակված տարածքներում ջրի տարաների մաքրման, լեռների ստորոտներին ծառատունկի և այլ աշխատանքներում:
- Մասնակցային տեսաձայնագրությունների կիրառում՝ որպես միջոց երեխաներին աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության գործընթացներում ընդգրկելու համար:

Չաճախ տրվող հարցեր

Ո՞վ է համարվում երեխա:

Երեխաների իրավունքների մասին կոնվենցիան տալիս է «երեխա» բառի սահմանումը, ըստ որի, երեխա է համարվում 18 տարեկանից փոքր յուրաքանչյուր անհատ: Այս սահմանումը կարող է տարբերվել ըստ մշակութային և սոցիալական համատեքստի:

Անհրաժեշտ է մանրամասն վերլուծել վտանգի ենթակա և տուժած բնակչության շրջանում երեխաներին տրված սահմանումը, որպեսզի բոլոր երեխաները և երիտասարդները կարողանան իրականացնել իրենց պաշտպանության իրավունքը⁶ և մասնակցեն աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության խնդիրների վերլուծությանը և, դրանց հետ կապված, որոշումներ կայացնելու գործընթացներին:

Ո՞րն է երեխաներին աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերի նվազեցման գործընթացներում ընդգրկելու առավելությունը:

Երեխաները սովորաբար կազմում են խոցելի համայնքների, քաղաքային բնակավայրերի և երկրների ավելի քան կեսը, և վերջիններիս ծրագրերի մշակման և իրականացման գործընթացներում ընդգրկելը բարձրացնում է դիմակայման ծրագրերի կամ քաղաքականությունների կողմից նրանց կարիքներին անդրադառնալու հավանականությունը: Եվ, քանի որ երեխաները շփվում են այլ երեխաների և մեծահասակների հետ, ապա նրանք կարող են դառնալ տեղեկատվության, կրկնօրինակման և փոփոխությունների ներմուծման արդյունավետ գործակալներ: Երեխաների մոտ ռիսկի ընկալման և այն կառավարելու եղանակների մասին գիտելիքների առկայության պարագայում, հնարավոր է, որ ձեռնարկվող գործողությունները ունենան միջնաժամկետ և երկարաժամկետ կայուն ազդեցություն:

Որո՞նք են երեխաներին աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերի նվազեցման գործընթացներում ընդգրկելու խոչընդոտները, և ինչպե՞ս է կարելի դրանք հաղթահարել:

Որոշ մշակույթներում, մեծերի հանդեպ հարգանքից դրդված, երեխաները չեն խրախուսվում կամ երեխաներին թույլ չի տրվում արտահայտել սեփական տեսակետը: Ընդհանուր առմամբ, բնակչության շրջանում պետք է բարձրացնել երեխաներին աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության գործընթացներում ընդգրկելու հիմնավորումների և առավելությունների վերաբերյալ իրազեկման աստիճանը:

Որոշ դեպքերում ծնողներին կարող է անհանգստացնել այն հանգամանքը, որ նման գործունեության մեջ երեխաներին ընդգրկելը կարող է անմիջական վնաս հասցնել նրանց, կամ որոշ խմբեր, որոնք անձնական շահերից ելնելով պահպանում են «ստատուս-կվո» վիճակը, կարող են այդ երեխաներին իրենց թիրախը դարձնել, եթե վերջիններս արտահայտեն իրենց կարծիքը: Մինչև որևէ գործողություն նախաձեռնելը, անհրաժեշտ է վերլուծել երեխաների ներգրավման հնարավոր հետևանքները և ապահովել նրանց պաշտպանվածությունը, ինչը հույժ կարևոր խնդիր է:

Չաջորդ, ուշադրության արժանի, գործնական խնդիրներից է համադրել ծրագրային գործողությունները երեխաների անձնական պարտավորությունների հետ, այդ թվում՝ դպրոց հաճախելը, տնային առաջադրանքների կատարումը, այլ անձնական պարտավորություններ:

Ի՞նչն է նպաստում այն բարենպաստ միջավայրի ստեղծմանը, որը

խթանում է երեխաների մասնակցությունն աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագրերի մշակմանը:

Այստեղ ներառված գործոններն են. ռիսկերի վերաբերյալ իրազեկվածության մակարդակը համայնքներում կամ հարևան տարածքներում, ուսուցիչների, հոգևոր առաջնորդների և իշխանության այլ ներկայացուցիչների դիրքորոշումը՝ երեխաներին ռիսկի գործոններին և ռիսկի նվազեցմանը վերաբերող քննարկումներում ներգրավելու մասին, համայնքի կամ հարևան տարածքների հետ կապված կազմակերպչական հարցերը, երեխաների պաշտպանության և բարեկեցության վերաբերյալ օրենքների առկայությունը և դրանց իմացությունը, պետական քաղաքականության և բյուջեի առկայությունն ընդհանուր մասնակցության վերաբերյալ ազգային և տեղական մակարդակներում, վերաբերմունքը երեխաների նկատմամբ (հատկապես աղքիկների), որոնք արտահայտում են իրենց կարծիքը և մասնակցում ընդհանուր միջոցառումներին:

Բարենպաստ միջավայրի ստեղծման վերաբերյալ հետագա ցուցումները *տե՛ս Գլուխ 6-ում. «Բարենպաստ միջավայրի ստեղծում աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համար»:*

ԴԵՊԵԻ ՌԻՍԿՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ. ԱՄԱՌԱՅԻՆ ՃԱՄԲԱՐՆԵՐԻ ԿԱՐԺԱՆՔՆԵՐՆ ՕԳՆՈՒՄ ԵՆ ԵՐԵՒԱՆԵՐԻՆ ԻՐԵՆՑ ԶԳԱԼ ԱՎԵԼԻ ԱՊԱՐՈՎ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ

Ֆիլիպիններ, Save the Children կազմակերպություն

Ձեռնկան սովորում է բարձր ռիսկային գոտում տեղակայված Ֆիլիպինների Մեյոն հրաբխի մոտ գտնվող Լուզոն կղզու Ալբեյ համայնքի տարրական դպրոցի 4-րդ դասարանում: Նա այն բազմաթիվ երեխաներից է, ով ակնատես է եղել 2006թ. նոյեմբերին Դուրիանում տեղի ունեցած ավերիչ թայֆունին, որը բազմաթիվ զոհերի պատճառ դարձավ մոտակայքում գտնվող հրաբխի լանջերից հոսող ցեխաբարային սողանքների պատճառով: Ձեռնկան և բարձր ռիսկային գոտում գտնվող տարրական դպրոցների 616 աշակերտներ այցելեցին «Bicol Assistance» ծրագրի կողմից ֆինանսավորվող ամառային մանկական ճամբար, որը կազմակերպել էր Save the Children կազմակերպությունը՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) ֆինանսական աջակցությամբ՝ նպատակ ունենալով սովորեցնել երեխաներին նախապատրաստվել և արձագանքել աղետներին՝ դրանով իսկ **նպաստելով վերջիններիս վտանգի և կլիմայի փոփոխության համատեքստի ըմբռնման մակարդակի բարձրացմանը:**

Ձեռնկան հետաքրքրված է ծրագրով, քանի որ ապրում է Բիկոլ տարածաշրջանի ամենաակտիվ «Մեյոն» հրաբխից ընդամենը ութ կիլոմետր հեռավորության վրա: Նա նաև բաջատեղյակ է, որ իր ընտանիքը և համայնքը պարբերաբար ենթարկվում են թայֆունի, սողանքի, ջրիեղդի, երկրաշարժի,

հրդեհի և հրկարուխի վտանգների ազդեցությամբ:

Ճամբարում նա մասնակցում է 7.5 բալլ ուժգնությամբ երկրաշարժի սցենարով անցկացվող վարժանքներին, որը նաև հրդեհ էր առաջացնում՝ ճամբարում դառնալով «զանգվածային զոհերի» պատճառ: Պայթյունի ձայնը լսելուց հետո, որն ազդարարում էր մոդելավորված երկրաշարժի մասին, նա և մյուս ճամբարականներն անմիջապես կռացան՝ ձեռքերով պաշտպանելով գլուխները և թաքնվեցին ամուր սեղանների և աթոռների տակ, ինչպես որ սովորեցրել էին: Լինելով իր դպրոցում անցկացվող վարժանքների ժամանակ Բուլիլիթի արտակարգ իրավիճակներին արձագանքող թիմի (BERT) ղեկավարներից մեկը, Ջեսիկան, տարիանումն ազդարարող զանգերը և սուլոցները լսելուց հետո, իր համադասարանցիներին տարավ առավել անվտանգ տարածք:

Անվտանգ վայր հասնելուց հետո նա ուշադրությամբ լսեց դպրոցի արտակարգ իրավիճակներին արձագանքող թիմի անվտանգության խորհրդի և աղետների ռիսկի նվազեցման կառավարման խմբի գլխավոր հրամանատարի ցուցումները՝ աշակերտների փաստացի թվաքանակը պարզելու և խուճապի մատնվածներին մարդկային պատնեշով շրջափակելու վերաբերյալ: Գլխավոր հրամանատարը հանձնարարեց մեծահասակներից կազմված խմբին և փրկարար թիմին անցնել բոլոր դասասենյակներով և տուժածներին տեղափոխել ապահով տարածք: Ջեսիկան տեղյակ էր, որ երեխաները չպետք է ընդգրկվեն որոնողական և փրկարարական աշխատանքներում, ինչպես նաև այն, որ մեծահասակները պետք է ուսուցողական դասընթացներ անցնեն այս հարցերի վերաբերյալ՝ «երեխաների իրավունքների պաշտպանության մասին» կոնվենցիայի դրույթներին համապատասխան գործելու համար: Ջեսիկան, ինչպես և մյուս մասնակիցները, առաջին բուժօգնություն ցուցաբերեցին համադասարանցիներին: Այնուհետև, նա խնդրեց համադասարանցիներին օգնել տեղափոխելու տուժածներին շտապ օգնության ավտոմեքենաներ՝ մոտակայքում գտնվող հիվանդանոց հասցնելու համար:

Բացի հատուկ վերապատրաստում անցած ուսուցիչներից, այս վարժանքների անցկացմանն օժանդակեցին նաև Ֆիլիպինների Ազգային կարմիր խաչը, Զաղաքապետարանի արտակարգ իրավիճակների արձագանքման թիմերը, Զաղաքապետարանի աղետների համակարգման խորհուրդը, Հրդեհների դեմ պայքարի գործակալությունը և Ալբեյ Մաբուհեյի աշխատանքային խումբը: Ջեսիկայի խոսքերով, ամառային ճամբարի փորձը ցույց տվեց, որ ինքը կարող է աջակցել մարդկային կյանքեր փրկելու գործընթացին, ինչպես նաև այնպես անել, որ մյուս երեխաներն իրենց զգան ավելի ապահով և անվտանգ:

Գործիքներ և ռեսուրսներ

Տեղեկատվության և հղումների համար *տես էջ 260*. **Գործիքներ և ռեսուրսներ:**

2.2 Կանայք և տղամարդիկ

Աղետի և կլիմայի փոփոխության ռիսկերը տարբեր կերպով են ազդում հակառակ սեռի ներկայացուցիչների վրա: Վտանգի ենթարկվելու⁶ և խոցելիության բնույթն ու աստիճանը տարբեր է կանանց, տղամարդկանց, աղջիկների ու տղաների մոտ՝ վերջիններիս տարբեր դերերի, պատասխանատվության, ռեսուրսների մատչելիության, ինչպես նաև տեղական և ավանդական իրավունքի և իրավական ու մշակութային խնդիրների պատճառով: Օրինակ.

- Կանանց տարհանումը ապահով տարածքներ կարող է ավելի դժվար լինել վերջիններիս հղիության կամ երեխաների և խնամքի տակ գտնվող շարժվելու սահմանափակում ունեցող անձանց առկայության պարագայում: Կանանց և նրանց խնամքի տակ գտնվողների վտանգի ենթարկվելու հավանականությունն ավելի մեծ է, քան նրանցը, ովքեր ի վիճակի են հեռանալ բարձր ռիսկային տարածքներից:
- Կանանց՝ պաշտոնապես հողի սեփականություն չունենալու հանգամանքը կարող է խոչընդոտ հանդիսանալ վարկային ռեսուրսներից օգտվելու համար, ինչը նրանց հնարավորություն կտար կլիմայի փոփոխությանը հարմարվելու միջոցներ ձեռնարկել կենսական պայմանները⁶ բարելավելու, համապատասխան շինարարական նյութեր ձեռք բերելու կամ առավել անվտանգ տարածքներ տեղափոխվելու համար:
- Ավանդական գյուղական կենսապահովման միջոցների արտադրության անկումը կարող է ստիպել տղամարդկանց մեկնել բնակավայրից՝ աշխատանք փնտրելու նպատակով կամ ծավալել վտանգավոր գործունեություն՝ ընտանիքի համար անհրաժեշտ ապրուստի միջոցների հայթայթելու համար:
- Տղաները/տղամարդիկ կարող են չիմանալ ինչպես կերակրել և հոգ տանել երեխաների մասին, եթե ստիպված լինեն այդ դերը ստանձնել աղետային իրավիճակի արդյունքում՝ ընտանիքի կնոջ մահվան կամ մարմնական վնասվածք ստանալու պարագայում:

Կանանց խոցելիության հիմնական պատճառների հիմքում հաճախ ընկած են հասարակությունում գոյություն ունեցող անհավասար իրավունքները, ինչն անդրադառնում է նրանց կյանքի բոլոր կողմերի վրա և մերժում վերջիններիս հիմնարար իրավունքները՝ սկսած կրթության հասանելիությունից մինչև համայնքի ղեկավարմանը⁶ մասնակցելը:

Կանանց խոցելիությունը կարող է պայմանավորված լինել նաև մշակութային դերով, ինչը սահմանափակում է նրանց գիտելիքների և կարողությունների զարգացումը, ինչպես, օրինակ, լողալ սովորելը կամ ժողովներին մասնակցելը, որը կարող էր հնարավորություն տալ նրանց փրկել կյանքեր և կանխել աղետի կողմից պատճառվող կորուստները: Սա, իր հերթին, ազդում է այդ ընտանիքների մյուս խոցելի անդամների վրա:

Շատ հասարակություններում տղամարդկանց խոցելիությունը նույնպես սերտորեն կապված է մշակութային սովորույթների հետ: Բազմաթիվ տղամարդիկ իրենց պարտավորված են զգում ընտանիքի հիմնական կարիքները հոգալու համար և, ի վիճակի չլինելու դեպքում, դիմում են վտանգավոր աշխատանքի կամ հեռանում իրենց բնակավայրերից՝ այլ տեղերում աշխատանք գտնելու ակնկալիքով, տարվում են խմիչքով կամ զբաղվում թմրամուլությամբ: Աղետներին և կլիմայի փոփոխությանը դիմակայող կանանց և տղամարդկանց կարողությունների ձևավորումը պայմանավորված է վերջիններիս սոցիալական, մշակութային, տնտեսական և բնական ռեսուրսների կառավարման⁶ դերով: Օրինակ.

- Կանայք հաճախ եական ազդեցություն են գործում երեխաների, ընտանիքի մյուս անդամների վարքագծի և, ավելի լայն առումով, համայնքի վրա և, այդ իսկ պատճառով, կարող են կարևոր դեր խաղալ ռիսկերի նվազեցման գործում՝ ապահովելով պարենի անվտանգ պահեստավորումը, պահպանելով կլիմային համապատասխան ջրի սպառման և հիգիենայի կանոնները, ինչպես նաև նախապատրաստվելով դիմակայելու անբարենպաստ պայմաններին:
- Շատ երկրներում, ըստ ավանդույթի, տղամարդիկ ավելի շատ ժամանակ են անցկացնում տանից դուրս և կարող են կանանցից և երեխաներից ավելի շուտ տեղեկանալ աղետների ազդարարման մասին: Նրանք կարող են նվազեցնել իրենց ընտանիքներին սպառնացող վտանգն այդ տեղեկատվությունը հնարավորինս արագ հաղորդելով իրենց ընտանիքի անդամներին:
- Մայրերը ու հայրերը դուստրերին և որդիներին են հաղորդում կենսապահովման ավանդական միջոցների մասին իրենց գիտելիքներն ու հմտությունները, այդ թվում նաև այն, թե ինչպես կառավարել ռիսկերը եկամուտ ստեղծելու տարբեր գործողությունների միջոցով, ինչպես հարմարվել եղանակային տարբեր դրսևորումներին կամ շուկայական տատանումներին:
- Կանայք և տղամարդիկ կարող են ունենալ նաև բնական ռեսուրսների կառավարման հատուկ գիտելիքներ, որոնք չափազանց կարևոր են իրենց կենսապահովման համար և, ըստ այդմ, կարող են տիրապետել բացառիկ հմտությունների՝ հարմարեցնելով այդ գիտելիքները կլիմայի փոփոխությանը:

Ճգնաժամերը և սթրեսային իրավիճակները⁶ նույնպես հնարավորություն են ընձեռում կանանց և տղամարդկանց մարտահրավեր նետել սոցիալական գործունեերով պայմանավորված գենդերային և ուժային կառույցների դերին⁶, օրինակ, համայնքի ավագանու դերը տեղական իշխանությունների հետ հարմարվողականության առաջնահերթությունների վերաբերյալ տարվող բանակցություններում, կամ որպես ֆինանսական աջակցություն ստացող շահառուներ՝ աղետներից վերականգնման գործընթացի համար: Նման իրավիճակներում աղետների և կլիմայի փոփոխության դիմակայունության ստեղծումը կարող է փոխադարձ օգտակար լինել ռիսկերի կառավարման և գենդերային հավասարության տեսանկյունից:

2.2 Աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագրերի մշակման օրինակներ՝ հիմնված գենդերային զգայունության գործոնի վրա

- Ապահովել կանանց և տղամարդկանց մասնակցությունը պլանավորման գործընթացներին, ուսուցողական դասընթացներին և վարժանքներին՝ վաղ ազդարարում և տարհանում կատարելու նպատակով:
- Անմիջականորեն կանանց տրամադրել փոխանցված կանխիկ գումարները՝ ընտանիքի սննդի անվտանգությունը և հիմնական կարիքները բավարարելու համար:
- Կանանց և տղամարդկանց կողմից ավանդաբար պահվող անասունների համար տրամադրել անասնակեր և անասնաբուժական ծառայություն:
- Խթանել կանանց և տղամարդկանց մասնակցությունը ռիսկերի գնահատման քննարկումներին և նպաստել նրանց ներդրումներին՝ դիմակայման առաջնահերթ կարողություններ ստեղծելու համար:
- Գենդերային առանձնահատկությունները հաշվի առնող ծրագրերի մշակման ժամանակ աջակցել տարբեր սեռերի վրա աղետների և կլիմայի փոփոխության ռիսկի ազդեցությունների հետ կապված հետազոտությունների կատարմանը և լավագույն փորձի կիրառմանը:
- Ապահովել համապատասխան վարկային միջոցների և ուսուցման հասանելիություն կանանց և տղամարդկանց համար՝ վերջիններիս կենսապահովման միջոցները փոփոխվող պայմաններին հարմարեցնելու նպատակով:
- Ընդգրկել կանանց և տղամարդկանց հողօգտագործման քաղաքականության մշակման գործընթացներում՝ իրազեկելով նրանց ռիսկի ենթակա տարածքների և տեղահանման հնարավորությունների մասին:
- Իրավաբանական օժանդակություն ցուցաբերել կանանց և տղամարդկանց՝ ծննդյան վկայականներ, նույնականացման քարտեր, սեփականաշնորհման վկայականներ ստանալու համար՝ ինչը հնարավորություն կտա վերջիններիս պահանջել իրենց իրավունքների իրականացումը և մասնակցել քաղաքական գործընթացներին:

Ֆաճախ տրվող հարցեր

Ուժեղ են ավելի շատ վտանգի ենթարկվում, կանայք թե՛ տղամարդիկ: Արդյո՞ք այդ վտանգները տարբեր են աղետների և կլիմայի փոփոխության պարագայում:

Յուրաքանչյուր տեղանքում և պարագայում աղետի և կլիմայի փոփոխության ռիսկի բնույթը և աստիճանը տարբեր է կանանց և տղամարդկանց համար: Ինչ վերաբերում է աղետներից հետո մահացության տոկոսին, ապա 1998թ. «Միտչ» փոթորիկի ժամանակ զոհվեց ավելի շատ տղամարդ, քան կին, քանի որ փրկարարական աշխատանքներում տղամարդ ավելի շատ էր ընդգրկված, իսկ 2004թ. Ջնդկական օվկիանոսում տեղի ունեցած ցունամիի ժամանակ կանանց շրջանում զոհերի թիվն ավելի մեծ էր՝ լողալ չկարողանալու և երկար հագուստ կրելու պատճառով, ինչը խոչընդոտում էր տեղաշարժը: Սակայն վտանգի ենթակա լինելը ներառում է այլ հնարավոր կորուստներ, ինչպիսիք են կենսապահովման միջոցները, բնակարանը, առողջությունը և բարեկեցությունը: 2007թ. Պերուի երկրաշարժից հետո գործազրկության մակարդակն առավել կտրուկ աճեց կանանց շրջանում, քանի որ երկրաշարժից վնասվեցին այն հիմնական արտադրություններն ու ծառայությունները, որտեղ ընդգրկված էին կանայք, իսկ, ըստ տվյալների, Ավստրալիայի գյուղական բնակավայրերում պարբերաբար տեղի ունեցող ջրհեղեղներն ու երաշտներն առավել ծանր անդրադարձան տղամարդկանց հոգեկան վիճակի վրա, որոշ դեպքերում անգամ հանգեցնելով ինքնասպանության: 2007թ. Նեպալում տեղի ունեցած ջրհեղեղի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ կանայք տեղահանման և սոցիալական ցանցերի ոչնչացման արդյունքում, որից նրանք կախման մեջ էին, ապրում են տագնապի և անօգնականության զգացում, տառապում անքնությամբ:

Որպեսզի ծրագրերում հաշվի առնվեն գենդերային առանձնահատկությունները, ռիսկերի գնահատման գործընթացում անհրաժեշտ է ընդգրկել տղամարդկանց և կանանց համապատասխան տվյալները, հնարավորության սահմաններում բաժանելով ըստ սեռերի և այլ չափանիշների (տարիք, կենսամիջոց, տեղանք և այլն): Ծրագրի բոլոր փուլերում անհրաժեշտ է շարունակել գենդերային հարցերի և ըստ սեռերի պայմանավորված ազդեցության մշտադիտարկումը: Հետագա ցուցումների համար տե՛ս այս բաժնում ներկայացված *ստուգաթերթիկը*:

Ինչպե՞ս կարող են կանայք ընդգրկվել աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության գործընթացներում այն մշակույթներում, որտեղ կանանց կողմից սեփական կարծիք արտահայտելը, հատկապես հասարակության մեջ, չի խրախուսվում:

Մինչև այլ գործունեություն ծավալելն անհրաժեշտ է իրականացնել կանանց և տղամարդկանց, տղաների ու աղջիկների սոցիալական,

տնտեսական քաղաքական և բնական ռեսուրսների կառավարման դերի գենդերային վերլուծություն, եթե այն դեռ արված չէ: Այն մեկնարկային տվյալներ կտրամադրի ծրագիր մշակելու համար, ինչպես նաև կարող է օգտագործվել արդյունքների վերաբերյալ քննարկումներում: Այս նպատակով ծրագրի իրականացման ողջ ընթացքում տարբեր սեռերի ֆոկուսային խմբերի հետ պետք է անցակցվեն հանդիպումներ, կանանց և տղամարդկանց հարցումը պետք է իրականացվի առանձին, ուսումնասիրությունները պետք է կատարվեն այնպես, որ հնարավոր լինի ստանալ մանրամասն տվյալներ, իսկ խառը գենդերային հանդիպումների ժամանակ պետք է կիրառվեն մեթոդներ, որոնք հնարավորություն կտան կանանց և տղամարդկանց կատարել իրենց ներդրումը: Աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության ոչ բոլոր գործողություններ են ընդգրկում հանրային քննարկումներ: Ռիսկերի նվազեցման միջոցառումներ ձեռնարկվում են բոլոր մակարդակներում՝ սկսած տնային տնտեսություններից մինչև պետական քաղաքականության մշակումը, ինչպես նաև ամենօրյա կյանքի բոլոր ոլորտներում՝ սկսած ջրի պահեստավորումից մինչև բերքահավաք և վարժանքների իրականացում գործարաններում և դպրոցներում: Գոյություն ունեն կանանց և տղամարդկանց մասնակցությունն ապահովելու բազմաթիվ հնարավորություններ՝ իրենց մշակութային կամ ավանդական պարտավորությունների սահմաններում և դրանցից դուրս:

Գործիքներ և ռեսուրսներ

Տեղեկատվության և հղումների համար *տես էջ 262*. *Գործիքներ և ռեսուրսներ:*

2.3 Բարձր ռիսկային խմբեր

Որոշ ֆիզիկական, սոցիալական և մշակութային գործոններ կարող են մարդկանց առանձին խմբերի դարձնել վտանգներին և կլիմայի փոփոխության ազդեցություններին առավել ենթակա ու խոցելի:

Չաշմանդամություն ունեցող անձինք

Չաշմանդամությունը ֆիզիկական կամ մտավոր խանգարում է, որը սահմանափակում է մարդու կարողությունները, շարժունակությունն ու ակտիվությունը: Չաշմանդամություն ունեցող կանայք, տղամարդիկ և երեխաները հաճախ դուրս են մնում համայնքի ամենօրյա կյանքի ընթացքից իրազեկության բացակայության կամ համայնքի մյուս անդամների ենթադրությունների պատճառով: Նրանց կարող են մասնակից չդարձնել համայնքին սպառանցող վտանգների⁶ քննարկումներին և, այդ իսկ պատճառով, նրանք չեն կարող նպաստել ռիսկերի նվազեցման և հարմարվողականության այն միջոցների բացահայտմանը, որոնք կարող են իրականացվել և արդյունավետ լինել հաշմանդամություն ունեցող անձանց համար: Սահմանափակ մտավոր կարողություններ ունեցող մարդիկ, հատկապես, խոցելի են հանկարծակի վրա հասնող վտանգների նկատմամբ, օրինակ, վերջիններս կարող են լավ չընկալել ցունամիին վերաբերող վաղ ահազանգման ազդանշանները և ժամանակին չարձագանքել անվտանգ տարհանման ահազանգին: Սահմանափակ շարժունակությամբ մարդիկ կարող են չափազանց խոցելի դառնալ ջրի աճող սակավության պայմաններում, քանի որ ի վիճակի չեն հասնել հեռու տեղակայված ջրաղբյուրներին:

Բոլոր հաշմանդամներն ունեն այնպիսի կարողություններ, որոնք կարող են օգտակար լինել թե՛ իրենց, և թե՛ ուրիշների համար: Շատ մշակույթներում ընտանիքի ֆիզիկական հաշմանդամություն ունեցող կանայք մշտապես գտնվում են տանը և պատասխանատվություն կրում երեխաների խնամքի հետ կապված որոշ հարցերի համար: Այս դերը կատարելիս նրանք կարող են ծանոթացնել երեխաներին ռիսկերի և ռիսկի նվազեցման փորձերի հետ: Սահմանափակ շարժունակությամբ տղամարդիկ և կանայք կարող են նաև հանդես գալ որպես տեղեկատվության հավաքագրման և այդ տեղեկատվությունը համայնքում տարածելու թիրախային խումբ, օրինակ, կապված ուժեղ տեղումների կամ վաղ ահազանգման հաղորդագրությունների հետ:

2.3 Աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագրերի մշակման օրինակներ, որտեղ հաշվի է առնված հաշմանդամության գործոնը

- Տարհանումների, օգնության բաշխման և աղետների կառավարման այլ գործընթացների ժամանակ ստեղծել օգնության ցանց՝ հոգեկան և ֆիզիկական հաշմանդամություն ունեցող անձանց սատարելու համար:
- Սահմանափակ շարժունակությամբ օժտված անձանց հատկացնել հատուկ տարածքներ և օգնության բաշխման կետեր:
- Սահմանափակ շարժունակությամբ անդամներ ունեցող ընտանիքներին տրամադրել քիչ վառելիք ծախսող վառարաններ:
- Ռիսկի ելթապա և(կամ) կլիմայի փոփոխության ազդեցությունը կրող հաշմանդամներին տրամադրել դրամաշնորհներ՝ իրենց կենսամիջոցները բազմազան դարձնելու նպատակով:

Քրոնիկ հիվանդություններ ունեցող անձինք

Այնպիսի քրոնիկ հիվանդություններ, ինչպիսիք են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ը, պալարախտը և մալարիան զգալի ներգործություն ունեն այն հանգամանքի վրա, թե ինչ ազդեցություն են կրում ընտանիքներն ու համայնքներն աղետների ռիսկից: Օրինակ, ազդեցության տակ ընկած ընտանիքները (այդ թվում՝ ծերերը և երեխաների կողմից ղեկավարվող ընտանիքները) ֆիզիկական աշխատուժի և ներդրումների պակաս են զգում ջրհեղեղին նախապատրաստվելու, երաշտի ազդեցությունից վերականգնվելու համար՝ ընտանիքի մեծահասակ անդամների հիվանդության, ցածր եկամտի, առողջական հարցեր լուծելու կամ թաղում կազմակերպելու համար լրացուցիչ միջոցների հետ կապված դժվարությունների պատճառով: Նույն պատճառներով տուժած ընտանիքի երեխաները թերսնված են և վատառողջ, հետևաբար, առավել խոցելի են հիվանդությունների նկատմամբ, ինչը կլիմայի փոփոխության պայմաններում ավելի լայն տարածում է ստանում:

Երբ աղետը խաթարում կամ վնաս է հասցնում հաստատված ծառայություններին, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով հիվանդների համար կենսական նշանակություն ունեցող բուժումը կարող է հասանելի չլինել, իսկ եթե այդ իրավիճակը երկար է տևում, վիրուսի զարգացումը կարող է արագանալ: Այլ քրոնիկ հիվանդություններով տառապող անձինք նույնպես կարող են դժվարությունների հանդիպել իրենց անհրաժեշտ դեղերը ստանալու համար:

Քրոնիկ հիվանդությունները կարող են ազդել նաև կլիմայի փոփոխության հարմարվողականության նպատակով ընտանիքների և համայնքների կարողությունների զարգացման վրա: Մարդկանց եկամուտը

շատ հաճախ անկայուն է, այդ իսկ պատճառով վերջիններս դիմադրում են նորամուծություններին կամ իրենց կենսամիջոցները բազմազանեցնելու նախաձեռնություններին, որովհետև գիտակցում են, որ ձախողման դեպքում ռիսկը կարող է ավելի մեծ լինել, քան իրենց ամենօրյա ռիսկերն են: Տուժած ընտանիքներում երեխաների գրագիտության աստիճանը կարող է ավելի ցածր լինել, քանի որ այդ երեխաները, դպրոց հաճախելու փոխարեն, իրենց վրա են վերցնում աշխատողի կամ խնամողի դերը: Հետևաբար, այդ ընտանիքները ունեն ցածր եկամուտ և կենսապահովման նվազ հնարավորություններ:

2.4 Աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագրերի մշակման օրինակներ, որտեղ հաշվի է առնված բրոնիկ հիվանդություններով տառապող անձանց գործոնը

- Նպաստել այլ բրոնիկ հիվանդություններով տառապող անձանց մասնակցությանը ռիսկերի գնահատման գործընթացին, աղետների և կլիմայի փոփոխության ազդեցությունների և ռիսկերի նվազեցման միասնական գործողություններին ուղղված վերապատրաստման դասընթացներին: Տե՛ս 2.4 բաժնի *Ստուգաթերթիկը*՝ բարձր ռիսկային խմբերի մասնակցությունը խթանելու համար:
- Կատարել նպատակային գումարային փոխանցումներ և/կամ պարենային օժանդակություն ցուցաբերել տուժած ընտանիքներին՝ պարենի անվտանգությունն ապահովելու համար այնպիսի վտանգների դեպքում, ինչպիսիք են, երաշտը և այլ ճգնաժամային իրավիճակներ:
- Ուղղորդել հիգիենայի հետ կապված հարցերն այն ուղղությամբ, որը կնպաստի երկրորդային վարակի ռիսկի նվազեցմանն այնպիսի վտանգների դեպքում, ինչպիսիք են երաշտը կամ տարհանումը դեպի ժամանակավոր կացարաններ:
- Ապահովել առողջապահական հաստատությունների պաշտպանությունը (վերազինումը) և աշխատանքների համակարգումը բուժանձնակազմի հետ՝ վտանգների ժամանակ ծառայությունների շարունակականությունն ապահովելու համար:
- Մշակել արտակարգ իրավիճակների գործողությունների պլան՝ դեղամիջոցների անխափան հասանելիությունն աղետների և կլիմայի ծայրահեղ դրսևորումների ժամանակ ապահովելու համար:

Տարեց մարդիկ

Ընդհանուր առմամբ, տարեց հասակում մարդկանց շարժողունակությունը և մկանների ուժը նվազում է: Ֆիզիկական այս սահմանափակումները կարող են թույլ չտալ տարեց մարդկանց նախապատրաստվել վտանգներին, օրինակ, ջրիեղելին դիմակայելու համար բարձրացնել հատակի մակարդակը, կամ տախտակներով

փակել պատուհանները՝ փոթորիկի հավանական վնասը կամ վնասի աստիճանը նվազեցնելու համար: Ֆիզիկական սահմանափակումները կարող են նաև խանգարել տարեց մարդկանց ռիսկերի նվազեցման և հարմարվողականության գործողություններ կատարելու համար, որը պահանջում է ձեռքի ուժ, օրինակ, բերքատու այգիներում նոր ծառեր տնկելը՝ հողի երոզիան նվազեցնելու համար, իսկ արտակարգ իրավիճակներում՝ այն կարող է խանգարել նաև փախուստի դիմելուն:

Վատառողջ տարեց տղամարդիկ և կանայք ավելի դյուրընկալ են հիվանդությունների նկատմամբ: Աղետներից հետո հաճախ են տեղի ունենում մալարիայի ու խոլերայի բռնկումներ և, ըստ կանխատեսումների, այդ հիվանդություններն առավել լայն տարածում կունենան կլիմայի փոփոխության արդյունքում: Ջերմաստիճանի ծայրահեղ դրսևորումների ժամանակ տարեց մարդկանց մոտ առողջական վիճակի բարդություններն ավելի հաճախակի են դառնում (սույնիսկ մահվան ելքով):

Շատ տարեց մարդիկ, առավել ևս կանայք, ֆիզիկապես, սոցիալապես և հոգեպես կախված են ընտանիքից և համայնքի աջակցության կառույցներից: Այս ցանցերը, որոնք նորմալ պայմաններում գործում են, կարող են էապես թուլանալ տեղահանման, միգրացիայի, ունեցվածքի կորստի/ռիսկացման և աղետների ու կլիմայի փոփոխության այլ դրսևորումների հետևանքով, եթե ջանքեր չեն գործադրվում դրանք հզորացնելու համար: Այնուհանդերձ, տարեց մարդկանց գիտելիքները համայնքի պատմության, տեղանքի և վիճակագրության մասին կարող են չափազանց կարևոր դեր խաղալ ցանկացած ծրագրի և համայնքի համար, ինչպես նաև օգնել բացահայտելու խոցելի խմբերին: Որոշ տարեց կանայք և տղամարդիկ կարող են տիրապետել դժվարությունների հաղթահարման ավանդական միջոցների և ունենալ ռիսկերի նվազեցման փորձ, ինչպիսիք են՝ ցորենի բանկերի ստեղծումը, ոռոգման նպատակով վերգետնյա ջրային հոսքերի պահեստավորումը կամ խառը մշակաբույսեր աճեցնելը, որոնցից մի քանիսը կարող են հարմարեցվել ստեղծված պայմաններին և կիրառվել:

2.5 Աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագրերի մշակման օրինակներ, որտեղ հաշվի է առնված տարեց մարդկանց գործոնը

- Ստեղծել համայնքային ցանց, որը կօժանդակի միայնակ տարեցներին պաշտպանել իրենց տներն ու ունեցվածքն այնպիսի ակնկալվող վտանգներից, ինչպիսիք են փոթորիկն ու ջրհեղեղը:
- Ուշադրության կենտրոնում պահել տարեցների առողջության և հիգիենայի հետ կապված խնդիրները (խորհրդատվություն և նյութական օժանդակություն՝ անկողնային պարագաներ, քլոր և այլն) հիվանդանալու ռիսկը ջրհեղեղի, տեղահանման և այլ վտանգների ժամանակ կանխելու համար:
- Արտակարգ իրավիճակների գործողությունների պլանի մշակում առողջապահական ծառայությունների հետ՝ աղետներից առաջ և հետո գործունեության շարունակականությունն ապահովելու համար:
- Ապահովել տարեց մարդկանց մասնակցությունը համայնքի ռիսկերի գնահատման, գիտելիքների փոխանակման և որոշումների կայացման գործընթացներին:
- Ընդգրկել տարեց մարդկանց համայնքի վաղ ահազանգման համակարգի տարբեր օղակներում, ինչպիսիք են համայնքի ռադիոկայանների աշխատանքը, տազնապի/տարիանման վերաբերյալ ուղերձների տարածումը, գետերում ջրի մակարդակի գրանցումը և այլն:

Տեղաբնիկ ժողովուրդներ

Աշխարհում 300 մլն թվաքանակ ունեցող տեղաբնիկ ժողովուրդների մեծամասնությունն աղքատ է և մարզինալացված: Շատերն ապրում են մեկուսացված տարածքներում՝ միջազգային շուկաներից, ազգային տնտեսություններից և զարգացմանն ուղղված աջակցությունից հեռու: Նրանց հողերը, որոնց պաշտոնական տիրապետման հարցը հաճախ վիճարկելի է դառնում, զուրկ են այնպիսի հիմնական ենթակառուցվածքներից, ինչպիսիք են ճանապարհները, դպրոցները և բուժկետերը:

Շատ տեղաբնիկ ժողովուրդների տնտեսական աղքատությունը սրվում է «ձայնի աղքատությամբ», այն է՝ ազգային և տարածաշրջանային որոշումների կայացման գործընթացներից մեկուսացված լինելը, որն անմիջական ազդեցություն է գործում նրանց կյանքի վրա: Լեզվական և մշակութային տարբերությունները կարող են այդ ժողովուրդներին առավել մեկուսացնել մեծամասնությունից:

Շատ տեղաբնիկների տնտեսական և քաղաքական կարգավիճակը նրանց խոցելի է դարձնում աղետների ազդեցության նկատմամբ, ինչպես նաև այն Էկոհամակարգերը, որոնցից կարող է կախված լինել շատերի կենսապահովումն ու հիմնարար կարիքները, այդ թվում՝ բարձրադիր

տարածքները, խոնավ տրոպիկները, անապատները, ցամաքային տարածքները և փոքր կղզիները, ավելի շատ են ենթարկվում կլիմայի փոփոխության ներգործություններին: Այնուամենայնիվ, սերնդե-սերունդ եկող գիտելիքների փոխանցման շնորհիվ կան տեղաբնիկ ժողովուրդներ, որոնք հազարավոր տարիների ընթացքում հարմարվել են կլիմայի փոփոխականությանը⁶ և իրենց տարածքների կլիմայի փոփոխությանը: Դժվարությունների հաղթահարման ավանդական ռազմավարությունների մասին նրանց գիտելիքները կարևոր դեր են խաղում դիմակայման և հարմարվողականության կարողությունների զարգացման համար և կարող են ուժեղացվել բարենպաստ պայմանների պարագայում:

2.6 Աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագրերի մշակման օրինակներ, ուղղված տեղաբնիկ ժողովուրդների դիմակայման կարողությունների հզորացմանը

- Նպաստել տեղաբնիկ ժողովուրդների սերնդից սերունդ փոխանցվող հողերի և բնական ռեսուրսների նկատմամբ կոլեկտիվ իրավունքի ճանաչմանը, որպես կենսապահովման անվտանգության, մշակութային ինքնության և քաղաքական ազդեցության հիմք:
- Օժանդակել ֆինանսական ռեսուրսների մատչելիության ապահովմանը՝ տեղաբնիկ ժողովուրդների բնակության տարածքներում ծառայությունների հիմնական տեսակների զարգացման նպատակով:
- Համապատասխան լրատվամիջոցներով ներկայացնել կրթական և տեղեկատվական բնույթի նյութեր՝ աղետի պատճառների, կլիմայի փոփոխության ռիսկերի և դրանց նմազեցմանն ուղղված միջոցառումների մասին:
- Տեղաբնիկներով բնակեցված համայնքներում և համայնքների միջև անցկացնել քաջալերող քննարկումներ՝ կլիմայի փոփոխականության և բնական աղետների հաղթահարման հետ կապված ավանդական մեխանիզմների հայտնաբերման և դրանց վերաբերյալ տվյալների փոխանակման համար, և վերլուծել դրանց հնարավոր արդյունավետությունը կլիմայի հետագա փոփոխության սցենարներում:
- Նպաստել, որպեսզի ոչ տեղաբնիկ ժողովուրդների տեխնոլոգիաները և գիտական տվյալները մատչելի դառնան տեղաբնիկների համար:
- Ապահովել նրանց մասնակցությունը տարածաշրջանային վաղ ահազանգման մեխանիզմների մշակման գործընթացին՝ լեզվական և մշակութային համապատասխան մեխանիզմների միջոցով:

ԴԵՊՁԻ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ. ՓՈՋՐԻԿ ՏՆԱՄԵՐՁ ԱՅԳԻՆԵՐԻ ԱՏԵՂՇՄԱՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿ ԵՎԱԶԵՑՄԱՆԸ

Լետսոն, Catholic Relief Services կազմակերպություն

Նույնիսկ այնտեղ, որտեղ բավարար մթերք է աճեցվում մարդկանց սննդի կալորիականության պահանջներն ապահովելու համար, սննդի բազմազանությունն էական գործոն է առողջությունը պահպանելու և այնպիսի արտաքին ցնցումներին⁶ դիմակայելու համար, ինչպիսիք են հիվանդությունները և պարբերաբար կրկնվող աղբատ բերքը: Աշխարհի շատ երկրներում ավանդական սննդակարգերի բազմազանությունը և սննդարար նյութերի բաղադրությունը ցածր է և, հիմնականում, բաղկացած է օսլայից (եգիպտացորեն) և մեկ, կամ մի քանի տեսակի տերևավոր բանջարեղենից, երբեմն, հիմնականում բուսական ծագում ունեցող պրոտեինից: Բացի այդ, բանջարեղենը հաճախ խիստ սեզոնային բնույթ է կրում, որի հետևանքով սննդարար միկրոտարրերի ապահովումը ողջ տարվա համար կարող է կայուն չլինել:

Աշխարհի վարելահողերի մոտ 80%-ը չեն ջրվում և երաշտների ժամանակ միայն Հարավային Աֆրիկայում տասնյակ միլիոնավոր մարդիկ կարող են պարենային օգնության կարիք ունենալ: Զանի որ կլիմայի փոփոխությունը նպաստում է անձրևների և եղանակային այլ դրսևորումների անորոշ իրավիճակի ստեղծմանը, աշխարհի շատ տարածքներում երաշտները, ջրհեղեղները, բերքատվության հետ կապված փոփոխությունները, ինչպես նաև վնասատուների հասցրած վնասը կամ տարբեր վնասատուների հայտնվելը կարող են առավել հաճախակի դառնալ: Անհրաժեշտ է ոչ միայն մշակել ռազմավարություններ ջրային տարածքներում հիմնական մշակաբույսերի բավարար քանակի աճեցման համար, այլ նաև առավելագույնի հասցնել այն օգուտը, որ կարող են ստանալ խոցելի տնտեսությունները՝ աճեցնելով մշակաբույսեր, որոնց համար ջուրը բավարար է:

Կանխատեսվում է, որ կլիմայի փոփոխության ներգործությունը Լետսոնյում կարող է ունենալ հեռու գնացող ազդեցություն տարածաշրջանի բաղցրահամ ջրի պաշարների վրա, քանի որ երկիրը հանդիսանում է տարածաշրջանի բաղցրահամ ջրի հիմնական աղբյուրը և դրենաժային տարածքները Հարավային Աֆրիկայի, Նամիբիայի և Բոթսվանայի միջով ձգվում են մինչև Ատլանտյան օվկիանոսի ավազան: Լետսոն երկար ժամանակ է, ինչ ենթարկվում է կլիմայական ցնցումների: Լետսոնյի բնակչությունը հարմարվել է կլիմայական փոփոխությունների այս պայմաններին և մշակել հաղթահարման մի շարք արդյունավետ մեխանիզմներ: Սակայն վերջին տարիներին, ակնհայտորեն, ավելացել է կլիմայական ցնցումների հաճախականությունը, ուժգնությունն ու տևողությունը՝ քիչ ժամանակ կամ, ընդհանրապես, ժամանակ չթողնելով նոր հարվածին նախորդող իրադարձությունից վերականգնվելու համար:

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից 2005-2008թթ. իրականացվող «Հարավային Աֆրիկայում արտակարգ իրավիճակներում պարենի տրամադրման» ծրագրի (C-SAFE) շրջանակներում աջակցություն ցուցաբերվեց Լետսոնյի սննդի անվտանգության նկատմամբ խոցելի տնային տնտեսություններին տնամերձ բանջարանոցների և այգիների ստեղծման

Նպատակով՝ որպես դիմակայման միջոց այնպիսի արտաքին ցնցման նկատմամբ՝ ինչպիսին երաշտն է: Տևամերձ այգիների համար օգտագործվում են տեղական նյութեր, որոնք կառուցվում են մոտ երկու մետր շրջագծով և մեկ մետր բարձրությամբ՝ մեջտեղում թողնելով «անցք», ինչն այգեպանին թույլ է տալիս քիչ ջանք գործադրելով աշխատել ամբողջ հողակտորի վրա: «Անցքի» կենտրոնում տեղադրվում է կոմպոստի զամբյուղը, ուր լցվում է ամանեղենի, լվացքի և լողանայու արդյունքում հավաքված կենցաղային ջուրը, որն էլ օգտագործվում է հողակտորը ջրելու համար: Սա հնարավորություն է տալիս հավաքել ջուրը և կրճատել աշխատուժը՝ ոռոգման նպատակով լրացուցիչ ջուր ունենալու համար: Չամբյուղը պատրաստելու համար օգտագործվող ծղոտը, եղեգը և այլ նյութեր ֆիլտրում են կենցաղային ջրում առկա օճառի և հեղուկների քիմիական նյութերը: Այգին կառուցվում է օգտագործելով օրգանական նյութի շերտեր, որոնք ծառայում են երկու նպատակի՝ հողին ավելացնում են սննդարար միկրոտարրեր և պահպանում խոնավությունը, ինչն այդ այգիներն ու բանջարանոցները չափազանց արդյունավետ է դարձնում նույնիսկ ցուրտ և չոր ձմեռային ամիսներին: Մեկ անգամ կառուցելուց հետո այգին պահանջում է սահմանափակ խնամք և մի քանի լրացուցիչ աշխատանքներ (օրինակ, պարարտանյութի օգտագործում): Բացի սրանից, մի քանի շերտից բաղկացած նախագիծն օգնում է պահպանել այգու կամ բանջարանոցի խոնավությունը, որի արդյունքում ջրի ծախսը նվազում է:

Այգեգործության այս տեսակը մի շարք առավելություններ ունի աղբատ տնային տնտեսությունների դիմակայունության կարողությունների զարգացման համար, որոնք են՝ աշխատուժի խնայողությունը, խոնավության պահպանումը չորային և կիսասանապատային կլիմայի պայմաններում, հողի հարստացումը սննդարար տարրերով, բանջարեղենի արտադրությունը ողջ տարվա ընթացքում, նվազ կախվածությունն արտաքին ներդրումներից և եկամտի աճն ավելցուկային արտադրանքի վաճառքից:

Չամայնքները մասնակցում են այգիների ստեղծմանը՝ հավաքելով նյութեր և կառուցելով շինություններ: Լետտոյում համայնքի անդամները կառուցում են նման այգիներ խիստ կարիքավորների համար և համատեղ ուժերով շարունակում են կառուցել մյուս խոցելի ընտանիքների համար, որից օգուտ է քաղում ողջ համայնքը: Ամբողջ համայնքի ընդգրկվածությունը շինարարության ողջ գործընթացում, ինչպիսիք են տեղանքի ընտրությունը, նյութերի հավաքումը և այգու կառուցումը, խթանում է **վտանգի ենթակա բնակչության մասնակցությունը և գործողությունների ձեռնարկումը**: Չամայնքի անդամները սովորում են կառուցել և խնամել այգիները և, ցանկության դեպքում, կարող են իրենք կառուցել լրացուցիչ այգիներ:

Այս այգիները կարող են կարևոր դեր խաղալ աղետների ռիսկի նվազեցման գործում, քանի որ փոքր ֆերմերների համար ստեղծում են ջրի սակավությանը դիմակայելու կարողություններ, խրախուսում են սննդակարգի բազմազանությունը, ինչպես նաև ընձեռում դրամային եկամուտ ստանալու հնարավորություն: Այս մեթոդը հաջողությամբ փորձարկվել և լայնորեն կիրառվել է Լետտոյում, սակայն այլ վայրերում այն հայտնի չէ, կամ էլ չունի լայն տարածում, չնայած այն հանգամանքին, որ մեծ հնարավորություններ է տալիս Աֆրիկյան երկրներում և Արևելյան դուրս տնային տնտեսությունների դիմակայման կարողությունների խթանման համար:

Չափի առնելով փոքր այգիների ստեղծման հաջողությունը տնային տնտեսությունների խոցելիությունն արտաքին ցնցումների (օրինակ՝ երաշտ) նկատմամբ նվազեցնելու գործում և բարձրացնելով պարենի անվտանգության

մակարդակը այն մարդկանց շրջանում, ովքեր խոցելի են աշխատելու սահմանափակումների պատճառով, օրինակ, տարեց մարդիկ, ՄԻԱՎ/ՁԻԱԴ-ով տառապող երիտասարդները և հաշմանդամները, 2012թ. CRS կազմակերպությունը ծրագիր սկսեց այս մեթոդի ուսուցումը ընդլայնելու և մեթոդի հարմարվողականությունը աշխարհի տարբեր մասերում փորձարկելու համար: Ծրագրի մեկնարկի արարողությանը ներկա էին 34-ների, ՄԱԿ-ի, տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ, ակադեմիկոսներ և գիտնականներ 17 երկրներից, որոնք եկել էին ծանոթանալու Լեսոտոյի փորձին, այդ այգիների կառուցման գործընթացում ներգրավվելու և մտքեր փոխանակելու այդ փորձը իրենց երկրների պայմաններին հարմարեցնելու վերաբերյալ: Մտքերի փոխանակման արդյունքում ձևավորված առաջարկությունները ներառում էին տեղական նյութերի օգտագործումը, օրինակ, արտաքին պատերի համար քարի փոխարեն բամբուկի օգտագործում, և այդ նախագծի խրախուսումը մարդաշատ վայրերում, այդ թվում՝ քաղաքային բնակավայրերում, ներքին տեղահանվածների շրջանում կամ փախստականների ճամբարներում:

Ուսուցման այս նախագծի արդյունքը ձեռնարկի և կարճ ուսուցողական ֆիլմի տեսքով լույս է տեսել 2012թ. սեպտեմբերին: Երկու նյութերն էլ ներառում են առաջարկություններ տեղերում հարմարվողականության և լավագույն փորձի վերաբերյալ:

Ծրագիրը ցույց է տալիս, որ 1) Գոյություն ունեն մեթոդը հարմարեցնելու եղանակներ, որոնց կիրառմամբ նման տնամերձ այգիների ու բանջարանոցների ստեղծումը կկրճատի աղետների ռիսկը և կնպաստի կլիմայի փոփոխության նկատմամբ հարմարվողականությանը, 2) Լեսոտոյի փորձը մեծ հետաքրքրություն է առաջացրել այդ մեթոդի նկատմամբ, թեև հարմարվողականությունը միշտ չէ, որ դյուրին է, 3) Շահառուների ընտրության, համայնքների ներգրավման գործում շատ կարևոր է մասնակցային մոտեցման ցուցաբերումը, ինչպես նաև կարևոր է նպատակների և գործընկերների ընտրության հարցում կայունության չափանիշի ներառումը, 4) Փոքր այգիների և բանջարանոցների կառուցման խթանումը պետք է կատարվի համալիր զարգացման ծրագրերի շրջանակում, որոնք ուղղված են պարենի անվտանգության և աղետների ռիսկի նվազեցման նախաձեռնությունների իրականացմանը: CRS Leso կազմակերպությունն ընդլայնել է տնամերձ այգիների և բանջարանոցների կառուցումը խոցելի խմբերի, այդ թվում նաև որբերի, խոցելի երեխաների և ՄԻԱՎ ունեցող մարդկանց, պարենի և սնուցման կարիքներին արձագանքելու համար:

Չաճախ տրվող հարցեր

Կամն արդյոք այլ բարձր ռիսկային խմբեր: Եթե այո, ապա ինչպե՞ս պետք է հաշվի առնվեն վերջիններիս մասնակի կարիքներն ու իրավունքները:

Յուրաքանչյուր համատեքստ տարբերվում է մյուսից, ուստի, սոցիալական, մշակութային և քաղաքական գործոնները, որոնցով պայմանավորված է այս կամ այն խմբի ռիսկի աստիճանը, տարբեր են: Բարձր ռիսկային գտնում գտնվող այլ խմբերի շարքին են դասվում կրոնական և էթնիկ փոքրամասնությունները, փախստականները,

տեղահանված մարդիկ, անօրինական ներգաղթածները, ցածր դասակարգի մարդիկ, վտարվածները և նրանք, ում ապրելակերպը ներառում է ոչ ավանդական սեռական հարաբերություններ:

Յնարավոր բարձր ռիսկային խմբերը բացահայտելու համար անհրաժեշտ է օգտագործել բնակչության առկա գիտելիքները և հետևել այն քայլերին, որոնք նշված են ստորև ներկայացված ստուգաթերթիկում՝ այդ խմբերի ամբողջական դիտարկումը, որոշումների կայացման գործընթացներին մասնակցությունը, ծրագրի իրականացման բոլոր փուլերում ընդգրկվածությունն ապահովելու համար:

Գործիքներ և ռեսուրսներ

Տեղեկատվության և հղումների համար *տես էջ 264. Գործիքներ և ռեսուրսներ:*

2.4 Հիմնական խմբերի մասնակցության և գործողությունների ստուգաթերթիկ

Ռիսկի ենթակա բոլոր մարդկանց իրավունքները, կարիքները և ներդրումները, հատկապես, բարձր ռիսկային գոտում գտնվողներինը, պետք է ներառվեն աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագրերի բոլոր փուլերում և ծրագրի շահերի պաշտպանությանն ու օժանդակությանն ուղղված գործընթացներում: Ստուգաթերթիկի նպատակն է օժանդակել այս գործընթացի գործնական ոլորտում ընդգրկված աշխատակիցներին և կիրառել այն բոլոր ոլորտներում ու համատեքստերում՝ սկզբունքների կիրառման վերաբերյալ ցուցումների հետ միասին:

Հիմնական խմբերի մասնակցության և գործակալությունների ստուգաթերթիկ

- Ձեռք բերել կամ ստեղծել թիրախային բնակչության և համապատասխան շահագրգիռ կողմերի, ինչպես նաև այս բաժնում ներկայացված այլ խմբերի **ժողովրդագրական տվյալների շտեմարան**⁵ ապահովելով այդ տվյալների տարանջատումն ըստ սեռի և տարիքի:
- Ապահովել, որպեսզի ծրագրի աշխատակազմը ըմբռնի և գործի իրավունքների վրա հիմնված մոտեցմամբ⁶ և տիրապետի թիրախային բնակչության հետ առնչվող միջազգային և ազգային իրավական դաշտերի համապատասխան դրույթներին: Չարգացնել աշխատակազմի կարողությունները՝ այս մոտեցումը գործընկերների, կառավարության և այլ դերակատարների շրջանում խթանելու համար:
- Ծրագրի բոլոր փուլերում կիրառել **մասնակցային մեթոդը**, սկսած ռիսկերի գնահատումից մինչև վերլուծություն՝ նպաստելով ժողովրդագրական տվյալների միջոցով բացահայտված բարձր ռիսկային խմբերի մասնակցությանը, որը կարող է ընդգրկել գործողությունների կազմակերպման հարմար ժամանակի ընտրություն, տրանսպորտի կամ ֆինանսական աջակցության ցուցաբերում հանդիպումներին մասնակցելու համար, թարգմանչի տրամադրում և այլն:
- Կարևոր դեր հատկացնել հիմնական խմբերի մասնակցությանը **ծրագրերի մշակման ու իրականացման գործընթացներին** և ծրագրի պաշտպանության, ինչպես նաև գերակա համարել այն ռազմավարություններն ու գործողությունները, որոնք վերաբերում են բարձր ռիսկային խմբերին:
- Ծրագրի իրականացման և շահերի պաշտպանության բոլոր փուլերում շարունակել **տվյալների տարանջատումը**⁷՝ վերլուծություններ կատարելու և որոշումներ կայացնելու նպատակով օգտագործելով նույն, ի սկզբանե, բացահայտված խմբերը և այլ խմբեր:

ԾՐԱԳՐԻ ՓՈՒԼԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՐՄԱՐԿՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

Գլուխ 3. Նախատեսված է օգնել զարգացման և մարդասիրական օգնության ոլորտի պրակտիկ գործունեության մեջ ընդգրկված աշխատակիցներին նախագծել, իրականացնել, վերահսկել և գնահատել աղետների ու կլիմայի փոփոխություններին դիմակայելու⁶ կարողությունների ստեղծմանն ուղղված ծրագրեր: Այն հավասարաչափ կիրառելի է աղետների ռիսկի նվազեցման⁶ և կլիմայի փոփոխության հարմարվողականությանն⁶ ուղղված ծրագրերի, ինչպես նաև բազմօլորոտ կամ որևէ առանձին ոլորտի հատուկ գործողությունների համար, որոնք պահանջում են ռիսկերի նվազեցմանը և կլիմայի փոփոխության հարմարվողականությանը համալիր մոտեցման ցուցաբերում: Այս գլուխը կրճատումներով վերցված է *CARE կազմակերպության (2010թ.) Համայնքների հարմարվողականության պրակտիկ ձեռնարկից* և ներառում է.

- Ծրագրի փուլային կառավարման ընդհանուր *ակնարկ*,
- *Ցուցումներ* պրակտիկ գործունեության մեջ ընդգրկված աշխատակիցներին ծրագրի իրականացման յուրաքանչյուր փուլի համար, ներառյալ հիմնական քայլերը, գործողությունները և արդյունքները՝ կապված մշտադիտարկման, գնահատման, ուսուցման⁶ և գիտելիքների կառավարման հետ,
- Լավագույն գործելակերպի *օրինակներ*,
- *Ցուցումներ* աղետների ռիսկի կառավարման և կլիմայի փոփոխության հարմարվողականության *10 սկզբունքների համալիր կիրառման* վերաբերյալ՝ ծրագրի փուլային կառավարման ընթացքում:


3.1 Ծրագրի փուլային կառավարման ընդհանուր բնութագիրը

Ծրագրի փուլային կառավարումը (ԾՓԿ) տերմին է, որն օգտագործվում է ծրագրի ընթացքում գործողությունների կառավարման և որոշումների

կայացման գործընթացները նկարագրելու համար: Այն շեշտում է ծրագրի փուլային, կրկնվող բնույթը, ինչպես նաև գործողությունների փոխադարձ կապը տարբեր փուլերի ընթացքում:

Այս ուղեցույցը կիրառում է հետևյալ երեք հիմնական փուլերից բաղկացած ծրագրային փուլավորման հասարակ մի մոդել՝ վերլուծություն, նախագծում և իրականացում՝ յուրաքանչյուրն իր համապատասխան գործողություններով և արդյունքներով: Գիտելիքների ձեռք բերումն ու կառավարումը կարևոր և շարունակական նշանակություն ունի ծրագրի բոլոր փուլերի համար, որը ներառում է յուրաքանչյուր փուլի մշտադիտարկում և գնահատում, ինչպես նաև օգնում է անցում կատարել մի փուլից դեպի մյուսը: Թեև գոյություն ունեն ԾՓԿ-ի տարբեր տեսակներ և շատ կազմակերպություններ ունեն իրենց սեփական մոդելը, այնպիսի առանցքային բաղադրիչներ, ինչպիսիք են պլանավորմանը նպաստող տարբեր փուլերը և գործընթացի փուլային բնույթը, մնում են նույնը: Ուղեցույցում նշված գործընթացը ներառում է.

- Ծրագրին հատուկ տվյալների շտեմարանի ստեղծում, ինչպես նաև արտաքին միջավայրի վերաբերյալ ելակետային տվյալների հավաքագրում:
- Փոփոխության չափանիշների սահմանում և մշտադիտարկում:
- Առաջընթացի ու նվաճումների վերանայում ու գնահատում նախատեսված արդյունքների հետ համեմատության միջոցով, և դրանց կիրառումը ծրագրի շարունակական բարելավման համար:
- Գիտելիքների ձեռքբերում և փոխանակում ուսուցման գործընթացին նպաստելու նպատակով:



Նկար 3.1 Ծրագրային ցիկլի փուլերը

ԾՓԿ հիմնական նպատակը վտանգի ենթակա բնակչության ակտիվ մասնակցությունն է ծրագրերին, քանի որ ծրագրերը կարող են արդյունավետ լինել միայն այն դեպքում, եթե հիմնված են արդեսի⁶ և կլիմայի փոփոխության⁶ վտանգներին ենթակա մարդկանց կարիքների վրա: Այդ իսկ պատճառով ԾՓԿ նպատակն է.

- Ռիսկի ենթակա ամբողջ բնակչությանն ընդգրկել պլանավորման բոլոր մակարդակների աշխատանքներում, ինչպես նաև իրականացման, մշտադիտարկման և գնահատման

գործընթացներում (օրինակ՝ տարբեր լեզուներով տեղեկատվության տրամադրում):

- Հասկանալ և անդրադառնալ ռիսկի ենթակա բնակչության կարիքներին՝ նպատակային միջամտություններ իրականացնելու միջոցով:
- Ապահովել, որպեսզի աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականությանն ուղղված գործողությունները ակամա չվատթարացնեն խոցելիության^Գ աստիճանը:
- Վերացնել կարողությունների անհավասարությունը և այլ կառուցվածքային պատճառներ՝ կապված տնային տնտեսությունների վրա (և դրանց միջև) վտանգի ազդեցության և խոցելիության հետ:

3.2 Վերլուծություն

Վերլուծության փուլի նպատակն է. 1) հավաքել համապատասխան տեղեկատվություն, որպեսզի շահագրգիռ կողմերն^Գ ավելի լավ ընկալեն աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերի բնույթն ու աստիճանը նոր կամ ընթացքի մեջ գտնվող ծրագրերի համատեսքստում (խնդիրների բացահայտում), 2) ապահովել, որպեսզի ծրագիրը համապատասխանի ռիսկի ենթակա թիրախային բնակչության կարիքներին:

Մասնավորապես, այս փուլում անհրաժեշտ է գիտելիքներ քաղել բազմազան աղբյուրներից հետևյալի մասին.

- վտանգներ^Գ և կլիմայական պայմաններ, որոնք հատուկ են տվյալ թիրախային տարածքին,
- վտանգների և կլիմայական պայմանների դիտվող և կանխատեսվող փոփոխություններ,
- ներկա և ապագա վտանգներ ու կլիմայի փոփոխության ազդեցություններ թիրախային տարածքի ռիսկի ենթակա բնակչության (ներառյալ որոշակիության աստիճանը) և այն ռեսուրսների վրա, որոնցից բնակչությունը կախման մեջ է,
- ռիսկի ենթակա բնակչության կողմից ընդունված գործող ռազմավարությունների արդյունավետությունն աղետի և կլիմայի փոփոխության ռիսկերի կառավարման համար և դրանց կայունությունը կլիմայի փոփոխության ապագա սցենարների համատեսքստում,
- սոցիալական խմբեր և կենսապահովման միջոցներ^Գ, որոնք հատկապես խոցելի են ներկա և ապագա վտանգների և կլիմայական պայմանների հանդեպ,
- կառավարության կողմից որդեգրած քաղաքականություններ

- և ծրագրեր, որոնք նպաստում կամ խոչընդոտում են աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության գործընթացները,
- թիրախային բնակչության կողմից բացահայտված գերակա խնդիրներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագրերի մշակման համար,
 - հնարավոր գործընկերներ, դաշնակիցներ և ընդդիմախոսներ՝ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագրերի մշակման համար,
 - ցանկացած ծրագրի մշակման, իրականացման և մշտադիտարկման համար պատասխանատվություն կրող աշխատակազմի և գործընկերների կարողությունների⁶ զարգացում,
 - այլ նախաձեռնություններ, որոնք կարող են լրացնել կամ համահունչ լինել հնարավոր ծրագրերի հետ:

Վերլուծության փուլի ժամկետը կարող է սահմանվել ելնելով յուրաքանչյուր ծրագրի հատուկ հանգամանքներից: Օրինակ, աղետներին արձագանքելու և վերականգնման ծրագրի սկզբնական փուլում պահանջվում է արագ, «բավական լավ մակարդակի» վերլուծություն, որը կարող է բարելավվել ծրագրի իրականացման ընթացքում, այն դեպքում, երբ երկարաժամկետ զարգացման ծրագիրը սովորաբար թույլ է տալիս վերլուծության և պլանավորման փուլը իրականացնել առավել երկար ժամանակահատվածում: Այնուհանդերձ, անկախ ծրագրի տևողությունից, անհրաժեշտ է հաշվի առնել կլիմայի փոփոխության հնարավոր երկարաժամկետ ազդեցությունը՝ նույնիսկ ծրագրի ավարտից հետո ցանկացած միջամտության կայունությունը երկարաժամկետ հեռանկարում ապահովելու համար:

Վերլուծության գործընթացի սահմանները պետք է հարմարեցվեն հնարավոր ծրագրի շրջանակների հետ: Օրինակ, եթե վերլուծության նպատակը զարգացման ծրագրի մշակումն է, ապա այն պետք է լինի բազմլորտային, իսկ եթե վերլուծությունն ուղղված է պարենի անվտանգության ծրագրի նոր փուլի ներդրմանը, այն կարող է հիմնականում կարևորել հարցեր, որոնք ազդում են կենսապահովման և սնուցման վրա:

Վերլուծության փուլի հիմնական քայլերը

Վերլուծության փուլը բաղկացած է հինգ հիմնական քայլերից.

1. Սահմանել վերլուծության նպատակը և ընթացքը

- Հիմնական շահագրգիռ կողմերի հետ (այդ թվում նաև ռիսկի

ենթակա բնակչություն և հնարավոր գործընկերներ) քննարկել և համաձայնեցնել աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերի վերլուծության ընդհանուր նպատակը, ինչպես նաև արդյունքների կիրառման ուղիները: Սա կարող է ներառել աղետների ռիսկի նվազեցման և(կամ) կլիմայի փոփոխության հարմարվողականության նոր ծրագրերի մշակում, ինչպես նաև գործող ծրագրերի վերամշակում՝ ընդգրկելով աղետների ռիսկի նվազեցման և(կամ) կլիմայի փոփոխության հարմարվողականության բաղադրիչներ՝ այդ ծրագրերի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

- Որոշել, թե ինչպես պետք է կատարվի վերլուծությունը, ում կողմից, ինչ ժամանակահատվածում, տեղեկատվության ինչպիսի աղբյուրներ պետք է օգտագործվեն, և ինչպես պետք է շահագրգիռ կողմերն ընդգրկվեն այդ գործընթացում:
- Ապահովել տվյալների հավաքագրումն առաջնային (համայնքի անդամներ, օդերևութաբանական ծառայություններ) և երկրորդական (պաշտոնական վիճակագրություն, հետազոտության հաշվետվություններ) աղբյուրներից:
- Սահմանել մասնակցային ռիսկի վերլուծության գործիքը կամ մասնակցային հետազոտության մեթոդները՝ տեղական մակարդակում հետազոտություններ կատարելու նպատակով և հարմարացնել դրանք, ըստ անհրաժեշտության, այնպես, որպեսզի վերլուծության ուշադրությունը կենտրոնացվի ռիսկի ենթակա բնակչության կարիքների վրա:
- Ապահովել, որպեսզի գործընթացի բոլոր համակարգողները ծանոթ լինեն ընտրված մեթոդի հետ:

2. Վերլուծել վտանգի և կլիմայի համատեքստը

- Տվյալներ հավաքել առաջնային և երկրորդական աղբյուրներից.
 - թիրախային տարածքի (կամ ամենամոտ մատչելի տարածքի) կլիմայական նախկին պայմանների և կանխատեսվող կլիմայի փոփոխության սցենարների վերաբերյալ,
 - թիրախային բնակչությանը և շրջապատող տարածքին սպառնացող կլիմայական և ոչ կլիմայական վտանգների վերաբերյալ:
- Տեղեկություններ ստանալ թիրախային բնակչության սոցիալ-տնտեսական և կենսապահովման տարբեր մակարդակ ունեցող խմբերից հետևյալի մասին.
 - կլիմայական պայմանների փոփոխության դիտարկումներ իրենց կյանքի ընթացքում,

- համայնքի և շրջակա միջավայրի վրա ազդող վտանգներ իրենց կյանքի ընթացքում:

- Վերլուծել վերոնշյալի ազդեցությունը այն միջոցների, ռեսուրսների և կառույցների վրա, որից համայնքի բարեկեցությունն ու կենսապահովումը գտնվում է կախման մեջ:
- Վերլուծել ներկա և ապագա վտանգների և կլիմայի փոփոխության սցենարների հավանական ազդեցությունը տարածաշրջանում իրականացվող որևէ ծրագրի վրա:
- Վերլուծել թիրախային բնակչության կողմից կլիմայի փոփոխության վերաբերյալ տրամադրվող տեղեկատվության ըմբռնումը (և ինչպես այն կարելի է բարելավել) ու ներառել այն ելակետային սովյալներում:

3.1 Կլիմայի վերաբերյալ տեղեկատվության առաջնային և երկրորդական աղբյուրների օրինակներ

- Տեղական օդերևութաբանական կայաններ
- Համայնքի գիտելիքներ և տեղական մակարդակի կանխատեսումներ
- Ազգային օդերևութաբանական ծառայություններ
- Կառավարությանն առընթեր կլիմայի փոփոխության խնդիրներով զբաղվող հաստատություններ
- Կլիմայի հարցերով զբաղվող տարածաշրջանային կենտրոններ
- Կլիմայի հարցերով զբաղվող միջազգային ինստիտուտներ

3. Վերլուծել դիմակայունության ապահովման կարողությունները և խոցելիությունը թիրախային բնակչության շրջանում՝ հասկանալու համար հետևյալը.

- Ինչպես են ներկայում բնակչության տարբեր խմբեր և հատվածներ դիմակայում վտանգներին և կլիմայի փոփոխականությանը,⁶ և որքանով են վերջիններիս մեթոդներն արդյունավետ և կայուն:
- Ցանկացած առկա ծրագրի հնարավոր ազդեցությունը վերոհիշյալի վրա:
- Բնակչության այն խմբերն ու հատվածները, որոնք առավել խոցելի են վտանգների և կլիմայի փոփոխության ազդեցությունների նկատմամբ:
- Խոցելիության պատճառները՝ սկսած ապրելու և աշխատելու պայմաններից մինչև այնպիսի հիմնական գործոններ, ինչպիսիք են ռեսուրսների մատչելիությունը, քաղաքական ազդեցությունը և

սոցիալական կառուցվածքները:

- Ինչպես են խոցելիության տեսակները, կարողությունները և հաղթահարման մեխանիզմները փոփոխության ենթարկվել տարիների ընթացքում:

4. Վերլուծել ծրագրերի իրականացման միջավայրը՝ կատարելով հնարավորությունների վերլուծություն

- Բացահայտել թիրախային տարածքներում աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության հնարավորություններն ու խոչընդոտները, որոնք ստեղծվում են ընթացիկ կամ նախատեսված պետական և ոչ պետական ծրագրերի իրականացման արդյունքում:
- Բացահայտել կառավարության ցանկացած համապատասխան քաղաքականություն և(կամ) քաղաքականության մեջ տեղ գտած բացեր, որոնք կարող են ազդել թիրախային բնակչության խոցելիության և դիմակայման⁶ կարողությունների վրա:
- Բացահայտել մասնավոր հատվածի ցանկացած գործունեություն, որը հնարավորություններ և խոչընդոտներ է ստեղծում աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համար:
- Վերլուծել պետական, ոչ պետական, ինչպես նաև մասնավոր հատվածի կազմակերպությունների հետաքրքրությունն աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության գործընթացի, ինչպես նաև գործունեություն ծավալելու հնարավորությունների նկատմամբ (պլաններ, կառույցներ, գործողություններ):

5. Հաստատել և փաստաթղթային ձևակերպում տալ վերլուծությանը և ստեղծել իրավիճակային տվյալների ելակետային բազա

- Զննարկել, անհրաժեշտության դեպքում փոփոխել և ընդգրկել շահագրգիռ կողմերին վերլուծության արդյունքների հաստատման գործընթացում:
- Փաստաթղթավորել գործընթացը (տվյալների աղբյուրներ և վերլուծության մեթոդներ) և արդյունքները, այդ թվում նաև՝ ցանկացած բացթողում, և ներկայացնել դրանք հիմնական շահագրգիռ կողմերին, մասնավորապես, թիրախային բնակչությանը:
- Ստեղծել իրավիճակային տվյալների ելակետային բազա՝ հիմնական տվյալների ընտրության միջոցով և գնահատել դրա նկատմամբ վտանգների ծագման ու կլիմայի փոփոխության

միտումները, ծրագրի առաջընթացը, հաստատութենական և քաղաքական դաշտը՝ նպատակ ունենալով ստեղծել արդեսներին և կլիմայի փոփոխությանը դիմակայելու կարողություններ:

Վերլուծության փուլի արդյունքները

- Շահագրգիռ կողմերի հետ քննարկման արդյունքում ստեղծված փաստաթուղթ, որը նկարագրում է կիրառված մեթոդներն ու արդյունքները և ներկայացվում թիրախային բնակչությանը՝ վերջինիս համար մատչելի լեզվով:
- Համատեքստի վերլուծություն և ընդհանուր արդյունքների առանցքային տվյալներից բաղկացած ելակետային տվյալներ:
- Աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերի նախնական գնահատման վերլուծություն, որը սահմանում է բոլոր շահագրգիռ կողմերի միջև համաձայնեցված առաջնահերթ խնդիրները (մասնավորապես թիրախային բնակչությունը), ինչպես նաև այն խնդիրները, որոնց շահագրգիռ կողմերը կարող են լավագույնս արձագանքել:

Գործիքներ և ռեսուրսներ

Տեղեկատվության և հղումների համար *տես էջ 266*. *Գործիքներ և ռեսուրսներ*:

3.3 Ծրագրի մշակում

Նախագծման փուլի նպատակն է օգտագործել վերլուծության տվյալները՝ ծրագիր մշակելու կամ գործող ծրագրի շրջանակներում նոր ռազմավարություններ ստեղծելու համար, ինչը կնպաստի թիրախային բնակչության շրջանում աղետներին և կլիմայի փոփոխությանը դիմակայելու կարողություններ ստեղծելու գործընթացին: Նախագծման փուլում պետք է սահմանվեն ծրագրի նպատակները, ակնկալվող արդյունքները, ինչպես նաև իրականացվելիք գործողությունները:

Լավագույն պարագայում, վերլուծությանը պետք է անմիջապես հետևի նախագծման փուլը՝ շահագրգիռ կողմերի շրջանում հետաքրքրությունը և իրազեկվածությունն ամրապնդելու համար:

Աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականությանն ուղղված գործունեությունը կախված է.

- վերլուծության ժամանակ բարձրացված խնդիրներից,
- ծրագիրն իրականացնող կազմակերպության պատասխանատվությունից, գերակա խնդիրներից, փորձից և ունակություններից,
- տարածաշրջանում իրականացվող այլ ծրագրերից և պլաններից, որոնք կարող են համալրող դեր խաղալ, և նրանից, թե ինչպես պետք է մշակել ծրագիրը, որպեսզի այն լրացնի, այլ ոչ թե կրկնօրինակի այլ ծրագրեր,
- հնարավոր գործընկերներից, դաշնակիցներից և ցանցերից,
- առկա ֆինանսական միջոցներից և ֆինանսավորման սահմանակումներից:

Այս պարամետրերի սահմաններում տեղական մակարդակի համար նախատեսվող աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագրի մշակման ժամանակ պետք է առաջնորդվել համապատասխան ռազմավարություններով՝ հետևյալ նպատակներին հասնելու համար.

- Բարձրացնել ռիսկի ենթակա բնակչության և այլ շահագրգիռ կողմերի ներկա և ապագա ռիսկերի⁶ նկատմամբ իրազեկվածության և ընկալման մակարդակը ու այդ ռիսկերը գնահատելու և դրանք կառավարելու համար համապատասխան ընտրություն կատարելու ունակությունները: Օրինակ, իրականացնել հանրային իրազեկման քարոզարշավներ, վտանգների քարտեզագրում և մշտադիտարկում, բարելավել

օդերևութաբանական կանխատեսումների և վաղ ազդարարման արդյունավետ համակարգերի⁶ հասանելիությունը, ինչպես նաև անցկացնել վարժանքներ ու խաղեր՝ կլիմայի հետ կապված տեղեկատվության և վերջինիս հավանականության աստիճանի ըմբռնման և համապատասխան կիրառման գործընթացին օժանդակելու համար:

- Ստեղծել կամ հզորացնել համապատասխան կառույցները, մեխանիզմները և ռեսուրսները՝ վտանգներին և մեծ ազդեցությամբ փոփոխություններին նախապատրաստվելու, դիմակայելու և վերականգնվելու համար, օրինակ՝ աղետների ռիսկի կառավարման խորհուրդներ, արտակարգ իրավիճակներում մատուցվող ծառայություններ, արտակարգ իրավիճակների գործողության պլաններ, արտակարգ իրավիճակների ֆոնդ, սոցիալական ապահովագրություն, ցորենի բանկ և ժամանակավոր կացարաններ:
- Ստեղծել տարաբնույթ ակտիվների բազա՝ կենսապահովման ու բարեկեցության մակարդակն ամրապնդելու և ռիսկերը կառավարելու համար, օրինակ, եկամուտի տարբեր աղբյուրներ և կենսապահովման տարբեր միջոցներ, խնայողություններ, կայուն բնական ռեսուրսներ (ջրի աղբյուրներ, բերրի հող, անտառներ), լավ առողջապահական ծառայություններ և սոցիալական ցանցեր:
- Պաշտպանել ունեցվածքը և ծառայությունները ներկա և կանխատեսվող վտանգներից և կլիմայական պայմաններից, օրինակ, վտանգներին դիմակայող շինարարական մեթոդներ տների, դպրոցների, հիվանդանոցների կառուցման համար և ջրամատակարարման ու ջրահեռացման համապատասխան տեխնոլոգիաներ,
- Նվազեցնել ռիսկը՝ բարելավելով տվյալ տեղանքին համապատասխան հարմարվողականության տեխնոլոգիաները, օրինակ, տարբեր չորադիմացկուն սերմերի օգտագործում, ցորենի պահեստավորում, անձրևաջրերի պահեստավորում ոռոգման համար:
- Պաշտպանել շրջակա միջավայրը, օրինակ, ջրային հոսքերի, երոզիայի կառավարում և անտառային ծածկույթի վերականգնում:
- Ազգային մակարդակով իրականացվող աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագրերը պետք է որդեգրեն համապատասխան

ռազմավարություններ՝ ուղղված հետևյալ նպատակների իրականացմանը.

- Զգորացնել համապատասխան հաստատությունները և սոցիալական վճարների համակարգը՝ դիմակայման և հարմարվողականության նպատակով ապահովելու հավասար հասանելիություն հիմնական միջոցների նկատմամբ, օրինակ՝ խմելու ջրի հասանելիության ազգային քաղաքականություն, առողջապահական ծառայություններ, կրթություն, կլիմայի վերաբերյալ տեղեկատվություն և այլ հիմնական իրավունքներ, տեղական նորմեր, որոնք կանոնակարգում են բնական ռեսուրսների հասանելիությունը, օրենքներ, որոնք հարգում են տեղաբնիկ ժողովուրդների իրավունքն իրենց նախնիների հողի նկատմամբ, սոցիալական ավանդույթներ, որոնք խրախուսում են ունևոր ընտանիքներին օգնել չքավոր հարևաններին սթրեսային⁶ կամ ճգնաժամային իրավիճակներում:
- Աջակցել կառավարությանը կառավարման⁶ տարբեր մակարդակներում քաղաքականության և պլանավորման գործընթացների վրա ազդելու համար, օրինակ՝ բարոզաբաններ, ինչը հնարավորություն կտա ռիսկի ենթակա բնակչությանը բարձրացնել իրեն մտահոգող հարցերն աղետների և կլիմայի փոփոխության վտանգների մասին որոշումներ կայացնողների ուշադրությունը գրավելու և համապատասխանաբար արձագանքելու համար:
- Օժանդակել նորամուծությունների ներդրման և դրանցից սովորելու գործընթացներին, օրինակ, ներդրումներ կատարել կամ ապահովագրություն տրամադրել մշակաբույսերի տեսակները փոխելու համար, վերապատրաստման դասընթացներ անցկացնել նոր աշխատանքային հմտություններ ձեռք բերելու նպատակով, նպաստել նոր, բարելավված սանիտարական նախագծերի ներդրմանը և այլն:
- Ստեղծել կամ հզորացնել կառավարման կառույցներն աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերը կառավարելու համար, օրինակ՝ ազգային օրենքներ, համապատասխան նախարարություններ, ինչպես նաև ուղղորդող քաղաքականություններ⁶ և մեխանիզմներ՝ բազմազան և տարբեր մակարդակի շահագրգիռ կողմերին որոշումների կայացման գործընթացում ընդգրկելու համար՝ գործադրվող ջանքերը տեղական մակարդակից մինչև տարածքային և ազգային մակարդակ հզորացնելու նպատակով:

- Մշակել աղետներին և կլիմայի փոփոխությանը դիմակայելու երկարաժամկետ պլաններ և արձագանքման ծրագրեր, որոնք 1) «կառավարության մոտեցման» մեջ ներառում են տարբեր վարչություններ և նախարարություններ, 2) որոշում են հասարակության տարբեր ոլորտների հիմնական մասնակիցներին և հատուկ ծրագրերի իրականացման սկզբունքները 3) սահմանում են մարդկային և ֆինանսական ռեսուրսները, որոնք պահանջվում են պլաններն ու արձագանքման ծրագրերն ամբողջությամբ ֆինանսավորելու համար:

Աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության տվյալ ոլորտին հատուկ մանրամասները ներկայացված են Գլուխ 4-ում. *Աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության հիմնական ոլորտները:*

Նախագծման փուլի հիմնական քայլերը

Նախագծման փուլը բաղկացած է հետևյալ հինգ քայլերից.

1. Սահմանել նախագծման գործընթացը և ծրագրի շրջանակները

- Հիմնական շահագրգիռ կողմերի հետ համաձայնեցնել, թե ինչպես պետք է իրականացվի նախագծման գործընթացը, ում կողմից և ինչպիսի հատուկ գիտելիքներ են անհրաժեշտ:
- Եթե վերլուծության փուլից հետո ժամանակ է անցել, ստուգել հիմնական իրավիճակային տվյալները, բացահայտել տեղեկատվության նոր աղբյուրներ և թարմացնել վերլուծությունը:
- Զննարկել վերլուծության արդյունքում բացահայտված հիմնական հարցերը, իրականացնող կազմակերպության(ների) պատասխանատվության և իրավասությունների շրջանակը, տարածաշրջանում իրականացվող այլ ծրագրերի և պլանների առաջնահերթությունները և ֆինանսավորման հնարավոր գումարներն ու պայմանները:
- Սահմանել ծրագրի գործողություններն ու տևողությունը, և որոշել այն համայնքներն ու բնակչությունը, որոնք կշահեն ծրագրի իրականացումից:

2. Մշակել ծրագրի տրամաբանությունը

- Սահմանել կամ, գործող ծրագրի դեպքում, ճշտել և վերասահմանել ծրագրի նպատակները: Աղետների ռիսկի

Նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության հատուկ ծրագրերի նպատակները պետք է ուղղված լինեն աղետների և կլիմայի փոփոխություններին դիմակայելու կարողությունների զարգացմանը: Այն ծրագրերի նպատակները, որտեղ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության գործողությունները ինտեգրված են, պետք է լինեն ավելի ընդարձակ, սակայն պետք է ուղղված լինեն ծրագրի ազդեցության կայունության ապահովմանը աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերի համատեքստում:

- Մշակել համապատասխան գործողություններ՝ սահմանված նպատակներին, արդյունքներին, ինչպես նաև ընդհանուր ազդեցության ընդհանուր նպատակին հասնելու համար: Այդ գործողությունները պետք է հիմնված լինեն ամենաարդյունավետ և կայուն ռազմավարությունների վրա, որոնք, արդեն իսկ, կիրառվում են վտանգի ենթակա բնակչության կողմից ռիսկերը կառավարելու համար՝ հիմնվելով ծրագիրն իրականացնող կազմակերպությունում առկա մասնագիտական գիտելիքների վրա, կամ բյուջեում հատկացումներ անելով՝ ծրագիրը համապատասխան մասնագիտացված փորձագետներով ապահովելու համար:
- Ներառել հակաճգնաժամային միջոցներ ծրագրի իրականացման ժամանակահատվածում հնարավոր վտանգերին և կլիմայի փոփոխության ազդեցություններին արձագանքելու համար:
- Նշել այն պայմանները, որոնց վրա հիմնված է ծրագիրը, ինչպես նաև հստակեցնել, որ ծրագիրը պետք է լինի ճկուն, անհրաժեշտության դեպքում, կլիմայի փոփոխության անկանխատեսելի և անորոշ դրսևորումներին հարմարվելու համար:

3. Մշակել ծրագրի շահերի պաշտպանության պլան

- Սահմանել այն գործոնները, որոնք առանցքային նշանակություն ունեն ծրագրի իրականացման նպատակով բարենպաստ միջավայր ստեղծելու համար, ինչպես նաև սահմանել աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության նախաձեռնությունները՝ օգտագործելով համապատասխան հաստատությունների, քաղաքականությունների և այլ դերակատարների մասին վերլուծության փուլի տվյալները, օրինակ՝ կլիմայի փոփոխության ազգային քաղաքականության ընդունում կամ կառավարության տարբեր մակարդակներում աղետների ռիսկի նվազեցման համար նախատեսված բյուջետային

հատկացումներ պահանջող օրենսդրություն, որը կարող է եական նշանակություն ունենալ տեղական իշխանությունների հետ համագործակցային հարաբերություններ հաստատելու համար:

- Անհրաժեշտության դեպքում կատարել լրացուցիչ ուսումնասիրություններ՝ ավելի լավ հասկանալու, թե ինչ ազդեցություն կարող են կրել առանձին գործոնները:
- Անհրաժեշտության դեպքում ձևափոխել ծրագրի տրամաբանությունը՝ ծրագրի պաշտպանության և օժանդակության ուղղությամբ տարվող աշխատանքներն արտացոլելու համար:
- Ծրագրի պաշտպանության հետ կապված մանրամասն ցուցումները *տե՛ս Գլուխ 6-ում. Բարենպաստ միջավայրի ստեղծում՝ արդեսների դիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համար:*

4. Մշակել մշտադիտարկման մեխանիզմներ և գիտելիքների կառավարման պլան

- Զննարկել և շահագրգիռ կողմերի հետ համաձայնեցնել այն ցուցանիշները, որոնք անհրաժեշտ են ծրագրի առաջընթացի մշտադիտարկման համար: Զննարկման ընթացքում օգտվել դիմակայման վերաբերյալ վերջին մասնակցային հետազոտության արդյունքներից, ինչպես նաև ստորև նշված այլ աղբյուրներից: Մյուս ծրագրերի նման՝ ապահովել, որպեսզի ընտրված ցուցանիշները լինեն հստակ, չափելի, ծախսարդյունավետության առումով հասանելի, իրատեսական ու ժամանակին իրականացվող (SMART ցուցանիշներ) և, անհրաժեշտության դեպքում, ունենան գենդերային ուղղվածություն:
- Լրամշակել վերլուծության փուլի համապատասխան մեկնարկային տվյալները՝ ծրագիրը մեկնարկելուց առաջ ընտրված ցուցանիշների փաստաթղթերով առկա իրավիճակն հիմնավորելու համար:
- Ստեղծել տվյալների հավաքագրման և վերլուծության պլան՝ կապված ծրագրի ելակետային և արտաքին ելակետային տվյալների հետ: Երկուսի մշտադիտարկումն էլ շատ կարևոր է, քանի որ արտաքին համատեքստում տեղի ունեցող փոփոխությունները սովորաբար պահանջում են ծրագրային ձևափոխումներ:
- Սահմանել ուսուցման հնարավոր ոլորտները, որոնք կարող

են օգտակար լինել մյուսների համար, ինչպիսիք են նոր տեխնոլոգիաները, համատեքստային խնդիրները և այլն: Որոշել, թե ինչպես պետք է այդ հարցերի վերաբերյալ գիտելիքները յուրացվեն և տարածվեն: Այս նպատակն իրականացնելու համար անհրաժեշտ է ծրագրի տրամաբանությունը համալրել հատուկ գործողություններով:

- Քննարկել և շահագրգիռ կողմերի հետ համաձայնեցնել, թե ինչպիսի գնահատում(ներ) պետք է կատարվի երկարաժամկետ կամ խիստ նորարարական ծրագրերի համար. վերջնական գնահատումից բացի, կարող է օգտակար լինել նաև միջնաժամկետ գնահատման իրականացումը:

5. Կազմել ծրագրի բյուջե

- Սահմանել առաջարկվող գործողությունների (ներառյալ ծրագրի պաշտպանության հետ կապված գործունեությունը) իրականացման և մշտադիտարկման համար պահանջվող մարդկային, ֆինանսական և նյութական ռեսուրսները:
- Բյուջեի մարդկային ռեսուրսների տողում ներառել աշխատակազմի կարողությունների զարգացման կետ, քանի որ, հնարավոր է անհրաժեշտություն առաջանա զարգացնելու աշխատակազմի աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության վերաբերյալ հատուկ գիտելիքներն ու հմտությունները:
- Ներառել ջնախատեսված ծախսեր՝ ծրագրի իրականացման ընթացքում կլիմայի փոփոխության վտանգներին կամ ազդեցություններին արձագանքելու համար:
- Հնարավորության դեպքում բյուջեն դարձնել ճկուն՝ ծրագրի իրականացման ընթացքում փոփոխություններ կատարելու համար:
- Կլիմայի փոփոխության կանխատեսումների անորոշությունը և դիմակայման կարողությունների ստեղծման որոշ գործողությունների նորարարական բնույթը նշանակում է, որ կարող է ծրագրում և բյուջեում առաջանալ էական փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն: Սա կարող է ներառել նաև համայնքի ոչ դրամական ներդրումը ծրագրում:

Նախագծման փուլի արդյունքները

- Ծրագրի ընդհանուր նկարագիրը
- Ծրագրի շահերի պաշտպանության պլան
- Ծրագրին հատուկ ելակետային տվյալներ
- Մշտադիտարկման մեխանիզմներ, ներառյալ շահառուների հաշվետվողականության պլանը/համակարգը
- Փոփոխված փաստաթղթի ցուցանիշները
- Գիտելիքների կառավարման պլան



ԴԵՊԵԻ ՌԻՍԻՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ. ՀԵՏՑԻԿԼՈՆԱՅԻՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՈՂԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Մադագասկար, CARE International կազմակերպություն

Մադագասկարը, որն աշխարհի 30 աղքատ երկրներից մեկն է, պարբերաբար ենթարկվում է ցիկլոնների ազդեցությանը, որը կարող է լինել ավերիչ բնույթի և, որից տուժում է երկրի մեծ մասը: Թեև մարդիկ ծանոթ են ցիկլոնների ազդեցությանը և դրանց հետևանքներին, տեղական իշխանությունները բավարար ռեսուրսներ չունեն ապագա վտանգներին նախապատրաստվելու համար:

Երկրի հարավարևելյան Անթալախա շրջանում մարդկանց մեծ մասը բնակվում է գետի առափնյա տարածքներում կամ ծովի ափամերձ շրջանում, ինչը հնարավորություն է տալիս նրանց տեղաշարժվել փոքր նավակներով և սահմանափակում է կախվածությունը տրանսպորտի այլ միջոցներից, որի հետևանքով մարդիկ գտնվում են ցիկլոնների անմիջական ազդեցության տակ: Վերջին 12 տարիների ընթացքում Անթալախայում տեղի է ունեցել ութ ցիկլոնային փոթորիկ, որից երեքը դասակարգվել է որպես հզոր ուժգնության տրոպիկական ցիկլոն:

Ցիկլոնի արդյունքում առաջացած հեղեղաջրերի պատճառով բարձրացել է ափամերձ տարածքների էրոզիայի մակարդակը, որոշ գյուղերում առափնյա գոտին 100 մետրով առաջ է եկել, որի արդյունքում գյուղերի հողատարածքների և հիմնական ճանապարհների 50 տոկոսը ոչնչացվել է: Էրոզիան ուժեղացել է ափամերձ ծառերի կորստի, որոնք քամիների ուժգնությունը մեղմացնող միջոց էին հանդիսանում, ինչպես նաև մանգրային թփուտների և կորալային խութերի ոչնչացման պատճառով, որոնք նախկինում մեղմացնում էին փոթորկաբեր ալիքների ուժգնությունը:

Ծրագրի վերլուծության փուլում ուսումնասիրվել է 2000-2004թթ. ցիկլոնների պատճառած ավերածությունների մակարդակը, որի արդյունքում քանդվել է երկու կամուրջ (45 և 100 մետր) և մեկ լաստանավ: Ուսումնասիրության նպատակն է որոշել, թե ինչպես կարելի է առավել արդյունավետ կերպով վերականգնել համայնքի ենթակառուցվածքները: CARE International կազմակերպությունը հանգեց այն եզրակացության, որ կամուրջներն անընդհատ վերանորոգելու փոխարեն ավելի արդյունավետ կլինի Ամբոդիայոնթ և Անաթիրբե համայնքներից ներգրավել 2,000 մարդ՝ ցամաքային տարածքով 5 կմ երկարությամբ շրջանցող ճանապարհ կառուցելու համար: Սա բնակչությանը կներգրավի սեփական

համայնքի վերականգնողական աշխատանքներում և կկրճատի սպասարկման երկարաժամկետ ծախսերը, քանի որ ճանապարհն ավելի քիչ կենթարկվի ցիկլոնների, փոթորկաբեր ալիքների և երոզիայի ազդեցությանը: Այս գաղափարը ներկայացվեց գյուղացիներին, և ներքին քննարկումներից հետո որոշում կայացվեց կառուցել այն:

Ծրագրի կառավարման երկրորդ փուլում համայնքը սահմանեց այն անձանց, ովքեր պատրաստ են իրենց հողատարածքները և(կամ) ծառերը հատկացնել շինարարության համար, իսկ համայնքի ղեկավարներն օգնեցին բանակցություններ վարել այդ բնակիչներին փոխհատուցում տրամադրելու համար այնպես, որ CARE կազմակերպության ծրագիրն ամբողջությամբ նախագծվի և իրականացվի համայնքի անդամների մասնակցությամբ: Համայնքի կայացրած որոշման հիման վրա ճանապարհային ծրագիրը նախատեսում էր հեշտացնել մարդկանց և ապրանքների տեղափոխումը՝ առաջին փուլում կիրառելով՝ սնունդ աշխատանքի դիմաց, իսկ երկրորդ փուլում՝ «վճար աշխատանքի դիմաց» մոտեցումները, որի նպատակն էր. (1) ապահովել ցիկլոններից առավելագույնս տուժած մարդկանց սննդի անվտանգությունը, (2) նպաստել մարդկանց և ապրանքների տեղափոխությանը՝ տեղական տնտեսության զարգացումը վերսկսելու համար (շուկայի հասանելիություն) և (3) ապահովել հինգ ավիամերձ գյուղերի անվտանգությունը և հասանելիությունը:

Խրախուսելով ռիսկի ենթակա բնակչության մասնակցությունը և գործողությունների ձեռնարկումը համայնքը կայացրեց իր սեփական որոշումը շրջանցող ճանապարհի կառուցման վերաբերյալ: Այս նախաձեռնությամբ նվազեցվեց ոչ միայն ճանապարհի, այլ նաև բնակչության աղետի ազդեցությանը ենթարկվելու վտանգը: Ծրջանցող ճանապարհի կառուցումից ութ տարի հետո ավիամերձ շրջաններում ապրող 2,200 մարդ մոտ մեկ կիլոմետրով շարժվեց դեպի ցամաք՝ ճանապարհին մոտ գտնվելու համար: Նրանք շարունակում են օգտվել ճանապարհի տնտեսական և հասանելիություն ապահովող առավելություններից: Խորանալով դեպի ցամաք, մարդկանց ազդեցությունն ավիամերձ տարածքների վրա նվազել է: Կրճատվել է գյուղերից մինչև գյուղատնտեսական հողեր ընկած տարածությունը, որի արդյունքում գյուղատնտեսական ապրանքների արտադրությունն աճել է և տղամարդիկ, ովքեր նախկինում իրենց ամբողջ ժամանակն անց էին կացնում ծովում կամ ինսամում էին ձկնորսական պարագաները, այժմ կանանց հետ միասին ընդգրկված են գյուղատնտեսական աշխատանքներում:

Գործիքներ և ռեսուրսներ

Տեղեկատվության և հղումների համար *տես էջ 286. Գործիքներ և ռեսուրսներ*

3.4 Իրականացում

Այս փուլում կատարվում են նախատեսված աշխատանքները, ստացվում են արդյունքները, իրականացվում է մշտադիտարկում ու ծրագիրը փոփոխության է ենթարկվում՝ առաջացած նոր պայմաններին կամ չնախատեսված իրավիճակներին համապատասխան:

Փուլի նպատակն է սահմանված ժամկետում և բյուջեի սահմաններում հասնել ծրագրի նպատակների իրականացմանը: Իրականացման փուլն ներառում է անմիջական օգնություն, օժանդակություն, կարողությունների ստեղծում, ծրագրի պաշտպանության և գիտելիքների կառավարման հետ կապված գործունեություն:

Իրականացման փուլի հիմնական գործողությունները

Իրականացման փուլի սկզբնական շրջանի (մեկնարկային գործողություններ) երեք հիմնական գործողությունները, որոնք մշտական ուշադրություն են պահանջում, հետևյալն են.

Մեկնարկային գործողություններ

1. Մշակել աշխատանքների իրականացման պլան՝ թիրախային համայնքի և այլ շահագրգիռ կողմերի հետ միասին

- Կազմել ծրագրով նախատեսված գործողությունների մեկնարկի և ավարտի իրատեսական գրաֆիկ և ներկայացնել բոլոր կողմերին:
- Հնարավորության դեպքում ցուցաբերել ճկունություն ծրագրի իրականացման ընթացքում ցանկացած հնարավոր, հատկապես, պարբերաբար կրկնվող վտանգներին նախապատրաստվելու և արձագանքելու համար, ինչպիսիք են մուսոնային սեզոնին տեղի ունեցող ջրհեղեղները:

2. Ամրապնդել համագործակցությունն ու ցանցերի գործունեությունը

- Հանդիպումներ անցկացնել գործընկերների և համախոհների հետ ծրագրի պլանները լրամշակելու, անհրաժեշտության դեպքում, հարմարեցնելու (եթե իրավիճակը փոխվել է) համար և համակարգել աշխատանքները:
- Քննարկել և կազմել պայմանագրեր ստանձնած դերերի և պարտավորությունների, ինչպես նաև գործընկերների և համախոհների հետ ծրագրի պաշտպանության և գիտելիքների կառավարման վերաբերյալ:

3. Չարգացնել աշխատակազմի և գործընկերների կարողությունները

- Մշակել կարողությունների զարգացման պլան՝ օգտագործելով վելուծության փուլում հավաքված տեղեկատվությունն ու հաշվի առնելով ծրագրի կարիքներն ու առկա թերությունները, ներառել դրանք ծրագրի հիմնական գործողությունների պլանում՝ համապատասխան միջոցների հատկացումն ու իրականացումն ապահովելու համար:

Ծրագրի իրականացման ընթացքում մշտական ուշադրության արժանի կողմեր

1. Մշտադիտարկում, գնահատում, ուսուցում և գիտելիքների կառավարում

- Ապահովել ծրագրի գործունեության, արդյունքների, ինչպես նաև արտաքին համատեքստի պարբերաբար իրականացվող մշտադիտարկման և վերլուծության իրականացում, ինչպես նաև արդյունքների փոխանակում շահագրգիռ կողմերի միջև՝ ծրագրի լրամշակման և բարելավման նպատակով:
- Ապահովել սեռային տարանջատմամբ⁶ համապատասխան տվյալների և այլ տարբերակված գործոնների առկայությունը:
- Տեղյակ լինել չնախատեսված, մասնավորապես, բացասական ազդեցությունների մասին և, անհրաժեշտության դեպքում, ծրագրում կատարել փոփոխություններ:
- Ստեղծել և փոխանակել նորարարական կամ հաջողված գործելակերպի օրինակներ:
- Պլանավորել և պարբերաբար վերանայել ուսուցման ծրագրերն ու գնահատումները, որպես ընթացքի մեջ գտնվող ծրագրի մի մաս:

2. Բարձր ռիսկային խմբերի մասնակցությունը

- Ստուգել, որպեսզի ծրագիրը բավարարի կանանց, տղամարդկանց, երեխաների և բարձր ռիսկային խմբերի գործնական և ռազմավարական կարիքները, հակառակ դեպքում՝ օգտագործել վերջիններիս ներդրումը փոփոխություններ կատարելու համար և՛ նորից ստուգել:
- Աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագրերի մշակման ժամանակ դիտարկել գենդերային և բազմազանության հարցերի վերաբերյալ ձեռք բերված փորձը և խթանել լավագույն փորձի կիրառումը:

3. Նախապատրաստվածություն և արձագանք արտակարգ իրավիճակներին

- Շահագրգիռ կողմերի հետ միասին ծրագրի իրականացման փուլի մեկնարկի ժամանակ մշակել արտակարգ իրավիճակներին կամ աղետներին նախապատրաստվելու գործողությունների պլան⁶ և ծրագրի ընթացքում պարբերաբար վերանայել դրանք:
- Ծրագրի իրականացման մեկնարկային փուլում հզորացնել կամ ստեղծել վաղ ազդարարման հիմնական համակարգ՝ բոլոր համապատասխան վտանգների և կլիմայական պայմանների համար, այնուհետև փորձարկել դրանք և ծրագրի ընթացքում պարբերաբար բարելավել:
- Ապահովել, որպեսզի բոլոր դերակատարները (թիրախային բնակչությունը, ծրագրի աշխատակազմը և այլ կազմակերպությունների աշխատակիցներ) իմանան իրենց պարտականությունները, պատասխանատվության շրջանակը և արտակարգ իրավիճակներին արձագանքելու գործընթացները, պարբերաբար ստուգել վերջիններիս գիտելիքները թեստերի միջոցով՝ պատրաստվածության մշակույթ ձևավորելու նպատակով:

Գործիքներ և ռեսուրսներ

Տեղեկատվության և հղումների համար *տես էջ 270*. *Գործիքներ և ռեսուրսներ*

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները ծրագրի փուլային կառավարման գործընթացում կիրառելու համար	
1. Բարձրացնել վտանգի և կլիմայի փոփոխության համատեքստի ըմբռնման մակարդակը	<ul style="list-style-type: none"> • Տեղեկություններ հավաքել առաջնային և երկրորդական բազմաթիվ աղբյուրներից՝ իրավիճակն ամբողջությամբ ընկալելու համար: • Հաշվի առնել, որ շատ զարգացող երկրներում կլիմայի հետ կապված տվյալներ և կանխատեսումներ տեղական մակարդակում գոյություն չունեն, այդ պատճառով օգտագործել առկա լավագույն տվյալներից վերցված միտումներն ու սցենարները:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները ծրագրի փուլային կառավարման գործընթացում կիրառելու համար

<p>2. Բարձրացնել վտանգի ենթարկվելու, խոցելիության և կարողությունների ըմբռնման մակարդակը</p>	<ul style="list-style-type: none"> • Բոլոր շահագրգիռ կողմերին ակտիվորեն ընդգրկել վերլուծության փուլում, ստեղծել ռիսկի ընկալելու և գնահատելու կարողություններ՝ որպես վերջիններիս գործընթացում ընդգրկելու անմիջական արդյունք: • Վերահսկել նախագծման փուլում արտաքին գործոնները և, անհրաժեշտության դեպքում, թարմացնել վերլուծությունը:
<p>3. Ճանաչել իրավունքներն ու պարտականությունները</p>	<ul style="list-style-type: none"> • Տարանջատել տեղեկատվությունն ըստ սեռի, տարիքի և այլ համապատասխան սոցիալական, մշակութային և տնտեսական գործոնների՝ տարբեր խմբերի հատուկ կարիքները հասկանալու համար: • Շահագրգիռ կողմերին հաշվետվություն ներկայացնել և պատասխանատվություն կրել որչ գործընթացի ժամանակ:
<p>4. Խթանել ռիսկի ենթակա բնակչության մասնակցությունը և գործողությունների ձեռնարկումը</p>	<ul style="list-style-type: none"> • Կիրառել մասնակցային տվյալների հավաքման վերլուծության գործընթացը թիրախային բնակչության շրջանում: Գործունեության ուսումնասիրության այս մեթոդն անդրադառնում է վտանգի իրազեկման խնդիրներին, հեշտացնում է տարբեր խմբերի ակտիվ ներգրավումը և մասնակցությունը հետագա գործողություններին: • Փաստաթղթային ձևակերպում տալ ծրագրի մշակման գործընթացին, ներառյալ հիմնական որոշումների հիմնավորումները և շահագրգիռ կողմերի ներգրավման ձևերը՝ ծրագրի իրականացումը, ուսուցման գործընթացը և տարբեր խմբերի ներգրավումը հեշտացնելու համար:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները ծրագրի փուլային կառավարման գործընթացում կիրառելու համար	
<p>4. Խթանել ռիսկի ենթակա բնակչության մասնակցությունը և գործողությունների ձեռնարկումը</p>	<ul style="list-style-type: none"> • Սահմանել շահագրգիռ կողմերի պարտավորությունները, սահմանափակումները, աշխատանքների ծանրաբեռնված շրջանը, գործարանային հերթափոխը, աշխատանքային ժամերը, բերքահավաքների և տրուպիկական փոթորիկների շրջանը, որպեսզի ռիսկի ենթակա բնակչությունը կարողանա ամբողջությամբ ընդգրկվել ծրագրում, եթե վերջինիս ներգրավումը պահանջվում է, և ապահովել, որպեսզի գործողություններն իրականացվեն ճիշտ ժամանակին՝ արդյունավետ լինելու համար:
<p>5. Խրախուսել համակարգված ներգրավման և փոփոխության գործընթացները</p>	<ul style="list-style-type: none"> • Աշխատակազմին, մասնակիցներին և գործընկերներին տալ միջոցառարային ուսուցման հնարավորություն՝ հաշվի առնելով նոր հայեցակարգերը, կլիմայի փոփոխության վերաբերյալ տեղեկատվությունը և աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության նկատմամբ միասնական մոտեցման անհրաժեշտությունը: • Խրախուսել շահագրգիռ կողմից արվող մեկնաբանումներն ու գնահատումները՝ նրանց միջև քննարկումներ ծավալելու նպատակով:
<p>6. Նպաստել տարբեր մակարդակների համատեղ գործունեության</p>	<ul style="list-style-type: none"> • Ապահովել, որպեսզի ԾՓԿ-ն անդրադառնա տարբեր մակարդակներում իրականացվող գործողություններին՝ սկսած տեղական, տարածքային, շրջանային մակարդակից մինչև ազգային մակարդակը: Առանց բարենպաստ քաղաքական և հաստատութենական դաշտի ծրագրի նվաճումները կլինեն սահմանափակ և անկայուն:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները ծրագրի փուլային կառավարման գործընթացում կիրառելու համար

<p>6. Նպաստել տարբեր մակարդակների համատեղ գործունեության</p>	<ul style="list-style-type: none"> • Ծրագրերում օգտագործել հաստատութենական հզորացման և քաղաքացիական հասարակության⁶ կարողությունների ստեղծման բաղադրիչները՝ տարբեր մակարդակի շահագրգիռ կողմերի միջև երկխոսությունը և համակարգումը հեշտացնելու համար:
<p>7. Կիրառել և զարգացնել տարբեր աղբյուրներից ստացված գիտելիքներ</p>	<ul style="list-style-type: none"> • Օգտվել հնարավորինս շատ տվյալների աղբյուրներից, բայց առանց աշխատանքները հետաձգելու, եթե թիրախային տարածքի վերաբերյալ տվյալները հասանելի չեն: Անհրաժեշտ է գործունեություն ծավալել այն տվյալների հիման վրա, որոնք ստացվել են տեղական մակարդակով կատարված վերլուծության արդյունքում: • Աշխատել կառավարական այն գերատեսչության(ների) հետ, որոնք պատասխանատու են աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության գործընթացների համար, ինչպես նաև այն հաստատությունների հետ, որոնք պատասխանատու են սննդի անվտանգության, կենսապահովման, ջրամատակարարման, կրթության, առողջապահության, բնակարանային ապահովման, պաշտպանության⁶ և այլ հարցերի համար: • Ծրագրի նախագծման համապատասխան փուլում և գնահատման գործընթացում փորձել ներգրավել տեխնիկական մասնագետների (օրինակ՝ կլիմայի փոփոխության հարցերով զբաղվող գիտնականներ, գեոլոգների և բազմազանության հարցերով զբաղվող մասնագետներ, գյուղատնտեսներ, ջրամատակարարման ինժեներներ, տնտեսագետներ և այլն):

Ցուցումներ արդեսների դիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները ծրագրի փուլային կառավարման գործընթացում կիրառելու համար	
<p>8. Ապահովել ճկունություն և արձագանքման հնարավորություն</p>	<ul style="list-style-type: none"> • Տվյալների հավաքագրումը չպետք է կենտրոնանա մի տիպի վտանգի կամ մեկ բնույթի կլիմայական դրսևորման վրա: Կլիմայի փոփոխությունն ամբողջ աշխարհով մեկ հանգեցնում է տարբեր տեսակի վտանգների, այդ պատճառով տարբեր վտանգների և տարբեր սցենարների մոտեցման ընդունումը կարևոր է: • Պատրաստ լինել, որ կլիմայի փոփոխության տվյալները կարող են լինել անորոշ և արտացոլել դրանք ԾՓԿ-ի տարբեր փուլերի ամփոփման արդյունքում: • Պատրաստ լինել այնպիսի իրավիճակների, երբ կպահաջվի փոփոխությունների մտցնել գործողությունների պլանում: Կլիմայի փոփոխության կանխատեսումների անորոշությունը և շատ վտանգների անկանխատեսելի բնույթը նշանակում է, որ ծրագիրը կարող է բազմաթիվ ճշգրտումների ենթարկվել՝ ելնելով արտաքին համատեքստի փոփոխությունից: • Յուրաքանչյուր մեծ վտանգից կամ յուրաքանչյուր համապատասխան ռիսկային ժամանակահատվածից հետո գնահատել ծրագիրը, որոշելու համար, թե ինչն է լավ աշխատում, իսկ ինչն՝ ոչ և, ինչ փոփոխություններ է անհրաժեշտ կատարել:
<p>9. Դիտարկել տարբեր ժամանակահատվածներ</p>	<ul style="list-style-type: none"> • Վերլուծության փուլի ընթացքում անդրադառնալ կլիմայի ներկա և ապագա կանխատեսումների ու վտանգի բնույթի փոփոխությանը: • Ապահովել, որպեսզի ծրագիրն ընդգրկի ներկա և ապագա ռիսկերը դիտարկող բաղադրիչներ: • Շարունակել իրավիճակային հիմնական տվյալների փոփոխությունների մշտադիտարկումը, ինչը կարող է ազդել ծրագրի հաջող իրականացման վրա:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները ծրագրի փուլային կառավարման գործընթացում կիրառելու համար

<p>10. Չվնասել</p>	<ul style="list-style-type: none"> • Բացահայտ կամ բողոքարկված կոնֆլիկտային⁶ իրավիճակներում հակամարտությունների նկատմամբ զգայուն մոտեցումը ներառել տեղական մակարդակով իրականացվող վերլուծության մեջ (առավել մանրակրկիտ ցուցումների համար տե՛ս Գլուխ 5. <i>Չիմնական համատեքստեր</i>): • Չեռնել ծրագրային գործողությունների իրականացման արդյունքում նախատեսված, ինչպես նաև չնախատեսված ազդեցություններին՝ բացասական ազդեցությունները կանխելու, կամ այդ ազդեցություններին արձագանքելու համար: • Միասին քննարկել սխալները, ինչպես նաև լավագույն փորձը և հաջողությունները՝ առանձին մոտեցումներից, տեխնոլոգիաներից և մեթոդներից համապատասխան գիտելիքներ ձեռք բերելու համար:
--------------------	--

ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՎԱՇԵՑՄԱՆ ԵՎ ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՐՄԱՐԿՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

Գլուխ 4. Նախատեսված է օժանդակել զարգացման և մարդասիրական օգնության ոլորտի պրակտիկ գործունեության մեջ ընդգրկված աշխատակիցներին հասկանալու, թե ինչպես են աղետներն⁶ ու կլիմայի փոփոխությունը⁶ ազդում զարգացման և մարդասիրական օգնության հիմնական ոլորտների վրա և հանձնարարականներ է տալիս, թե ինչպես կազմել ծրագրեր այդ ոլորտների համար: Գլուխը ներառում է.

- *Բացատրություններ.*
 - Առանցքային տերմինների, առանցքային ոլորտների հետ կապված հիմնական հայեցակարգերի ու մոտեցումների մասին,
 - Աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերի հետ կապված խնդիրների, սննդի անվտանգության հիմնական ոլորտների, կենսապահովման⁶, բնական ռեսուրսների կառավարման⁶, ջրամատակարարման, ջրահեռացման և հիգիենայի (WASH), կրթության, առողջապահության ու պաշտպանության մասին:
- *Հանձնարարականներ* աղետների ռիսկի նվազեցման⁶ և կլիմայի փոփոխության հարմարվողականության⁶ համալիր մոտեցումը առանցքային տարբեր ոլորտներում կիրառելու համար, այդ թվում՝ նաև՝ 10 սկզբունքների կիրառումը:
- *Դեպքերի ուսումնասիրություններ* կապված աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության, ինչպես նաև առանցքային ոլորտների հետ:
- *Գործիքներ և ռեսուրսներ* հավելվածին կատարված հղումներ՝ առանցքային ոլորտներում աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության գործընթացների իրականացման համար:

4.1 Սննդի անվտանգություն

«Սննդի անվտանգության խնդիրը կանգնում է այն պարագայում, երբ մշտապես բոլոր մարդկանց ֆիզիկապես և տնտեսապես հասանելի է

բավարար քանակությամբ, անվտանգ և սննդարար սնունդ՝ վերջիններիս կարիքները և սննդի հետ կապված նախասիրությունները բավարարելու և ակտիվ ու առողջ կյանքով ապրելու համար»:

Պետություններն իրավաբանորեն պարտավոր են ապահովել բոլոր մարդկանց սննդի իրավունքը: Թեև երկրագունդն ապահովված է բավարար պարենով, պարենի միջազգային համակարգը չի կարող բոլորին բավարարել համապատասխան սննդակարգով և կալորիաներով: Այսօր մեկ միլիարդից ավելի մարդ սովի է մատնված, իսկ միլիոնավոր մարդիկ օգտագործում են ոչ անվտանգ սնունդ: Քանի որ երկրագնդի բնակչության թիվը մինչև 2050թ. կհասնի մոտ ինը միլիարդի, պարենի համակարգը կկանգնի լրացուցիչ լարվածության առջև, որն ավելի կսրվի կլիմայի փոփոխության⁶, աղետների, գյուղատնտեսական սուբսիդիաների բացասական ազդեցության, չարաշահումների, գների անկայունության և այլ խնդիրների պատճառով:

Սննդի անվտանգության բացակայությունը⁶ հիմնականում անդրադառնում է աղքատ բնակչության ոչ միայն առողջության, այլ նաև կենսապահովման⁶ վրա՝ բնական ռեսուրսների սպառման պատճառով, ինչը ստիպում է մարդկանց վաճառել ունեցվածքը և հեռանալ մշտական բնակության վայրերից՝ աշխատանք գտնելու ակնկալիքով, կամ գոյատևելու համար ձեռնարկել այլ միջոցներ: Քաղաքային բնակչության աճի հետ մեկտեղ, հողի և այլ բնական ռեսուրսների օգտագործման հետևանքները, սննդի արտադրության համակարգերը և սննդի հասանելիությունը դիտարկման առավել կարևոր խնդիր են դառնում:

Այս բաժինը պետք է դիտարկվի *Կենսապահովման և բնական ռեսուրսների կառավարման* բաժինների հետ մեկտեղ, որոնց հղումները ներկայացված են ստորև:

Առանցքային խնդիրներ

Աղետների և կլիմայի փոփոխության ազդեցությունները սննդի անվտանգության վրա բազմաթիվ են: Եղանակային ծայրահեղ դրսևորումների և դրանց տեղաշարժի արդյունքում կմեծանա երաշտների և ջրհեղեղների, անսովոր տաք օդային հոսանքների, սառնամանիքների և այլ ծայրահեղ երևույթների հաճախականությունը, ինչը կանդրադառնա սննդի անվտանգության բոլոր չորս հիմնական հատկանիշների վրա, որոնք են՝ մատչելիությունը, հասանելիությունը, կայունությունը, օգտագործումը:

4.1 Աղետների և կլիմայի փոփոխության ազդեցության օրինակներ՝ հիմնված սննդի անվտանգության չորս հատկանիշների վրա

- **Մատչելիություն.** Խիստ երաշտի արդյունքում պակասում է բերքը, անասունները սատկում են, պակասում է սերմացուի քանակը՝ ինչը հանգեցնում է բերքի քանակի կրճատման:
- **Չասանելիություն.** Վնասված ենթակառուցվածքները խոչընդոտում են սննդի կամ շուկաների հասանելիությունը, անասունի ցածր գները կրճատում են սնունդ ձեռք բերելու համար անհրաժեշտ կանխիկ գումարը:
- **Կայունություն.** Անկանխատեսելի եղանակային դրսևորումներն անդրադառնում են որոշ մշակաբույսերի բերքի կամ սննդի հիմնական տեսակները ստանալու նպատակով համապատասխան կուլտուրաների կանոնավոր մշակման վրա:
- **Օգտագործում.** Ոչ անվտանգ խմելու ջուր, որն առաջացնում է քրոնիկական լուծ՝ նվազեցնելով օրգանիզմում սննդաբար նյութերի քանակը:

Ակնկալվում է, որ ամբողջ աշխարհում գյուղատնտեսական արտադրանքի վրա կլիմայի փոփոխության ազդեցության հետ մեկտեղ, սննդի անվտանգության բացակայության պատճառով տուժած ոլորտները կենթարկվեն չափազանց մեծ բացասական ներգործության: Արդեն իսկ խոցելի սննդի արտադրության համակարգերը և այն բնական ռեսուրսները, որոնցից վերջիններս կախված են՝ մասնավորապես դեգրադացիայի և անապատացման⁶ հակված ռեսուրսները, ինչպես նաև ջրի սակավությունը⁶, կարող են բացասաբար անդրադառնալ մարդկանց կարողությունների⁶ վրա՝ անհրաժեշտ կանխարգելիչ և պաշտպանական միջոցներ նախաձեռնելու համար: Չատկապես վտանգի են ենթարկված չոռոզվող անձրևաջրային գյուղատնտեսությունը⁶ և ագրոարտապայրային համակարգերը:

Աղետների ենթակա համայնքներում, որոնք մշտապես կրում են սննդի անվտանգության բացակայության ազդեցությունը, աղետների ժամանակ իրավիճակը կարող է խիստ սրվել: Սննդի անբավարարությունը կամ անմատչելիությունն ու անհասանելիությունն աղետների ամենահիմնական ազդեցություններից են: Բերքի քանակի, ձկնեղենի պաշարների կրճատման արդյունքում ակնկալվում է նաև սուր և քրոնիկական թերսնվածության աստիճանի բարձրացում, ինչպես նաև փորլուծություն ունեցող հիվանդների թվի աճ՝ կապված ջրի վատ որակի հետ: Կլիմայի փոփոխությունը մեծ ազդեցություն կունենա աշխարհի ամենաաղքատ մարդկանց սննդային կարգավիճակի վրա, քանի որ նրանց կենսապահովումը կախված է կլիմայի հանդեպ զգայուն ռեսուրսներից⁶: Ի լրումն, վատ սնուցումը կանդրադառնա վերջիններիս

առողջության և աշխատելու ունակությունների վրա՝ խոչընդոտելով հարմարվողականության կարողությունների զարգացման գործընթացը:

Մենդի անվտանգության նկատմամբ կառուցողական մոտեցումը, որն ընդգրկում է աղետների ռիսկի նվազեցման⁶ և կլիմայի փոփոխության հարմարվողականության գործընթացները, կբարձրացնեն վտանգի ենթակա բնակչության դիմակայման⁶ կարողություններն աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերի հանդեպ՝ միաժամանակ պաշտպանելով և բարելավելով տեղական էկոհամակարգերը և կատարելագործելով մարդկային ռեսուրսները, որոնք պահանջվում են խոցելիության ընդհանուր մակարդակը նվազեցնելու համար⁶:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները սննդի անվտանգության ոլորտում կիրառելու համար

1. Բարձրացնել վտանգի և կլիմայի փոփոխության համատեքստի ըմբռնման մակարդակը

- Իրականացնել գյուղատնտեսության իրավիճակի գնահատումներ՝ վտանգների, կլիմայի փոփոխականության ու փոփոխության առկա և կանխատեսվող ազդեցություններն ավելի լավ ըմբռնելու համար:
- Օժանդակել կլիմայի և աղետների ռիսկի քարտեզների և գործողությունների պլանների մշակման գործընթացները տեղական, շրջանային և տարածաշրջանային մակարդակով:
- Աջակցել տեղեկատվական կենտրոնների ստեղծմանը շրջանի և համայնքի մակարդակով, որտեղ համայնքի բնակիչների համար հասանելի կլինեն տեղեկատվական, կրթական, հաղորդակցման նյութերը, տեղական մակարդակով կանխատեսումները, աղետների և կլիմայական ռիսկերի քարտեզները:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները սննդի անվտանգության ոլորտում կիրառելու համար

2. Բարձրացնել վտանգի ենթարկվելու, խոցելիության և կարողությունների ըմբռնման մակարդակը

- Օգտագործել վտանգների, կլիմայի փոփոխության միտումների, հողի/բնական ռեսուրսների վերաբերյալ առկա լավագույն տեղեկատվությունը՝ բացահայտելու, թե որքանով են վտանգված սննդի աղբյուրները, ինչպես նաև սննդի հասանելիության մեխանիզմներն (ներառյալ արտադրական ակտիվները և զբաղվածությունն այլ ոլորտներում) ու համապատասխան ենթակառուցվածքները, ինչպիսիք են արտադրողներին, սպառողներին և շուկաները միմյանց կապող ճանապարհները, սննդի վերամշակման գործարանները):
- Իրականացնել միասնական կարողությունների և խոցելիության աստիճանի վերլուծություն⁶ տեղական մակարդակով՝ օգնելու ռիսկի ենթակա բնակչությանն ավելի լավ ըմբռնել կապը սննդի անվտանգության և աղետների ու կլիմայի փոփոխության վտանգների միջև, ապահովել, որպեսզի մասնակից կանանց և տղամարդկանց կողմից սահմանվեն և ընկալվեն սննդի անվտանգության, խոցելիության և կարողությունների հետ կապված գենդերային հարցերը:
- Կիրառել այնպիսի մեթոդներ, ինչպիսին ՏՆային տնտեսությունների վարման մեթոդն է (*տե՛ս Գործիքներ և ռեսուրսներ, էջ 290,*) խորացնելու այն գործոնների ընկալումը, որոնք անդրադառնում են ռիսկի ենթակա բնակչության սննդի անվտանգության և սնուցման խնդիրներին (ինչպիսիք են սեզոնայնությունը, դրամային փոխանցումները, հիմնական սննդի տեսականու գները և հակամարտությունները) և նրան, թե ինչպես են այդ խնդիրները փոխկապակցված աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերի հետ:
- Ուսուցման և դասընթացների միջոցով բարձրացնել ռիսկի ենթակա բնակչության իրազեկման մակարդակը սննդի համակարգում կնոջ կենտրոնական դերի վերաբերյալ:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները սննդի անվտանգության ոլորտում կիրառելու համար

3. Ճանաչել իրավունքներն ու պարտականությունները

- Հանրային քարոզարշավների, կառավարության համապատասխան շահագրգիռ կողմերի վրա ազդելու և հիմնական միջազգային դոնորների/ֆինանսավորող հաստատությունների շրջանում ծրագրի շահերը պաշտպանելու միջոցով բարձրացնել աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերի իրազեկման մակարդակը՝ կապված սննդի անվտանգության հետ՝ կլիմայի փոփոխության և սննդի անվտանգության կառավարմանն⁶ ուղղված ներդրումների պահանջը մեծացնելու համար:
- Կիրառել գանգվածային լրատվությունը, կապի ավանդական միջոցները և կարողությունների զարգացման կոնկրետ օրինակներ՝ բնակչության շրջանում բարձրացնելու կլիմայի փոփոխության, բնական ռեսուրսների կառավարման⁶ և սննդի անվտանգության միջև կապի ըմբռնման մակարդակը, ինչպես նաև բնակչությանը տեղեկատվություն տրամադրելու բնական ռեսուրսների խելամիտ կառավարման վերաբերյալ:
- Հանդես գալ ի պաշտպանություն կանանց և բնակչության մարզինալ խմբերի իրավունքների իրականացմանը՝ կապված կենսապահովման այնպիսի կարևոր միջոցների հետ, ինչպիսիք են հողը և ջուրը հանրային իրազեկման քարոզարշավների ու օրենսդրական դաշտի բարեփոխումների միջոցով, ինչպես նաև անմիջական օժանդակություն ցուցաբերել քաղաքացիական հասարակությանը⁶ և համայնքային այն կառույցներին, որոնք զբաղվում են այդ խնդիրներով:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները սննդի անվտանգության ոլորտում կիրառելու համար

4. Խթանել ռիսկի ենթակա բնակչության մասնակցությունը և գործողությունների ձեռնարկումը

- Աջակցել այն մեխանիզմների ստեղծմանը/ հզորացմանը (ռադիոհեռարձակումներ, հաղորդագրություններ), որոնց միջոցով կարող է հաղորդվել եղանակի տեսությունը և թարմ տրոլություններ վտանգների մասին:
- Շրջանային և տեղական մակարդակներում օժանդակել շուկայական տեղեկատվության համակարգերի (գին, որակ, չափորոշիչ, ապրանք) ստեղծմանը, ինչը հնարավորություն կտա սնունդ արտադրողներին և գնորդներին որոշումներ կայացնել ստացված տվյալների հիման վրա:
- Արտադրողականությունը բարձրացնելու նպատակով համագործակցել բարձր ռիսկային գոտում գտնվող սնունդ արտադրողների, մասնավորապես կանանց և բնակչության մարզինալացված հատվածի հետ՝ ամրապնդելով հողի և ջրի նկատմամբ իրավունքները, բարձրացնելով շուկաների, ֆինանսների և ապահովագրության հասանելիության մակարդակը:
- Համայնքներում ֆերմերների համար անցկացնել ուսուցում և «հավասարը հավասարի» դասընթացներ գյուղատնտեսության⁶ արդյունավետ վարման փորձի, դեգրադացված հողերի վերականգնման և գյուղատնտեսության կենսաբազմազանության⁶ վերաբերյալ:
- Վտանգի ենթակա համայնքներում ստեղծել սննդի և սնուցման խնդիրներով զբաղվող խմբեր և բնակիչների համար անցկացնել ուսուցում՝ տան պայմաններում սնուցման մակարդակը բարելավելու և պահպանելու ռազմավարության վերաբերյալ, որպես կլիմայի փոփոխությանը հարմարվելու և աղետներին նախապատրաստվելու միջոց⁶ :

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները սննդի անվտանգության ոլորտում կիրառելու համար

5. Խրախուսել համակարգված ներգրավման և փոփոխության գործընթացները

- Չանդեն գալ ի պաշտպանություն սննդի անվտանգության, առողջապահության և տնտեսական զարգացման քաղաքականությունների, որոնք հիմնված են աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերի վերլուծության վրա:
- Նպաստել, որպեսզի ներդրումներ կատարվեն արդյունավետ սոցիալական պաշտպանության համակարգերում⁶, որոնք կարող են ընդլայնվել սննդի անվտանգության բացակայության սպասվող աճի պայմաններում (այդ թվում՝ նաև՝ կլիմայի հետ կապված ցնցումների⁶ ժամանակ) և ճգնաժամերին արձագանքելու ժամանակ, օժանդակել փորձնական միջոցների կիրառման այնպիսի փորձնական ծրագրերի իրականացմանը, ինչպիսիք են դրամային փոխանցումները, սննդի կտրոնները և երաշխավորված աշխատանքային սխեմաները:
- Խթանել սննդի անվտանգության, կենսապահովման, առողջապահության, ջրամատակարարման, ջրահեռացման և հիգիենայի խնդիրներով զբաղվող ոչ պետական կազմակերպությունների միջև համագործակցությունը, ստեղծել ամբողջական երկարաժամկետ ռազմավարություններ՝ աղետների և կլիմայի փոփոխությանը դիմակայելու կարողությունների զարգացման համար:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները սննդի անվտանգության ոլորտում կիրառելու համար

<p>6. Նպաստել տարբեր մակարդակների համատեղ գործունեությանը</p>	<ul style="list-style-type: none"> • Սահմանել այն ազգային օրենքներն ու քաղաքականությունները, որոնք առնչվում են սննդի անվտանգության, կլիմայի փոփոխության և աղետների ռիսկերի հետ⁶, և աջակցել ռիսկի ենթակա բնակչությանը պայքարել դրանց իրականացման համար: • Աջակցել տարբեր մակարդակներում սննդի անվտանգության մշտադիտարկման և արտակարգ իրավիճակներում գործողությունների պլանի⁶ մշակմանը՝ օգտագործելով այնպիսի համակարգեր, ինչպիսին է Սննդի անվտանգության փուլի համալիր դասակարգման գործիքը (IPC): <i>Տե՛ս Գործիքներ և ռեսուրսներ, էջ 272: Տե՛ս բաժին 5.4-ը. Դանդաղ վրա հասնող աղետներ:</i>
<p>7. Կիրառել և զարգացնել տարբեր աղբյուրներից ստացված գիտելիքներ</p>	<ul style="list-style-type: none"> • Օժանդակել այն համակարգերի զարգացմանը, որոնք բարելավում են կլիմայի հետ կապված տեղեկատվությունը սննդամթերք արտադրողների համար հասանելի դարձնելը տարբեր ժամանակային կտրվածքներում՝ օրական (եղանակ), ամսական (սեզոնային հեռանկարներ), տասնամյակներ (կլիմայի փոփոխության սցենարներ): • Ստեղծել տեղական և ազգային պլատֆորմներ սննդամթերք արտադրողների, սննդի անվտանգության, կլիմայի փոփոխության փորձագետների համար՝ առկա խնդիրների վերաբերյալ մտքեր փոխանակելու և լուծումներ գտնելու համար համագործակցելու նպատակով:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները սննդի անվտանգության ոլորտում կիրառելու համար

<p>7. Կիրառել և զարգացնել տարբեր աղբյուրներից ստացված գիտելիքներ</p>	<ul style="list-style-type: none"> • Նորարարական մոտեցումները խրախուսելու համար մշակել փորձնական ծրագրեր՝ փոքր և միջին արտադրողներին, տեխնոլոգիաների մատակարարներին, գիտահետազոտական ինստիտուտներին միմյանց հետ կապելու նպատակով: • Խրախուսել ռիսկի ենթակա բնակչությանը, ուսումնասիրել սննդի անվտանգության ավանդական փորձը, ինչպիսիք են սերմերի և ցորենի բանկերի ստեղծումը, պահածոյացումը, խնայողության սխեմաները, միգրացիան և սեզոնային աշխատանքը, ու գնահատել դրանց համապատասխանելիությունը ներկա իրավիճակին, կլիմայի փոփոխության հարմարվողականության ապագա սցենարներին:
<p>8. Ապահովել ճկունություն և արձագանքման հնարավորություններ</p>	<ul style="list-style-type: none"> • Համագործակցել կառավարության տարբեր մակարդակների հետ՝ արտակարգ իրավիճակների համար սննդի պաշարներ ստեղծելու նպատակով՝ անհապաղ արձագանքելու սննդի անվտանգության բացակայության սրվող իրավիճակին, որը ծագում է վտանգների և կլիմայի փոփոխության հետ կապված սթրեսային իրավիճակներում: • Աջակցել տեղական և տարածաշրջանային պետական կառավարման հաստատություններին գործել այն տեղեկատվության հիման վրա, որը ստեղծվել է Սննդի անվտանգության փուլի համալիր դասակարգման գործիքի (IPC) կիրառմամբ, իսկ, հնարավորության դեպքում, նպաստել այդ տվյալների ստեղծմանը:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները սննդի անվտանգության ոլորտում կիրառելու համար

9. Դիտարկել տարբեր ժամանակահատվածներ

- Ներառել սննդի անվտանգության բացակայության մասին վաղ ազդարարման ցուցանիշները ծրագրի մշտադիտարկման համակարգերում և մշակել մեխանիզմներ՝ ժամանակին գործողություններ իրականացնելու համար, օրինակ՝ մատակարարումներ/ֆինանսավորում արտակարգ իրավիճակներում:
- Աջակցել տնային տնտեսություններին և համայնքներին՝ նախապատրաստական միջոցառումների իրականացման, օրինակ՝ սննդամթերքի և անասնակերի պահեստավորման, անասունների պատվաստման, ինսյոդություններ կատարելու և միկրոապահովագրման գործընթացներին:
- Աջակցել տվյալ համատեքստին հատուկ սննդի անվտանգության հետ կապված հետազոտությունների իրականացմանը տարբեր ժամանակային կտրվածքներում, որը հնարավորություն կտա ավելի լավ պլանավորել և արձագանքել աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերին:
- Գնահատել սննդի անվտանգության ազգային քաղաքականությունների և ռազմավարությունների համապատասխանությունը ռիսկերի ներկա և ապագա սցենարների հետ, բացահայտել դրանց հնարավոր ուժեղ և թույլ կողմերն ու բացթողումները և պաշտպանել այնպիսի քաղաքականությունների և ռազմավարությունների մշակումը, որոնք հաշվի կառնեն կլիմայի փոփոխության կանխատեսումները:
- Օգնել վտանգի ենթակա բնակչությանը ըմբռնելու միկրոապահովագրության սխեմաները:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները սննդի անվտանգության ոլորտում կիրառելու համար

<p>10. Չվնասել</p>	<ul style="list-style-type: none"> • Արտակարգ իրավիճակներում սննդամթերք կամ այլ ապրանքներ բաշխելիս՝ վերլուծել դրա հնարավոր ազդեցությունը տեղացի արտադրողների և տեղական շուկայի գների վրա: • Դիտարկել «վճար աշխատանքի դիմաց» և «կանխիկ գումարների փոխանցման» ծրագրերը որպես սննդի անվտանգության տեսանկյունից անապահով բնակչության պաշտպանության միջոց, միաժամանակ՝ որպես աջակցություն տեղացի սննդամթերք արտադրողներին և մատակարարներին:
--------------------	--

4.2 Սննդի անվտանգության ապահովման միջոցառումներ

Կլիմայի փոփոխության և աղետների պայմաններում սննդի անվտանգության ապահովումը պահանջում է համատեղ ջանքերի գործադրում, որը ներառում է կանխարգելիչ, խրախուսող, պաշտպանական ու փոխակերպման գործողություններ:

- 1. Կանխարգելիչ միջոցառումներ, որոնք նպաստում են սննդի անվտանգության անկայունության կանխմանը**, օրինակ՝ սոցիալական ապահովության ցանցային համակարգեր, ինչպիսիք են վարկային և խնայողությունների խմբերի ստեղծումը, ինչպես նաև ռիսկերի կառավարման միջոցառումներ, ինչպիսիք են բերքի բազմազանացումը և երաշտային ցիկլերի կառավարումը:
- 2. Խրախուսող միջոցառումներ, որոնց նպատակն է նվազեցնել սննդի անվտանգության անկայունության նկատմամբ խոցելիության աստիճանը՝ բարձրացնելով եկամուտն ու զարգացնելով կարողությունները**, օրինակ՝ շուկաների հասանելիության բարելավում և կենսաապահովման միջոցների բազմազանացում, կլիմայի կանխատեսումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման բարելավում, տվյալների հավաքագրում եղանակի, հողի օգտագործման, բերքի և անասունների վերաբերյալ և ֆինանսական ծառայություններ, այդ թվում նաև՝ խնայողություններ, վարկեր և ապահովագրություն:

4.2 Սննդի անվտանգության ապահովման միջոցառումներ (շարունակություն)

3. **Պաշտպանական միջոցառումներ, որպես օգնության միջոց այն պարագայում, երբ կանխարգելիչ և խթանող միջոցառումները ձախողվում են,** օրինակ՝ «սնունդ աշխատանքի դիմաց» և «վճար աշխատանքի դիմաց» ծրագրերի իրականացում:
4. **Փոխակերպման միջոցառումներ, որոնք անդրադառնում են սոցիալական անհավասարության և բացառման խնդիրներին,** օրինակ՝ ապահովել կանանց առանցքային դերը գյուղատնտեսական կոոպերատիվների և խնայողության սխեմաների ստեղծման գործընթացում: Փոխակերպման միջոցառումները հիմք են հանդիսանում առաջին երեք միջոցառումների համար:

ԴԵՊԵԻ ՌԻՍԻՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ. ԿԵՆՍԱՊԱՅՈՎԱՄԱԼ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԳԵՏԻ ԱՓԱՄԵՐՁ ԳՈՏՈՒ ԽՈՅԵԼԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Գաևա, World Vision International կազմակերպություն

Գաևայի Թալենսի Նաբոբամ շրջանի երեք՝ Յինդուրի, Փվալուգու և Սանթենգ համայնքները, որոնք տեղակայված են երկրի հյուսիս-արևելյան մասով հոսող Սպիտակ Վոլտա գետի ափի երկայնքով, պարբերաբար տուժում են երաշտի, ջրհեղեղի, անտառային հրդեհների, հիվանդությունների ազդեցությունից: Այս ավամերձ գոտու բնակիչները վաստակում են իրենց ապրուստը մշակելով ավամերձ տարածքի միակ բերրի հողը, քանի որ մնացած հողը քարթարոտ է և մշակման համար՝ ոչ պիտանի:

Չորդառատ անձրևների ժամանակ հարևան Բուրկինա Ֆասոյում գտնվող հիդրոէլեկտրակայանի ամբարտակից ջուրը դուրս է հոսում իր սահմաններից՝ ավերիչ ջրհեղեղներ առաջացնելով հյուսիսային Գաևայում, որի արդյունքում վնաս է հասցվում բերքին, բնակելի տարածքներին և, նույնիսկ, պատճառ դառնում մարդկային կյանքի կորստի: 2009թ. այս երեք համայնքներին պատկանող 25 կմ ձգվող ավամերձ տարածքը լուրջ վնաս էր կրել ջրհեղեղներից: Ջուրը բշել տարել էր գյուղատնտեսական դաշտերը, որտեղ հիմնականում եգիպտացորեն էր ցանված՝ ամբողջությամբ, կամ, գրեթե ամբողջությամբ, ոչնչացնելով բերքը: Կլիմայի փոփոխությունը ազդում էր Գաևայի բնակչության վրա՝ խաթարելով գյուղատնտեսական համակարգերը, հեղեղելով ավամերձ տարածքները և իջեցնելով ջրի մակարդակը Վոլտա գետի դելտայի շրջանում, որն ապահովում էր Գաևայի էլեկտրաէներգիայի մոտ 80%-ը:

Ենթադրվում է, որ կլիմայի փոփոխությունը զգալիորեն կազդի Գաևայի վրա: Թեև կգրանցվեն տարեկան ջերմաստիճանի և տեղումների տատանումներ, 2010-2050 թվականների միջև ընկած ժամանակահատվածում Գաևայի բոլոր շրջաններում կնկատվի ջերմաստիճանի բարձրացման միտում:

World Vision International կազմակերպության «Համայնքների դիմակայման

ծրագիրը» հնարավորություն ընձեռեց բնակիչներին և համայնքներին բազմազանեցնել իրենց եկամտի աղբյուրները, ավելացնել բերքը, կայուն կերպով կառավարել բնական ռեսուրսները և պաշտպանել կենսապահովման միջոցները բացասական ազդեցություններից կամ ցնցումներից⁶՝ աղետների ռիսկը երկարաժամկետ հեռանկարով նվազեցնելու համար:

Որպես կազմակերպության աղետների ռիսկի նվազեցման և կարողությունների զարգացման համակարգված մոտեցման մի մաս, Ֆերմերներին հնարավորություն ընձեռվեց կենսապահովման միջոցներ ստեղծել վարարաջրերի պայմաններում՝ օգտագործելով հողում կուտակված խոնավությունը: Հեղեղաջրերի ետ բաշվելուց հետո այնտեղ սկսեցին ցանել արագ բերք տվող մշակաբույսեր, ինչպիսիք են ձմերուկը, սեխը, լոբին, որոնք սպառվում են բնակիչների կողմից կամ վաճառվում՝ եկամուտ ստանալու նպատակով: Երկարաժամկետ հեռանկարում **ճկունություն և արձագանքման հնարավորություններ ապահովելով**, համալիր ծրագրի իրականացման արդյունքում գրանցվեցին հետևյալ արդյունքները. (ա) եկամտի և արտադրողակախության աճ՝ գյուղատնտեսական արտադրանքի վաճառքի միջոցով, (բ) Ֆերմերներին կենսապահովման միջոցների վերաբերյալ նոր գիտելիքների և հմտությունների հաղորդում, (գ) գյուղատնտեսական աշխատանքների վարման փորձ, որն ավելի կայուն է շրջակա միջավայրի ցնցումների և սթրեսային իրավիճակների նկատմամբ և (դ) ընտանիքի անդամների մտնդակարգի բարելավում՝ սննդարար մթերքների սպառման աճի շնորհիվ:

Ծրագրից բաղված դասերը ցույց են տալիս, որ (ա) անհրաժեշտ է աջակցություն ցուցաբերել բնակչությանը և համայնքներին՝ նոր ռազմավարություններ և տեխնիկական նորարարություններ ներդնելու գործում՝ ողջ տարվա ընթացքում սննդի բավարար հասանելիություն և տրամադրում, հիմնական կարիքների համար անհրաժեշտ եկամուտ և արտակարգ իրավիճակների համար խնայողություններ ապահովելու համար՝ հաշվի առնելով կլիմայի փոփոխության ազդեցությունները տարածաշրջանում և (բ) կենսապահովման միջոցների տարբերակները պլանավորելիս անհրաժեշտ է հաշվի առնել ապագա հնարավոր սցենարները, ներառյալ ապագա միտումների հնարավոր արդյունքները, ինչպիսիք են կլիմայի փոփոխությունը, գլոբալիզացիան, միգրացիան և շրջակա միջավայրի դեգրադացիան: Նախապատրաստվելու և հարմարվելու կարողությունն էական գործոն է փոփոխություններին երկարաժամկետ հեռանկարում արձագանքելու համար:

Գործիքներ և ռեսուրսներ

Տեղեկատվության և հղումների համար տես էջ 270. *Գործիքներ և ռեսուրսներ:*

4.2 Կենսապահովում

Կենսապահովման միջոցները⁶ բաղկացած են այնպիսի ռեսուրսներից (ներառյալ հմտությունները, տեխնոլոգիաները և կազմակերպումը) և գործունեությունից, որոնք անհրաժեշտ են ապրելու և ապրելու պայմանների լավ որակ ապահովելու համար: Կենսապահովման միջոցներն ընկալելու համար անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն անձի հիմնական աշխատանքի կամ եկամտի աղբյուրը, այլ նաև ընտանիքների և տեղի բնակչության այն բոլոր գործողություններն ու ընտրությունները, որոնք ապահովում են սնունդ, առողջություն, եկամուտ, կացարան և այլ շոշափելի և ոչ շոշափելի օգուտներ, ինչպիսիք են հարմարավետությունը, ապահովությունը, հարգանքն ու բավարարվածության զգացումը:

Գոյատևման, կենսապահովման միջոցներ հայթայթող և վճարովի աշխատանքներում ընդգրկված կանանց և տղամարդկանց կյանքը, արտադրանքը, ունեցվածքը և եկամուտը աստիճանաբար ավելի հաճախ են ենթարկվում բնական աղետների⁶ և կլիմայի փոփոխության⁶ վտանգին՝ սրացնելով այն ռիսկերը, որոնք արդեն առկա են տնտեսության գլոբալիզացիայի, գենդերային⁶ անհավասարության, միգրացիայի և այլ անհավասարությունների պատճառով:

Այս բաժինը պետք է դիտարկվի *Սննդի անվտանգության և բնական ռեսուրսների կառավարման* բաժինների հետ մեկտեղ՝ հաշվի առնելով դրանց միջև գոյություն ունեցող կապը:

4.3 Կենսապահովման գործունեության օրինակներ

- Գյուղատնտեսական ապրանքների արտադրություն (ցանովի մշակաբույսեր, բանջարեղեն, անասուն, ձուկ)՝ սպառման կամ վաճառքի համար:
- Ոչ գյուղատնտեսական ապրանքների արտադրություն (դերձակություն, բրուտագործություն, սննդի վերամշակում և այլն):
- Վճարովի աշխատանք (տեղում կամ այլ վայրեր տեղափոխվելով):
- Անտառային փայտանյութի հավաքում (որպես վառելիք ու վառելիքայտ, անտառի ոչ փայտյա արտադրանք և այլն):

Առանցքային խնդիրներ

Կենսապահովման շատ միջոցներ ենթարկվում են վտանգների ազդեցությանը, որոնք կարող են վերածվել աղետի⁶, եթե վտանգի ենթակա բնակչության կարողությունների⁶ մակարդակը ցածր է: Վտանգների օրինակները ներառում են երաշտը և ջրհեղեղը, վատ պլանավորած ենթակառուցվածքները, հակամարտությունները⁶,

երկրաշարժը, վնասատուների կողմից տարածվող վարակները, շուկայական մեխանիզմների խափանումը և մենդամթերքի գների աճը: Նույնիսկ փոքր ցնցումները⁶, որոնք պարտադիր չէ, որ դիտարկվեն որպես աղետ (և այդ պատճառով մարդասիրական օգնություն չի տրամադրվում) կարող են խոր բացասական ազդեցություն թողնել վտանգի ենթակա բնակչության վրա, հատկապես, եթե կրում են շարունակական բնույթ: Եվ եթե դրանք զուգակցվում են կլիմայի փոփոխության հետևանքով առաջացած սթրեսային իրավիճակների հետ (օրինակ՝ տեղումների փոփոխականություն), ցնցումային իրավիճակներից վերականգնվելու հնարավորությունը համայնքների համար առավել բարդանում է՝ ստիպելով վերջիններին տատանվել արտակարգ իրավիճակներին դիմակայելու և վերականգնողական գործողությունների իրականացման միջև, ինչը ժամանակի ընթացքում թուլացնում է դիմակայման⁶ կարողությունները: Վտանգների և կլիմայի փոփոխության ազդեցությունները⁶ կարող են առաջացնել.

- մեկ կամ մի քանի հիմնական ակտիվների/ռեսուրսների հասանելիության հանկարծակի, հնարավոր է, ժամանակավոր կորուստ,
- գյուղական բնակչության գյուղատնտեսությունից, իսկ քաղաքային բնակչության գյուղական մատակարարման շղթայից կախված կենսապահովման միջոցների կայունության խաթարում,
- արդեն իսկ հյուժված բնական ռեսուրսների սթրեսային վիճակ,
- վտանգների հաճախականության և ուժգնության սաստկացում, որը կարող է հանգեցնել կլիմայական աղետների:

4.4 Գյուղատնտեսության վրա ակնկալվող կլիմայական փոփոխության ազդեցության օրինակներ


- Ցորենագգիների հիմնական տեսակների բերքի նվազում չոր և տրոպիկական տարածքներում, նույնիսկ թեթևակի տաքացման պայմաններում:
- Որոշ տարածքներում ոռոգման պահանջի աճ ջրի նվազմանը զուգընթաց, սուբտրոպիկներում՝ անձրևների նվազման (ինչը, հատկապես, անդրադառնում է Կենտրոնական Ամերիկայի և սուբտրոպիկական Աֆրիկայի անձրևաջրով սնվող գյուղատնտեսության վրա), իսկ այլ տարածքներում՝ ձյան և սառցադաշտերի հալոցքի պատճառով:
- Կենդանիների արտադրողականության և ծնելիության նվազում՝ ջերմաստիճանից և ջրից առաջացած սթրեսների պատճառով:
- Որոշ տեղական ձկնատեսակների վերացում՝ օվկիանոսի տաքացման և թթվայնացման հետևանքով:
- Տեղատարափ անձրևների աճ գյուղատնտեսական ապրանքների արտադրության տարածքներում:
- Ափամերձ ցածրադիր վարելահողերի հեղեղում աղի ջրերով:

Գյուղական բնակավայրերի կենսապահովման միջոցները, որոնք մեծապես կախված են անձրևաջրերից սնվող գյուղատնտեսությունից⁶, հատկապես խոցելի են, քանի որ իրենց բնույթով խիստ զգայուն են կլիմայի փոփոխությունների հանդեպ: Թեև վտանգի ենթակա բնակչությունը ունի բավականաչափ փորձ և համապատասխան գիտելիքներ կլիմայի փոփոխականությանը⁶ և անընդհատ կրկնվող աղետներին դիմակայելու համար, աղետների և կլիմայի փոփոխության աճող ռիսկերի պայմաններում նրանց ավանդական «հաղթահարման» մեթոդները բավարար չեն և, հաճախ, մարդիկ բախվում են այնպիսի իրենց անհայտ իրավիճակների հետ, որոնց հաղթահարման համար հնարավոր է առաջանա նոր գիտելիքների և փորձի ձեռք բերման անհրաժեշտություն:

Գյուղական բնակավայրերում կենսապահովման միջոցների արդյունավետության նվազումը նաև ազդում է քաղաքային բնակավայրերի կենսապահովման այն միջոցների վրա, որոնք կախված են գյուղական բնակավայրերի ներդրումներից: Գյուղական տարածքներում տեղի ունեցող աղետները կարող են հանգեցնել միգրացիայի և ուրբանիզացիայի աճի՝ ավելացնելով քաղաքային բնակավայրերի ազգաբնակչությունը մարդկանցով, ովքեր անկարող են աշխատել արդյունաբերության տարբեր ոլորտներում, ինչը պատճառ է դառնում գործազրկության մակարդակի աճի: Քաղաքային բնակավայրերը կարող են անմիջականորեն կրել աղետների և կլիմայի փոփոխության

ազդեցությունը, որը կարող է ոչնչացնել մարդկանց ունեցվածքը և ենթակառուցվածքները (օրինակ՝ ճանապարհները և կամուրջները՝ դժվարեցնելով մուտքը դեպի շուկաներ), կրճատել տնտեսական իրացվելիության մակարդակը և ֆինանսական ծառայությունները դարձնել անհասանելի:

Կայուն կենսապահովման մոտեցումը (ԿԿՄ) կենսապահովման միջոցների վերաբերյալ մարդկանց ընկալումը բարելավելու և վերջիններիս աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերին դիմակայելու կարողությունների զարգացմանն օժանդակելու ընդունված մեթոդ է: Այն հիմնված է այն առանցքային գործոնների վրա, որոնք ազդում են մարդկանց կենսապահովման միջոցների և այդ գործոնների փոփոխաբերությունների վրա: Այս մոտեցումը կարող է կիրառվել զարգացման նոր գործողություններ պլանավորելու և կենսապահովման միջոցները կայունացնող առկա գործողությունները գնահատելու համար:



Նկար 4.1 Կայուն կենսապահովման մոտեցում (ԿԿՄ)

Կայուն կենսապահովման մոտեցման համաձայն, մարդու գործոնը գտնվում է միմյանց հետ փոխկապակցված ազդեցությունների կենտրոնում, որոնք ազդում են անձի կողմից իր և իր ընտանիքի անդամների համար կենսապահովման միջոցների ստեղծման վրա: Կենտրոնում գտնվողներին ամենամոտ ընկած են այն ռեսուրսները և կենսապահովման միջոցները, որոնք հասանելի են և, որոնցից վերջիններս օգտվում են: Այդ միջոցները կարող են ներառել բնական ռեսուրսներ, տեխնոլոգիաներ, մարդկանց հմտություններ, գիտելիքներ և կարողություններ, առողջապահություն, կրթության հասանելիություն, վարկավորման աղբյուրներ և սոցիալական աջակցության ցանցեր: Այս միջոցների հասանելիության աստիճանի վրա խիստ ազդում է մարդկանց խոցելիության⁶ համատեքստը, որը հաշվի է առնում տարբեր միտումներ (օրինակ՝ տնտեսական, քաղաքական և տեխնոլոգիական), ցնցումներ (օրինակ՝ համաճարակներ, բնական աղետներ, քաղաքացիական անկարգություններ), սեզոնայնությունը (օրինակ՝ գներ, արտադրության և աշխատանքի հնարավորություններ): Հասանելիության վրա ազդում են նաև գերակշռող սոցիալական,

հաստատութենական և քաղաքական միջավայրերը, որոնք ներգործում են այն ուղիների վրա, որոնց միջոցով մարդիկ միավորում և օգտագործում են միջոցներն իրենց նպատակներին հասնելու համար: Սրանք այդ մարդկանց կենսապահովման ռազմավարություններն են:

ԿԿՄ-ի մասին առավել մանրամասն տեղեկությունների համար *տես էջ 274. Գործիքներ և ռեսուրսներ:*

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները սննդի կենսապահովման ոլորտում կիրառելու համար

<p>1. Բարձրացնել վտանգի և կլիմայի փոփոխության համատեքստի ըմբռնման մակարդակը</p>	<ul style="list-style-type: none"> • Տվյալներ հավաքել ծրագրի իրականացման տարածքում և ավելի լայն աշխարհագրական համատեքստում (ներառյալ արտադրական/ վերամշակման տարածքները, առևտրային կենտրոնները, մատակարարման և բաշխման ցանցերն ու շուկաները) այն հայտնի վտանգների և կլիմայի փոփոխության կանխատեսվող ազդեցությունների վերաբերյալ, ինչից կախված է թիրախային բնակչության կենսապահովումը:
<p>2. Բարձրացնել վտանգի ենթարկվելու, խոցելիության և կարողությունների ըմբռնման մակարդակը</p>	<ul style="list-style-type: none"> • Չհասնել, թե թիրախային բնակչության կենսապահովման միջոցներն արժեքային շղթայում որքանով են ենթարկվում կլիմայի փոփոխության վտանգներին և ազդեցությանը: • Օգտագործել թիրախային բնակչության տարբեր կենսապահովման խմբերի, ինչպես նաև մյուս շահագրգիռ կողմերի ընդհանուր կարողությունների և խոցելիության վերլուծությունը՝ վտանգված ակտիվների, ինչպես նաև կենսապահովման ռազմավարություններում ընդգրկված բոլոր մարդկանց խոցելիության աստիճանը հասկանալու համար (օրինակ՝ չպատվաստված անասուններ, չպաշտպանված ջրաղբյուրներ, աշխատողներ, որոնք ապրում են ոչ ապահով կառուցված շենքերում և այլն): • Բացահայտել թիրախային բնակչության կենսապահովման առկա հնարավորությունները (ներառյալ գիտելիքներ, կարողություններ, կազմակերպություններ ու ցանցեր, ինչպես նաև ֆիզիկական և տնտեսական միջոցներ) և պարզել, թե ինչպես կարող են դրանք կիրառվել դիմակայմանն ուղղված կարողությունները զարգացնելու համար:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները սննդի կենսապահովման ոլորտում կիրառելու համար

3. Ճանաչել իրավունքներն ու պարտականությունները

- Օգնել վտանգի ենթակա բնակչությանն հասկանալ, թե ինչպես են կենսապահովման և այլ փոխկապակցված իրավունքներն արտացոլված պետական օրենսդրության և քաղաքականության մեջ և, որ հաստատություններն են պատասխանատու դրանց իրականացման համար:
- Աջակցել վտանգի ենթակա բնակչությանը, որպեսզի կենսապահովման համար անհրաժեշտ բնական ռեսուրսները հավասարապես հասանելի լինեն բոլորին և վերջիններս հասկանան ապահով կառույցներում ապրելու իրենց իրավունքը՝ որպես մարդու առողջության պահպանության կարևոր գործոններից և բազմաթիվ կենսապահովման ռազմավարությունների բաղադրիչներից մեկը (արտադրության, սարքավորումների, պաշարների և արտադրանքի պահեստավորման ու վաճառքի համար):
- Հանդես գալ ի պաշտպանություն շինարարության և աշխատանքային պայմանների անվտանգության չափանիշների պահպանման:
- Համապատասխան ուսուցում անցկացնել աշխատակիցների հետ, բացատրելու համար, թե ինչպես են սեռը և այլ մարգինալ կարգավիճակները փոխկապակցված կենսապահովման հնարավորությունների հետ և, որ բոլոր գործողությունները և միջամտությունները խրախուսում են հավասարության սկզբունքը:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները սննդի կենսապահովման ոլորտում կիրառելու համար

<p>4. Խթանել ռիսկի ենթակա բնակչության մասնակցությունը և գործողությունների ձեռնարկումը</p>	<ul style="list-style-type: none"> • Մշակել մատչելի նյութեր և մեթոդներ կենսապահովման բարելավման հարցերով զբաղվող կազմակերպությունների կարողությունների զարգացման համար, ինչպիսիք են արտադրողների միությունները, արհմիությունները, և նպաստել բարձրացնելու մարդկանց ընկալման մակարդակն աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերի և կենսապահովման միջոցների վրա դրանց ազդեցության վերաբերյալ: • Օժանդակել այնպիսի մեխանիզմների ստեղծմանը / հզորացմանը, ինչպիսիք են ռադիոհեռարձակումները, տեքստային հաղորդագրությունները, որոնց միջոցով կարող են տարածվել տեղի կլիմայի կանխատեսումների և վտանգների վերաբերյալ թարմ տեղեկություններ: • Նպաստել շրջանային և տեղական մակարդակներում շուկայի հարցերով տեղեկատվական համակարգերի ստեղծմանը և դրանց նկատմամբ հասանելիության ապահովմանը (գին, որակի չափանիշներ, արտադրանք), ինչը հնարավորություն կտա արտադրողներին և մատակարարներին որոշումներ կայացնել՝ հենվելով այդ տեղեկությունների վրա: Միջոցներ ձեռնարկել ապահովելու կանանց և տղամարդկանց տեղեկատվական կարիքների արտացոլումը այդ համակարգերում՝ համապատասխան խորհրդատվությունների և մշտադիտարկման միջոցով: • Օգտագործել մասնակցային մեթոդներ՝ աջակցելու կին և տղամարդ արտադրողներին գնահատել այն ավանդական և նոր տեխնիկական միջոցների/տեխնոլոգիաների հետ կապված ռիսկերը և առավելությունները, որոնք կարող են նպաստել աղետների ռիսկի⁶ նվազեցմանը և դիմակայունության զարգացմանը կապված կլիմայի փոփոխության և փոփոխականության հետ:
---	---

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները սննդի կենսապահովման ոլորտում կիրառելու համար

<p>5. Խրախուսել համակարգված ներգրավման և փոփոխության գործընթացները</p>	<ul style="list-style-type: none"> • Նպաստել, որպեսզի տնտեսական զարգացման քաղաքականությունները հիմնված լինեն աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերի վերլուծության վրա և ենթակառուցվածքների, տեխնոլոգիաների բարելավմանն ուղղված ներդրումներն օժանդակեն կայուն կենսապահովման միջոցների զարգացմանը: • Ընդգրկել բոլոր համապատասխան պետական գերատեսչությունները/նախարարությունները (գյուղատնտեսություն, աշխատանք, տրանսպորտ) աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության հարցերով ազգային պլանաֆորմների, ֆորումների աշխատանքներում՝ որպես կենսապահովման բարելավման դերակատարներ: • Նպաստել, որպեսզի մասնավոր հատվածի ընկերություններն ընդգրկվեն ռիսկերի գնահատման և արտակարգ իրավիճակների գործողությունների պլանի⁶ մշակման գործընթացներում՝ տեղական, շրջանային և պետական մակարդակով, ինչպես նաև խրախուսել որպեսզի այդ ընկերությունները օժանդակեն աղետներին և կլիմայի փոփոխության ռիսկերին դիմակայելու համար կարողությունների զարգացմանը այնպիսի միջոցներով, ինչպիսիք են աշխատատեղերի տեխնիկական վերազինումը, տեղական վտանգների մեղմացումը⁶, աշխատողներին բնակարանային պայմանների բարելավման համար վարկերի տրամադրումը:
<p>6. Նպաստել տարբեր մակարդակների համատեղ գործունեությանը</p>	<ul style="list-style-type: none"> • Օժանդակել տեղական և շրջանային իշխանությունների ներկայացուցիչների և տեղական կազմակերպությունների մասնակցությունը պետական քաղաքականության մշակման քննարկումներին/վերանայումներին: • Փաստաթղթերով հիմնավորել այն գործընթացներն ու քաղված դասերը, որոնք վերաբերում են տեղական մակարդակով իրականացված կայուն կենսապահովման ծրագրերին՝ նպաստելու հաջողված նախաձեռնությունների ներդրման ծավալների մեծացմանը:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները սննդի կենսապահովման ոլորտում կիրառելու համար

<p>7. Կիրառել և զարգացնել տարբեր աղբյուրներից ստացված գիտելիքներ</p>	<ul style="list-style-type: none"> • Խրախուսել վտանգի ենթակա բնակչության կենսապահովման բոլոր խմբերի մեջ ընդգրկված կանանց, տղամարդկանց և երեխաներին հաղորդել իրենց գիտելիքներն ու փորձը կլիմայի փոփոխականության և վտանգների վերաբերյալ, ինչը հնարավորություն կտա համայնքներին բացահայտել զարգացման հետագա միտումները: • Խրախուսել վտանգի ենթակա բնակչության բոլոր խմբերի տարեց մարդկանց հաղորդել կենսապահովման ավանդական ռազմավարությունների վերաբերյալ իրենց գիտելիքները կլիմայի փոփոխականությունը, պարբերաբար կրկնվող վտանգները կառավարելու համար, և օգնել համայնքներին գնահատել իրավիճակը կլիմայի փոփոխության հետագա սցենարներին հարմարվելու համատեքստում: • Ներգրավել գիտահետազոտական ինստիտուտները վտանգի ենթակա համայնքներում կատարվող հողագործության, անասնապահության, ձկնաբուծության, անտառային տնտեսության վարման և կենսապահովման այլ միջոցների համար նոր տեխնոլոգիաների մշակման/ հարմարեցման աշխատանքներում: Փաստաթղթերով հիմնավորել փորձնական ծրագրերը՝ դրանք հնարավորության դեպքում ընդլայնելու և կրկնօրինակելու համար:
--	---

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները սննդի կենսապահովման ոլորտում կիրառելու համար

<p>8. Ապահովել ճկունության և արծազանքման հնարավորություններ</p>	<ul style="list-style-type: none"> • Ֆինանսական աջակցություն ցուցաբերել և տեխնիկական խորհրդատվություն տրամադրել վտանգի ենթակա բնակչության կանանց և տղամարդկանց՝ բազմազանեցնելու վերջիններիս եկամտի աղբյուրները՝ որպես ռիսկի կառավարման միջոց: • Նպաստել ֆինանսական ծառայությունների զարգացմանն ու հասանելիությանը, ինչպիսիք են խնայողության սխեմաները, ապահովագրությունը, ինչպես նաև կազմակերպել դասընթացներ հնարավոր օգտագործողների համար, այդ սխեմաների գործելու կարգը հասկանալի դարձնելու նպատակով: • Վարկեր տրամադրել/ապահովել վարկային միջոցների հասանելիությունը, տեխնիկական աջակցություն ցուցաբերել՝ կենսապահովման միջոցները բազմազանեցնելու և նորամուծություններ կիրառելու նպատակով:
<p>9. Դիտարկել տարբեր ժամանակահատվածներ</p>	<ul style="list-style-type: none"> • Աջակցել վտանգի ենթակա բնակչությանը՝ կենսապահովման միջոցները վտանգների ազդեցությունից պաշտպանելու համար, օրինակ, ջրհեղեղների ժամանակ անասունների համար ապաստարան տրամադրելը կամ փոքր բիզնեսների ապահովագրումն աղետներից: • Վտանգի ենթակա բնակչության շրջանում կիրառել տարբեր սցենարներ առաջացնող տեխնիկական մեթոդներ՝ գոյություն ունեցող կենսապահովման ռազմավարությունների կայունությունը գնահատելու համար: Մատչելի տեղեկատվություն տրամադրել զարգացման այլ միտումների վերաբերյալ, ինչպիսիք են գլոբալիզացիան, միգրացիան, շրջակա միջավայրի դեգրադացիան⁶ և ապրանքների գների անկայունությունը՝ նպատակ ունենալով տղամարդկանց և կանանց մոտ երկարաժամկետ հեռանկարում զարգացնել աճող փոփոխությունները կանխագգալու և դրանց արձագանքելու կարողություններ:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները սննդի կենսապահովման ոլորտում կիրառելու համար	
<p>9. Դիտարկել տարբեր ժամանակահատվածներ</p>	<ul style="list-style-type: none"> • Կիրառել մասնակցային մեթոդներ կենսապահովման տարբեր խմբերի համար վաղ ազդարարման համապատասխան ազդանշաններ սահմանելու համար և ներառել դրանք կենսապահովման բարելավմանն ուղղված նախագծերում/ծրագրերում: • Արտակարգ իրավիճակների համար նախատեսված միջոցները ներառել աղետների և կլիմայի փոփոխության ազդեցությունը կրող տարածքներում՝ իրականացվող նախագծերում/ծրագրերում՝ վաղ ազդարարման ազդանշանների արագ ածագանքման գործընթացին նպաստելու համար:
<p>10. Զվնասել</p>	<ul style="list-style-type: none"> • Դիտարկել կանխիկ գումարների փոխանցման կիրառումը դանդաղ և հանկարծակի վրա հասնող աղետների ժամանակ՝ նպատակ ունենալով կանխել սթրեսային իրավիճակներում կենսապահովման միջոցների արագ վաճառքը և այլ բացասական հաղթահարման մեխանիզմներ: • Աղետներից հետո իրականացնել արտակարգ իրավիճակներում հայտնված շուկայի քարտեզագրման վերլուծություն/գնահատում⁶ (EMMA) կամ շուկայի տեղեկատվության և սննդի անվտանգության բացակայության արձագանքման վերլուծություն (MIFIRA)⁷ սննդի անվտանգությունը, օգնության և շուկայի փոխհարաբերությունները ուսումնասիրելու համար: • Դիտարկել գենդերի և երիտասարդության դերը կենսապահովման բարելավմանն ուղղված գործողություններում: Կատարել այնպիսի հարցադրումներ, ինչպիսիք են՝ արդյո՞ք հավասարակշռության փոխվելն է, որ կարող է ծանրությունը անհավասարաչափ բաշխել այս կամ այն խմբի մեջ:

ԴԵՊՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ. ԱՎԱՆԴԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ՝ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՉԱՐՄԱՐԿՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՄԱՐ

Բոլիվիա, Oxfam GB կազմակերպություն

Բոլիվիայի Բենի դեպարտամենտի Ամազոնյան տարածքում կենսապահովումը հիմնականում կախված է անձրևաջրերով սնվող գյուղատնտեսությունից, սակայն արտադրության ծավալները խիստ սահմանափակվում են անկանխատեսելի հորդառատ անձրևների, ջրհեղեղի/երաշտի և հողի վատ որակի պատճառով: Այստեղ լայն տարածում ունի անտառները վառելու և այդ տարածքում բերք ցանելու փորձը, որն ապահովում է հողի բերրիությունը միայն երկու-երեք տարվա համար: Դրանից հետո առաջանում է տրոպիկական անտառների նոր հատվածների հատման անհրաժեշտություն: Անձրևային սեզոնի ժամանակ, երբ ջուրը հոսում է դեպի Ամազոն գետի վտակները, հողում առկա կենսական նշանակության սննդարար նյութերը ևս լվացվում և վերանում են՝ վնասակար գյուղատնտեսության փորձի կիրառման և հողի գերշահագործման պատճառով: Մյուս է միայն ավազահողը, որտեղ դժվար է բերք աճեցնել:

2007թ. Օքսֆամի աջակցությամբ և Kenneth Lee հիմնադրամի միջոցներով վերականգնվեցին և նոր պայմաններին հարմարեցվեցին գյուղատնտեսության ավանդական համակարգի ձեռքով պատրաստված բարձր հողային լրաթմբերը՝ սեզոնային ջրհեղեղների և երաշտների ժամանակ արտադրությունը խթանելու և վտանգի ժամանակ՝ կորուստները նվազեցնելու համար: Օգտագործելով ագրոհիդրոլոգիայի ժամանակակից մոտեցումները տեղում առկա գիտելիքների հետ միասին և Օքսֆամի տեխնիկական աջակցությամբ, համայնքները և քաղաքային իշխանությունները կառուցեցին 10 բարձր հողային լրաթումբ կամ կամելոններ, յուրաքանչյուրը 0.5-ից 2 մետր բարձրությամբ, որոնք զբաղեցնում են 500 քառակուսի մետր տարածք: Լրաթմբերը շրջապատված են առավելներով, որոնց միջով ջուրը հեռացվում է անձրևային սեզոնի ժամանակ՝ առանց հեղեղելու բերքը, իսկ չոր եղանակին ծառայում է որպես ոռոգման համակարգ: Չամայնքներն օգուտ ստացան անցյալի նորացված գիտելիքներից, բերրի հողից, ջրի կառավարման համակարգերից, օրգանական եղանակով վերամշակումից, արտադրությունից ստացված անասնակերից, ինչպես նաև անվակներում աճեցվող ձկից:

2008թ. Բենիի Տրինիդատ քաղաքում տեղի ունեցած ջրհեղեղի ամենավերջին էր վերջին 50 տարիների ընթացքում Բոլիվիայում տեղի ունեցած ջրհեղեղներից, որից տուժեց 118,000 մարդ: Թեև Բենիի ընդհանուր տարածքի 75 տոկոսը հեղեղվել էր, կամելոնները մնացել էին կանգուն: Չնայած ջրհեղեղի հետևանքով ստեղծված ծանր իրավիճակին, բնակիչները կարողացան աճեցնել մի շարք մշակաբույսեր՝ սպառման և եկամուտ ստանալու համար, բարելավել իրենց սննդակարգը՝ հողի բերրիության և ավելի առատ բերքի արդյունքում, եկամուտ ստանալ՝ վաճառելով արտադրանքի ավելցուկը տեղական շուկայում և, վերջապես, նվազեցնել շրջակա միջավայրի վրա ազդեցությունը՝ գյուղատնտեսական մշակաբույսեր ցանելու նպատակով անտառահատումները նվազեցնելու միջոցով:

Չայտնի չէ, թե ինչու է անհայտացել այս հնուց եկած փորձը, բայց ներկայում էլ ավելի շատ ֆերմերներ են կիրառում այն որպես ջրհեղեղից


և երաշտից պաշտպանվելու կայուն միջոց՝ հստակորեն ցույց տալով, որ **կիրառելով և զարգացնելով տարբեր աղբյուրներից ստացված գիտելիքները**, մասնավորապես տեղաբնիկների հնուց եկած գիտելիքները համակցված ժամանակակից գիտական փորձի հետ, կարելի է ստանալ արդյունավետ լուծումներ աղետների ռիսկի նվազեցման ոլորտում:




Գործիքներ և ռեսուրսներ

Տեղեկատվության և հղումների համար *տես էջ 274. Գործիքներ և ռեսուրսներ*


Հողագտագործման ներկայիս ձևը




Անձրևների սեզոն



Չոր եղանակներ




Կամելունների ծրագիր



Անձրևների սեզոն



Չոր եղանակներ



4.3 Բնական ռեսուրսների կառավարում

Բնական ռեսուրսների կառավարումը⁶ (ԲՌԿ) բնական ռեսուրսների՝ հողի, ջրի, օդի, հանքային նյութերի, անտառի, ձկնային պաշարների, բուսական և կենդանական աշխարհի պահպանման և բարելավման փորձն է բազմաթիվ միջոցներով, ներառյալ անտառների և վարելահողերի կառավարումը, ագրոանտառապահությունը, անասնաբուծությունը, անտառային ռեսուրսների կառավարումը, գոմաղբի պահեստավորումն ու օգտագործումը և ափամերձ տարածքների պահպանությունը: Ճանաչելով բնական ռեսուրսների և Էկոհամակարգերի արժեքը, կարևորելով բնական ռեսուրսների հետ կապված մտահոգությունների բացահայտումը և այդ մտահոգություններին անդրադառնալն էական նշանակություն կունենա այդ ռեսուրսներից կախման մեջ գտնվող կանանց, տղամարդկանց և երեխաների կյանքն ու կենսապահովումը բարելավելու համար: Այս բաժինը պետք է դիտարկվի *Մենդի անվտանգության և կենսապահովման* բաժինների հետ միասին՝ հաշվի առնելով դրանց միջև գոյություն ունեցող կապը:

4.5 Էկոհամակարգի ծառայություններ

Էկոհամակարգի ծառայությունները⁶ և դրանց սահմանումները տրվել են ՄԱԿ-ի 2005թ. Հազարամյակի Էկոհամակարգերի գնահատման (MEA) փաստաթղթում, որտեղ ծառայությունները խմբավորվել են ըստ հետևյալ չորս մեծ դասերի. մատակարարում՝ սննդի և ջրի արտադրություն, կարգավորում՝ կլիմայի և հիվանդությունների վերահսկում, օժանդակում՝ սննդարար նյութերի շրջապտույտ և բույսերի փոշոտում ու մշակութային՝ հոգևոր և արարողական: Էկոհամակարգի ծառայությունների որոշ օրինակներ ընդգրկում են ջրի ֆիլտրումը, գետերի հոսքի և ստորգետնյա ջրերի մակարդակի կարգավորումը, վնասատու միջատների վերահսկումը, փոշոտումը և հողի բերրության և առողջության պահպանումը: Էկոհամակարգի ծառայությունները պատշաճ ձևով չեն ընկալվում և այդ բնական ծառայությունները բավարար չափով չեն գնահատվում տնտեսական շուկաներում, պետական քաղաքականություններում կամ հողի կառավարման պրակտիկայում: Արդյունքում Էկոհամակարգերը և դրանց կողմից մատուցվող ծառայությունները նվազում են:

Առանցքային խնդիրներ

Բնական ռեսուրսների պաշտպանությունը, պահպանումը և բարելավումը կարևոր է ոչ միայն երկրագնդի Էկոհամակարգերի համար: Բնական ռեսուրսների կայուն կառավարումը կենսական նշանակություն ունի այն ծառայությունների պահպանման համար, որոնք կենսական նշանակություն ունեն յուրաքանչյուր կնոջ, տղամարդու և երեխայի

մարդկային զարգացման համար: Առանց առողջ երկրագնդի, բնական ռեսուրսները, որոնք անհրաժեշտ են մարդու հիմնարար կարիքները բավարարելու (ինչպիսիք են ջուրը, սնունդը և կացարանը) և կյանքի ավելի լավ որակ ապահովելու համար, գոյություն չէին ունենա: Կան շրջակա միջավայրի դեգրադացիայի կամ ոչնչացման բազմաթիվ օրինակներ, երբ շրջակա միջավայրի պաշտպանությունը մի կողմ է դրվել կարճաժամկետ տնտեսական շահույթ ստանալու, արագ տնտեսական աճ ապահովելու կամ սննդի անվտանգության կարիքները բավարարելու համար: Ցայտուն օրինակ է Ինդոնեզիայում բնական անտառների հատումը⁶ և այդ տարածքներում ձիթաարմավենիներ տնկելը, որի արդյունքում անտառային ռեսուրսներից կախման մեջ գտնվող տեղական համայնքները տեղահանվում են, օրանգուտանների բնական միջավայրը ոչնչացվում է, իսկ դրա հետ մեկտեղ օտարերկրյա ընկերությունների համար հնարավորություն է ստեղծվում ստանալ հսկայական եկամուտներ: Մեկ այլ օրինակ է հողի և գրունտի դեգրադացիան, որն առաջանում է միատեսակ մշակաբույսերը նույն տարածքում անընդհատ ցանելու արդյունքում:

Կլիմայի փոփոխության արդյունքում սթրեսային իրավիճակներ առաջացնող գործոնների աճի հետևանքով (տես՝ 4.6 կետը), երկրագնդի բնական ռեսուրսների պաշտպանությունը, վերականգնումը և բարելավումը այժմ, առավել քան երբևէ, կարևոր նշանակություն ունի: Աղետները⁶ և ԲՌԿ-ն փոխկապակցված են, քանի որ աղետները կարող են սրվել, ինչպես նաև առավել ակտիվանալ շրջակա միջավայրի դեգրադացիայի պատճառով: Բնական ռեսուրսների կառավարումը կարող է ոչ միայն օժանդակել կլիմայի փոփոխություններին և բուֆերային համայնքներում կլիմայի փոփոխության հետ կապված որոշ ամենածանր ազդեցությունների հարմարվողականության գործընթացին, այլ նաև կարող է հնարավոր դարձնել ածխածնի արտանետումների ծավալի կրճատումը:

Գոյություն ունեն ԲՌԿ մոտեցումների բազմաթիվ օրինակներ, որոնք կիրառվում են որպես կլիմայական վտանգների կրճատման ծախսարդյունավետ և բնապահպանական առումով վստահելի միջոցներ: Վիտենամում 12,000 հա մանգրային թփուտ տնկելու համար ծախսվեց մոտ 1 մլն ԱՄՆ դոլար, որի արդյունքում խնայվեց 7.3 մլն ԱՄՆ դոլար, որը տարեկան ծախսվում էր ծովային ամբարտակի տեխասպասարկման և վերանորոգման համար:

4.6 Փոխհարաբերությունը բնական ռեսուրսների, Էկոհամակարգի ծառայությունների, կլիմայի փոփոխության և աղետների միջև

Բնական ռեսուրսների անբավարար կառավարում

- Սողանքներ՝ ծառերի ոչնչացման/հատման պատճառով:
- Ջրհեղեղներ՝ գետերի տիղմակալման պատճառով, ինչին նպաստում են անտառահատումներն ու վարելահողերի էրոզիան:
- Վարելահողերի դեգրադացիա՝ անձրևների հաճախակաևության աճի և հողի էրոզիայի պատճառով:
- Գյուղատնտեսական երաշտ՝ ջրային հոսքն արդյունաբերական նպատակներով օգտագործելու պատճառով:
- Գյուղատնտեսական երաշտ՝ հողի շարունակական դեգրադացիայի պատճառով, որը հանգեցնում է ջրի պահպանման հնարավորության և ծավալի նվազեցման:
- Միատեսակ և ընտրված մշակաբույսեր ցանելը, որը բացասաբար է անդրադառնում կենսաբազմազանության վրա:
- Էկոհամակարգի սթրեսային իրավիճակի սրում՝ մարդկային գործոնի պատճառով (օրինակ՝ օդի և ջրի աղտոտում քաղաքային բնակավայրերում):

Վտանգի և աղետի ազդեցություններ

- Բերքի ոչնչացում և հողի վերին շերտի վերացում՝ ուժեղ քամիների կամ ջրի էրոզիայի պատճառով:
- Բուսական ծածկույթի վերացում՝ ջրհեղեղների և հողի չափազանց հագեցվածության պատճառով:
- Կենդանի բնության և բնական միջավայրի վերացում՝ անտառային հրդեհների պատճառով:
- Բնական ռեսուրսների վատթարացում (անտառներ, ջուր)՝ մեծ ժամանակավոր բնակավայրերի ստեղծման պատճառով (փախստականների ճամբարներ և այլն):

Կլիմայի փոփոխության ազդեցություններ

- Կորալային խութերի, բնական միջավայրի և ձկների բազմացման միջավայրի վերացում՝ ջերմաստիճանի բարձրացման պատճառով:
- Ցամաքային տարածքների և քաղցրահամ ջրի աղբյուրների հեղեղում աղի ջրերով՝ ծովի մակարդակի բարձրացման պատճառով:
- Կենսաբազմազանության կորուստ, այդ թվում՝ նաև տարբեր տեսակների գանգվածային ոչնչացում՝ ջերմաստիճանի բարձրացման, բնական միջավայրի վերացման և օվկիանոսի տաքացման պատճառով:
- Անտառների և բուսական ծածկույթի ոչնչացում հողերի անապատացման միջոցով՝ ջերմաստիճանի բարձրացման, անձրևային տեղումների տարեկան միջին քանակի նվազման պատճառով:
- Քաղաքային բնակավայրերի և գյուղատնտեսական տարածքների հեղեղում՝ ծովի մակարդակի բարձրացման պատճառով:

Բնական ռեսուրսները, որոնք առաջինն են կրում կլիմայի փոփոխության և այլ ճնշումների, ինչպիսիք են, շրջակա միջավայրի դեգրադացիայի, տնտեսական աճի և գերբնակեցման ազդեցությունը ներառում են.

Յող և գրունտ. Յողի բերրիությունն առողջ էկոհամակարգում տեղի ունեցող բնական գործընթացների արդյունք է, որը ներառում է անտառների, բուսական ծածկույթների պահպանումը և հողի կենսաբազմազանությունը⁶: Վերջին չորս տասնամյակների ընթացքում քամու և ջրի հետևանքով առաջացած էրոզիայի արդյունքում աշխարհի վարելահողերի 30 տոկոսը դարձել է անարդյունավետ: Էրոզայի ենթարկված հողերի մոտ 60 տոկոսը, որոնք ի վերջո լցվում են գետերը, առվակներն ու լճերը, ջրային ուղիները դարձնում են առավել հակված ջրհեղեղների և թունավորումների՝ պարարտանյութերի և պեստիցիդների ներթափանցման պատճառով: Յաշվի առնելով այն հանգամանքը, որ երկրագնդի բնակչության սնուդի ապահովումը կախված է վարելահողերից, հողային ռեսուրսների կայուն կառավարումը կենսական նշանակության խնդիր է:

Անտառներ. Արոտավայրերը, խոնավ տարածքները և անտառները անմիջականորեն ռեսուրսներ են տրամադրում միլիոնավոր աղքատ կանանց, տղամարդկանց և երեխաների, այդ թվում՝ փայտանյութ, վառելիքայտ, թել, դեղաբույսեր և սնունդ, որոնց ոչկապումը և դեգրադացիան, օրինակ, անտառազրկումը ու մեծ ամբարտակների կառուցումը, հանքարդյունահանումն ու արդյունաբերական զարգացումներն, արագ տեմպերով շարունակվում են: Միայն անառահատումը տարեկան կազմում է 13 մլն հեկտար:

Ջուր. Ջուրը երկրագնդի ամենալարված իրավիճակում գտնվող բնական ռեսուրսներից է՝ գերշահագործման և մրցակցության պատճառով: 2030թ. երկրագնդի բնակչության 47 տոկոսը կբնակվի ջրի սակավություն ունեցող տարածքներում, իսկ մինչև 2050թ. երկրագնդի ջրի պահանջը 50 տոկոսով կավելանա: Կլիմայական փոփոխություններն արդեն իսկ հանգեցնում են ջրային ռեսուրսների մեծ փոփոխականության (օրինակ՝ առավել հաճախ կրկնվող ջրհեղեղներ, երաշտներ) և այս իրավիճակը ջերմաստիճանի բարձրացման արդյունքում ավելի վատթարանում է:

Ձկնային պաշարներ. Երկրագնդի ծովային ձկան պաշարների մոտ 75 տոկոսը ենթարկվում է գերշահագործման կամ, արդեն իսկ, ամբողջովին շահագործված է՝ չափազանց մեծ ծավալների հասնող որսի, ինչպես նաև մերձափնյա, ծովային և բաղդրահամ ջրի էկոհամակարգերի և բնական միջավայրի դեգրադացիայի պատճառով: Գերշահագործված պաշարների վերականգնումը և դրանց կայուն մակարդակի ապահովումը մարդկային

գործոնի ճնշումներից և բնական աղետներից (ծայրահեղ բնակլիմայական պայմաններ, աղտոտվածություն, հիվանդությունների բռնկում) այժմ խիստ դժվար ինդիք է: Յաշվի առնելով, որ ծովի ջերմաստիճանի բարձրացման հետ մեկտեղ, բարձրանում է օվկիանոսի ջրի թթվայնացման տոկոսը, ճնշումը ձկնային պաշարների նկատմամբ ևս շարունակում է աճել:

Կենսաբազմազանություն. Կենսաբազմազանության կորուստը տեղի է ունենում աստիճանաբար և դանդաղ: Որոշ գիտնականների գնահատումներով, յուրաքանչյուր օր երկրագնդի երեսից վերանում է 100 առանձնյակ՝ վերջիններիս բնական միջավայրի ոչնչացման պատճառով, իսկ բոլոր առանձնյակների մեկ քառորդից ավելին կվերանա հաջորդ չորս տասնամյակի ընթացքում: Կենսաբազմազանության պահպանումը (այդ թվում՝ հողային ռեսուրսների, քաղցրահամ ջրի և ծովային էկոհամակարգերի պահպանումը և դեգրադացված էկոհամակարգերի վերականգնումը) կենսական նշանակության ինդիք է, քանի որ այն ոչ միայն կարևոր դեր է խաղում երկրագնդի ածխածնի շրջանառության և կլիմայի փոփոխության հարմարվողականության գործընթացներում, այլ նաև տրամադրում է մեծ թվով էկոհամակարգային ծառայություններ, որոնք էական նշանակություն ունեն մարդու բարեկեցության համար:

4.7 Բնական ռեսուրսների արդյունավետ կառավարման օրինակներ

- **Ջրային ռեսուրսների կայուն կառավարում**, երբ գետի ավազանները, ջրհեղեղված տարածքները և դրանց հետ կապված բուսական ծածկույթը վերահսկվում և կառավարվում է՝ շուրջ պահեստավորելու և ջրհեղեղները կարգավորելու համար:
- **Մերձափնյա բնական միջավայրերի վերականգնում և զարգացում**, ինչպիսիք են մանգրային թփուտները, որոնք հատկապես արդյունավետ միջոց են փոթորկաբեր ալիքների, աղի ջրերի ներխուժման և մերձափնյա տարածքների բրոզիայի դեմ պայքարելու համար:
- **Արոտավայրերի կառավարում** այնպիսի մեթոդների կիրառմամբ, որոնք բարելավում են արոտավայրում բնակվողների կենսապահովման միջոցները, բարձրացնում երաշտներին և ջրհեղեղներին դիմակայման աստիճանը, վերականգնում են արտադրողականությունը և խթանում կայունությունը:
- **Բազմազան գյուղատնտեսական համակարգերի ստեղծում**, որտեղ հատուկ մշակաբույսերի և անասունների տեսակների վերաբերյալ գիտելիքների կիրառումը, մշակաբույսերի և անասունների բազմազանության և տարբեր գյուղատնտեսական լանդշաֆտների պահպանումը կարող են նպաստել փոփոխվող կլիմայի պայմաններում սննդի անվտանգության ապահովմանը:
- **Թփուտային տարածքների և անտառների ռազմավարական կառավարման իրականացում**՝ չվերահսկվող անտառային հորդենների հաճախականությունն և չափերը նվազեցնելու համար:
- **Պաշտպանվող տարածքների համակարգերի ստեղծում և արդյունավետ կառավարում**՝ Էկոհամակարգերի ծառայությունների շարունակական մատուցումն ապահովելու նպատակով, ինչը կբարձրացնի կլիմայական փոփոխության նկատմամբ դիմակայման աստիճանը:
- **Անտառների պահպանում և վերականգնում**՝ լանջերի թեթևությունը պահպանելու և ջրային հոսքերը կարգավորելու համար:
- **Ազդուկենսաբազմազանության պահպանում**՝ մշակաբույսերի և անասունների կլիմայի փոփոխությանը հարմարվելու նպատակով որոշակի գենոֆոնդերի ապահովման համար:
- **Ֆերմերների կողմից կառավարվող բնական վերարտադրություն**՝ (տվյալ տարածքի ծառերի և թփուտների բների ընտրություն և էտում), դեգրադացված չոր հողային տարածքներում ցանովի մշակաբույսերի բերքատվությունը, անասնակերի արտադրությունն ավելացնելու և վառելիքային մատչելիությունն ապահովելու համար (հատկապես արդյունավետ է Հարավային Աֆրիկայում):
- **Համայնքային անտառների կառավարում**, որտեղ անտառները կառավարվում են համայնքների կողմից պաշտոնապես հաստատված և կանոնակարգված անտառի կառավարման պլանների միջոցով՝ անտառի կայուն արդյունավետության ապահովմանը նպաստելու համար: Այս գործընթացը ապահովում է համայնքը ապրուստի միջոցներով և պաշտպանում է անտառի ամբողջականությունը և կենսաբազմազանությունը, կարգավորում է միկրոկլիման և նպաստում ածխածնի մակարդակի իջեցմանը:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները բնական ռեսուրսների կառավարման նպատակով կիրառելու համար

<p>1. Բարձրացնել վտանգի և կլիմայի փոփոխության համատեքստի ըմբռնման մակարդակը</p>	<ul style="list-style-type: none"> • Տվյալներ հավաքել ծրագրի իրականացման տարածքում և առավել լայն աշխարհագրական համատեքստում հայտնի վտանգների և կլիմայի փոփոխության կանխատեսվող ազդեցությունների վերաբերյալ: Համատեքստի շրջանակները սահմանելիս հաշվի առնել բնական ռեսուրսները, ինչպիսիք են ջրհավաք ավազանները, անտառները, ստորգետնյա ջրերը, ծովային ձկների պաշարը, որոնք կարող են միավորել շրջաններ և, նույնիսկ, երկրի սահմաններ: • Աշխատել վտանգի ենթակա բնակչության հետ՝ վտանգի և կլիմայի փոփոխության ռիսկերի նվազեցման գործընթացում բնական ռեսուրսների կառավարման կարևորության վերաբերյալ իրազեկման մակարդակը բարձրացնելու համար, ինչպես նաև բարձրացնել իրազեկման մակարդակը բնական ռեսուրսների պաշտպանության⁶ և պահպանության վերաբերյալ՝ հարմարեցնելով պաշտպանության, պահպանության և բարելավման մոտեցումները, արդեն իսկ աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերի նվազեցման համար նախաձեռնված համատեքստին:
<p>2. Բարձրացնել վտանգի ենթարկվելու, խոցելիության և կարողությունների ըմբռնման մակարդակը</p>	<ul style="list-style-type: none"> • Աջակցել պետական իշխանություններին տարբեր մակարդակներում բնական ռեսուրսների մեծ և փոքր հայտնի վտանգների և կլիմայի փոփոխության կանխատեսվող ազդեցությունների վերաբերյալ բարտեզներ մշակելու համար՝ նշելով ներկա և հնարավոր վտանգները⁶ և խրախուսել համայնքներին անել նույնը հնարավոր ամենացածր մակարդակում: • Վտանգի ենթակա բնակչության շրջանում կիրառել մասնակցային մեթոդներ համակցված գիտական փորձի հետ՝ ըմբռնելու ռիսկի ենթակա բնական ռեսուրսների զգայունությունը կլիմայի փոփոխության կանխատեսվող ազդեցությունների նկատմամբ:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները բնական ռեսուրսների կառավարման նպատակով կիրառելու համար

<p>2. Բարձրացնել վտանգի ենթարկվելու, խոցելիության և կարողությունների ըմբռնման մակարդակը</p>	<ul style="list-style-type: none"> • Օգտագործել նախկինում տեղի ունեցած աղետների վերաբերյալ տվյալները համակցված գիտական փորձի հետ վտանգների և բնական ռեսուրսների միջև փոխկապակցվածությունն ըմբռնելու համար, ինչպիսին է, օրինակ, հրաբուխների ժայթքման ազդեցությունը հողի և ջրի վրա: • Անհրաժեշտ է հաշվի առնել նաև, որ որոշ բնական ռեսուրսներ, ինչպիսիք են, օրինակ՝ գետերը, նույնպես կարող են հանդես գալ որպես վտանգ: • Վտանգի ենթակա բնակչության շրջանում կիրառել մասնակցային մեթոդներ՝ բացահայտելու, թե ինչպես է բնական ռեսուրսների օգտագործման ներկա և ավանդական փորձն ազդում վտանգների և կլիմայի փոփոխության ազդեցություններին ենթարկվելու և դրանց նկատմամբ խոցելիության վրա: Բնական ռեսուրսները պաշտպանելու նպատակով օգտագործել նույն մեթոդները՝ վտանգի ենթակա բնակչության շրջանում գոյություն ունեցող փորձը, գիտելիքներն ու հմտությունները բացահայտելու համար:
<p>3. Ճանաչել իրավունքներն ու պարտականությունները</p>	<ul style="list-style-type: none"> • Վտանգի ենթակա բնակչության շրջանում բարձրացնել բնական ռեսուրսների տնօրինման իրավունքի և դրա հետ կապված հողի և սննդի իրավունքների վերաբերյալ իրազեկման մակարդակը, օգտագործել համապատասխան միջոցներ, ցույց տալու համար, թե ինչ ազդեցություն են ունենում աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերը այդ իրավունքների վրա, ինչպես նաև ցույց տալու բնական ռեսուրսների պահպանության կարևորությունը՝ նման ռիսկերը նվազեցնելու գործում:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները բնական ռեսուրսների կառավարման նպատակով կիրառելու համար

<p>3. Ճանաչել իրավունքներն ու պարտականությունները</p>	<ul style="list-style-type: none"> • Ներգրավել կանանց, տղամարդկանց և երեխաներին ռիսկերի գնահատման գործընթացում, կարևորելով համայնքի բոլոր անդամների դերը շրջակա միջավայրի պահպանության գործում: • Նպաստել, որպեսզի կառավարությունը և մասնավոր ընկերություններն իրականացնեն հիմնական բնական ռեսուրսների վրա ազդող գործընթացների թափանցիկ պլանավորում (օրինակ՝ հանքարդյունաբերության նախագծեր, ջրի և հողօգտագործման փոփոխություններ⁶) և քննարկումներ կազմակերպեն այդ փոփոխությունների և բնական ռեսուրսների շահագործման ազդեցությունները կրող բնակչության հետ:
<p>4. Խթանել ռիսկի ենթակա բնակչության մասնակցությունը և գործողությունների ձեռնարկումը</p>	<ul style="list-style-type: none"> • Ծրագրերի իրականացման արդյունքում հավանական ազդեցություն կրող բնակչությանը, որն օգտագործում է, կամ կարող է ազդել հիմնական բնական ռեսուրսների վրա, տրամադրել իրավաբանական և տեխնիկական տեղեկատվություն: Աջակցել, որպեսզի այդ բնակչությունն իրազեկվի այն մասին, թե ինչպես կարող են ծրագրերն ազդել իրենց խոցելիության և վտանգներին ու կլիմայի փոփոխության ազդեցություններին ենթարկվելու գործընթացի վրա: • Վտանգի ենթակա բնակչության համար կազմակերպել ուսուցողական դասընթացներ և տրամադրել նյութական միջոցներ կայուն բնական միջավայրի ստեղծմանը նպաստելու համար՝ պաշտպանելով, պահպանելով, վերականգնելով և բարելավելով բնական ռեսուրսները, (օրինակ՝ մանգրային թփուտները, ջրային ավազանները, անկայուն գրունտային համակարգերը, գետերի ափամերձ տարածքները):

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները բնական ռեսուրսների կառավարման նպատակով կիրառելու համար

5. Խրախուսել համակարգված ներգրավման և փոփոխության գործընթացները

- Նպաստել, որպեսզի բնական ռեսուրսների կառավարման քաղաքականությունը ներառի աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերի վերլուծություն և դրանց հետ կապված գործողություններ և՛ հակառակը, ինչպես նաև նպաստել, որպեսզի իշխանության ԲՌԿ մարմինները մասնակցեն աղետների ռիսկի նվազեցման/կառավարման և կլիմայի փոփոխության քաղաքականության մշակման գործընթացին և՛ հակառակը:
- Նպաստել հաստատութենական կապերի ուժեղացմանը ԲՌԿ և կլիմայի փոփոխության ու աղետների կառավարման պետական գերատեսչությունների միջև ռիսկերի կառավարման գործընթացում, ազգային պլատֆորմում և քննարկումների ժամանակ՝ ընդգրկելով մեկական ներկայացուցիչ յուրաքանչյուր գերատեսչությունից լավագույն փորձի փոխանակման նպատակով:
- Օժանդակել օրենսդրության մշակմանն ու իրականացմանը՝ պարտադրելով մասնավոր հատվածի դերակատարներին հանրային լսումներ անցկացնել այն ծրագրերի շրջանակներում, որոնք ազդեցություն կգործեն բնական ռեսուրսների վրա և ստեղծել հաշվետվողականության մեխանիզմներ տուժած բնակչության համար:
- Համագործակցել ԲՌԿ այլ համապատասխան դերակատարների հետ, ներառյալ տեղական իշխանությունները, բնապահպանության նախարարությունը, ՀԿ-ները, աղետների կառավարման խորհուրդները՝ բազմակողմանի հարցերի վերաբերյալ գիտելիքներ փոխանակելու և բոլոր շահագրգիռ կողմերի կարիքները բավարարող գործողություններ պլանավորելու համար:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները բնական ռեսուրսների կառավարման նպատակով կիրառելու համար

<p>5. Խրախուսել համակարգված ներգրավման և փոփոխության գործընթացները</p>	<ul style="list-style-type: none"> • Գնահատել ընդգրկված կազմակերպությունների հնարավորության սահմանները, հզորությունը՝ տարբեր շահագրգիռ կողմերի հետաքրքրությունը հիմնական բնական ռեսուրսների նկատմամբ հասկանալու համար, մասնավորապես զարգացմանը/ ենթակառուցվածքներին վերաբերող այնպիսի մեծ ծրագրերի իրականացման ժամանակ, երբ բնական ռեսուրսները կարող են օգտագործվել, կամ ծրագրերը կարող են ազդել բնական ռեսուրսների կամ այդ ռեսուրսներից կախման մեջ գտնվող համայնքների վրա:
<p>6. Նպաստել տարբեր մակարդակների համատեղ գործունեությանը</p>	<ul style="list-style-type: none"> • Ուժեղացնել/նպաստել ԲՌԿ խորհուրդների ստեղծմանը՝ տեղերում ծագած խնդիրները վերահսկելու և վերլուծելու համար, ինչպես նաև տեղական շահերը այլ մակարդակներում ներկայացնելու համար: • Աջակցել տեղական իշխանություններին և համայնքներին կառավարելու այն բնական ռեսուրսները, որոնք հատում են վարչական տարածքի սահմանները՝ համատեղ պլանավորման, վերահսկման և կարողությունների զարգացման նպատակով միջոցների տրամադրման համար:
<p>7. Կիրառել և զարգացնել տարբեր աղբյուրներից ստացված գիտելիքներ</p>	<ul style="list-style-type: none"> • Կիրառել մասնակցային և մշակութային առումով զգայուն մոտեցումներ ձեռք բերելու տեղացի և տեղաբնիկ ժողովրդի, մասնավորապես, ավագ սերնդի գիտելիքներն այն մասին, թե ինչպիսի փոփոխությունների են ենթարկվել բնական ռեսուրսները, և ինչպես են մարդիկ հարմարվել այդ փոփոխություններին:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները բնական ռեսուրսների կառավարման նպատակով կիրառելու համար

<p>7. Կիրառել և զարգացնել տարբեր աղբյուրներից ստացված գիտելիքներ</p>	<ul style="list-style-type: none"> • Ներգրավել արտաքին տեխնիկական փորձագետների՝ որևէ առանձին բնական ռեսուրսի վերաբերյալ խոր ուսումնասիրություն կատարելու համար և ներկայացնել հնարավոր դիմակայման կարողություններ ստեղծելու տարբերակներ: • Օժանդակել նորարարությունների ներդրմանը՝ հարմարվողականության վերաբերյալ տեխնիկական և գիտական խորհրդատվությունները մատչելի դարձնելով այն համայնքների և կազմակերպությունների համար, որոնք զբաղվել են բնական ռեսուրսների արդյունավետ կառավարմամբ, վերահսկել գործընթացը և փաստաթղթային ձևակերպում տալ արդյունքների: • Համագործակցել մյուսների հետ: Բնական ռեսուրսների կառավարման ինդիկատորները բազմաթիվ են (օրինակ՝ ջրային ավազանի կառավարում) և պահանջում են տարբեր շահագրգիռ կողմերի ներգրավում և համապատասխան գիտելիքներ, ներառյալ տեղի ավանդական ինստիտուտները, տեղական ինքնակառավարման մարմինները, բնապահպանության նախարարությունը, աղետների կառավարման խորհուրդները, ոլորտային փորձագետները և այլն, որպեսզի միջամտությունները պատշաճ ձևով պլանավորվեն և իրականացվեն:
<p>8. Ապահովել ճկունություն և արձագանքման հնարավորություններ</p>	<ul style="list-style-type: none"> • Սահմանել բնական ռեսուրսների կայունության ցուցանիշները և ստեղծել մշտադիտարկման համակարգեր՝ փոփոխություններին հետևելու համար: • Կապել ԲՌԿ-ն վաղ ազդարարման համակարգերի հետ՝ վրա հասնող աղետներին դիմակայելու համար, և տարածել տեղեկատվությունը բոլոր համապատասխան դերակատարների միջև:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները բնական ռեսուրսների կառավարման նպատակով կիրառելու համար

<p>9. Դիտարկել տարբեր ժամանակահատվածներ</p>	<ul style="list-style-type: none"> • Ընդգրկել բնական ռեսուրսների պաշտպանությունը արտակարգ իրավիճակների գործողությունների ծրագրում և՛ որպես վտանգ, և՛ որպես ռիսկի ենթակա ակտիվ: • Օժանդակել ԲՌԿ շարունակական նախաձեռնությունների իրականացմանը որպես «բավականին լավ մեկնարկային կետ» աղետներին և կլիմայի փոփոխությանը դիմակայելու կարողություններ զարգացնելու համար, բացահայտել հարմար ուղիներ հարմարվողականության մտածելակերպ սերմանելու, ինչպես նաև միջոցներ հատկացնել փորձերի/սորաբարոությունների համար:
<p>10. Չվնասել</p>	<ul style="list-style-type: none"> • Միջոցներ ձեռնարկել ապահովելու, որպեսզի բոլոր այն ծրագրերը, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ շրջակա միջավայրի վրա պատշաճ ձևով գնահատվեն մինչև իրականացումը (շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման միջոցով) կամ, եթե այդ ծրագրերն արդեն իսկ ընթացքի մեջ են, ստուգել դրանց բացասական ազդեցությունները: • Դիտարկել աղետներից հետո իրականացվող շինարարական աշխատանքների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա: • «Բարձրորակ⁶ վերականգնողական աշխատանքներ իրականացնել» նշանակում է ապահովել, որպեսզի օգնությունը բացասաբար չանդրադառնա շրջակա միջավայրի և բնական այն ռեսուրսների վրա, որոնցից մարդիկ գտնվում են կախման մեջ:

ԴԵՊԶԻ ՌԻՍԻՄԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ. ՀՈՒՄԲՈՅԻ ԱՆՏԱՌՆԵՐԻ ԲՆԱԿԱՆ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻ

Եթովպիա, World Vision Ethiopia կազմակերպություն

Եթովպիայի Հունբո շրջանի լեռնային տարածքը խիստ դեգրադացված է, պարբերաբար ենթարկվում է երաշտների ազդեցությանը և այստեղ հողի էրոզիան լուրջ խնդիր է: Աղբատությունը, սովը, գյուղատնտեսական հողերի նկատմամբ աճող պահանջը ստիպել է տեղական համայնքներին գերշահագործման ենթարկել անտառային ռեսուրսները, իսկ անտառահատումները վտանգում են ստորգետնյա ջրային ռեսուրսների պաշարները: Կլիմայի փոփոխությունը խորացնում է Հունբոյի բնակչության խոցելիության աստիճանը բնական աղետների և աղբատության նկատմամբ: Զանրի որ բնակչության կենսապահովումը մեծապես կախված է գյուղատնտեսությունից, շատ ընտանիքների համար հաճախակի դարձած երաշտներն ու ջրհեղեղները ստեղծում են այսպես կոչված «աղբատության թակարդներ»՝ խանգարելով վերջիններիս ջանքերին ներդրումներ կատարել կենսապահովման միջոցներ ստեղծելու համար՝ լավագույն ասպազայի ակնկալիքով: Տեղատարափ անձրևների հաճախականության աճը հանգեցնում է հողի էրոզիայի աստիճանի բարձրացմանը, այն դեպքում, երբ երկարատև, առանց տեղումների եղանակին կարելի է դիմակայել:

2005թ. World Vision կազմակերպությունը բացահայտեց, որ հատված ծառերի դեռևս կենդանի բների բնական վերարտադրության միջոցով կարելի է խթանել համայնքի կայուն զարգացման գործընթացը և փորձարկել ֆինանսավորման նոր ուղղություն, ինչպիսին է, Բնապահպանական *մաքուր զարգացման մեխանիզմը* (CDM): Կիոտոյի արձանագրության շրջանակներում մշակված CDM-ն թույլ է տալիս անտառային շերտի վերականգնման ծրագրերի շրջանակներում ձեռք բերել ածխածնի արտանետման քվոտա՝ անտառում հեռացված կամ կլանված յուրաքանչյուր տոննա ածխածնի երկօքսիդի դիմաց:

Երկու տարի շարունակ Հունբոյի տարածաշրջանային մակարդակի մասնակիցների հետ քննարկումներից (դաշնային, շրջանային, տարածքային մակարդակի պետական մարմիններ) և պլանավորման աշխատանքներ իրականացնելուց հետո, մշակվեց Հունբոյի անտառների բնական վերարտադրության համայնքային ծրագիր, որը դարձավ Եթովպիայի առաջին հողօգտագործման փոփոխության և վնասակար գազերի արտանետման քվոտայի կաճառքի անտառային ծրագիրը՝ (LULUCF), որը մշակվել է CDM-ի շրջանակներում: Այս ծրագրի երկու նպատակներն են՝ մեղմացնել կլիմայի փոփոխության ազդեցությունը և թեթևացնել աղբատության բեռն՝ անտառի վերարտադրման միջոցով՝ ընդունելով անտառի պահպանության և կենսամիջոցների պաշտպանության միջև կապը:

Ծրագիրը կիրառում է World Vision-ի կողմից մշակված Ֆերմերների կողմից կառավարվող բնական վերարտադրության⁶ տեխնիկան (FMNR) և գործում է «մի վնասիր» սկզբունքի հիման վրա՝ ուժեղացնելով համայնքի դիմակայման կարողությունները, ինչպես նաև վերականգնելով և բարելավելով բնական միջավայրը: Վերարտադրության համար ծրագիրը կիրառում է ավանդական մոտեցումներից տարբերվող առավել ծախսարդյունավետ այլընտրանքային տարբերակներ՝ սերմաբույսերի փոխարեն օգտագործելով հատված ծառերի բները: Ի լրումն բնական վերարտադրության, տարբերակ ավելի քան 450,000 տնկի է աճեցվում տնկարաններում՝ վերականգնելու անտառի այն մերկ հատվածները ,

որտեղ ծառերի կենդանի բներ չեն մնացել:

Ծրագրի շրջանակներում իրականացվել է 2,728 հա դեգրադացված բնական անտառների վերարտադրություն՝ կենսաբազմազան տեսակներով, որոնք գործում են որպես ածխածնի կլանիչներ՝ կլիմայի փոփոխությունը մեղմացնելու և կլիմայի ապագա փոփոխության բնապահպանական, սոցիալական և տնտեսական ազդեցություններին դիմակայելու համար: Տեխնիկական կարողությունների զարգացմանը նպաստում են «Ֆերմերների կողմից կառավարվող բնական վերարտադրության տեխնիկայի» դասընթացները՝ համայնքի ունեցվածքի, անտառային տնտեսության և առավել բարդ ու կայուն արտադրական համակարգերի վերաբերյալ:

Համայնքի կողմից ստեղծված յոթ կոոպերատիվներ պատասխանատվություն են կրում վերարտադրված անտառային տարածքների կառավարման և պահպանության համար: World Vision-ի աշխատակիցները կոոպերատիվի անդամների համար անց են կացնում տեխնիկական և կարողությունների⁶ զարգացման դասընթացներ: Մեծ ջանքեր են գործադրվել նաև համայնքում վնասակար գազերի արտանետման քվոտայի վաճառքի վերաբերյալ խորհրդատվություն, ուսուցողական դասընթացներ և իրազեկման գործընթացներ անցկացնելու համար: Կազմակերպությունն օգտագործել է գծագրեր, սխեմաներ, գծապատկերներ ածխածնի երկօքսիդի հեռացման իմաստը բացատրելու համար: Օգտագործվել են բոլոր հնարավոր միջոցները, այդ թվում՝ թատրոնի, գրականության, ռադիոյի և հեռուստատեսության, համայնքների բնակիչներին բացատրելու ածխածնի երկօքսիդի հեռացման նշանակությունը, ինչպես նաև կազմակերպվել են հանդիպում-քննարկումներ՝ բարձրացված հարցերին պատասխանելու համար:

Խթանելով պարբերաբար ներգրավման ու փոփոխության գործընթացները և կիրառելով «մի վնասի» մոտեցումը, այս ծրագիրը, կնպաստի աղքատության մեղմանը ուղղված երկարաժամկետ ձեռքբերումներին, անդրադառնալով կլիմայի փոփոխության ինդիկատորներին բնական ռեսուրսների բարելավված կառավարման միջոցով: Ծրագրի մեկնարկից հետո մեկ տարվա ընթացքում անտառը սկսեց արագ տեմպերով վերարտադրվել: Չորս տարի հետո դեգրադացված անտառի 2,728 հեկտարը, որը շարունակաբար շահագործվում էր փայտ, բուսական քարածուխ և անասնակեր ստանալու համար, պաշտպանվեց, վերականգնվեց և անտառը սկսվեց կայուն կերպով կառավարվել: Ըստ հաշվարկների, վարկավորման 30 տարիների ընթացքում ավելի քան 870,000 տոննա ածխածնի երկօքսիդ կհեռացվի մթնոլորտից, ինչը հնարավորություն կտա մեղմացնել կլիմայի փոփոխությունը և համայնքի կոոպերատիվներին կապահովի եկամտի աղբյուրով:

Վերարտադրված անտառների կայուն կառավարումը համայնքների կողմից նաև անմիջական և շոշափելի օգուտ է բերում՝ նպաստելով տեղական համայնքների բարեկեցության ապահովմանը: (1) Անտառի վերարտադրության արդյունքում ավելացել է անտառի և փայտե արտադրանքի ծավալը, ներառյալ մեղրի, դեղամիջոցների, մանրաթելերի, կենդանական աշխարհի, ինչն, իր հերթին, նպաստել է տնային տնտեսությունների բարեկեցության բարելավմանը: (2) Հողի կառավարման բարելավումը նպաստել է կանաչ տարածքների ավելացմանը, դրանով իսկ ապահովելով տնտեսությունները անասնակերով. խոտը, որը կարելի է նաև հնձել և վաճառել կարող է ծառայել որպես եկամտի լրացուցիչ աղբյուր: (3) Անտառի վերականգնումը նվազեցնում է հողի դեգրադացիան և երոզիան:

Գործիքներ և ռեսուրսներ

Տեղեկատվության և հղումների համար տեսն էջ 276. *Գործիքներ և ռեսուրսներ:*

4.4 Ջրամատակարարում, ջրահեռացում և հիգիենա (WASH)

Ջրամատակարարումը, ջրահեռացումը և հիգիենան՝ հայտնի WASH հապավմամբ, կենսական նշանակություն ունեն մարդու կյանքի և առողջության համար: Ներկայում աշխարհի զարգացող երկրների մեկ քառորդը դեռևս անվտանգ խմելու ջրի կարիք ունի, իսկ գրեթե կեսն ապահովված չէ անվտանգ սանիտարատեխնիկական միջոցներով: Բարելավված և ընդլայնված WASH-ի համընդհանուր պահանջարկը ավելանում է բնակչության աճի, ուրբանիզացիայի և այլ գործոնների պատճառով, այն դեպքում, երբ շրջակա միջավայրի վատթարացումը և ջրային մեծ ծավալներ ծախսող ծանր արդյունաբերությունը մրցակցություն է առաջացնում սահմանափակ ջրային ռեսուրսների օգտագործման համար:

Բացի WASH-ի շրջանակների ընդլայնումից, յուրաքանչյուր տղամարդու, կնոջ և երեխայի ջրի և սանիտարահիգիենիկ ծառայությունների իրավունքն իրականացնելու համար, այդ ծառայությունները պետք է լինեն դիմացկուն վտանգների և կլիմայի փոփոխության ազդեցության նկատմամբ՝ կայուն օգուտներ ապահովելու համար:

Առանցքային խնդիրներ

Մարդիկ, ովքեր բնակվում են այնպիսի տարածքներում, որտեղ WASH-ի ծառայությունները ենթարկվում են վտանգների ազդեցությանը, գտնվում են բարձր ռիսկային գոտում: Օրինակ, երկրաշարժերը և սողանքները կարող են վնասել ջրհորները և ջրի բաշխման խողովակաշարային համակարգերը, ջրիեղեղներն ու հրաբխային ժայթքումները կարող են վարակել ջրաղբյուրները, երաշտները կարող են պատճառ դառնալ ջրհորների ժամանակավոր կամ մշտական չորացման՝ խափանելով կոյուղու համակարգի նորմալ շահագործումը: Բոլոր տեսակի վտանգները կարող են խոչընդոտել նաև հիգիենայի հետ առնչվող գործողությունները, ինչը կախված է սահմանված ջրի մատակարարումից և սանիտարատեխնիկական ծառայությունների գործունեությունից:

Կլիմայի փոփոխության կանխատեսումները ցույց են տալիս, որ ջրի համընդհանուր շրջանառությանը զգալի փոփոխություններ են սպասվում՝ պատճառելով ջրի հասանելիության հետ կապված անկանխատեսելի դժվարություններ և մեծացնելով հատուկ պայմանների համար նախագծված խմելու ջրի և սանիտարատեխնիկական ենթակառուցվածքների հավանական վնասի ու ոչնչացման աստիճանը:

Ակնկալվում է նաև, որ կլիմայի փոփոխության հետևանքով առաջացած ջրային սթրեսը մրցակցություն և լարված իրավիճակ կստեղծի տարբեր օգտագործողների, ինչպիսիք են ֆերմերային

տնտեսությունները, գյուղատնտեսության այլ ոլորտներ, և ջրից կախված արտադրությունների միջև, դառնալով միգրացիայի, հակամարտությունների և տեղահանումների պատճառ (մանրամասների համար տես բաժին 5.1՝ Հակամարտությունների կարգավորում և ցուցումներ հակամարտությունների կարգավորման գործընթացում ընդգրկված աշխատակիցների համար):

Կայուն WASH համակարգերը լավ առողջության և արդյունավետ ու կայուն կենսապահովման միջոցներ ստեղծելու հնարավորություն են ընձեռում օգտագործողների համար: Երաշտի ժամանակ ստորգետնյա ջրային ավազաններում կարելի է ջուր պահեստավորել անասունների և մարդկանց սպառման համար, իսկ քաղաքային բնակավայրերի դրենաժային ամվակները, որոնք դատարկվում են մինչև փոթորիկների սեզոնի սկսվելը, կարող են կանխել ջրի կուտակումը ջրհեղեղների ժամանակ, նվազեցնել լճացած ջրերի և ջրածին հիվանդությունների վտանգը: WASH համակարգերը, որոնք նախագծվում են ապագա աղետների և կլիմայի փոփոխության վերաբերյալ տեղեկատվության հիման վրա, մեծացնում են եղանակային ծայրահեղ դրսևորումների և ջերմաստիճանի բարձրացմանը դիմակայելու հավանականությունը՝ նպաստելով օգտագործողների կողմից հարմարվողականության այլ տարբերակների կիրառմանը:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները WASH համակարգում կիրառելու համար	
<p>1. Բարձրացնել վտանգի և կլիմայի փոփոխության համատեքստի ըմբռնման մակարդակը</p>	<ul style="list-style-type: none"> • Բացահայտել կլիմայի փոփոխության կանխատեսվող ազդեցությունը ջրի առկայության վրա ծրագրի իրականացման տարածքում, ինչպես նաև ավելի լայն աշխարհագրական համատեքստում: • Վերլուծել ծրագրի իրականացման տարածքին սպառնացող վտանգները՝ օգտագործելով առկա լավագույն տեղեկատվությունը կլիմայի փոփոխության հետևանքով առաջացող հիդրոոդերևութաբանական վտանգների վերաբերյալ:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները WASH համակարգում կիրառելու համար

<p>2. Բարձրացնել վտանգի ենթարկվելու, խոցելիության և կարողությունների ըմբռնման մակարդակը</p>	<ul style="list-style-type: none"> • Գնահատել ծրագրի իրականացման տարածքում WASH համակարգերի վտանգի ենթակայության աստիճանը, ինչպես նաև կլիմայի փոփոխության կանխատեսվող ազդեցությունը մակերևույթային և ստորգետնյա ջրաղբյուրների վրա: • Գնահատել թիրախային բնակչության ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների հասանելիության մակարդակը, ազդեցությունն առողջության վրա, և այն, թե ինչպես է այն ստեղծում խոցելիություն՝ վտանգների և կլիմայի փոփոխության ազդեցության նկատմամբ: • Վտանգի ենթակա բնակչության շրջանում կատարել հարցումներ՝ հիգիենայի հետ կապված գիտելիքների, դիրքորոշման և փորձի⁶ (KAP) վերաբերյալ և բացահայտել խոցելիության պատճառներն ու դիմակայման կարողությունները:
<p>3. Ճանաչել իրավունքներն ու պարտավորությունները</p>	<ul style="list-style-type: none"> • Փոխանակել գնահատումների, հարցումների և այլ ուսումնասիրությունների արդյունքները համապատասխան նախարարությունների հետ (ջրային տնտեսության, առողջապահության, բնապահպանության և այլն), որպես WASH-ի համար պատասխանատվություն կրող մարմիններ, և այլ շահագրգիռ կողմերի հետ՝ ինչպիսիք են WASH ծառայություններ մատուցելու համար պայմանագրային հիմունքներով ներգրավված մասնավոր ընկերությունները: • Վտանգի ենթակա բնակչության շրջանում բարձրացնել ջրամատակարարման և ջրահեռացման իրավունքների և այդ իրավունքների աղետների ու կլիմայի փոփոխության վտանգներից կրած ազդեցությունների վերաբերյալ իրազեկման մակարդակը:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները WASH համակարգում կիրառելու համար

<p>4. Խթանել ռիսկի ենթակա բնակչության մասնակցությունը և գործողությունների ձեռնարկումը</p>	<ul style="list-style-type: none"> • Չարգացնել տեղի բուժանձնակազմի և ռիսկի ենթակա բնակչության ներկայացուցիչների կարողությունները, որպեսզի վերջիններս տեղեկատվություն տրամադրեն նախաձեռնվող միջոցառումների մասին վտանգից առաջ, ընթացքում և հետո: • Աջակցել ռիսկի ենթակա բնակչության շրջանում WASH համակարգի հանձնաժողովների ստեղծմանը, անցկացնել վերջիններիս համար WASH համակարգերի վերահսկման և սպասարկման, ինչպես նաև արտաքին ծառայությունների հետ բանակցություններ վարելու վերապատրաստման դասընթացներ:
<p>5. Խրախուսել համակարգված ներգրավման և փոփոխության գործընթացները</p>	<ul style="list-style-type: none"> • Նպաստել WASH համակարգի դերակատարների (պետական, ոչ պետական և մասնավոր հատված) ներգրավմանը աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության պլատֆորմի, քննարկումների աշխատանքներում:
<p>6. Նպաստել տարբեր մակարդակների համատեղ գործունեությանը</p>	<ul style="list-style-type: none"> • Բացահայտել այն պետական օրենքներն ու քաղաքականությունները, որոնք անդրադառնում են WASH համակարգին և կլիմայի ու աղետների հետ կապված խնդիրներին, աջակցել ռիսկի ենթակա բնակչությանը պայթարել դրանց իրականացման համար: • Նպաստել բոլոր ջրօգտագործողների և պետական մարմինների միջև հարաբերությունների համակարգմանը՝ կապված գետային ավազանների դրենաժների և ջրաբեր շերտի համալրման գոտիների հետ:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները WASH համակարգում կիրառելու համար

<p>7. Կիրառել և զարգացնել տարբեր աղբյուրներից ստացված գիտելիքներ</p>	<ul style="list-style-type: none"> • Մինչև գործողությունների պլանավորումը ձեռք բերել ստորգետնյա և մակերևույթային ջրաղբյուրների վերաբերյալ վերջին տեխնիկական ուսումնասիրությունները և տվյալները այդ աղբյուրների վրա կլիմայի փոփոխության հավանական ազդեցության վերաբերյալ: • Այնտեղ, որտեղ նպատակահարմար է, նպաստել ջրամատակարարման և ջրահեռացման ավանդական փորձի կիրառմանը, ինչպիսին, օրինակ, երաշտի հակված տարածքներում ջրի հավաքման և պահեստավորման մեթոդներն են: • Կիսել վտանգների և կլիմայի փոփոխության նկատմամբ կայուն WASH համակարգերի օրինակների փորձն այլ տարածքների հետ՝ անհրաժեշտության դեպքում դրանց կրկնօրինակումը խրախուսելու համար:
<p>8. Ապահովել ճկունություն և արձագանքման հնարավորություններ</p>	<ul style="list-style-type: none"> • Նախագծել/արդիականացնել WASH համակարգերը, որպեսզի դրանք կարողանան շահագործվել ակնկալվող մի շարք կլիմայական սցենարների պարագայում (օրինակ, երաշտ և ջրհեղեղ): • Վտանգներից հետո, ինչպես նաև տարբեր կլիմայական պայմաններում, օժանդակել WASH սարքավորումների կանոնավոր ստուգումների անցկացմանը և, անհրաժեշտության դեպքում, նախաձեռնել/նպաստել, բարելավման աշխատանքների իրականացմանը:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները WASH համակարգում կիրառելու համար

<p>9. Դիտարկել տարբեր ժամանակահատվածներ</p>	<ul style="list-style-type: none"> • Օժանդակել ջրօգտագործողներին և ծառայություն մատուցողներին՝ սահմանելու վտանգների վաղ ազդարարման այն ցուցանիշները, որոնք կարող են ազդել WASH համակարգերի վրա և մշակել արտակարգ իրավիճակների պլան: • Նվազեցնել երկարաժամկետ խոցելիության ու վտանգի ենթարկվելու աստիճանը⁶ միավորելով արտակարգ իրավիճակների միջոցառումները, աղետներից հետո ստեղծել դիմակայման համակարգեր՝ WASH համակարգի հետ կապված միջոցառումներ իրականացնելու համար:
<p>10. Չվնասել</p>	<ul style="list-style-type: none"> • Մինչև գործողություններ ձեռնարկելն իրականացնել շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում⁶: • Կանոնավոր կերպով ստուգել ստորգետնյա ջրերի որակը և խմելու պիտանելիությունը՝ աղտոտված ջրի սպառումը կանխելու համար: • Նպաստել և համակարգել այն ջրօգտագործողների խմբերի միջև կապը, որոնց հասանելիությունը ջրի նկատմամբ կարող է ազդեցություն կրել կլիմայի փոփոխության արդյունքում: • Օժանդակել այն WASH համակարգերի զարգացմանը, որոնք կարող են դիմակայել կլիմայի և վտանգների ազդեցությանը, որոնք ունեն կայուն ռեսուրսներ, ինչպես նաև տեղում առկա մասնագետներ՝ դրանց սպասարկումն իրականացնելու համար:

4.8 WASH համակարգի միջոցառումների օրինակներ, որոնք նպաստում են վտանգներին դիմակայման և կլիմայի փոփոխության հարմարվողականության գործընթացներին

- Ջրիեղեղների հակված տարածքներում ձեռքով աշխատող ջրհորների առկայություն և արքյուրների ելանցքների հսկողություն՝ ջրիեղեղների ժամանակ ջրի շարունակական հասանելիություն ապահովելու համար:
- Անձրևաջրերի հավաքման և պահեստավորման համակարգեր այն տարածքներում, որտեղ գոյություն չունեն ջրամատակարարման խողովակային համակարգեր կամ այն տարածքներում, որոնք պարբերաբար տուժում են երաշտներից:
- Ջրի հավաք ավազանների մաքրում տիղմից՝ երաշտի ժամանակ անասուններին ջրով ապահովելու համար:
- Տեսային պայմաններում ջրային ֆիլտրերի օգտագործման խրախուսում և դրանց օգտագործման ուսուցում՝ ջրածին հիվանդությունների հետևանքով մահացության մակարդակը կրճատելու համար, այլընտրանքային միջոցների առաջարկ՝ WASH համակարգի խափանումների դեպքում:
- Հասարակական գուգարանների տեղադրում ջրաղբյուրներից անվտանգ հեռավորության վրա՝ ջրիեղեղների ժամանակ արտահոսքը և աղտոտումը կանխելու համար:
- Քիչ ջուր սպառող և համապատասխանորեն ձևավորված սանիտարական համակարգեր, որոնք ավելի քիչ են խոցելի երաշտների ժամանակ:
- Վտանգի ենթակա բնակչության շրջանում հիգիենայի և ձեռքերը լվանալու վերաբերյալ քարոզարշավներ՝ ընդհանուր մահացության մակարդակը նվազեցնելու համար, լայնածավալ քարոզարշավների կազմակերպում մինչև կանխատեսվող վտանգների վրա հասնելը կամ՝ ի պատասխան անսովոր կլիմայական պայմանների:
- Դրենաժային առվակների մաքրման քարոզարշավներ՝ մինչև կանխատեսվող տրոպիկական փոթորիկները և ջրիեղեղները:
- Ջրային կառույցների տեղադրում սեզոնային գետերից հեռու:

ԴԵՊԵԻ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ. ՑԻԿԼՈՆԻՑ ՀԵՏՈ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ, ՈՒ ՀԻԳԻԵՆԱՅԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ ԵՎ ԿԵՆՍԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆՉՆՈՒՄ

Հնդկաստան, CARE India/CARE International կազմակերպություններ

2009թ. «Այլա» անունով ցիկլոնը հարվածեց Հնդկաստանի հյուսիս-արևելյան ափերին, որից տուժեց 18 շրջանի մոտ 6.6 մլն մարդ: Ավերվեցին տներ, ոչնչացվեց բերքը, ձկնային տնտեսությունն ու անասունները: Սանդարբանսի շրջանում, որտեղ Հնդկաստանի և Բանգլադեշի տարածքով հոսող երեք գետերի միախառնման

արդյունքում ստեղծվել է յուրօրինակ եկոհամակարգ իր մանգրային թփուտներով, ճահիճներով, հարուստ ֆաունայով և ֆլորայով, տեղի համայնքներն ապրում են ցիկլոնների և այլ բնական սպառնալիքների մշտական վախի պայմաններում, իսկ ցամաքի և ջրի միջև սահմանները մշտապես փոխվում են: Բնակչության մշտական աճի բեռը և կլիմայի փոփոխության ազդեցությունները Սանդարբանսի շրջանը դարձրել են առավել խոցելի:

Կարիքները բացահայտելու նպատակով համայնքի հետ համապատասխան աշխատանքներ կատարելուց հետո, CARE India կազմակերպությունը Սանդարբանսում իրականացրեց ECHO-ի կողմից ֆինանսավորվող «Այլա» ցիկլոնի ազդեցությունից վերականգնվելու ծրագիր, որի շրջանակներում տրամադրվեցին կացարաններ, բարելավվեցին կենսապահովման միջոցները, ինչպես նաև ջրամատակարարման, ջրահեռացման և հիգիենայի հետ կապված ծառայությունները՝ տարբեր նախաձեռնումների միջոցով:

Ցիկլոնից հինգ ամիս անց շատ գյուղեր դեռևս հեղեղված էին աղի ջրերով, կար կացարանների, սննդի, ջրամատակարարման, ջրահեռացման և հիգիենայի հետ կապված ծառայությունների (WASH) խիստ անհրաժեշտություն: CARE India կազմակերպությունը մշակեց գյուղացիների կարիքների վրա հիմնված ծրագիր, և նախօրոք պլանավորեց գործողություններ՝ հետագա աղետների ռիսկը նվազեցնելու համար, այդ թվում՝ «վճար աշխատանքի դիմաց», աղադիմացկուն սերմերի տրամադրում, օժանդակություն հողի փխրեցման աշխատանքներին՝ բրինձ ցանելու համար, ձկնկիրթի, անասունների, ընտանի թռչունների, այգեգործության համար տնկիների, բանջարեղենի սերմերի տրամադրում՝ տևաձեռն այգիների ստեղծումը խթանելու համար: Համայնքներին տրամադրվեց նաև տեխնիկական աջակցություն՝ օրգանական գոմարի պատրաստման և ցորենի բանկի ստեղծման համար: Գյուղացիներն ընգրկվեցին ծրագրի պլանավորման և իրականացման գործընթացում՝ ապահովելով աշխատուժ: Ծրագրի իրականացման համար յուրաքանչյուր գյուղում ստեղծվեց համայնքների ներկայացուցիչներից բաղկացած ծրագրի վերահսկման կոմիտե, որը պատասխանատու էր ընդհանուր վերահսկման և իրականացվող գործողությունների համար:

WASH-ի հետ կապված խնդիրները լուծելու համար, CARE India կազմակերպությունը տեղադրեց բարձրադիր ձեռքի պոմպեր՝ դրանց շահագործումը ջրհեղեղների ժամանակ ապահովելու համար, որոնք նախագծված են այնպես, որ հասանելի լինեն նաև հաշմանդամներին: Ձեռքի պոմպերի տեղադրման տարածքը որոշվել էր համայնքի և գյուղական խորհուրդների ներկայացուցիչների հետ քննարկումների արդյունքում: Յուրաքանչյուր ջրհորի համար ստեղծվել էր խորհուրդ՝ ջրօգտագործողների ներդրումների և ջրհորների հետ կապված այլ խնդիրների վերաբերյալ գրառումներ կատարելու համար:

Ի լրումն, WASH համակարգի մասնագետները «Water for People» կազմակերպությունից իրականացրեցին 28 վերապատրաստման/իրագրելության բարձրացման ծրագիր խորհուրդների բոլոր ներկայացուցիչների համար, որի ընթացքում մոտ 2,000 մարդ սովորեց, թե ինչպես շահագործել և սպասարկել ստեղծված ջրամատակարարման համակարգը, ձեռք բերեց կառավարման և վարչարարության վերաբերյալ հիմնարար գիտելիքներ, իրագրելվեց ջրհորների ներսում և շրջակայքում, ինչպես նաև տան պայմաններում մաքրության պահպանման և հիգիենայի մշակույթի կարևորության մասին, ջրհորից վերցված ջրի համապատասխան օգտագործման, համայնքների ավանդական

ջրաղբյուրների վերաբերյալ:

Կայունության մակարդակը բարձրացավ՝ **Նպաստելով տարբեր մակարդակների համատեղ գործունեությանը**՝ մեծացնելով ծրագրի մասնակիցների ներդրումը, ուժեղացնելով տարբեր միջազգային և տեղական ՅԿ-ների ու պետական մարմինների միջև աշխատանքների համակարգումը, կիրառելով ծախսերի փոխհատուցման համակարգեր և «առավել որակյալ վերականգնման» սկզբունքը: Այն ոչ միայն տրամադրեց ջրամատակարարման այլընտրանքային տարբերակներ, այլ նաև ապահովեց դրանց համապատասխան հագեցվածությունն աղետների ռիսկերը նվազեցնելու համար, ինչպես նաև՝ մատչելիություն հաշմանդամների համար: Աղետների ռիսկի նվազեցման գաղափարի ընդգրկումը WASH-ի հետ կապված գործողություններում, հնարավորություն ընձեռեց անմիջականորեն, համեմատաբար պարզ միջոցներով, բարելավել համակարգի դիմակայման աստիճանը, որից գյուղացիները կարող են հեշտությամբ օգտվել:

Գործիքներ և ռեսուրսներ

Տեղեկատվության և հղումների համար *տես էջ 278*. *Գործիքներ և ռեսուրսներ*:

4.5 Կրթություն

Կրթությունը կարող է արտահայտվել բազմաթիվ դրսևորումներով, սկսած պաշտոնապես դպրոց հաճախելուց և տեխնիկական ու մասնագիտական վերապատրաստումից մինչև ընտանիքի անդամների և համայնքի մեծահասակների կողմից երեխաների և երիտասարդների դաստիարակությունը: Կրթության իրավունքն ինքնին դիտարկվում է որպես անհատի և հասարակության զարգացման հիմք: Մինչդեռ, որպեսզի կրթությունը համապատասխանի աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության պայմաններին, այն պետք է զարգացնի անհատների աղետների ռիսկը կառավարելու և արտաքին միջավայրի փոփոխություններին հարմարվելու գիտելիքներ ու հմտություններ: Որպես ծառայություն, կրթությունը նույնպես պետք է լինի դիմակայուն՝ ապահովելով կայունություն և պաշտպանություն ճգնաժամի պայմաններում⁶:

Առանցքային խնդիրներ

Թեև կրթությունը մեծացնում է մարդկանց տնտեսական և կյանքի որակի բարելավման հնարավորությունները, այն պարտադիր չէ, որ լինի վտանգների և այլ բացասական պայմանների ազդեցությունների պաշտպանության երաշխիք: Աշխատանք գտնելու կամ գործարարությամբ զբաղվելու հմտություններ ունենալը, բայց չիմանալը, թե ինչպես պաշտպանել ընտանիքի անդամներին և ունեցվածքը, օրինակ, ջրհեղեղներից, կարող է հանգեցնել զգալի կորուստների, այդ թվում նաև՝ կյանքի կորստի:

Կրթական միջավայրը կարող է վտանգի ենթարկվել բնական աղետների և կլիմայի փոփոխության այլ ազդեցությունների հետևանքով: Երկրաշարժից հետո, օրինակ, կրթական գործընթացը կարող է ընդհատվել կառույցների վնասվածքների կամ ավիրվածության պատճառով, կամ էլ այդ կառույցները՝ տները կորցրած մարդկանցով բնակեցնելու պատճառով: Եթե, որպես դպրոց կամ այլ ուսումնական հաստատություն ծառայող շենքերը ֆիզիկապես խոցելի են, ապա վտանգի է ենթարկվում այդտեղ սովորող և աշխատող երեխաների ու մեծահասակների կյանքը: Աղետներից հետո կամ այլ ճգնաժամերի պայմաններում պաշտոնական ուսումնական գործընթացի խաթարումը կարող է խթանել սոցիալական անկայունություն և վտանգի ենթարկել վերականգնման գործընթացները: Կարճաժամկետ հեռանկարում հավանականությունը մեծ է, որ այն երեխաները, ովքեր չեն կարող դպրոց հաճախել, կարող են ենթարկվել այլ վտանգների, օրինակ՝ շահագործման կամ բռնության: Երկարաժամկետ հեռանկարում կրթական գործընթացից դուրս մնալը կարող է ընդմիշտ պահպանել աղբատության և խոցելիության ցիկլը: Կրթական գործընթացի

կայունությունն աղետների և կլիմայի փոփոխության ազդեցությունների նկատմամբ ապահովելու և աղետների ու կլիմայի փոփոխության ռիսկերը նվազեցնելու համար, կրթությունը պետք է օգտագործվի որպես փոփոխության իրականացման գործիք՝ վտանգի ենթակա բնակչության շրջանում ռիսկի դեմ պայքարելու կարողություններ ձևավորելու համար: Դպրոցները կրթության լավագույն օջախներն են, քանի որ հանդիսանում են համայնքների ակտիվության կենտրոններ, թեև այդ նպատակին կարող են ծառայել նաև այլ կառույցներ՝ աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերի վերաբերյալ ուսումնական դասընթացներ անցկացնելու համար:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները կրթության գործընթացում կիրառելու համար	
1. Բարձրացնել վտանգի և կլիմայի փոփոխության համատեքստի ըմբռնման մակարդակը	<ul style="list-style-type: none"> • Օգտագործել վտանգների, նախկինում տեղի ունեցած աղետների, կլիմայի կանխատեսվող փոփոխության ազդեցության վերաբերյալ տեղեկատվությունը և նպաստել, որպեսզի աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության թեման ընդգրկվի համընդհանուր կրթական ծրագրերում:
2. Բարձրացնել վտանգի ենթարկվելու, խոցելիության և կարողությունների ըմբռնման մակարդակը	<ul style="list-style-type: none"> • Չնայած նուսումնական նպատակներով օգտագործվող շենքերի վտանգի և կլիմայի կանխատեսվող փոփոխությանը ենթարկվելու աստիճանը: • Անցկացնել դասընթացներ ուսուցանողների համար (դպրոցի ուսուցիչներ, մեծահասակներ, ծնողներ, համայնքի առաջնորդներ, երիտասարդ բանվորներ և այլն)՝ տալով նրանց գիտելիքներ ռիսկերի և դիմակայունության մասին:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները կրթության գործընթացում կիրառելու համար

<p>2. Բարձրացնել վտանգի ենթարկվելու, խոցելիության և կարողությունների ըմբռնման մակարդակը</p>	<ul style="list-style-type: none"> • Մասնագիտական և տեխնիկական հարցերով հրահանգիչների համար կազմակերպել վերապատրաստման դասընթացներ՝ համապատասխան ռիսկի նվազեցման և հարմարվողականության միջոցների վերաբերյալ (օրինակ՝ շինարարության անվտանգ մեթոդներ, աղետների և կլիմայի նկատմամբ դիմակայուն գյուղատնտեսություն և այլն): • Օգտագործել տեղական ՉԼՄ-ները և հրապարակային միջոցառումները՝ մեծահասակների, երիտասարդների և երեխաների շրջանում աղետների և կլիմայի փոփոխության, ինչպես նաև դիմակայման լավագույն փորձի վերաբերյալ իրազեկման մակարդակը բարձրացնելու համար:
<p>3. Ճանաչել իրավունքներն ու պարտականությունները</p>	<ul style="list-style-type: none"> • Խրախուսել ռիսկի ենթակա բնակչության ամենախոցելի խմբերի մասնակցությունն աղետներին և կլիմայի փոփոխությանը դիմակայելու ուսուցման գործընթացին՝ այնպիսի միջոցների կիրառման շնորհիվ, ինչպիսիք են դպրոցներում սննդի տրամադրումը և զանազան այլ միջոցառումներ, որոնք համատեղելի են նրանց մյուս պարտականությունների հետ: • Օժանդակել ազգային լեզվով աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության վերաբերյալ համապատասխան նյութերի մշակմանը՝ հաշվի առնելով ընթերցողի տարիքը և գրագիտության մակարդակը, ինչպես նաև ներկայացնել օրինակներ, որոնք կընկալվեն վերջիններիս կողմից:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները կրթության գործընթացում կիրառելու համար

<p>3. Ճանաչել իրավունքներն ու պարտականությունները</p>	<ul style="list-style-type: none"> Նպաստել ապահով և աղետների նկատմամբ դիմակայուն դպրոցական միջավայրի ստեղծմանը:
<p>4. Խթանել ռիսկի ենթակա բնակչության մասնակցությունը և գործողությունների ձեռնարկումը</p>	<ul style="list-style-type: none"> Ամբողջական պատկերացում ստեղծել պաշտոնական և ոչ պաշտոնական կրթական գործընթացների վերաբերյալ տեղական համատեքստում՝ բացահայտելու այն դաշտը, որտեղ հարմար կլինի ներառել աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության վերաբերյալ նյութեր: Ներգրավել դպրոցների և այլ ուսումնական հաստատությունների աշակերտներին, ուսուցիչներին, վարչական աշխատակազմին՝ համայնքային մակարդակով իրականացվող ռիսկի գնահատման գործընթացներում: Նպաստել աշակերտների ներգրավմանը դպրոցի և համայնքի հետ կապված պլանավորման գործընթացներում: Օժանդակել տարիքը և գրագիտության մակարդակը հաշվի առնող համապատասխան նյութերի մշակմանը՝ վտանգի ենթակա բնակչության բոլոր հատվածներին ընդգրկելու համար:
<p>5 Խթանել կանոնավոր ներգրավումը և փոփոխությունները</p>	<ul style="list-style-type: none"> Նպաստել, որպեսզի կրթության հետ կապված հարցերը և կրթության համակարգի ներկայացուցիչներն ընդգրկվեն աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխություններին դիմակայելու քննարկումներում՝ սկսած պետական մակարդակից մինչև աղետների կառավարման տեղական խորհուրդները:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները կրթության գործընթացում կիրառելու համար

<p>6. Խրախուսել համակարգված ներգրավման և փոփոխության գործընթացները</p>	<ul style="list-style-type: none"> • Նպաստել, որպեսզի կրթության հետ կապված հարցերը և կրթական համակարգի ներկայացուցիչներն ընդգրկվեն աղետների ռիսկի նվազեցմանը և կլիմայի փոփոխության հարմարվողականությանը նվիրված բննարկումներում՝ սկսած ազգային պլատֆորմից մինչև աղետների կառավարման տեղական խորհուրդներ: • Նպաստել տեղի ուսուցիչների և ուսումնական դասընթացներ վարողների մասնակցությանը ազգային քաղաքականության և կրթական ծրագրերի մշակման գործընթացներում: • Օժանդակել տվյալ տեղանքին հատուկ ուսումնական նյութերի մշակմանը՝ ազգային քաղաքականության և կրթական ծրագրերում ընդգրկելու համար:
<p>7. Կիրառել և զարգացնել տարբեր աղբյուրներից ստացված գիտելիքներ</p>	<ul style="list-style-type: none"> • Վերապատրաստել ուսուցանողներին՝ կապված ավանդական գիտելիքների և գիտության նվաճումների արժեքը հասկանալու և դրանց նկատմամբ հարգանք ցուցաբերելու հետ: • Օգտագործել մատչելի լեզու և ուսումնական նյութեր (նկարներ, տեսահոլովակներ, երգեր և այլն)՝ գիտական և տեխնիկական հայեցակարգերը բացատրելու համար:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները կրթության գործընթացում կիրառելու համար

<p>8. Ապահովել ճկունություն և արձագանքման հնարավորություններ</p>	<ul style="list-style-type: none"> • Նպաստել կլիմայի փոփոխության հարմարվողականության և աղետների ռիսկի նվազեցման ուսուցմանն ուղղված մեթոդների և նյութերի կիրառմանը, որոնք խթանում են նորարարությունները: • Օժանդակել այն դպրոցներին, որոնք ցանկություն են հայտնում ծառայել որպես ժամանակավոր կացարաններ աղետային իրադարձությունների ժամանակ և հետո: • Կատարել վերլուծություններ աղետային իրադարձություններից հետո և ներառել բաղված դասերը տեղական և դպրոցական մակարդակների համար մշակված աղետներին նախապատրաստվելու գործողությունների պլանում:
<p>9. Դիտարկել տարբեր ժամանակահատվածներ</p>	<ul style="list-style-type: none"> • Աջակցել դպրոցի և համայնքի ղեկավարներին վերլուծել բոլոր վտանգները և կլիմայի փոփոխության ազդեցությունները (արագ և դանդաղ վրա հասնող իրադարձություններ և երկարաժամկետ փոփոխություններ) մինչ աղետների ռիսկի նվազեցման գործողությունների պլանի մշակումը: Անհրաժեշտության դեպքում օժանդակել դպրոցներին և այլ կրթական հաստատություններին անցկացնել արտակարգ իրավիճակներին դիմակայելու վարժանքներ՝ նախատեսված արագ վրա հասնող իրադարձությունների համար: Օժանդակել համընդհանուր կրթական ծրագրերի վերանայմանը՝ տարրական, միջնակարգ և ավագ դպրոցների մակարդակով, աղետների ռիսկի նվազեցումը և կլիմայի փոփոխության հարմարվողականությունը այդ ծրագրերում ներառելու համար:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները կրթության գործընթացում կիրառելու համար

<p>9. Դիտարկել տարբեր ժամանակահատվածներ</p>	<ul style="list-style-type: none"> • Նպաստել, որպեսզի դպրոցների տեղակայման ընտրության վերաբերյալ որոշումները կայացվեն անվտանգության գործոնի հաշվառմամբ, ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ ապահովման առումով:
<p>10. Չվնասել</p>	<ul style="list-style-type: none"> • Օժանդակել ուսուցանողներին և ուսուցման ոլորտի որոշում ընդունողներին օգտվել աղետների և կլիմայի փոփոխվող ռիսկերի վերաբերյալ հասանելի լավագույն գիտական տեղեկատվությունից:

4.9 Աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության օրինակներ, կապված պաշտոնական և ոչ պաշտոնական կրթության հետ

- **Աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության ակումբներ.** Որպես կիսապաշտոնական կրթական միջավայր, այս ակումբներում կարող են ընդգրկվել երեխաներ, պատանիներ, երիտասարդներ՝ աղետների և կլիմայի փոփոխության վերաբերյալ գիտելիքներ ձեռք բերելու համար, որը հետագայում կարող է փոխանցվել ուրիշներին: Սա կարող է ընդգրկել այնպիսի գործողություններ, ինչպիսիք են դպրոցական տարածքի վտանգների և կարողությունների քարտեզների ստեղծումը կամ բոլոր դպրոցներում վարժանքներ կազմակերպելը՝ նմանակելով տարբեր իրադարձություններ, որոնք կարող են ընդգրկվել համայնքների գործողությունների պլանում:
- **Դպրոցներում գործող վաղ ազդարարման համակարգեր.** Շատ դեպքերում դպրոցները կարող են ունենալ վաղ ազդարարման համակարգեր համայնքի երեխաներին, պատանիներին և երիտասարդներին հնարավոր ճգնաժամերի մասին զգուշացնելու համար, ինչպես նաև դրանք կարող են գերազանց միջոց հանդիսանալ երիտասարդներին աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության գործընթացներում ընդգրկելու համար:

4.9 Աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության օրինակներ, կապված պաշտոնական և ոչ պաշտոնական կրթության հետ (շարունակություն)

- **Բնապահպանական կրթություն.** Դպրոցը լավագույն միջավայրն է երեխաներին և մեծահասակներին շրջակա միջավայրի կառավարման վերաբերյալ գիտելիքներ տալու համար: Այստեղ հնարավորություն է ստեղծվում նաև ուսումնասիրել մարդու գործունեության և ապագա հնարավոր ռիսկերի միջև փոխադարձ կապը:
- **Կենսական նշանակության հմտությունների ոչ պաշտոնական ուսուցանում՝ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության իրական դեպքերի ուսումնասիրմամբ.** Կենսական նշանակության հմտությունների ուսուցանումը կարելի է իրականացնել բոլոր տարիքային խմբերի հետ՝ հնարավորություն ընձեռելով անցկացնել վարժանքներ կապված ռիսկերի, ինչպես նաև աղետներին նախապատրաստվելու ու կլիմայի փոփոխությանը հարմարվելու հետ:
- **Ուսուցանողների ուսուցում/դպրոցի ուսուցիչներ.** Օժանդակելով աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության գծով ուսուցանողների վերապատրաստմանը դպրոցներում և համայնքում կարող ենք ունենալ օգտակար մարդկային ռեսուրսներ:

ԴԵՊԵԻ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՈՒՄ, ՈՐԻ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ԵՐԵՒԱՆ Ե

Բանգլադեշ, «Save the Children» կազմակերպություն

Տասնչորս տարեկան Արիֆն ապրում է ծնողների հետ, Բանգլադեշի Պիրոզփուր նահանգի, Պիրոզփուր Սադար շրջանում: Հայրն օրավարձով աշխատող բանվոր է, իսկ մայրը 2007թ. գամված է անկողնում՝ «Սիդր» ցիկլոնի ժամանակ ոտքը կորցնելու պատճառով: Արիֆը ստիպված է թողնել դպրոցն ընտանիքին օգնելու համար և այժմ աշխատում է որպես ձայնային համակարգի տեխնիկ, միաժամանակ, ռիքշա է քշում:

Save the Children կազմակերպության երեխաների համար նախատեսված աղետների ռիսկի նվազեցման ծրագրին միանալուց հետո, Արիֆն իր ընկերների հետ ընդգրկվեց մանկական ակումբում, որտեղ տեղեկություններ ստացավ վտանգների և աղետների խոցելիության նկատմամբ կարողությունների գնահատման համար՝ այցելելով և խորհրդակցելով մեծահասակների հետ, այնուհետև

պատրաստում էին ռիսկերի և ռեսուրսների քարտեզներ, սեզոնային օրացույցներ, աղետների, հիվանդությունների և բերքի վերաբերյալ, ինչպես նաև մշակում էին սոցիալական քարտեզներ և տրամադրում համայնքի անդամներին: Մինչև ծրագիրը, համայնքներում այն կարծիքն էր տիրում, որ երեխաները ոչ մի էական դեր չեն կարող խաղալ արտակարգ իրավիճակներին նախապատրաստվելու և դրանց արձագանքելու գործընթացում: Սակայն այս վերաբերմունքը փոխվեց այն ժամանակ, երբ համայնքի աշխատանքային սեմինարներից մեկի ժամանակ երեխաների ակումբի անդամները ներկայացրեցին խոցելիության և կարողությունների գնահատման արդյունքները: Համայնքում հասկացան, որ երեխաները կարող են կարևոր դեր խաղալ տեղերում ռիսկերի նվազեցման նախաձեռնությունների իրականացման գործընթացներում: Այժմ դիմում են երեխաներին, որպեսզի համայնքը և համայնքի ընտրված ներկայացուցիչներն ուշադրություն դարձնեն երեխաների հատուկ կարիքներին, համաձայն համայնքի ռիսկերի նվազեցման գործողությունների պլանի, որը մշակվել է գնահատումից հետո:

Արիֆը պատմում է, թե ինչպես են երեխաները սիրահարված իրենց գործին, և ինչպես են աշխատանքներն իրար միջև բաշխում՝ ուղերձներն իրենց ծնողների, բույրերի և եղբայրների, ինչպես նաև համայնքի մյուս անդամների միջև տարածելու համար: Երեխաները, ինչպես նաև համայնքի մյուս անդամները զգում են կլիմայի փոփոխության արդյունքում առաջացող հետևանքները (օրինակ, ջրի մակարդակը բարձրանում է մակընթացությունների, անսովոր ուժեղ անձրևների ժամանակ), այդ պատճառով աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության ուղերձները հատկապես կարևոր են:

Արիֆը նշեց, որ ինքը համոզված է, որ կարող է կիսել ստացված արդյունքներն իր համայնքի անդամների հետ, ինչը նրանց կողմից ընդունվում և գնահատվում է, ինչպես նաև ասաց այն մասին, որ կարող է սովորեցնել, թե ինչպես անել, որպեսզի խոցելի տնային տնտեսությունները դառնան ավելի քիչ խոցելի աղետների հնարավոր ռիսկի նվազեցման հաշվին:

Բարձրացնելով երեխաների **վտանգի և կլիմայի փոփոխության համատեքստի ըմբռնման մակարդակը**, նրանք առավել եռանդով սկսեցին մասնակցել համայնքում տեղի ունեցող աղետների ռիսկի նվազեցման քննարկումներին, ինչը գովասանքի արժանացավ համայնքի կողմից, և երեխաներն ընդունվեցին որպես համայնքի ակտիվ դերակատարներ: Երեխաները դարձան ավելի ինքնավստահ՝ բարձրացնելով իրենց մտահոգող հարցերը:

Երեխաներին աղետների ռիսկի նվազեցման գործընթացում ընդգրկելը կարող է բարելավել ինչպես մեծահասակների, այնպես էլ երեխաների համար իրականացվող ծրագրերի որակը և երեխաներին պետք է թույլ տրվի մասնակցել այդ ծրագրերին և համայնքին ներկայացնել իրենց աշխատանքի արդյունքները:

Գործիքներ և ռեսուրսներ

Տեղեկատվության և հղումների համար *տես էջ 278. Գործիքներ և ռեսուրսներ:*

4.6 Առողջապահություն

Երկրագնդի աղքատ բնակչության մեծամասնությունը չի կարող օգտվել առողջության իրավունքից: Աշխարհի բնակչության գրեթե կեսին սպառնում է մալարիայի վտանգը, մանկական թերմակամակությունը հանդիսանում է միլիարդավոր տարեկան երեխաների մահացության մեկ երրորդի հիմնական պատճառը, իսկ, ըստ գնահատումների, 34 մլն մարդ ապրում է ՄԻԱՎ վարակով:

Աղքատ մարդիկ ավելի շատ են կախված իրենց առողջական վիճակից, քան բնակչության այլ հատվածները, քանի որ նրանց անհրաժեշտ է ունենալ լավ առողջություն՝ ապրուստ հայթայթելու համար: Հիվանդությունը և բժշկական ծառայությունների համար վճարելու անհրաժեշտությունը կարող է էլ ավելի սրել աղքատությունը, մարդկանց զցելով պարտքերի ու զրկանքների մեջ: Հաճախ հիվանդացող երեխաները կանոնավոր դպրոց չեն հաճախում և զրկվում կրթության ընձեռած հնարավորություններից:

Առանցքային խնդիրներ

Աղետները⁶ լուրջ վտանգ են հանդիսանում մարդկանց առողջական վիճակի և առողջապահական այն ծառայությունների համար, որից կախված է նրանց կյանքը: Հանկարծակի վրա հասնող աղետներից, օրինակ՝ երկրաշարժից կամ փոթորիկներից, փլուզվող կառույցները և դրանց բեկորները կարող են պատճառել ծանր վնասվածքներ, աղետները կարող են ավերել կամ կաթվածահար անել առողջապահական կառույցները՝ վնաս հասցնելով շենքերին ու սարքավորումներին, բուժանձնակազմին, ինչպես նաև խաթարել դեղորայք և բժշկական նյութերի մատակարարման շղթայի աշխատանքը:

Դանդաղ վրա հասնող աղետները, ինչպիսիք են՝ երաշտը և ջրհեղեղը, երկարաժամկետ բացասական ազդեցություն են գործում անհատների և համայնքների առողջության վրա՝ առաջացնելով սթրեսային իրավիճակներ և հիվանդություններ, ինչը վերջիններիս առավել խոցելի է դարձնում այլ վարակների և առողջությանը սպառնացող վտանգների նկատմամբ: Բոլոր տեսակի աղետներից հետո, կարող են տեղի ունենալ երկրորդային աղետներ, երբ մարդկանց առողջությունը վնասվում է ժամանակավոր կացարաններում չափազանց մեծ թվով մարդկանց բնակեցման, ջրամատակարարման, ջրահեռացման, հիգիենայի հետ կապված ոչ բավարար ծառայությունների (WASH), սննդի անվտանգության բացակայության⁶ և բռնությունների պատճառով:

Կլիմայական փոփոխությունները⁶ բարձրացնում են կլիմայի հետ կապված վտանգների հաճախականությունը և (կամ) ուժեղությունը, ինչպես նաև մեծացնում են գոյություն ունեցող առողջական ռիսկերը՝ կլիմայի նկատմամբ զգայուն հիվանդությունների պատճառով:

Ջրածին հիվանդությունների դեպքերը, ինչպիսիք են մանրէներից և մակաբույծներից առաջացող վարակները, կարող են տարածվել ուժեղ և երկարատև ջրհեղեղների և երաշտների ժամանակ: Հիվանդությունները, որոնք փոխանցվում են վարակակիրների միջոցով, ինչպիսիք են մալարիան, դենգե տենդը, սովորաբար տարածվում են տաք, առավել խոնավ եղանակային պայմաններում և կարող են գրավել նոր տարածքներ՝ երկրագնդի ջերմաստիճանի բարձրացման արդյունքում:

Հիվանդության և մահացության մակարդակը կարող է բարձրանալ խոցելի բնակչության շրջանում, որտեղ բժշկական ծառայությունները չեն կարող արձագանքել այն հիվանդությունների փոփոխվող դրսևորումներին, որոնք համապատասխան բուժօգնություն են պահանջում:

Ինչևիցե, այս ազդեցություններից կարելի է խուսափել, եթե աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերը համապատասխան ձևով ընկալվեն և կառավարվեն: Առողջապահական ծառայությունները կարող են բարելավել մարդկանց դիմակայելու կարողությունները՝ կիրառելով վտանգների պայմաններին հատուկ ժամանակակից միջոցներ՝ ստեղծելով արտակարգ իրավիճակների պլանավորման ծրագրեր⁶, վաղ ազդարարման համակարգեր և իրականացնելով աղետներին նախապատրաստվելու միջոցառումներ: Ջրածին և վարակակիրների միջոցով փոխանցվող հիվանդությունների դեպքերը կարելի է կրճատել, օրինակ, հիգիենայի կուլտուրայի խրախուսման և շրջակա միջավայրի սանիտարահիգիենիկ պայմանների արդյունավետ կառավարման միջոցով, իսկ երեխաների և ամենախոցելի խավերի առողջությունը կարելի է բարելավել և պահպանել, օրինակ, թիրախավորված սննդի և սնուցման անվտանգության և WASH ծրագրերի իրականացման միջոցով: Այստեղ կատարվող ներդրումները կարող են կանխել աղետների և կլիմայի փոփոխության արդյունքում մարդկանց առողջության խաթարումները և առողջապահական հաստատությունների ավերումը, փոխարենը՝ դառնալով դիմակայման անհրաժեշտ աղբյուրներ:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները առողջապահության համակարգում կիրառելու համար	
<p>1. Բարձրացնել վտանգի և կլիմայի փոփոխության համատեքստի ըմբռնման մակարդակը</p>	<ul style="list-style-type: none"> • Գնահատել հայտնի վտանգների հնարավոր համաճարակային ազդեցությունները, ինչպես նաև կլիմայի փոփոխության կանխատեսվող ազդեցությունը ծրագրի իրականացման վայրում:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները առողջապահության համակարգում կիրառելու համար

2. Բարձրացնել վտանգի ենթարկվելու, խոցելիության և կարողությունների ըմբռնման մակարդակը

- Ղևահատել ծրագրի իրականացման վայրում առողջապահական կառույցների վտանգներին և կլիմայի կանխատեսվող փոփոխությանը ենթարկվելու աստիճանը:
- Ղևահատել պետական և այլ դերակատարների կողմից որդեգրած առողջապահական ռազմավարությունների համապատասխանությունը ներկա և ապագա սցենարների ռիսկի հետ, բացահայտել հնարավոր ուժեղ և թույլ կողմերը և բացթողումները:

3. Ճանաչել իրավունքներն ու պարտականությունները

- Ղևահատումների, հարցումների և այլ ուսումնասիրությունների արդյունքները կիսել առողջապահության նախարարության և առողջապահական ծառայություններ իրականացնող այլ հաստատությունների հետ (պետական, ոչ-պետական և մասնավոր ընկերություններ):
- Ռիսկի ենթակա բնակչության շրջանում բարձրացնել իրազեկումն առողջության իրավունքի նկատմամբ և այն ազդեցության նկատմամբ, որ այդ իրավունքը կրում է աղետի և կլիմայի ռիսկերից:
- Համալրել պետական առողջապահական ծառայություններն այնպիսի ծրագրերով, որոնք կարևորում են աղետի և կլիմայի փոփոխության հետ կապված ուղերձները, բարելավել առողջության հետ կապված նախապատրաստական աշխատանքները, ինչպիսիք են համընդհանուր կանխարգելիչ պատվաստումների իրականացումը, սննդի պահեստավորումն ու պատրաստումը և այլն:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները առողջապահության համակարգում կիրառելու համար

<p>4. Խթանել ռիսկի ենթակա բնակչության մասնակցությունը և գործողությունների ձեռնարկումը</p>	<ul style="list-style-type: none"> • Ձարգացնել տեղի բուժանձնակազմի կարողությունները իրականացնելու կանխարգելիչ առողջապահական ծրագրեր, որոնք տեղեկատվություն են պարունակում սովորական վտանգներից առաջ, ընթացքում և հետո նախաձեռնվող միջոցառումների մասին: • Աջակցել ռիսկի ենթակա բնակչության շրջանում առողջապահական հանձնաժողովների ստեղծմանը, վերապատրաստել հանձնաժողովներում ընդգրկված անձանց իրականացնելու ընթացիկ համաճարակային հսկողություն՝ նպաստելու վաղ հայտնաբերման և համապատասխան գործողությունների իրականացման գործընթացներին: • Տեսային տնտեսությունների մակարդակով ձևավորել գիտելիքներ և հմտություններ՝ այնպիսի միջոցներ ձեռնարկելու համար, ինչպիսիք են, օրինակ, լուծի ժամանակ ռեհիդրատացիան խմելու միջոցով, ջրի մաքրումը և անվտանգ սննդի պատրաստումն ու պահպանումը:
<p>5. Խրախուսել համակարգված ներգրավման և փոփոխության գործընթացները</p>	<ul style="list-style-type: none"> • Տեղական մակարդակով խթանել/օժանդակել կլիմայի փոփոխության ռիսկերի հետ կապված առողջապահական, կացարանների հատկացման, ջրամատակարարման, ջրահեռացման, հիգիենայի (WASH), սննդի, անվտանգության և սնուցման ապահովման ոլորտի դերակատարների աշխատանքների համակարգման գործընթացը:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները առողջապահության համակարգում կիրառելու համար

<p>5. Խրախուսել համակարգված ներգրավման և փոփոխության գործընթացները</p>	<ul style="list-style-type: none"> • Նպաստել առողջապահության ոլորտի դերակատարների (պետական, ոչ-պետական և մասնավոր հատված) ներգրավմանը աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության վերաբերյալ ազգային քննարկումներում և ֆորումներում:
<p>6. Նպաստել տարբեր մակարդակների համատեղ գործունեության խթանմանը</p>	<ul style="list-style-type: none"> • Բացահայտել այն պետական օրենքներն ու քաղաքականությունները, որոնք վերաբերում են առողջապահությանը և աջակցել ռիսկի ենթակա բնակչությանը պայքարել դրանց իրականացման համար: • Տարբեր մակարդակներում խթանել արտակարգ իրավիճակներում առողջապահության խնդիրների գործողությունների պլանի ստեղծումը, ներառյալ բուժանձնակազմի վերաբաշխումը, սարքավորումների ու ֆինանսական ռեսուրսների ներգրավումը՝ աճող կարիքները բավարարելու համար:
<p>7. Կիրառել և զարգացնել տարբեր աղբյուրներից ստացված գիտելիքներ</p>	<ul style="list-style-type: none"> • Երկարատև ժամանակային կտրվածքով կապ ստեղծել փոփոխվող հիվանդությունների դրսևորումների և վտանգների միջև՝ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության ռազմավարություններ մշակելու համար:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները առողջապահության համակարգում կիրառելու համար

<p>7. Կիրառել և զարգացնել տարբեր աղբյուրներից ստացված գիտելիքներ</p>	<ul style="list-style-type: none"> • Վերլուծել առողջության վերահսկողության գրառումներն աղետների ժամանակ և հետո, ինչպես նաև եղանակի ծայրահեղ դրսևորումների ժամանակ՝ բացահայտելու մահացության հիմնական պատճառները և ամենախոցելի խմբերին: • Աջակցել ռիսկի ենթակա բնակչությանը գնահատելու ավանդական բժշկության արդիականությունն ու արդյունավետությունը՝ կապված կլիմայի փոփոխության և աղետների ռիսկի հետ: Նպաստել հաջողված փորձի տարածմանը:
<p>8. Ապահովել ճկունություն և արձագանքման հնարավորություն</p>	<ul style="list-style-type: none"> • Համագործակցել առողջապահության ոլորտի շահագրգիռ կողմերի հետ՝ ռիսկերի նվազեցման միջոցների ձեռնարկման ընդհանուր ցուցանիշներն ու «խթանիչները» բացահայտելու համար, օրինակ՝ կանխարգելիչ առողջապահական միջոցառումներ: • Առողջապահության ոլորտի բոլոր մակարդակի բյուջեներում ընդգրկել չնախատեսված ծախսերի տող՝ արձագանքելու ոչ սովորական հիվանդությունների բռնկումներին, որոնք կարող են հանդիսանալ կլիմայի փոփոխության արդյունք:
<p>9. Դիտարկել տարբեր ժամանակահատվածներ</p>	<ul style="list-style-type: none"> • Աջակցել առողջապահական կառույցներում վաղ ազդարարման համակարգերի ստեղծմանը և իրականացնել կանոնավոր վարժանքներ: • Առաջնահերթության կարգով դիտարկել այն թույլ կողմերը, որոնք հայտնաբերվել են կարևոր առողջապահական կառույցներում:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները առողջապահության համակարգում կիրառելու համար

<p>9. Դիտարկել տարբեր ժամանակահատվածներ</p>	<ul style="list-style-type: none"> • Համայնքի անդամների համար կազմակերպել առաջին բուժօգնության դասընթացներ: • Նվազեցնել երկարաժամկետ խոցելիությունը՝ կանոնավոր պատվաստումներ կատարելու, ինչպես նաև առողջության պահպանմանն ուղղված քարոզարշավների միջոցով՝ վերացնելու տարածված և այն հիվանդությունները, որոնք կարող են սրվել կլիմայի փոփոխության արդյունքում:
<p>10. Չվնասել</p>	<ul style="list-style-type: none"> • Նպաստել լավ առողջության և սննդի ապահովմանը՝ որպես բոլոր տեսակի վտանգներին, ցնցումներին և փոփոխություններին դիմակայելու հենք: • Խթանել հաղորդակցումն ու աշխատանքի համակարգումը առողջապահության ոլորտի բոլոր այն դերակատարների միջև, որոնք աշխատում են ռիսկի ենթակա բնակչության հետ: • Նպաստել, որպեսզի առողջապահական ոլորտի աշխատակիցները ընդգրկեն աղետներին և կլիմային դիմակայման ռազմավարությունները տեղի բնակչության շրջանում տարվող իրազեկման միջոցառումներում:

4.10 Աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության միջոցառումների օրինակներ առողջապահության ոլորտում

- Մալարիան կանխող ռազմավարություններ, որոնք ներառում են անկողնային ցանցերի տրամադրումը մինչև անձրևային սեզոնի սկիզբը և ջրհեղեղների ժամանակ:
- Բարձր սեյսմիկ ակտիվության գոտում գտնվող հիվանդանոցների վերազինում:
- Ըներգիայի և ջրի այլընտրանքային աղբյուրների նախատեսում՝ ընդհատումների դեպքում:
- Կենսական նշանակություն ունեցող դեղորայքի և նյութերի պահեստավորում արտակարգ իրավիճակների համար՝ մատակարարման գծի ընդհատումների և տրանսպորտային ենթակառուցվածքների խաթարումների դեպքում:
- Փոխադարձ համաձայնություն այլ առողջապահական կառույցների կամ կազմակերպությունների միջև՝ բուժանձնակազմը ճգնաժամերի ժամանակ համալրելու համար:
- Հիգիենայի մշակույթի և սնուցման հետ կապված քարոզարշավներ՝ ռադիոյի, հեռուստատեսության և տեքստային հաղորդագրությունների միջոցով:
- Վերապատրաստման իրականացում և սարքավորումների տրամադրում համայնքի անդամներին՝ աղետների ժամանակ տարհանում իրականացնելու և առաջին բուժօգնություն ցուցաբերելու համար:
- Տնային պայմաններում օգտագործելու համար նախատեսված ջրային ֆիլտրերի բաշխում և տեղադրում:

**ԴԵՊԵԻ ՌԻՍԻՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ. ԽՈՒԵՐԱՅԻ ԲՈՆԿՈՒՄՆԵՐԻ ԴԵՍ
ՊԱՅՋԱՐԻ ՌԴԵՑԻՈՒՅՑԻ ՄՇԱԿՈՒՄ. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ,
ԿԱՆԽՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՀՅՍԿՈՒՄ**

Oxfam GB կազմակերպություն

2010թ. Հաիթիում տեղի ունեցած երկրաշարժից հետո Oxfam GB կազմակերպությունն ուսումնասիրեց խլոերայի դեմ պայքարի ծրագրերը Եթովպիայում, Սուդանում, Սոմալիում, Հաիթիում, Չադբիայում, Չիբաբվեում և Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունում, որոնց վրա հիմնվելով՝ մշակեց խլոերայի բռնկումների դեմ պայքարելու սեփական ուղեցույցը, որն անդրադառնում է նախապատրաստվածության, կանխման և վերահսկման հարցերին՝ աշխատակազմը խլոերայի բռնկումներին նախապատրաստելու և համապատասխան արձագանք ապահովելու համար: Oxfam GB-ի կողմից իրականացված վերջին նախագծերից քաղած դասերը ցույց են տալիս, որ

գործողությունների մեծ մասն իրականացվել է խոլերայի կանխման և վերահսկման ակտիվ մոտեցման կիրառմամբ: Հաճախ այնտեղ, որտեղ գործողությունները չեն համակարգվել կամ չի կիրառվել բազմոլորտային մոտեցում, հնարավոր չի եղել կանխել բռնկումը կամ կրկնակի բռնկումները, որի արդյունքում մահացության և վարակվածության դեպքերը մեծ չափերի են հասել:

Oxfam-ը գիտակցում է, որ կլիմայի փոփոխության արդյունքում ակնկալվում է հիվանդության դրևնորումների փոփոխություն և խիստ անհանգստացած է հիվանդությունների բռնկումների աճի կապակցությամբ: Այդ պատճառով անհրաժեշտություն առաջացավ մշակել հիվանդությունների բռնկումներին (օրինակ՝ խոլերա) նախապատրաստվելու ուղեցույց:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից «խոլերայի նկատմամբ էնդեմիկ» դասակարգում ունեցող երկրներում խոլերայի բռնկումների ժամանակ ավելի պրոակտիվ մոտեցում ցուցաբերելու համար Oxfam GB-ի ծրագրերը պետք է տեղեկում ունենան խոլերային նախապատրաստվելու և ակտիվ իրականացման գործողությունների պլաններ, որոնցով պետք է ուղղորդվեն ինչպես տեխնիկական, այնպես էլ ղեկավար անձնակազմը՝ իրենց դերերն ու պարտականությունները կատարելու համար: Այս պլաններում պետք է սահմանվեն նաև այն գործողությունները, որոնք պետք է իրականացվեն մինչև հիվանդության բռնկման սեզոնը՝ հիվանդության և մահվան դեպքերը կանխարգելելու համար:

Oxfam-ի փորձը ցույց է տալիս, որ Եթովպիայի Օրոմիա նահանգում, չնայած վարակված երկու տարածքներում գործադրած իրազեկման բարձրացման ջանքերին, դեռևս գրանցվում էին խոլերայի հետ կապված մահվան դեպքեր և բռնկումները տարածվում էին դեպի հարևան գյուղեր:

Որոշ գոտիների համայնքի անդամների հետ անցկացված քննարկումներից պարզ դարձավ, որ որոշ ուղերձներ չափազանց «ծանր» են ըմբռնելու և դրանք անմիջապես կիրառելու համար: Մարդիկ նաև կարծում էին, որ այն տեղեկատվությունը, որ իրենց տրվում է՝ հիգիենայի մշակույթի հետ կապված ուղերձներ են, որոնք իրենք տարիներ շարունակ լսում են: Միակ նորությունը նրանց համար խոլերայի տարածման տեմպերն էին և մահվան դեպքերի աճը, սակայն մարդիկ չէին հասկանում այդ ուղերձների հրատապությունը: Հետագա քննարկումներն առողջապահության համակարգի ներկայացուցիչների և մասնակից կազմակերպությունների հետ ցույց տվեցին, որ համայնքային կրթությունը հիմնված է հիգիենայի ամենօրյա հարցերի ուսուցման վրա, այն դեպքում, երբ խիստ անհրաժեշտ է կրթությունը կազմակերպել խոլերայի բռնկումների հետ կապված արտակարգ իրավիճակների համատեքստում՝ **բարձրացնելով վտանգի ենթարկվելու, խոցելիության և կարողությունների ըմբռնման մակարդակը**, որպեսզի համայնքի անդամները կարողանան ըմբռնել խնդրի կարևորությունը իրենց սեփական տեսանկյունից:

Հիվանդության փոխանցումը նվազեցնելու մեկ այլ օրինակ է թաղման արարողությունը: Արևմտյան Պապուայում, օրինակ, մարդիկ ձեռքով կաշում են մահացածի մարմին, որից հետո մասնակցում հոգեհացի արարողությունը: Մարդիկ երկար ճանապարհ են անցնում թաղմանը մասնակցելու համար, ինչի արդյունքում չվարակված տարածքից կարող են անցնել վարակի գոտի և խոլերայի վարակը բերել իրենց գյուղերն ու տարածել հիվանդությունը: Թաղման արարողությունների ժամանակ կանխարգելիչ միջոցների ձեռնարկման վերաբերյալ գիտելիքները խիստ կարևոր են (այդ թվում նաև Oxfam-ի ուղեցույցներում): Արևմտյան Պապուայում Oxfam-ն աշխատեց տեղի հոգևոր առաջնորդների հետ՝ ձեռքեր լվանալը, հանգուցյալի մարմինն դիպելուց հետո արարողության մաս դարձնելու համար, դրանով իսկ՝ **խթանելով ռիսկի ենթակա բնակչության մասնակցությունը և գործողությունների ձեռնարկումը**: Զանի

որ այս նորամուծությունը չի նսեմացնում արարողության կարևորությունը, կրոնական իշխանություններն արագ ընդունեցին և իրականացրեցին այն: Համայնքի անդամների համար անցկացվեցին ուսումնական դասընթացներ և բաժանվեցին հիգիենայի պարագաներ (օճառ, ջրի վարակազերծման հաբեր և դուլլեր) ձեռքերը լվանալու համար:

Խոլերայի վերահսկման բոլոր ծրագրերը ծախսատար են, այդ պատճառով անհրաժեշտ է ֆինանսական միջոցներ ապահովել ձեռք բերելու կենսական անհրաժեշտության այնպիսի նյութեր, ինչպիսիք են տնային պայմաններում ջրի վարակազերծման հաբերը, խմելու համար նախատեսված ռեհիդրատացիոն լուծույթները և համապատասխան նյութեր ռեհիդրատացիոն կետերին տրամադրելու համար, տպագիր տեղեկատվական և ուսումնական նյութերը, ինչպես նաև հիգիենայի կանոնների պահպանման հիմնական ուղեորների հեռարձակումը ռադիոյով և զանգվածային լրատվության այլ միջոցներով:

Ծրագրում ընդգրկված աշխատակազմը պետք է ա) նախօրոք պատրաստվի խոլերայի սեզոնին և ունենա տեղում իրականացվելիք գործողությունների պլան, բ) համոզված լինի, որ գործողությունների պլանը բազմակողմանի է և ներառում է արձագանքման համար անհրաժեշտ կարողություններ և համապատասխան աշխատակազմ, որն անցել է ուսուցում, ինչպես նաև ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցներ, դ) իրականացնի կրթական միջոցառումներ՝ վարակված տարածքի բնակչությանը զգոն պահելու համար:

Գործիքներ և ռեսուրսներ

Տեղեկատվության և հղումների համար *տես էջ 280. Գործիքներ և ռեսուրսներ*

4.7 Շահերի պաշտպանություն

Չարգացման և մարդասիրական օգնության ոլորտում պաշտպանությունը հակամարտությունների կամ ճգնաժամերի ժամանակ ներառում է մարդու իրավունքների, ինչպես նաև քաղաքացիական անձանց կյանքի, արժանապատվության և անձեռնմխելիության պաշտպանությունը բռնության, ուժի գործադրման և զրկանքների ազդեցությունից: Քանի որ պաշտպանությունը պետության պարտականությունն է՝ որպես միջազգային հումանիտար իրավունքի, մարդու իրավունքների, փախստականների վերաբերյալ միջազգային իրավունքի նորմերը վավերացնող կողմի, ոչ պետական կազմակերպությունների դերը, սովորաբար, իրավունքների իրազեկման բարձրացումն է, իրավունքի սուբյեկտների օժանդակությունն իրենց իրավունքների պաշտպանության հարցում և աջակցությունը լիազորված մարմիններին իրականացնելու այդ իրավունքները, ինչպես նաև մարդասիրական օգնություն ցուցաբերելը այն իրավիճակներում, երբ կարիքները բավարարված չեն:

Առանցքային խնդիրներ

Աղետների ռիսկի համատեքստում մարդկանց իրավունքներին սպառնացող վտանգները կարող են դիտարկվել որպես պետության անկարողություն իր պարտականությունները կատարելու հարցում՝ վտանգի ենթարկվելու աստիճանը սահմանափակելու կամ այն գործոններին անդրադառնալու միջոցով, որոնք մարդկանց առավել խոցելի են դարձնում, օրինակ.

- Եթե դպրոցը կառուցվել է հայտնի բարձր սեյսմիկ վտանգի գոտում առանց համապատասխան ինժեներական նորմերի պահպանման, իշխանությունները կարող են դիտարկվել որպես պատասխանատու և պատասխանատվություն կրել երեխաներին վտանգի ենթարկելու և(կամ) նրանց կրթության և կյանքի իրավունքները չպաշտպանելու համար:
- Եթե ջրհեղեղի ժամանակ խմելու ջուրն աղտոտվում է և իշխանությունները խմելու ջրի այլընտրանքային աղբյուրներ չեն առաջարկում, նրանք կարող են դիտարկվել որպես ջրածին հիվանդությունների նկատմամբ մարդկանց խոցելիության աստիճանի բարձրացման պատասխանատու և պատասխանատվություն կրել իրենց քաղաքացիներին հիմնական ծառայությունների մատուցման գործընթացի խափանման համար:

- Եթե կառավարությունն առանց ռիսկերի գնահատման և ռիսկերի նվազեցման միջոցների ձեռնարկման, թույլ է տալիս ծառահատումներ կատարել այն տարածքներում, որտեղ ուժեղ անձրևներ և սողանքներ են տեղի ունենում, ապա սողանքներ տեղի ունենալու ժամանակ կարող է համարվել, որ կառավարությունը չի կատարել իր քաղաքացիների իրավունքների պաշտպանության պարտականությունը:

Կլիմայի փոփոխության ազդեցությունները կարող են նաև լրացուցիչ վտանգ հանդիսանալ մարդկանց իրավունքների, այդ թվում նաև՝ կյանքի համար, օրինակ.

- Որոշ տարածքներում ջրի հետ կապված լարվածության պատճառով սահմանափակ արոտավայրերին և ջրային ռեսուրսներին տիրելու համար տարբեր խմբերի միջև կարող են տեղի ունենալ բռնության և կանխամտածված գողության դեպքեր, օրինակ՝ անասնագողություն:
- Ծովի մակարդակի բարձրացման պատճառով մերձափնյա տարածքներում ապրող խոցելի բնակչությունը կարող է ստիպված հեռանալ այդ տարածքներից: Ներկայում գոյություն չունի կլիմայի փոփոխությունների հետևանքով արտագաղթող միգրանտների պաշտպանության, անվտանգ վերաբնակեցման, ինտեգրման և շահագործումը կանխելու⁶ իրավական և սոցիալական դաշտ:
- Աղետներից հետո, ինչպիսիք են ջրհեղեղները, ժամանակավոր կացարաններում ապրող կանայք և երեխաները կարող են ենթարկվել ծաղրանքի և բռնությունների:
- Եթե ազգային կամ տեղական իշխանությունները ստիպված են տարհանել վտանգված բնակչությանը, որոշ անհատների կամ անհատների խմբերի համար այդ «որոշումների» ընդունումը կարող է դիտարկվել որպես իրենց իրավունքները չհարգող հարկադրանք:
- Մեղմման⁶ կամ հարմարվողականության մեծածավալ ծրագրերը, ինչպիսիք են կենսավառելիքի արտադրությունը և մեծ ամբարտակների կառուցումը, կարող են հանգեցնել ծրագրի իրականացման հնարավոր տարածքից մարդկանց բռնի տեղահանման կամ վերաբնակեցման: Որոշ հանգամանքներում այդ նպատակներին հասնելու համար կարող է կիրառվել բռնություն և հարկադրանք:

Մարդիկ, որոնց կյանքը և արժանապատվությունը վտանգվում է, սովորաբար ձեռնարկում են ինքնապաշտպանության միջոցներ իրենց անձին կամ կենսապահովման միջոցներին⁶ սպառնացող առավել մեծ վնասը կամ բռնությունները կանխելու համար: Կոլեկտիվ վտանգների դեպքում համատեղ աշխատանքը քաղաքացիական հասարակության կազմակերպություններում կարող է մեծացնել համապատասխան լիազորված անձանց վրա ազդելու մարդկանց կարողությունները՝ իրենց իրավունքները հարգելու և պաշտպանելու համար: Այդ իսկ պատճառով զարգացման և մարդասիրական օգնության ոլորտում ընդգրկված աշխատակիցների դերը՝ անհատների սեփական անձի պաշտպանության կարողությունների ուժեղացումն է, ինչպես նաև լրացուցիչ կարողությունների ստեղծումն ու միջոցների տրամադրումը՝ ուղղված վտանգի ենթակա բնակչության իրավունքների պաշտպանությանը:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները պաշտպանության նպատակով կիրառելու համար	
1. Բարձրացնել վտանգի և կլիմայի փոփոխության համատեքստի ըմբռնման մակարդակը	<ul style="list-style-type: none"> • Օժանդակել վտանգի ենթակա բնակչությանը և տեղական իշխանություններին վտանգները և կլիմայի փոփոխության ազդեցությունները • քարտեզագրելու և փաստաթղթային ձևակերպում տալու համար՝ նպատակ ունենալով ապահովել գործընթացների և արդյունքների բավարար որակ՝ պաշտպանության գործընթացների իրականացման և դատական հայցեր ներկայացնելու համար:
2. Բարձրացնել վտանգի ենթարկվելու, խոցելիության և կարողությունների ըմբռնման մակարդակը	<ul style="list-style-type: none"> • Գնահատել բնակչության ռիսկի ենթարկվելու աստիճանը, խոցելիությունը և կարողությունները կապված վտանգների և կլիմայի փոփոխության ազդեցությունների հետ՝ օգտագործելով մեթոդներ, որոնք հնարավորություն կտան ավելի լավ ըմբռնել պատճառները: • Մասնագետների աջակցությամբ օգտագործել պաշտպանության գնահատումը՝ հասկանալու այն դժվարությունները, որոնց հանդիպում են աղետներից հետո արտակարգ իրավիճակներում հայտնված ժամանակավոր կացարաններում ապրող կանայք և տղամարդիկ:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները պաշտպանության նպատակով կիրառելու համար

<p>3. Ճանաչել իրավունքներն ու պարտականությունները</p>	<ul style="list-style-type: none"> • Ռիսկի ենթակա բնակչության շրջանում բարձրացնել իրազեկումն այն մասին, թե ինչպես են աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերն ազդում իրենց իրավունքների վրա: • Ուսումնական դասընթացներ անցկացնել աշխատակազմի և համայնքի առաջնորդների հետ համապատասխան իրավական դաշտի վերաբերյալ (միջազգային և ազգային), և այն մասին, թե ինչպես կիրառել այն աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության պաշտպանության ռազմավարություններ մշակելու համար:
<p>4. Խթանել ռիսկի ենթակա բնակչության մասնակցությունը և գործողությունների ձեռնարկումը</p>	<ul style="list-style-type: none"> • Օգտագործել մասնակցային մեթոդներ՝ սահմանելու մարդկանց ինքնապաշտպանության ռազմավարությունները և որոշելու յուրաքանչյուր իրավիճակին համապատասխան և ամենաարդյունավետ պաշտպանության գործողությունները: • Նպաստել աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերից պաշտպանվելու հարցերի վերաբերյալ համայնքի առաջնորդների, տեղի իշխանությունների և այլ շահագրգիռ կողմերի միջև երկխոսությանը:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները պաշտպանության նպատակով կիրառելու համար	
<p>5. Խրախուսել համակարգված ներգրավման և փոփոխության գործընթացները</p>	<ul style="list-style-type: none"> • Ներկայացնել վկայություններով հաստատված դեպքեր և նպաստել, որպեսզի ռիսկի ենթակա բնակչության ներկայացուցիչները մասնակցեն պետական իշխանությունների, պաշտպանություն իրականացնելու լիազորություն ունեցող կազմակերպությունների, ինչպիսին է ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակը, և այն մարմինների հետ տեղի ունեցող կարևոր հանդիպումներին, որոնք պատասխանատու են աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համար:
<p>6. Նպաստել տարբեր մակարդակների համատեղ գործունեությանը</p>	<ul style="list-style-type: none"> • Աջակցել, որպեսզի տուժած բնակչությունը աղետների և կլիմայի փոփոխության հետ • կապված պաշտպանության հարցերի վերաբերյալ ճշգրիտ տվյալներ տրամադրի կառավարության տարբեր մակարդակների քաղաքականություն մշակողներին և որոշումներ կայացնողներին: • Հրավիրել պաշտպանության, աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության պատասխանատու պետական իշխանության ներկայացուցիչներին մասնակցել ռիսկի ենթակա բնակչության հետ հանդիպումներին՝ նրանց խնդիրներն ավելի լավ ըմբռնելու համար:
<p>7. Կիրառել և զարգացնել տարբեր աղբյուրներից ստացված գիտելիքներ</p>	<ul style="list-style-type: none"> • Ներդրումներ կատարել պաշտպանության հետ կապված հետազոտական աշխատանքներում, մասնավորապես, կլիմայի փոփոխության հարցերի վերաբերյալ՝ բարձրացնելով շահագրգիռ անձանց շրջանում ըմբռնման և իրազեկման մակարդակը:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները պաշտպանության նպատակով կիրառելու համար

<p>8. Ապահովել ճկունություն և արձագանքման հնարավորություններ</p>	<ul style="list-style-type: none"> • Օժանդակել, որպեսզի ռիսկի ենթակա բնակչության և կառավարության համար մատչելի լինի կլիմայի փոփոխության ազդեցությունների վերաբերյալ լավագույն տեղեկատվությունը և, որպեսզի վերջիններս կարողանան պլանավորել իրենց գործողությունները և շարունակեն համապատասխանաբար հարմարեցնել այդ պլանները:
<p>9. Դիտարկել տարբեր ժամանակահատվածներ</p>	<ul style="list-style-type: none"> • Մշակել զուգահեռ ռազմավարություններ, նպատակ ունենալով ազդել իշխանությունների վրա սեփական քաղաքացիների իրավունքները պաշտպանելու համար՝ համաձայն պաշտպանության իրենց ինքնիշխան պարտականությունների, ինչպես նաև անդրադառնալ պաշտպանության հետ կապված հրատապ կարիքներին՝ ներգրավելով մարդասիրական օգնության դերակատարներին և, անհրաժեշտության դեպքում, ցուցաբերել մարդասիրական օգնություն: • Վերապատրաստել մարդասիրական կազմակերպությունների աշխատակիցներին աղետից հետո ժամանակավոր կացարաններում* ապրող մարդկանց նկատմամբ կիրառվող բռնությունները բացահայտելու համար:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները պաշտպանության նպատակով կիրառելու համար	
10. Չվնասել	<ul style="list-style-type: none"> • Ներգրավել պաշտպանության գծով մասնագետներին խորհրդատվական աշխատանքներում կամ անմիջականորեն ձեռնարկել պաշտպանության գործընթացի գնահատում և համապատասխան գործողություններ: * • Մինչև գործողություններ իրականացնելը կատարել պաշտպանության վերլուծություն: • Միշտ գործել ռիսկի ենթակա բնակչության հետ խորհրդակցելով և, անհրաժեշտության դեպքում, ցանկացած գործողություն իրականացնելուց առաջ ապահովել գաղտնիությունը:

* Դիտարկել այս հարցի վերաբերյալ կազմակերպությունների համապատասխան քաղաքականությունները:

ԴԵՊԵԻ ՌԻՍԻՄԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՄԱՄԲ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԱՎՈՐ Է ԾԱՆՆՉՎԵԼ ՑԵՆԱԲԱՐԱՅԻՆ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ՊԱՏՃԱՌԱԾ ՄԱՅԿԱՆ ԴԵՊԵՐԻ ՀԱՄԱՐ

Քուդաևան և այլք ընդդեմ Ռուսաստանի (2008թ.)

Ռուսաստանի 25,000 բնակչություն ունեցող Տիրևաուզ քաղաքը գտնվում է Էլբրուս լեռան ստորոտում: 1937թ. մեզ հասած փաստերը վկայում են, որ այս տարածքում պարբերաբար տեղի են ունենում ցեխաբարային սողանքներ, որից տուժում է քաղաքը, և այդ պատճառով 1965թ. իշխանությունները քաղաքացիներին պաշտպանելու համար կառուցեցին պաշտպանական կոլեկտոր, իսկ 1999թ.՝ պաշտպանական ամբարտակ:

1999թ. օգոստոսի 20-ին ցեխի հոսքն ուժգին հարված հասցրեց ամբարտակին՝ լրջորեն վնասելով այն: 1999թ. օգոստոսի 30-ին և 2000թ. հուլիսի 7-ին իշխանությունները բազմաթիվ զգուշացումներ ստացան բարձրադիր տարածքներում եղանակային վտանգների վերահսկման համար պատասխանատու պետական գործակալությունից: Ամբարտակի վերակառուցումն այդ փուլում համարվեց ոչ նպատակահարմար, հետևաբար, զոհերից խուսափելու միակ տարբերակը դիտակետերի ստեղծումն էր քաղաքացիներին ցեխաբարային սողանքների վտանգների մասին զգուշացնելու համար, որը սակայն չիրականացվեց: 2000թ. հուլիսի 18-ին ցեխի և տարբեր բեկորների հոսքը հարվածեց քաղաքին և ծածկեց մի շարք բնակելի թաղամասեր: Տիրևաուզ քաղաքում ցեխաբարային հոսքերը շարունակվեցին մինչև 2000թ. հուլիսի 25-ը,

որի արդյունքում զոհվեց ութ մարդ, այդ թվում նաև՝ Վլադիմիր Բուդակը: Բուդակի կինը՝ Խալիմատ Բուդակևան Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն դիմեց Մարդու իրավունքների Եվրոպական դատարան: Մի քանի այլ բնակիչ կյանքի նույնպես վտանգ էր սպառնում:

Դատարանը որոշեց, որ Ռուսաստանի Դաշնությունը խախտել է 2-րդ հոդվածով սահմանված կյանքի իրավունքի պաշտպանության իր պարտականությունը՝ չիրականացնելով հետևյալ գործողությունները. (1) վարչական և իրավական դաշտի ստեղծում՝ մարդու կյանքի և սպառնացող ցանկացած վտանգ կանխելու համար, (2) կյանքի իրավունքի ենթադրյալ խախտման դեպքում համապատասխան իրավական արձագանքի ապահովում: Կոնվենցիայի 2-րդ հոդվածը սահմանում է պետության պարտականություններն իր իրավասության տակ զոհվող մարդկանց կյանքը պաշտպանելու համար և ներառում է նյութաիրավական և ընդացակարգային հարցեր:

Դատարանը հայտարարեց, որ պետությունները պետք է ստեղծեն վարչական և իրավական դաշտ՝ մարդու կյանքի իրավունքին սպառնացող ցանկացած վտանգ կանխելու համար: Այս պարտականության շրջանակը կախված է վտանգի բնույթից և դրա հնարավոր մեղմացման աստիճանից:

Պարտականությունը վերաբերում է անխուսափելի, հստակ սահմանելի բնական վտանգներին և, հատկապես, պարբերաբար կրկնվող աղետներին, որոնք ազդում են մարդու բնակության համար նախատեսված տարածքների վրա:

1999թ. իշխանությունները մի քանի անգամ ահազանգ են ստացան Տիրևաուզում սպասվող սողանքների վտանգի վերաբերյալ, որոնցից մեկում ասվում էր, որ համապատասխան միջոցներ չձեռնարկվելու դեպքում կարող են լինել մեծ թվով զոհեր: Նման կորուստները կանխելու համար աշխատանքների իրականացման ժամկետների հետ կապված անորոշություններ չկային և, չնայած նման հստակ նախազգուշացումների, համապատասխան միջոցառումներ չձեռնարկվեցին Տիրևաուզի բնակիչներին սպառնացող վտանգը կանխելու համար, և «ինչու» հարցին ոչ մի հիմնավորում չտրվեց:

Դատարանը եկավ այն եզրակացության, որ Տիրևաուզ քաղաքում իշխանությունների կողմից պլանավորման և արտակարգ իրավիճակներում օգնություն ցուցաբերելու աշխատանքների խափանման համար հիմնավորումներ չկան: Ավելին, դատարանը պատճառահետևանքային կապ գտավ օգնության բաղաձայնականության իրականացմանը խոչընդոտող վարչական սխալների և Վլադիմիր Բուդակի մահվան, ինչպես նաև մյուս դիմորդների կողմից ստացած վնասվածքների միջև: Այսպիսով, իշխանությունները չկատարեցին վարչական և իրավական կառուցվածք ստեղծելու իրենց պարտականությունը կյանքի իրավունքի նկատմամբ վտանգը կանխելու համար, ինչպես սահմանված է 2-րդ հոդվածի նյութաիրավական դրույթներում:

Դատարանը նշեց, որ վարչական և իրավական դաշտի նորմերը պետք է պատշաճ ձևով իրականացվեն: Այս դաշտը ղեկավարող մարմինները պետք է պարզեն այն հանգամանքները, որոնց առկայության պայմաններում է տեղի ունեցել այդ իրադարձությունը, բացահայտեն կարգավորող համակարգի գործողություններում տեղի ունեցած ցանկացած թերություն, ինչպես նաև՝ այդ իրադարձությունների շղթայում ներգրավված պետական պաշտոնյաներին կամ իշխանության ներկայացուցիչներին: Մահվան ելքով դեպքերում դատական համակարգը պետք է իրականացնի անկախ և անկողմակալ հետաքննություն, որը կապահովի համապատասխան տուգանքների կիրառումն այն անձանց նկատմամբ, ովքեր պատահանատու են իրավական և վարչական կառույցների աշխատանքի խափանման համար:

Դեպքից մեկ շաբաթ անց դատախազությունը քրեական հետաքննություն սկսեց՝ Վլադիմիր Բուդակի մահվան հանգամանքները պարզելու համար:

Սակայն հետաքննությունը սահմանափակվեց միայն մահվան անմիջական պատճառը բացահայտելով, որը շենքի փլուզումն էր: Հետաքննության ընթացքում չդիտարկվեց անվտանգության նորմերի պահպանման և իշխանությունների պատասխանատվության հարցը: Կարևորն այն է, որ այս հարցերը չեն դարձել որևէ հետաքննության առարկա, լինի դա քրեական, վարչական թե տեխնիկական: Մասնավորապես, ոչ մի միջոց չի ձեռնարկվել պաշտպանության կառույցների անբավարար վիճակի, սպասարկման և (կամ) իշխանությունների կողմից զգուշացման համակարգեր չստեղծելու վերաբերյալ զանգվածային լրատվության միջոցների հայտարարությունները և տուժածների բողոքները ստուգելու համար: Այդ պատճառով, հիմք ընդունելով կարգավորման համակարգի գործունեության թերությունները և իրադարձությունների շղթայում ընդգրկված պետական պաշտոնյաների կամ իշխանության ներկայացուցիչների բացահայտման խափանումը, դատարանը եզրակացրեց, որ խախտվել է 2-րդ հոդվածի ընթացակարգային կողմը:

Այս դեպքը ցայտուն օրինակ է, որը ցույց է տալիս, որ ցանկացած պետություն ունի պարտականություններ, որոնք պետք է իրականացվեն իր քաղաքացիների անվտանգությունն ու բարեկեցությունն ապահովելու համար, հակառակ դեպքում, անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել պարզելու, թե ինչպես է տեղի ունեցել պարտականությունների կատարման խափանումը:

Համայնքների և իշխանությունների կողմից իրենց **իրավունքների ու պարտականությունների ճանաչումն** աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերի նվազեցմանն ուղղված ծրագրերի կարևոր տարրերից է:

«Բուդանայի կողմից հարուցված գործի կապակցությամբ կայացված վճիռը ցույց է տալիս, որ պետության այս պարտականությունը (հարգել, պաշտպանել և իրականացնել մարդու կյանքի իրավունքը), հատկապես, կարևոր է պարբերաբար կրկնվող աղետների համատեքստում: Իրավական տեսանկյունից պարբերաբար կրկնվող աղետների կարևորությունը՝ դրանց կանխատեսելի բնույթն է: Սա նշանակում է, որ կառավարությունները տեղյակ են, կամ պետք է տեղյակ լինեին ֆիզիկական վտանգներից բխող ռիսկերի մասին, քանի որ անցյալում բազմիցս ականատես են եղել նման վտանգների: Այսինքն, կառավարությունը տեղյակ է, որ կյանքին սպառնացող վտանգն առկա է և պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկի կանխատեսվող վտանգների համատեքստում մարդու իրավունքները հարգելու, պաշտպանելու և իրականացնելու համար»:

Գործիքներ և ռեսուրսներ

Տեղեկատվության և հղումների համար *տես էջ 282:*

ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՋՐԱՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍԵՐԸ

Գլուխ 5. Նախատեսվում է օժանդակել զարգացման և մարդասիրական օգնության ոլորտում ընդգրկված աշխատակիցներին կիրառել աղետների ռիսկի նվազեցման⁶ և կլիմայի փոփոխության հարմարվողականության⁶ հայեցակարգերը և չորս բնորոշ ծրագրային համատեքստի լավագույն փորձը, որոնք են հակամարտությունը⁶, արագ վերականգնումը⁶, քաղաքաշինությունը և դանդաղ վրա հասնող աղետները⁶: Այն ընդգրկում է.

- *Բացատրություններ.*
 - Յուրաքանչյուր համատեքստի հիմնական բնութագրող հատկանիշները և դրա համապատասխանությունն աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագրերի պլանավորմանը.
 - Աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերի հետ կապված հիմնական խնդիրները, ինչպես նաև կենսապահովման⁶, սննդի անվտանգության, բնական ռեսուրսների կառավարման⁶, WASH համակարգի, կրթության, առողջապահության ու պաշտպանության հիմնական ոլորտները:
- *Ցուցումներ* աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության տարբեր համատեքստերում համալիր մոտեցում ցուցաբերելու համար, ներառյալ 10 սկզբունքների կիրառումը:
- *Դեպքերի ուսումնասիրություններ* կապված աղետների ռիսկի նվազեցման ու կլիմայի փոփոխության հարմարվողականության հետ և յուրաքանչյուր համատեքստի հիմնական բաժինները:
- *Գործիքներ և ռեսուրսներ* հավելվածին կատարված հղումներ՝ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության գործընթացները հիմնական համատեքստերում կիրառելու համար:

5.1 Հակամարտություններ

Հակամարտության բնութագրող հատկանիշները

Չարգացման և մարդասիրական կազմակերպությունների և ծրագրերի աշխատակազմի համար հակամարտությունը այն է, երբ հասարակության տարբեր հատվածներ համաձայնության չեն գալիս իշխանության և (կամ) այլ ռեսուրսների օգտագործման շուրջ և միջոցներ են ձեռնարկում միմյանց հետաքրքրությունների իրականացմանը խոչընդոտելու համար: Հակամարտությունները կարող են տեղի ունենալ տարբեր մակարդակներում՝ տեղականից մինչև ազգային, ինչպես նաև պետական սահմանների շուրջ, կարող են ներգրավել տարբեր պետություններ և գլոբալ կառույցներ: Հակամարտող խմբերի միջև թշնամանքի աստիճանը կարող է տարբեր լինել՝ սկսած ֆիզիկականից և հոգեբանականից մինչև գինված բռնություններ: Որոշ հակամարտություններ արագ զարգանում և արագ էլ լուծվում են, մյուսները կարող են ձգձգվել կամ սառեցվել, կրել քողարկված բնույթ կամ պարբերաբար կրկնվել: Չնայած հակամարտության բազմազանությանը, դրանց մեծ մասը բնութագրվում է հետևյալ հատկանիշներով.

- Վիճարկելի հարցերի հիմքում ընկած են կառուցողական անհավասարությունները՝ կապված հասարակությունում իշխանության և ռեսուրսների բաշխման հետ:
- Հակամարտությունները սովորաբար տեղի են ունենում վատ կամ թույլ կառավարման պայմաններում⁶:
- Դրանք փոփոխական բնույթ ունեն և կարող են սրվել ակտիվ միջամտության արդյունքում:
- Հակամարտությունները հնարավորություն են ստեղծում խոր կառուցողական փոփոխությունների համար:
- Դրանք բացասաբար են անդրադառնում ռիսկի ենթակա բնակչության իրավունքների վրա՝ տեղի տալով զրկանքներին և խոչընդոտելով զարգացումը:
- Հակամարտությունները խաթարում են ռիսկի ենթակա բնակչության և առկա այլ շահագրգիռ կողմերի անվտանգությունը⁶:

Աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության գործընթացները հակամարտության ժամանակ

Հակամարտությունները զուրկ չեն տարբեր աղետների⁶ ազդեցությունից: Իրականում հակամարտությունները⁶ հաճախ

գոյատևում են աղետների ռիսկի հետ միասին հետևյալ պատճառներով:

Հակամարտության արմատական պատճառները երկրի կամ տվյալ տարածքի բնակչության շրջանում իշխանության և ռեսուրսների բաշխման կառուցողական անհավասարություններն են, որոնք հանգեցնում են նաև խոցելիության⁶ և բնական աղետներից մարդկանց վտանգի ենթարկվելու հավանականության: Ավելի լայն իմաստով խոցելիության պայմաններն են, որ ստիպում են սոցիալական որոշ խմբերի զգալի հակամարտության և աղետների ազդեցությունը, ինչպիսիք են տնտեսական աղքատությունը և սոցիալական մեկուսացումը:

Ուժի գործադրմամբ հակամարտությունները կարող են սրել և մշտական դարձնել աղետների ռիսկը: Երբ բռնության գործողությունների կամ բռնության սպառնալիքի արդյունքում մարդիկ կորցնում են իրենց կյանքը, տունը, կենսապահովման միջոցները⁶, նրանց ֆիզիկական և տնտեսական խոցելիության աստիճանն այլ վտանգների նկատմամբ մեծանում է: Միևնույն ժամանակ, հակամարտության պայմաններում կառավարությանը պարտադրվող պահանջները կարող են նվազեցնել այլ հարցերին անդրադառնալու կառավարության կարողությունները⁶ կամ ցանկությունը, օրինակ, ռիսկերի⁶ նվազեցումը, որը կարող է պակաս հրատապ համարվել, քան առկա բռնությունների հետ կապված խնդիրները: Եվ հակառակը, վտանգները կարող են սրել կամ թեժացնել հակամարտությունը, մասնավորապես, կապված սահմանափակ բնական ռեսուրսների հետ: Օրինակ՝ երաշտը, որը նվազեցնում է բերրի հողերի առկայությունը, կարող է հանգեցնել սեփականության և ավանդական իրավունքի հետ կապված անհամաձայնությունների, հետևաբար, ագրեսիայի՝ այդ ռեսուրսներին տիրանալու համար: Հնարավոր է, որ կլիմայի փոփոխության ռիսկը համընկնի հակամարտության վտանգի հետ: Ակնկալվում է, որ կլիմայի գլոբալ փոփոխությունները կարող են սրել ընթացիկ հակամարտությունները և նպաստել նոր հակամարտությունների բռնկմանը՝ մարդկանց կենսապահովման միջոցները ապահովող բնական ռեսուրսների աստիճանական փոփոխմամբ և գոյություն ունեցող վտանգների վրա ներգործության միջոցով: Ակնկալվում է նաև, որ կլիմայի փոփոխության հետ կապված միգրացիոն հոսքերը կարող են հանգեցնել հողի և աշխատանքի այլ ռեսուրսների համար բախումների այն տարածքներում և քաղաքներում, որոնք պատրաստ չեն բնակչության արագ աճի տեմպերին:

Այդ պատճառով հակամարտության պայմաններում աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերի նվազեցմանն ուղղված ռազմավարությունների և ծրագրերի իրականացումը խիստ տեղին է, սակայն դրանք պետք է այնպես պլանավորվել, որպեսզի լինեն զգայուն հակամարտության զարգացումների հանդեպ, հակառակ դեպքում՝ դրանք տուժած բնակչության համար կարող են ստեղծել լրացուցիչ կամ բարդ ռիսկեր: Աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության

հարմարվողականության գործընթացում հակամարտությունների նկատմամբ զգայուն մոտեցումը պահանջում է առաջարկվող ծրագրի և համատեքստի փոխներգործության հստակ ըմբռնում, որպեսզի ծրագրի շրջանակներում իրականացվող բոլոր գործողությունները սահմանափակեն ցանկացած ոչ կանխամտածված, սակայն վնասակար ազդեցություն հակամարտության վրա:

Թեև սա հիմնական նպատակը չէ. աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերի նվազեցմանն ուղղված ծրագրերը կարող են նպաստել նաև հակամարտությունների մեղմմանը, համախմբելով հիմնական մասնակիցներին և խմբերին՝ ձեռք բերելու համաձայնություն այն հիմնական հարցերի շուրջ, որոնց լուծմամբ կբարելավվի նրանց կյանքը, կենսապահովման միջոցները և բարեկեցությունը ու կստեղծվի խաղաղության հասնելու հնարավորություն:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները հակամարտության պայմաններում կիրառելու համար	
<p>1. Բարձրագնել վտանգի և կլիմայի փոփոխության համատեքստի ըմբռնման մակարդակը</p>	<ul style="list-style-type: none"> • Հակամարտության պայմաններում գնահատումներ կատարելու և ծրագրեր մշակելու ժամանակ հստակորեն սահմանել կապ հակամարտության և աղետների ու կլիմայի փոփոխության ռիսկերի նվազեցման միջև, ինչը կօգնի կատարել առավել բազմակողմանի վերլուծություն և կկանխի տարանջատված ծրագրերի մշակումը: • Դիտարկել որոշ ռեսուրսների, ասենք հողի կամ ջրի ազդեցությունը հակամարտության ինդիկսների վրա: Օրինակ, գետերը, որ հոսում են տարբեր երկրների սահմաններով տարբեր շահագրգիռ մասնակիցների կողմից օգտագործվում են տարբեր նպատակներով:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները հակամարտության պայմաններում կիրառելու համար

<p>2. Բարձրացնել վտանգի ենթարկվելու, խոցելիության և կարողությունների ըմբռնման մակարդակը</p>	<ul style="list-style-type: none"> • Օգտագործել կարողությունների և խոցելիության մասնակցային գնահատումը⁶ (PCVA) հակամարտության և խաղաղության հետ կապված վտանգի ենթարկվելու, խոցելիության և կարողությունների, ինչպես նաև աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերի հետ կապված վերլուծություններ կատարելու համար: Ռիսկի նմանատիպ գործոնների հայտնաբերման ժամանակ խրախուսել վտանգի ենթակա և տուժած բնակչությանը փնտրելու այնպիսի տնտեսական միջոցներ, որոնք կունենան նաև դրական բնապահպանական ազդեցություն:
<p>3. Ճանաչել իրավունքներն ու պարտականությունները</p>	<ul style="list-style-type: none"> • Խրախուսել և աջակցել շահագրգիռ կողմերին վերլուծել ռիսկի պատճառները, հետևանքները և պատասխանատվությունը՝ կիրառելով համապատասխան մոտեցումներ: • Նպաստել այնպիսի օրենսդրության մշակման ու կիրարկման գործընթացին, որը կվերաբերի հակամարտության խնդիրներին և կնպաստի աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերի նվազեցմանը, ինչպիսիք են բնական ռեսուրսների օգտագործումը, հողի սեփականությունը և պետական միջոցների բաշխումը: • Պետական այն հաստատությունների համար, որոնք քաղաքական կամք են ցուցաբերում ստեղծելու աղետների և կլիմայի փոփոխությանը դիմակայելու կարողություններ⁶ հասանելի դարձնել նյութական, ֆինանսական և տեխնիկական օժանդակությունը:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները հակամարտության պայմաններում կիրառելու համար

<p>4. Խրախուսել ռիսկի ենթակա բնակչության մասնակցությունը և գործունեությունը</p>	<ul style="list-style-type: none"> • Օգտագործել աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերի հետ կապված քննարկումները որպես տարբեր սոցիալական տնտեսական և տեղաբնիկ ժողովրդի խմբերին համախմբելու միջոց: Տեղեկատվության մեկնաբանման և մտքերի փոխանակության հետ կապված ուսուցումը կարևոր գործիք է խաղաղություն ապահովելու, ինչպես նաև աղետների և կլիմայի փոփոխությանը դիմակայելու կարողություններ ստեղծելու համար: • Մինչև ռեսուրսների բաշխումը կամ ծրագրերի մշակումը, քննարկումներ անցկացնել բոլոր շահագրգիռ կողմերի հետ (այդ թվում նաև՝ ընդհանրացման ռիսկերի հետ) և ապահովել որոշումների կայացման թափանցիկությունը: Երաշխավորելով անվտանգություն՝ նպաստել, որպեսզի բոլոր դերակատարները ցուցաբերեն նույն գործելակերպը:
<p>5 Խրախուսել համակարգված ներգրավման և փոփոխության գործընթացները</p>	<ul style="list-style-type: none"> • Մշակել ծրագրեր, որոնք անդրադառնում են հակամարտությունների, աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերի վրա ազդեցություն ունեցող խնդիրներին, մասնավորապես՝ արդյունավետ ղեկավարմանը, բնական ռեսուրսների կառավարմանը և կենսաապահովման միջոցների անվտանգությանը: • Պաշտպանելով շահերը՝ նպաստել, որպեսզի դոնորներն օժանդակեն ռիսկերի համալիր մոտեցում ցուցաբերող բազմվարկային ծրագրերի իրականացմանը:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները հակամարտության պայմաններում կիրառելու համար

<p>6. Նպաստել տարբեր մակարդակների համատեղ գործունեության խթանմանը</p>	<ul style="list-style-type: none"> • Համապատասխան գործողություններում ներառել հաստատութենական հզորացման բաղադրիչներ՝ հաշվետու կառավարման համակարգերի զարգացմանը նպաստելու համար: • Խրախուսել ազգային և տարածքային մակարդակի կառավարման համակարգի ներկայացուցիչներին՝ մասնակցելու այն ծրագրերին, որոնք հակամարտության գոտիներում ստեղծում են աղետներին և կլիմայական ռիսկերին դիմակայելու կարողություններ:
<p>7. Կիրառել և զարգացնել տարբեր աղբյուրներից ստացված գիտելիքներ</p>	<ul style="list-style-type: none"> • Փաստաթղթային ձևակերպում տալ ծրագրից քաղված դասերին՝ աղետների ու կլիմայի փոփոխության ռիսկերի և հակամարտության փոխներգործության ընկալման բացերը լրացնելու համար: • Բացահայտել և ուժեղացնել բանակցությունների վարման և հակամարտության կարգավորման ընդունված մեթոդները, որոնք կարող են արդյունավետ լինել աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության վերաբերյալ որոշումներ կայացնելու համար:
<p>8. Ապահովել ճկունություն և արձագանքման հնարավորություն</p>	<ul style="list-style-type: none"> • Աջակցել հակամարտությունների վաղ ազդարարման նշանների և արտակարգ իրավիճակների գործողությունների պլանի⁶ մշակմանը՝ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագրերը համապատասխանաբար վերանայելու համար: • Վտանգի ենթակա բնակչության և այլ շահագրգիռ կողմերի շրջանում պարբերաբար կատարել վերլուծություններ կլիմայի փոփոխության և հակամարտության զարգացումների վրա ունեցած ազդեցության վերաբերյալ, սահմանել ծագող խնդիրներին անդրադառնալու եղանակները:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները հակամարտության պայմաններում կիրառելու համար	
<p>9. Դիտարկել տարբեր ժամանակահատվածներ</p>	<ul style="list-style-type: none"> • Վտանգի ենթակա բնակչության շրջանում աշխատանքներ իրականացնել հայտնի վտանգներին դիմակայելու պատրաստվածության⁶ միջոցների բացահայտման համար, որոնք կարող են սրել կամ նոր հակամարտություններ առաջացնել, ինչպես նաև, որտեղ հնարավոր է, խրախուսել երկխոսությունը տարբեր հետաքրքրություններ ունեցող խմբերի միջև՝ կապված անկանխատեսելի հանգամանքների հետ, օրինակ՝ տարիանումն ու միգրացիայի երթուղիները, ժամանակավոր կացարանները և ջրի մատակարարման կետերի հասանելիությունը: • Համագործակցել խաղաղություն հաստատող նախաձեռնություններում ընդգրկված հաստատությունների և կազմակերպությունների հետ, որպեսզի վերջիններս հաշվի առնեն աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերը: • Խաղաղություն հաստատելու գործընթացներում և հակամարտություններից հետո նպաստել վերականգնողական և վերաինտեգրման ծրագրերի իրականացմանը՝ հաշվի առնելով հողի երկարաժամկետ կենսունակության ու բնական ռեսուրսների գործոնը, զբաղվածության հնարավորությունները:
<p>10. Չվնասել</p>	<ul style="list-style-type: none"> • Վերապատրաստման դասընթացներ անցկացնել աշխատակազմի համար (ՀԿ-ներ և պետական հաստատություններ)՝ հակամարտության նկատմամբ զգայուն մոտեցում ցուցաբերելու խնդիրների և «Մի վնասիր» ձեռնարկի շուրջ. <i>Հակամարտության ժամանակ ցուցաբերված օգնության ազդեցության վերլուծություն:</i> • <i>Տես էջ 282. Գործիքներ և ռեսուրսներ:</i>

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները հակամարտության պայմաններում կիրառելու համար

<p>10. Չվնասել</p>	<ul style="list-style-type: none"> • Որևէ ծրագիր մշակելուց առաջ և հետո վերլուծել հակամարտության համատեքստը և վերահսկել ցանկացած փոփոխություն, որը կարող է վկայել, որ ծրագիրը նպաստում է հակամարտությանը: • Համագործակցել համայնքային այն կազմակերպությունների և ցանցերի հետ, որոնք հակամարտության գոտիներում աշխատելու փորձ և վստահություն են ձեռք բերել:
--------------------	---



ԴԵՊԻ ՌԻՍԻՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ. ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ ՄԵՂՄՈՒՄ ԵՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ ԶՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿՈՎՎԱՐՄԱՆ ՄԻՋՈՅՈՎ

Նիզեր, Mercy Corps կազմակերպություն

Նիզերի Թիլաբերի տարածաշրջանի Ֆիլինգե բաղաթը վերջին 20 տարիների ընթացքում ենթարկվում է կլիմայի փոփոխության ազդեցությանը անձրևային տեղումների կրճատման և ջերմաստիճանի բարձրացման հետևանքով պարբերաբար կրկնվող երաշտների պատճառով: Սովորաբար, անձրևային սեզոնում, մեկ կամ երկու ժամվա ընթացքում տեղում են ուժեղ անձրևներ, սակայն հողի չափազանց չորության պատճառով ջրերն ուղղակի հոսում են՝ էրոզիայի ենթարկելով հողի վերին շերտը, հատկապես, բուսականությունից զուրկ տարածքներում: Տեղատարափ անձրևների ժամանակ գետը հաճախ դուրս է գալիս ափերից և փոխում գյուղատնտեսական լանդշաֆտը:

Չորս անձրևային ամիսների ընթացքում Ֆիլինգեի համայնքները կախված են անձրևաջրերի հավաքման համակարգերից, սակայն վերջին ժամանակներում երկար տևող երաշտների պատճառով ջուրը պատշաճ ձևով չի հավաքվում ու պահեստավորվում: Երաշտի հետևանքով կրճատվում են կենդանիների (այծ, կով, ոչխար) արածելու հնարավորությունները և ոչնչացվում գոյություն ունեցող ջրաղբյուրները: Շատ տղամարդ ֆերմերներ ստիպված ժամանակավորապես մեկնում են քաղաք՝ աշխատանք գտնելու ակնկալիքով, իսկ կանայք և երեխաները մնում են տանը՝ անասուններին խնամելու համար: Որոշ անասնապահներ մնում են համայնքում և մշակում փոքր գյուղատնտեսական հողակտորներ, իսկ մյուսները հեռանում են՝ նոր արտավայրեր գտնելու համար: Սուղ բնական ռեսուրսները հաճախ ֆերմերների և(կամ) անասնապահների միջև ընդհարումների պատճառ են դառնում՝ ջրաղբյուրներ մուտք ունենալու և հազվադեպ հանդիպող արտավայրերին տիրելու համար:

«Պաստորալը» Ֆիլինգե բաղաթում Mercy Corps կազմակերպության կողմից իրականացվող հակամարտության մեղմացման⁶ և բնական ռեսուրսների կառավարման⁶ ծրագիր է, որի շրջանակներում ստեղծվել է տեղի

հակամարտության կառավարման համակարգ՝ կապ հաստատելով տեղական իշխանության ներկայացուցիչների հետ: Ծրագիրը, որը ֆինանսավորվում էր ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և ԱՄՆ-ի Արտասահմանում տեղի ունեցած աղետների զոհերին ցուցաբերվող օգնության գրասենյակի (USAID/OFDA) կողմից, համագործակցում է տեղական իշխանության երեք մակարդակների հետ՝ 33 համայնքներում և Ֆիլինգե քաղաքում համապատասխան կառույցներ ստեղծելու համար՝ օժանդակելով բնական ռեսուրսների կառավարմանը, հակամարտության ռիսկի նվազեցմանը, ինչպես նաև 60,000 մարդու պատկանող անասուններին պաշտպանելու համար, որոնց կենսապահովումը կախված է գյուղատնտեսությունից⁶ և անասնապահությունից: Ծրագիրն օժանդակել է նաև հակամարտության կարգավորման խմբի ստեղծմանը, որը բաղկացած էր համայնքի անդամ ֆերմերներից և անասնապահներից, որոնց համար կազմակերպվել են դասընթացներ՝ բողոքները քննարկելու և դրանց համապատասխան արձագանք տալու համար: Ֆերմերներից և անասնապահներից բաղկացած համայնքային խմբի ստեղծումը և նրանց ու տեղական իշխանությունների միջև կապի հաստատումն օգնեց կանխել հակամարտությունը մրցակցող խմբերի միջև, քանի որ վերջիններս կարողացան մշակել ջրօգտագործման կանոններ և հասկանալ ընդհանուր կարիքներն ու հողի կառավարման բարելավման անհրաժեշտությունը: Համայնքն ընդգրկվեց ընդհանուր ունեցվածքը պաշտպանելու գործընթացում:

Այս խմբում ստեղծվեց նաև ջրային ռեսուրսների կարգավորման և կառավարման խորհուրդ, որի նպատակը կայունության ապահովումն ու հակամարտության մեղմացումն էր, ինչպես նաև կլիմայի փոփոխության և բնական ռեսուրսների կառավարման հետ կապված կրթական բաղադրիչի ընդգրկումը:

Նախաձեռնության հաջողությունը պայմանավորված էր ծրագրի ամեն մի փուլում շահագրգիռ բոլոր **կողմերի ներգրավման միջոցով փոփոխությունների խթանմամբ**, գյուղատնտեսության և անասնապահության հեռանկարների նկատմամբ ուշադրությամբ և «**մի վնասիր**» մոտեցման կիրառմամբ հակամարտությունները բնական ռեսուրսների կառավարման միջոցով նվազեցնելու համար: Ծրագրի մեկ տարի գործունեության գնահատումը ցույց տվեց, որ իրավիճակը բարելավվում է:

Գործիքներ և ռեսուրսներ

Տեղեկատվության և հղումների համար *տես էջ 282. Գործիքներ և ռեսուրսներ*

5.2 Արագ վերականգնում մարդասիրական ճգնաժամից

Արագ վերականգնման համատեքստի բնութագրող հատկանիշները

Արագ վերականգնումը⁶ տերմին է, որն օգտագործվում է զարգացման և մարդասիրական օգնության ոլորտի աշխատակիցների կողմից ակտիվների և ծառայությունների վերականգնման գործընթացը ներկայացնելու համար, որը աղետից հետո, որքան հնարավոր է արագ, ապահովում է մարդկանց կյանքի, ներառյալ տների, կենսաապահովման միջոցների, առողջության և կրթության կայունությունը: Այն իրականացվում է արտակարգ իրավիճակների փուլում և անցնում դեպի երկարաժամկետ վերականգնման և վերակառուցման փուլեր:

«Ավելի լավ կառուցելու»⁶ հայեցակարգը թեև դժվար է, սակայն, ընդհանուր առմամբ, խիստ կարևորվում է արագ վերականգնման փուլում՝ հանրության դիմակայման կարողություններն ապագա վտանգների նկատմամբ բարելավելու և այլ փոփոխություններին, այդ թվում նաև կլիմայի փոփոխությանը դիմակայելու համար:

Այն համատեքստերը, երբ սովորաբար իրականացվում է արագ վերականգնման գործընթացները սովորաբար հետևյալն են՝

- անհապաղ ժամանակավոր օգնությունն ցուցաբերելու անհրաժեշտությունը, որը պայմանավորված է դիմակայման սեփական կարողությունների վերականգնման մտահոգությամբ,
- կառավարումը պետական և տեղական իշխանությունների կողմից, որոնց կարողությունները⁶ կարող են թուլանալ աղետների անմիջական ազդեցության արդյունքում,
- անկայուն կամ տեսականորեն անկայուն լինելը տնտեսական, սոցիալական և քաղաքական առումով:

Այդ համատեքստերը կարող են.

- ունենալ բազմաթիվ մարդասիրական կազմակերպություններ գործող աշխատակազմով, որոնք տիրապետում են տվյալ տարածքի և տուժած բնակչության վերաբերյալ տեղեկատվության,
- առաջացնել զանգվածային լրատվամիջոցների հետաքրքրությունը և նպաստել մարդասիրական օգնության ցուցաբերմանը:

Աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության գործընթացներն արագ վերականգնման համատեքստում

Այս համատեքստում աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության գործընթացները ծրագրի մշակման կարևոր գործոններից են, քանի որ տուժած բնակչության վերականգնման կարիքներին անդրադառնալը վտանգածին միջավայրում, որը նույնպես կարող է տուժել կլիմայի փոփոխության արդյունքում, պետք է լինի կայուն և երկարաժամկետ:

Արագ վերականգնման համատեքստը բացառիկ հնարավորություն է ստեղծում աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համար հետևյալ պատճառներով.

- աղետի արդյունքում նախաաղետային իրավիճակի թերություններն ու թուլություններն ակնհայտ են,
- ստեղծվում է գործելու քաղաքական ու հոգեբանական խթաններ և պարարտ հող բացառիկ բարեփոխումների համար,
- կարող են ի հայտ գալ լրացուցիչ ռեսուրսներ, որոնք, խելամիտ կառավարման դեպքում, կարող են ուղղվել հիմնական ռիսկային գործոնների նվազեցմանը,
- աղետից տուժած մարդիկ հակված են ընդունելու այն միջամտությունները, որոնք նպատակ ունեն նվազեցնել վերջիններիս խոցելիությունը⁶ նմանատիպ վտանգների նկատմամբ,
- անապահով ենթակառուցվածքների ոչնչացումը կարող է դիմակայուն ենթակառուցվածքների ստեղծման հնարավորություն ընձեռել:

Սակայն արագ վերականգնման համատեքստը կարող է նաև տարբեր դժվարություններ ստեղծել աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համար, քանի որ բոլոր դերակատարները ստիպված են մեծ ուժով արձագանքել անհապաղ կարիքներին: Որոշ դեպքերում երկարաժամկետ նպատակները կարող են չդիտարկվել արտակարգ իրավիճակների համար հատկացված միջոցների շրջանակում: Հարկ է նշել նաև, որ խոցելիության խորքային պատճառներն աղետից հետո դեռևս պահպանվում են, սակայն անհրաժեշտ է դրանց անդրադառնալ՝ վերականգնման կայունությունն ապահովելու համար:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները արագ վերականգնման համատեքստում կիրառելու համար

<p>1. Բարձրացնել վտանգի և կլիմայի փոփոխության համատեքստի ըմբռնման մակարդակը</p>	<ul style="list-style-type: none"> • Բարձրացնել ռիսկերի իրազեկման մակարդակը վերջին աղետից հետո՝ կլիմայի փոփոխության բոլոր համապատասխան վտանգների ու ազդեցությունների բարոնեզագրում նախաձեռնելու, կամ եղածները թարմացնելու համար (օգտագործելով առկա կանխատեսումները): • Բարձրացնել իրազեկման մակարդակը վերականգնման և վերակառուցման ծրագրերի իրականացման անհրաժեշտության վերաբերյալ՝ հիմնվելով ներկա և ապագա ռիսկերի ողջամիտ գնահատման վրա:
<p>2. Բարձրացնել վտանգի ենթարկվելու, խոցելիության և կարողությունների ըմբռնման մակարդակը</p>	<ul style="list-style-type: none"> • Ուսումնասիրել մինչև աղետները տեղերում գոյություն ունեցող ռիսկերի պաշտոնական բարոնեզները, արտակարգ իրավիճակների գործողությունների և արտակարգ իրավիճակների կառավարման պլանները՝ տվյալներ ստանալու համար, ինչը հնարավորություն կտա ծրագրի շրջանակներում թիրախավորել խոցելի խմբերին, ինչպես նաև ստեղծել հաղթահարման մեխանիզմներ և կարողություններ: • Օժանդակել հետադետային գնահատման մեթոդների կիրառմանը, որոնք ի լրումն մարդասիրական օգնության կարիքների, բացահայտում են նաև վտանգի ենթարկվելու աստիճանը, խոցելիությունը և կարողությունները դիմակայման կարողություններ ստեղծելու համար: • Համագործակցել զանգվածային լրատվամիջոցների հետ օգնության կարիքների, վերականգնման և վերակառուցման ռազմավարությունների վերաբերյալ հանրային իրազեկում ապահովելու համար՝ վտանգի ենթարկվելու, խոցելիության աստիճանը նվազեցնելու և դիմակայման կարողություններ ստեղծելու նպատակով:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները արագ վերականգնման համատեքստում կիրառելու համար

<p>3. Ճանաչել իրավունքներն ու պարտականությունները</p>	<ul style="list-style-type: none"> • Խթանել աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերի ըմբռնումը տուժած բնակչության շրջանում, որպեսզի վերջիններս կարողանան ազդել կառավարությունների և այլ դերակատարների վրա՝ հաշվետու լինել վերականգնման և վերակառուցման գործընթացների, ինչպես նաև հետագա զարգացման ծրագրերի համար: • Բոլոր շահագրգիռ կողմերի⁶ շրջանում բարձրացնել իրազեկման մակարդակը համապատասխան ազգային օրենքների վերաբերյալ (աղետների կառավարում, աղետների ռիսկի նվազեցում, կլիմայի փոփոխության հարմարվողականություն, հողօգտագործման իրավունք, հողօգտագործման պլանավորում, շինարարության նորմեր ու կանոններ և այլն) և, անհրաժեշտության դեպքում, նպաստել նոր /լրամշակված օրենքների ստեղծմանը:
<p>4. Խրախուսել ռիսկի ենթակա բնակչության մասնակցությունը և գործունեությունը</p>	<ul style="list-style-type: none"> • Խթանել տեղի առաջնորդների, համայնքի ներկայացուցիչների և համայնքում գործունեություն ծավալող կազմակերպությունների ընդգրկումը հետադետային գնահատման և օգնության ու վերականգնման վերաբերյալ որոշումների կայացման գործընթացներում և օժանդակություն ցուցաբերել իրենց համայնքների կարիքները բացահայտելու և ներկայացնելու համար: • Տուժած բնակչությանը տեղեկատվություն տրամադրել ռիսկերի և ռիսկերի նվազեցման տարբերակների մասին՝ հնարավորություն տալով վերջիններիս վերականգնման գործընթացում ընտրել այն տարբերակը, որը կբարձրացնի նրանց դիմակայման մակարդակը:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները արագ վերականգնման համատեքստում կիրառելու համար

<p>5 Խրախուսել համակարգված ներգրավման և փոփոխության գործընթացները</p>	<ul style="list-style-type: none"> • Նպաստել աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության դիտարկումները ընդգրկելու Յետադետային կարիքների գնահատումներում (PDNA), որոնք իրականացվում են ՅԿ-ների, կառավարության և ՄԱԿ-ի կողմից: • Նպաստել, որպեսզի վերականգնման և վերակառուցման ծրագրերն անդրադառնան խոցելիության պայմաններին և պատճառներին, այդ թվում նաև՝ այնպիսի կառուցողական խնդիրներին, ինչպիսիք են հողօգտագործման իրավունքը, աղբատնայությունն ու բացառումը:
<p>6 Նպաստել տարբեր մակարդակների համատեղ գործունեության խթանմանը</p>	<ul style="list-style-type: none"> • Բարձրացնել իրազեկման մակարդակն աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության հարցերի վերաբերյալ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (UNDP) Արագ վերականգնման և այլ ոլորտային կլաստերներում: • Արագ վերականգնման շրջանում փոխանակել աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության լավագույն փորձը տեղական և ազգային մակարդակի այլ դերակատարների հետ:
<p>7. Կիրառել և զարգացնել տարբեր աղբյուրներից ստացված գիտելիքներ</p>	<ul style="list-style-type: none"> • Օժանդակել արագ վերականգնման ոլորտային մոդելների հետազոտությանը, որն ընդգրկում է ռիսկերի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության բաղադրիչներ:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները արագ վերականգնման համատեքստում կիրառելու համար	
<p>8. Ապահովել ճկունություն և արձագանքման հնարավորություն</p>	<ul style="list-style-type: none"> • Նպաստել վտանգների և կլիմայի փոփոխության նկատմամբ դիմակայուն շինարարական մեթոդների, նյութերի և հողօգտագործման պլանավորման կիրառմանը: • Հետագա աղետներին դիմակայելու նպատակով հիմնվել դիմակայման կարողությունների նկատմամբ հետաքրքրության վրա՝ ստեղծելով/ հզորացնելով (բոլոր մակարդակներում) բազմաթիվ շահագրգիռ կողմեր ընդգրկող պլատֆորմներ՝ աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերը հսկելու համար:
<p>9. Դիտարկել տարբեր ժամանակահատվածներ</p>	<ul style="list-style-type: none"> • Օգտագործել առկա ճգնաժամի նկատմամբ հետաքրքրությունը երկարաժամկետ ֆինանսական միջոցներ հայթայթելու համար՝ աղետների և կլիմայի փոփոխության դիմակայման կարողությունների ստեղծման նպատակով գործունեություն ծավալելու համար՝ ի լրումն կարճաժամկետ օգնության ծրագրերի: • Կիրառել աջակցման այնպիսի միջոցներ, ինչպիսիք են կանխիկ դրամաշնորհները և համայնքային խոհանոցների տրամադրումը՝ նպատակ ունենալով նվազեցնել աղետից տուժած բնակչության կողմից հաղթահարման բացասական մեխանիզմների օգտագործումը (օրինակ՝ ունեցվածքի վաճառքը), որը հետագայում կխորացնի նրանց խոցելիության աստիճանը:
<p>10. Զվնասել</p>	<ul style="list-style-type: none"> • Խրախուսել բոլոր դերակատարներին վերլուծել առաջարկվող միջամտություններն աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերի (ներկա և ապագա) վրա ունեցած հնարավոր ազդեցության տեսանկյունից և վերլուծության արդյունքները մատչելի դարձնել տուժած և ռիսկի ենթակա բնակչության համար:

5.1 Աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության օրինակներ արագ վերականգնման ծրագրերում

Կացարան

- Տրամադրել աղետների նկատմամբ դիմակայուն կյանքեր և ապահովել համապատասխան նախագծերի մշակում՝ ժամանակավոր կացարաններ ստեղծելու համար:
- Հնարավորության դեպքում օգտագործել տեղերում առկա կյանքերը, եթե վերջիններս համապատասխանում են պահանջվող շինարարական չափանիշներին:
- Վերապատրաստել տեղացի պատշարներին և շինարարական աշխատանքներում ընդգրկված բանվորներին՝ աղետների նկատմամբ դիմակայուն շինարարություն իրականացնելու համար:
- Իրականացնել աղետների նկատմամբ դիմակայուն նախագծերի հանրային ցուցադրումներ՝ օգտագործելով տեղում առկա կյանքերը:
- Իրականացնել շինարարության պետականորեն սահմանված նորմերի և կանոնների վերանայման գործընթացներ:
- Նախաձեռնել ռիսկերի քարտեզագրում՝ վերադարձի, վերակառուցման և վերաբաշխման գործընթացներն ուղղորդելու համար:
- Իրականացնել շրջակա միջավայրի գնահատում՝ վերակառուցման աշխատանքներ իրականացնելու և շինարարական կյանքեր ընտրելու համար:

Մենդի անվտանգություն

- Օգտագործել «վճար աշխատանքի դիմաց» մոտեցումը տուժած բնակչությանը օգնելու սննդամթերքի պակասը լրացնելու համար, որից կօգտվի նաև ողջ համայնքը՝ մաքրման և վտանգների մեղմման գործողությունների միջոցով:
- Տուժած բնակչությանը տրամադրել կանխիկ դրամաշնորհներ կարճաժամկետ կարիքները (սնունդ, պարտքի վերադարձ, կրթության հետ կապված ծախսեր) հոգալու, հիմնական միջոցների վաճառքը կանխելու համար, ինչը կարևոր է հետագայում սննդի անվտանգության ապահովման համար:
- Տրամադրել որակյալ սերմերի տեսականի, ինչը կօգնի ապահովել սննդի անվտանգությունը կլիմայի փոփոխության ապագա սցենարների ժամանակ: Տեղերում առկա սերմերի տրամադրման համար խորհուրդ է տրվում ներմուծել կտրոնների համակարգ և կազմակերպել տոնավաճառներ՝ հնարավորություն տալով ֆերմերներին ընտրել իրենց ցանկացած սերմերը:

5.1 Աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության օրինակներ արագ վերականգնման ծրագրերում (շարունակություն)

Կենսապահովում

- Տրամադրել կանխիկ դրամաշնորհներ՝ կենսունակ և դիմակայուն կենսապահովման միջոցները վերականգնելու, ինչպես նաև կենսապահովման ռազմավարությունները բազմազանեցնելու համար ռիսկերը բաշխելու նպատակով:
- Գյուղական վայրերում առաջարկել խրախուսման միջոցներ՝ կլիմայի փոփոխության հարմարվողականության և աղետների նկատմամբ դիմակայուն գյուղատնտեսության փորձի ներդրման համար, օրինակ՝ տրամադրել չորադիմացկուն սերմեր, ինչը պետք է ուղեկցվի աջակցման համակարգով՝ ցանկացած վնաս փոխհատուցելու համար:
- Ըստ նպատակահարմարության նպաստել միկրոֆինանսավորման, խնայողությունների, միկրոապահովագրության ծառայությունների մատչելիության ապահովմանը:
- Կիրառել «վճար աշխատանքի դիմաց» մոտեցումը՝ այլ ոլորտներում արագ վերականգնման գործողություններ իրականացնելու համար:
- Լրացուցիչ օրինակների համար տեսն *4.2 բաժինը*. *Կենսապահովում:*

Կառավարում և հաստատութենական հզորացում

- Ավարտին հասցնել և տարածել Յետադետային կարիքների գնահատումը (PDNA):
- Օժանդակել շինարարության նորմերի և կանոնների մշակմանը / կիրառմանը:
- Նախաձեռնել ռիսկերի արագ քարտեզագրում՝ բոլոր ոլորտներում արագ որոշումներ կայացնելու համար:
- Իրականացնել արտակարգ իրավիճակներում գործողությունների պլանավորման գործընթացներ:
- Ստեղծել վաղ ազդարարման համակարգեր և կազմակերպել ուսուցում այդ համակարգերից օգտվողների համար:
- Պետական ծառայողների համար մշակել արտակարգ իրավիճակներում գործելու վարժանքներ:
- Նպաստել, որպեսզի տեղական կառավարման մարմինների բյուջեում միջոցներ հատկացվեն աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության գործողությունների համար:

Կրթություն

- Դպրոցների ժամանակավոր շենքերն ապահովել դիմակայուն նյութերով և համապատասխան նախագծերով:
- Ուսանողների և ուսուցիչների համար մշակել արտակարգ իրավիճակներում գործելու վարժանքներ:
- Ուսուցանել հանրային շենքերի անվտանգ շինարարության նորմերը (դպրոցներ և հիվանդանոցներ):

Լրացուցիչ օրինակների համար տեսն *4.5 բաժինը*. *Կրթություն:*

5.1 Աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության օրինակներ արագ վերականգնման ծրագրերում (շարունակություն)

Ջրամատակարարում, ջրահեռացում, հիգիենա (WASH)

- Վերանորոգել ջրամատակարարման վնասված ցանցերը՝ օգտագործելով վտանգների և սթրեսային վիճակների նկատմամբ դիմակայուն նյութեր և նախագծեր:
- Մշակել և հզորացնել տեղի ջրային տնտեսությունների ջրաղբյուրների սպասարկման և կառավարման կարողությունները:
- Ստեղծել ռիսկերի նկատմամբ զգայուն համայնքաին ջրամատակարարման համակարգեր:
- Բաշխել տնային տնտեսությունների համար նախատեսված ջրային ֆիլտրեր և բացատրել, թե ինչպես դրանք կիրառել:

ԴԵՊԻ ՌԻՍԻՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԶՐԴԵՂԵՂՆԵՐԻՆ ԵՎ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱԲԵՐՈՒՄ ՆԵՐՔԻՆ ՏԵՐԱՋԱՆՎԱԾՆԵՐԻ ՃԱՄԱՐՈՒՄ

Սուդան, Catholic Relief Services կազմակերպություն

2007թ. տեղատարափ անձրևների հետևանքով Սուդանի հարտում նահանգում տեղի ունեցած ջրհեղեղը Ձեբել Աուլիայի ներքին տեղահանվածների ճամբարում ոչնչացրեց 1,400 կացարան, որտեղ մարդկանցով ծանրաբեռնված և անբավարար ենթակառուցվածքներով տարածքում բնակվում էր մոտ 100,000 մարդ: CRS կազմակերպությունն անմիջական օգնություն ցուցաբերեց՝ տրամադրելով կենցաղային իրեր, ստեղծելով արտակարգ իրավիճակների համար նախատեսված կացարաններ, վերանորոգելով ջրամատակարարման և ջրահեռացման կառույցները, մատուցելով ստատիկ և շարժական առողջապահական ծառայություններ:

Օգնության պարագաների բաշխումից անմիջապես հետո համայնքի անդամները մոտեցան կազմակերպությանը՝ համապատասխան անցումային կացարաններ ստանալու խնդրանքով, որը կհամապատասխաներ Սուդանի 43° և 51°C միջև տատանվող ծայրահեղ ջերմաստիճանային և մարդկանցով ծանրաբեռնված ճամբարային պայմաններին: Համայնքների և դոնորների հետ երկար բնարկումներից հետո CRS-ը որոշ գումարներ հայթայթեց ծրագրի համար: Ծրագիրը մշակելու նպատակով կազմակերպությունը համագործակցում էր Սուդանի կառավարության և տուժած համայնքների հետ՝ անցումային կացարանների համար առկա ռեսուրսները, այդ թվում նաև համայնքում առկա աշխատուժը և այնպիսի ակտիվներ, ինչպիսիք են ջուրն ու հողը՝ բացահայտելու համար:

Համայնքը համաձայնեց ցեխային բլուկներից ինքնուրույն կառուցել շինություններ, իսկ տանիքների համար կիրառվող ավանդական նյութերը տրամադրեց CRS-ը, բանի որ տուժած համայնքներն ի վիճակի չէին դրանք ձեռք բերել: Այսպես ջրհեղեղներից պաշտպանվելու նպատակով դրենաժային համակարգը բարելավվելու համար կազմակերպությունն իրականացրեց «սնունդ աշխատանքի դիմաց» նախաձեռնությունը՝ օգտագործելով համայնքի

աշխատուժը դրենաժային համակարգերը մաքրելու համար: Բացի վերոնշյալից, CRS-ը և կառավարությունը նյութեր տրամադրեցին վնասված կամուրջների և ճանապարհների, երկու ամենաշատ վնասված դպրոցների և առողջապահական կառույցների վերանորոգման համար, ինչպես նաև վտանգի ենթակա բաղաբային համայնքներում նյութեր հատկացրեցին ջրհեղեղների նկատմամբ դիմակայուն կացարանների բարելավման համար՝ հետագա անձրևային սեզոններից պաշտպանվելու նպատակով: Այս համայնքները կարողացան վերանորոգել իրենց տները, կառուցել դեպի հիմնական ջրանցքները տանող դրենաժային համակարգեր՝ պաշտպանելով գետին մոտ տեղակայված ամենախոցելի տները՝ ավագի պարկեր պատրաստելով և դրանք տների շուրջը շարելով: Տեբեյ Աուլիա տարածքում բնակվող շատ մարդիկ որոշ ժամանակ ապրում էին այդտեղ: Ջրհեղեղների արդյունքում տները վնասվելու դեպքում դրանց կենսապահովման միջոցները խաթարվում էին:

Համայնքի առաջնորդները և անդամները նույնպես վերապատրաստվեցին ջրհեղեղի արդյունքում ստեղծված արտակարգ իրավիճակներում օգնություն ցուցաբերելու ուղղությամբ, ներառյալ ամենախոցելիների տարիանումը դեպի անվտանգ տարածքներ, հիմնական կոնտակտային անձանց համար վնասների և վնասվածքների վերաբերյալ արագ ավելտվությունների կազմումը և համայնքների մոբիլիզացումն ավագային պարկեր պատրաստելու ու ենթակառուցվածքներին և տներին սպառնացող հետագա վտանգը կանխելու նպատակով:

Յաջորդ տարվա ընթացքում, նույնիսկ, ամենաուժեղ անձրևների ժամանակ ճամբարին նվազագույն վնաս հասցվեց և արտակարգ օգնության անհրաժեշտություն չառաջացավ: Մարդիկ ողջ անձրևային սեզոնի ընթացքում կարողացան պաշտպանել իրենց ունեցվածքը, կենսապահովման միջոցները, ինչպես նաև ապահովել շուկայի և հիմնական ծառայությունների սպասարկման կետերի հասանելիությունը: Խարտումում վտանգները կարող են ներառել երաշտի և ջրհեղեղի ծայրահեղ դոսևորումներ, փոշու փոթորիկներ, ամպրոպով ուղեկցվող հորդառատ անձրևներ և անսովոր տաք եղանակ: Կլիմայի փոփոխության կանխատեսումներն ակնկալում են նման վտանգների ուժեղացում:

Սուղանում տեղի ունեցած ջրհեղեղից հետո համայնքի աջակցությամբ օգնության փուլին անմիջապես հետևեց արագ վերականգնման փուլը: **Տարբեր ժամանակահատվածներ դիտարկելով**, CRS-ը համագործակցում էր համայնքի հետ ջրհեղեղներին դիմակայման համար համապատասխան ժամանակավոր կացարաններ նախագծելու և հետագա ջրհեղեղներին պելի լավ նախապատրաստվելու համար՝ դրանով իսկ կրճատելով դրանց ազդեցությունը կյանքի և կենսապահովման միջոցների վրա:

Թիրախային համայնքների շրջանում մասնակցային տվյալների և վերլուծական գործընթացների կիրառումը խթանում է ռիսկերի վերաբերյալ իրազեկումը և նպաստում այդ ռիսկերի կրճատման հետագա գործողությունների իրականացմանը: Սահմանված նպատակներին հասնելու համար համայնքները կարող են ակտիվորեն մասնակցել ծրագրերի նախագծման աշխատանքներին, ինչը հնարավորություն կտա վերջիններիս բացահայտել այն ակտիվներն ու միջոցները, որտեղ նրանք կարող են ներդրում ունենալ՝ միաժամանակ նպաստելով և օգուտ բաղելով միջամտության արդյունքից: Աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերը նվազեցնելու միջամտությունները կարող են զուգակցվել արտակարգ իրավիճակներում ցուցաբերվող օգնության հետ՝ հետագայում նման աղետների ազդեցությունը կրճատելու համար:

Գործիքներ և ռեսուրսներ

Տեղեկատվության և հղումների համար *տես էջ 284 .Գործիքներ և ռեսուրսներ:*

5.3 Քաղաքային համատեքստեր

Քաղաքային համատեքստերը բնութագրող հատկանիշներ

Մինչև 2030թ. երկրագնդի բնակչության 60 տոկոսից ավելին, գրեթե հինգ միլիարդ մարդ, կապրի և կաշխատի քաղաքային միջավայրում: Նման համատեքստերը, սկսած փոքրից մինչև հսկա քաղաքները, սովորաբար բնութագրվում են հետևյալ հատկանիշներով.

- բնակչության բարձր խտություն,
- տնտեսական ակտիվների և ենթակառուցվածքների կենտրոնացում,
- հիմնականում դրամային փոխհարաբերությունների վրա հիմնված տնտեսություն,
- բազմատարր, շարժման մեջ գտնվող բնակչություն,
- կառավարման բազմակողմանի համակարգ և գործընթացներ:

Աճի տեմպերի և բնույթի շնորհիվ շատ քաղաքային համատեքստեր ունեն նաև.

- տարերային, ոչ պաշտոնական և շատ դեպքերում ոչ օրինական բնակավայրեր՝ տեղակայված վտանգավոր, երբեմն բնակչության համար ոչ պիտանի տարածքներում՝ առանց համապատասխան ռեսուրսների և ծառայությունների,
- դեգրադացված բնական միջավայր՝ մարդկային բնակավայրերի տարածքում և շրջակայքում,
- անբավարար կարգավորող համակարգ և շինարարության սահմանված նորմերի և կանոնների համապատասխանության բացակայություն,
- բնակչության մի ստվար զանգված, որն ընդգրկված է աշխատանքի ոչ պաշտոնական ոլորտում,
- սոցիալական լարվածություն և անվտանգության բացակայություն:

Աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերը քաղաքային համատեքստում

Ինչպես փորձը ցույց է տալիս, աշխարհի մեծ քաղաքներից շատերը, պատմականորեն ռազմավարական նպատակներից ելնելով, տեղակայված են երկրաբանական և օդերևութաբանական վտանգներին ենթակա տարածքներում, օրինակ, ափամերձ ողողահուլների կամ տեխնիկապես ակտիվ տարածքներում: Շատ դեպքերում հողի ոչ պատշաճ օգտագործման և բնական ռեսուրսների անբավարար կառավարման

արդյունքում քաղաքի ծայրամասային շրջանները ենթարկվում են լրացուցիչ վտանգների ազդեցության:

Ենթադրվում է, որ կլիմայի փոփոխությունը կուժեղացնի որոշ օդերևութաբանական վտանգների ազդեցությունը, ինչպես նաև կստեղծի նոր ռիսկային սցենարներ, այդ թվում՝ ծովի մակարդակի բարձրացումը և տեղային գերտաքացման ազդեցության⁶ ուժեղացումը: Գյուղական տարածքներում կլիմայի փոփոխության ազդեցությունները հողագործության և բնական կախման մեջ գտնվող կենսապահովման միջոցների վրա, կարող են նաև նպաստել գյուղերից դեպի քաղաքային բնակավայրեր կատարվող միգրացիայի աճին:

Քաղաքային համատեքստի առանձնահատկությունները ստեղծում են քաղաքին հատուկ խոցելի կողմեր, ինչպիսիք են.

- բնակչության խիտ բնակեցումն այնպիսի տարածքներում, որոնք ենթակա են վտանգների ազդեցությանը,
- անկայուն շինությունները՝ հաճախ կառուցված ցածր որակի նյութերով և շինարարական նորմերի խախտումով, ինչպես նաև քաղաքային համակարգերի մեծությանն ու բարդությանը չհամապատասխանող ռիսկերի նվազեցման ոչ բավարար ենթակառուցվածքները,
- գրունտային ջրերի ներծծման ցածր մակարդակը և քաղաքային ծանր պայմաններում կառուցվածքային փոփոխություններ կատարելու դժվարությունները՝ բնապահպանական ռիսկերի աղբյուրները կրճատելու կամ կառավարելու համար, օրինակ՝ ջրհավաք համակարգերից ջրի հոսքի կառավարումը,
- կախվածությունը կոմունալ-կենցաղային ծառայություններից, ինչպիսիք են խողովակներով մատակարարվող ջուրը, էլեկտրա-էներգիան, որոնք վտանգների ներգործությունից հետո կարող են չբավարարել, մատակարարվել ընդհատումներով կամ ազդեցություն կրել կախված կլիմայի փոփոխականությունից և(կամ) ջրի ամպայությունից,
- կախվածությունը գյուղատնտեսությունից և սննդի անվտանգությունն ապահովելու համար պարենի ներմուծումներից, որոնք զգայուն են կլիմայի փոփոխականության, ինչպես նաև տեղական և միջազգային առևտրային պայմանների նկատմամբ,
- տեղերում ամկա վտանգների վերաբերյալ իրազեկման բացակայությունը քաղաքային բնակավայրեր նոր ժամանածների համար:

Քաղաքային բնակչությանը և կառավարման համակարգերին հատուկ են նաև աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերը նվազեցնելու կարողությունները, ինչպիսիք են.

- բազմազան և նորարարական կենսապահովման ռազմավարությունները, որոնք բաշխում են ռիսկերը և նպաստում փոփոխության հարմարվողականությանը,
- մարդկային կապիտալի առկայությունը (այդ թվում նաև՝ մասնագետներ և որակավորում ունեցող բանվորական ուժ)՝ դիմակայման միջոցառումներ մշակելու և իրականացնելու համար,
- բազմազան պետական հաստատությունների, քաղաքաշինության վերաբերյալ օրենսդրության, քաղաքականությունների և ռեսուրսների առկայությունը,
- լայնածավալ տնտեսության առկայությունը, որը հեշտացնում է մեծ թվով մարդկանց և տնտեսական գործունեության պաշտպանությունը և այն դարձնում առավել ծախսարդյունավետ:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները քաղաքային համատեքստում կիրառելու համար	
<p>1. Բարձրացնել վտանգի և կլիմայի փոփոխության համատեքստի ըմբռնման մակարդակը</p>	<ul style="list-style-type: none"> • Ընդհանուր համատեքստի ընկալումը ապահովելու համար ստեղծել տարբեր մակարդակների՝ տարածքային, քաղաքային, հատուկ միջավայրի և ոլորտների համար նախատեսված քաղաքային բնակավայրերի վտանգների և կլիմայի փոփոխության այլ ազդեցության քարտեզներ՝ ցանկացած միջամտություն իրականացնելու նպատակով: • Միավորել վտանգների և կլիմայի ազդեցության վերլուծությունները քաղաքային ռիսկերի այլ աղբյուրների հետ, ինչպիսիք են տեխնոլոգիական վտանգներն ու սոցիալական բռնությունները: Քաղաքային միջավայրի բարդությունը կայանում է նրանում, որ այն պահանջում է կարողությունների զարգացման այնպիսի ռազմավարություններ, որոնք պետք է փորձեն ներառվել ռիսկի բազմազան աղբյուրներում:
<p>2. Բարձրացնել վտանգի ենթարկվելու, խոցելիության և կարողությունների ըմբռնման մակարդակը</p>	<ul style="list-style-type: none"> • Դիտարկել բնակչության աճի, միգրացիայի միտումների և գործազրկության/ ոչ պաշտոնական զբաղվածության ազդեցությունը վտանգի ենթարկվելու, խոցելիության և դիմակայման կարողությունների վրա:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները քաղաքային համատեքստում կիրառելու համար

<p>2. Բարձրացնել վտանգի ենթարկվելու, խոցելիության և կարողությունների ըմբռնման մակարդակը</p>	<ul style="list-style-type: none"> • Հատուկ ուշադրության դարձնել անօրինական և տարրերային բնակավայրերին և հին կենտրոնական թաղամասերին, որտեղ խոցելիության և վտանգի ենթարկվելու հավանականությունն ավելի բարձր է: • Ներգրավել մասնագետների (ինժեներներ, շինարարներ, սոցիալական ծառայողներ), ըստ անհրաժեշտության, մասնագիտական վերլուծություններ կատարելու համար, օրինակ, կապված շինարարության, հողօգտագործման, սոցիալական ընդհարումների հետ:
<p>3. Ճանաչել իրավունքներն ու պարտականությունները</p>	<ul style="list-style-type: none"> • Պարզել այն բոլոր համապատասխան մարմինները, որոնք պատասխանատու են քաղաքային բնակավայրերի զարգացման բոլոր ոլորտների համար՝ հաստատությունների հզորացման, համագործակցության և ծրագրի շահերի պաշտպանության գործընթացները ռազմավարություններում ընդգրկելու համար: • Բարձրացնել հիմնական ծառայությունների նկատմամբ իրավունքների և պարտականությունների հանրային իրազեկման աստիճանը, ինչպիսիք են ջրամատակարարումը, ջրահեռացումը, թափոնների կառավարումը, որոնք մեծ ազդեցություն են գործում քաղաքային միջավայրի խոցելիության մակարդակի վրա: • Աջակցել աղետների ռիսկի նվազեցման պետական և մասնավոր հատվածի դերակատարների հաշվետվողականության բարելավմանն ուղղված օրենսդրության ստեղծմանը, լրամշակմանը և իրականացմանը: • Օժանդակել հողի օգտագործման իրավունքի և հողի օգտագործման պլանավորման հետ կապված ուսումնասիրությունների իրականացմանը, ինչը կարող է նպաստել աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերի նվազեցմանը և խթանել արդյունքների տարածումը:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները քաղաքային համատեքստում կիրառելու համար

<p>4. Խրախուսել ռիսկի ենթակա բնակչության մասնակցությունը և գործունեությունը</p>	<ul style="list-style-type: none"> • Օգտագործել ռիսկի գնահատման մասնակցային գործընթացները՝ բազմատար քաղաքային բնակչության շրջանում սոցիալական համախմբում ապահովելու համար: • Գործունեությունը պլանավորել՝ ելնելով քաղաքային բնակավայրերի դինամիկայից, որտեղ հեռավորություններն ավելի մեծ են, իսկ աշխատանքային ժամերն ավելի երկար, ի համեմատ գյուղական բնակավայրերի: • Ղեկավարման հնարավորություն ընձեռել քաղաքային բնակավայրերի երիտասարդներին՝ վերջիններիս ընդգրկելով վտանգների մեղմացմանն ուղղված փոքրածավալ աշխատանքներում, աղետների հետևանքների վերացմանն ուղղված դասընթացներում, հանրային քարոզարշավներում:
<p>5 Խրախուսել համակարգված ներգրավման և փոփոխության գործընթացները</p>	<ul style="list-style-type: none"> • Բացահայտել և ներգրավել շահագրգիռ տարբեր կողմերին, այդ թվում՝ արտակարգ իրավիճակներում գործող օգնության ծառայությունները, համապատասխան բոլոր պետական գերատեսչությունները, հանրային սեկտորի դերակատարները և քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, քաղաքային ռիսկերի վերաբերյալ քաղաքային և տարածքային մակարդակով իրականացվող քննարկումներում: • Զարոգել և նպաստել արտակարգ իրավիճակների բազմոլորտային գործողությունների ծրագրի մշակմանը՝ վտանգներին դիմակայելու համար: • Օժանդակել հանրային և մասնավոր հատվածի այնպիսի համագործակցությանը, որը նպաստում է դիմակայման կարողությունների զարգացմանը: • Պլանավորել և անցկացնել երկարաժամկետ և բազմակողմանի քննարկումներ և համակարգման գործընթացներ քաղաքային միջավայրում:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները քաղաքային համատեքստում կիրառելու համար

6. Նպաստել տարբեր մակարդակների համատեղ գործունեության խթանմանը

- Նպաստել պետական քաղաքականությունների և օրենսդրության մշակմանը, ինչը բարենպաստ միջավայր է ապահովում քաղաքային բնակավայրերում դիմակայման կարողությունների զարգացման համար:
- Նպաստել արտակարգ իրավիճակների բազմոլորտային գործողությունների ծրագրի մշակմանը, որպես գերակա խնդիր:
- Խթանել բնակչության ինքնակազմակերպման մարմինների ներկայացուցիչների և քաղաքացիական հասարակության խմբերի մասնակցությունը քաղաքաշինության պլանավորման և զարգացման քննարկումներին և բարձրացնել ռիսկերի և դիմակայման հետ կապված խնդիրները:

7. Կիրառել և զարգացնել տարբեր աղբյուրներից ստացված գիտելիքներ

- Խրախուսել համայնքային իշխանություններին սովորել այլ քաղաքների փորձից, որոնք ծավալում են աղետի և կլիմայի փոփոխության ռիսկերի նվազեցման գործունեությունն այնպիսի նախաձեռնությունների միջոցով, ինչպիսիք են ՄԱԿ-ի Աղետների ռիսկի նվազեցման միջազգային ռազմավարության
- «Ինչպես քաղաքները դարձնենք դիմակայուն» քարոզարշավը և Քաղաքների կայուն զարգացման շարժումը: *Տես էջ 286. Գործիքներ և ռեսուրսներ:*
- Օժանդակել քաղաքային ռիսկերի նվազեցման և հարմարվողականության հետ կապված ուսումնասիրությունների կատարմանը՝ հաջողված փորձի գործիքների, մեթոդների և մոդելների նկատմամբ աճող պահանջները բավարարելու համար:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները քաղաքային համատեքստում կիրառելու համար

<p>8. Ապահովել ճկունություն և արձագանքման հնարավորություն</p>	<ul style="list-style-type: none"> • Խթանել բնապահպանական տեսանկյունից կայուն և վտանգների ու կլիմայի նկատմամբ դիմակայուն շինարարության մեթոդների և նյութերի ընտրությունը, ինչպես նաև հողօգտագործման պլանավորման գործընթացները: • Պաշտպանել և նպաստել ներդրումների կատարմանը՝ տարատեսակ վտանգների և ազդեցությունների կանխատեսման համար և վաղ ազդարարման համակարգում⁶: • Օգտագործել կլիմայի փոփոխության վերաբերյալ առկա լավագույն տեղեկատվությունը՝ շրջակա միջավայրի բարելավման, անվտանգ կացարանների և աշխատանքային պայմանների ապահովման նպատակով երկարատև ռազմավարություններ մշակելու համար:
<p>9. Դիտարկել տարբեր ժամանակահատվածներ</p>	<ul style="list-style-type: none"> • Առաջնահերթություն տալ աղետներին նախապատրաստվելու գործընթացին՝ տարբեր շահագրգիռ կողմերի գործունեության համակարգումը և վտանգի ժամանակ մեծ թվով մարդկանց կառավարումը արդյունավետորեն կազմակերպելու համար: • Օժանդակել կարևոր ենթակառուցվածքները և հանրային կառույցները (մասնավորապես դպրոցներն ու հիվանդանոցները) վտանգների և կլիմայի փոփոխության նկատմամբ դիմակայուն դարձնելու գործընթացին: • Նախօրոք պլանավորել աղետների ժամանակ օգնության ցուցաբերման և վերականգնողական ռազմավարությունները: • Քաղաքային ռիսկերի նվազեցման ռազմավարությունում ընդգրկել այն փոքր և միջին մեծության քաղաքները, որտեղ ակնկալվում է բնակչության մեծ աճ:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները քաղաքային համատեքստում կիրառելու համար

10. Զվլասել

- Համագործակցել հարևան միավորումների և քաղաքացիական հասարակության ցանցերի հետ, որոնք թիրախային բնակչության և տարածքների վերաբերյալ ունեն մանրակրկիտ տվյալներ և հնարավորություն՝ բացահայտելու չակնկալվող ազդեցությունները:
- Նպաստել քաղաքային բնակավայրերում իրականացվող հետադետային վերականգնման և վերականգնողական ծրագրերին՝ հիմք ընդունելով աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության սկզբունքները:

5.2 Քաղաքային համատեքստում իրականացվող աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության գործողությունների օրինակներ քաղաքային համատեքստում կիրառելու համար

Հողօգտագործում և բնակարանային պայմաններ

- Հողօգտագործման պլանավորման պաշտպանություն, ներառյալ համապատասխան տարածքների հատկացումը ցածր եկամուտ ունեցող մարդկանց բնակարաններ կառուցելու նպատակով, որտեղ հաշվի են առնվում կլիմայի փոփոխության ռիսկի վերլուծությունը, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանման և մարդկանց բարեկեցության համար սահմանված չափանիշները:
- Տարերայնորեն առաջացած բնակավայրերի պաշտոնական ճանաչման պաշտպանություն՝ որպես ռիսկերի նվազեցման և հարմարվողականության միջոցառումների իրականացման պետական և մասնավոր ներդրումների կատարման հիմք:
- Ցուցադրական ծրագրերի իրականացում՝ բնակարանաշինության համար կլիմայի փոփոխությանը և վտանգներին դիմակայող նախագծերի և նյութերի ներկայացման նպատակով, ինչպես նաև խթանիչ միջոցների ապահովում՝ զարգացման գործընթացներին նպաստելու համար:

Ջրամատակարարում և ջրահեռացում

- Ջրամատակարարման բազմազանության ապահովման աջակցություն կենցաղային և քաղաքային մակարդակով՝ ջրի առկայության հետ կապված տարբեր իրավիճակներին հարմարվելու համար:

5.2 Զաղաքային համատեքստում իրականացվող աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության գործողությունների օրինակներ քաղաքային համատեքստում կիրառելու համար (շարունակություն)

- Կեղտաջրերի վերամշակման աջակցություն և պաշտպանություն կենցաղային և քաղաքային մակարդակով, ջրային ռեսուրսների նկատմամբ պահանջը լարված (պայմանավորված սեզոնային գործոնով) իրավիճակներում նվազեցնելու համար:
- Յեղեղաջրերի դրենաժային համակարգի հզորությունների բարելավմանն ուղղված աջակցություն/պաշտպանություն:
- Քաղաքային բնակավայրերում և դրանց շուրջը գտնվող բնապահպանական բուֆերային գոտիների վերաբերյալ իրազեկման բարձրացում և դրանց պահպանմանն ուղղված անմիջական գործողությունների իրականացում (օրինակ՝ անտառային տարածքներ, հեղեղաջրերի հավաքման ջրամբարներ, ողողադաշտեր):

Կենսապահովում

- Դրամաշնորհների տրամադրում, վարկերի մատչելիություն և կրթական դասընթացների ապահովում՝ կենսապահովման միջոցների բազմազանության և կենսապահովման միջոցները կլիմայի փոփոխությանը հարամարտեցնելու նպատակով:
- Բնակարանների և կենսապահովման միջոցների միկրոապահովագրման խրախուսում:
- Անվտանգ աշխատանքային պայմանների և զբաղվածության շարունակականության ապահովում, գործարաններում և տեղական արդյունաբերության ոլորտում աշխատող բանվորների փոխհատուցման խրախուսում:
- Քաղաքային բնակավայրերում գյուղատնտեսությամբ զբաղվելու համար հողահատկացումներ բնակիչներին կամ համայնքին, օրինակ, բարձրության վրա գտնվող մարգերի ստեղծման, համատեղ ցանովի հողերի մշակման համար՝ սեփական սպառման կամ եկամուտ ստանալու նպատակով: Հնարավորության դեպքում վերամշակված կեղտաջրերի օգտագործում ոռոգման նպատակով:

Աղետներին նախապատրաստվածություն

- Աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերի վերաբերյալ իրազեկման մակարդակի բարձրացում՝ կրթական և վերապատրաստման ծրագրերի, համայնքային մակարդակով անցկացվող սպորտային և սոցիալական միջոցառումների միջոցով:

5.2 Զաղաքային համատեքստում իրականացվող աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության գործողությունների օրինակներ քաղաքային համատեքստում կիրառելու համար (շարունակություն)

- Վերապատրաստման դասընթացների կազմակերպում և (կամ) սարքավորումների տրամադրում՝ աղետների ժամանակ տեղական և քաղաքային մակարդակով օգնություն ցուցաբերող աշխատակազմին: Քաղաքային մակարդակով օգնություն ցուցաբերող աշխատակազմի անդամների միմյանց նկատմամբ ունեցած պատասխանատվության, ինչպես նաև ազգային քաղաքական ծրագրերի, աղետներին նախապատրաստվելու և օգնության համակարգման արարողակարգի վերաբերյալ իրազեկման բարձրացում՝ բոլոր գործողությունների փոխհամաձայնությունն ապահովելու համար:
- Համայնքային մակարդակում վաղ ազդարարման և տարիանման համակարգերի զարգացում/օժանդակություն՝ օգտագործելով համապատասխան լրատվամիջոցներ և տեխնոլոգիաներ (որոշ քաղաքային բնակավայրերում զանգվածային լրատվամիջոցները և բջջային հեռախոսները հանրությանն իրազեկելու ամենաարդյունավետ միջոցներն են):
- Արտակարգ իրավիճակներում քաղաքների միջև համագործակցության խթանում՝ փոխադարձ օգնություն ցուցաբերելու նպատակով:
- Այն փաստի ընդունումը, որ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականությանն ուղղված ամենաարդյունավետ գործունեությունը նույնպես համապատասխանում է համայնքերի և քաղաքների ներկայիս կարիքներին և գերակայություններին:
- Պահեստների և այլ կարևոր կառույցների անվտանգ տեղակայման ապահովում:
- Գեներային և տարիքային տարբերությունների դիտարկում՝ ռիսկերի նվազեցման և օգնության ցուցաբերման գործողություններում:

ԴԵՊԵԻ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՆԽՈՒՄ ԵՎ ՄԵՐՆԱԶՅՈՒՄ ԱՂՋԱՏ ԹԱՂԱՄԱՍԵՐՈՒՄ

Գվատեմալա, միմյանց հետ համագործակցող տարբեր կազմակերպություններ՝ տեղական իշխանություններ (որոշ վարչություններ), համայնքային կազմակերպություններ, տեղական ՀԿ-ներ, միջազգային ՀԿ-ներ, այդ թվում նաև Oxfam կազմակերպությունը

1998թ. «Միտց» անունով փոթորիկը մեծ վնաս հասցրեց Գվատեմալային, որի արդյունքում ավելի խորացավ Գվատեմալա քաղաքի ետնախորշերում ապրող մարդկանց խոցելիության աստիճանը: Քաղաքային աղքատ բնակչության դիմակայման կարողությունները զարգացնելու նպատակով մի շարք կազմակերպություններ որոշ աղքատ համայնքներում սկսեցին իրականացնել

աղետների ռիսկի նվազեցման ծրագրեր: Ցուցաբերվեց միասնական մոտեցում և, թեև, պաշտոնապես ծրագրի նպատակն աղետների ռիսկի նվազեցումն էր, արդյունքում բարելավվեց այդ թաղամասերի ընդհանուր վիճակը:

Ծրագրեր սկսեցին իրականացվել հիմնականում այն համայնքներում, որտեղ տղանքների, ջրհեղեղների, երկրաշարժերի և համաճարակների հավանականությունը մեծ էր (կղանքաբերանային եղանակով փոխանցվող վարակները, դենգե տենդ): Խոցելիության որոշ հիմնական տեսակներ պայմանավորված էին իշխանությունների կողմից աղբատ թաղամասերին ցուցաբերվող սահմանափակ ուշադրությամբ, հասարակության կողմից բացասական ընկալմամբ, համեմատաբար վատ սոցիալական համայնքներում, աղբատությամբ, տարածքի մեծ թեթևություններով և անբավարար ենթակառուցվածքներով: Հանցագործությունները և բռնությունների վտանգը նույնպես գործոններն էին, որ նպաստում էին քաղաքի այդ տարածքներում ռիսկի մակարդակի բարձրացմանը:

Ծրագրում ընդգրկված համայնքների ընտրությունը կատարվեց մի շարք հստակ չափանիշների հիման վրա: Չնահատվեց երեսուն համայնք, որից ընտրվեց չորսը, որպես սահմանված չափանիշներին համապատասխանող: Ծրագրի անձնակազմն աշխատանքներն իրականացնում էր թիրախային համայնքներում՝ բարելավելով այնպիսի ենթակառուցվածքներ, ինչպիսիք են հետիոտների համար նախատեսված արահետները, դրենաժային համակարգերը, պաշտպանիչ պատերը, մուտք ապահովող կառույցները, բուսական ծածկույթի վերականգնումը, ջրի բաշխման և խորքային հորերով փոքր կոյուղու համակարգերը, համայնքային միջոցառումների սրահները: Կազմակերպվեցին նաև կրթական դասընթացներ՝ գործող համայնքային խորհուրդների հզորացման միջոցով կարողությունների զարգացման համար, տրամադրվեցին համապատասխան նյութեր համայնքի կազմակերպման համար, սերտ կապ հաստատվեց իշխանությունների հետ՝ համագործակցության և ծրագրի շահերի պաշտպանության միջոցով:

Ծրագրի իրականացման արդյունքում կառուցվեց ավելի քան 5 կմ երկարությամբ արահետներ և աստիճաններ, որոնք անձրևային սեզոնին ծառայում են որպես ջրահեռացման առվակներ, ինչպես նաև 3կմ-ից ավելի պաշտպանական պատեր, 2.5կմ երկարությամբ խորքային հորերով փոքր կոյուղու համակարգեր: Համայնքի բարելավման շինարարական աշխատանքների արժեքը համայնքի մեկ անդամի հաշվարկով կազմեց 60 ԱՄՆ դոլար:

Նախածնունդի իրականացման արդյունքում պարզվեց, որ (ա) կազմակերպությունների և համայնքների նպատակները միշտ չէ, որ համընկնում են, սակայն դա խնդիր չէ, եթե երկուսն էլ շարժվում են նույն ուղղությամբ, (բ) գործունեություն ծավալելու համար պահանջվում են բազմաթիվ գործընկերների անհրաժեշտ ունակությունների ու լիազորությունների միավորում, (գ) ետնախորշերի խոցելիության և դրա խորքային պատճառներին արձագանքելու համար անհրաժեշտ է ծավալել ծրագրի պաշտպանությանն ուղղված գործունեություն, (դ) համայնքում արագ լուծվող հարցերը, թեև դրանք փոքր են իրենց ծավալով, վկայում են այն մասին, որ ծրագիրը լուրջ նպատակներ ունի և ընդունվում ու հավանության է արժանանում համայնքի անդամների կողմից:

Ծրագրի ուշադրության կենտրոնում էր քաղաքային բնակավայրերի ետնախորշերի անապահով բնակչությունը, նրանց **աղետի նվազեցված ռիսկի ենթարկվելու իրավունքի ճանաչումը և նրանց պատասխանատվությունը** բարելավված կառույցների նկատմամբ՝ հետագա աղետներին ավելի պատրաստված դիմակայելու համար:

Գործիքներ և ռեսուրսներ

Տեղեկատվության և հղումների համար *տես էջ 286. Գործիքներ և ռեսուրսներ:*

5.4 Դանդաղ վրա հասնող աղետներ

Դանդաղ վրա հասնող աղետների համատեքստի բնութագրող հատկանիշները

«Դանդաղ վրա հասնող» տերմինն օգտագործվում է զարգացման և մարդասիրական գործունեության մեջ ընդգրկված աշխատակիցների կողմից, մատնանշելու այն աղետը, որը չի առաջանում մեկ հստակ վտանգից, այլ ի հայտ է գալիս աստիճանաբար (շաբաթների, ամիսների և, նույնիսկ, տարիների ընթացքում)՝ կախված բարդ և միմյանց հետ փոխկապակցված հանգամանքներից:

Սննդի անվտանգության⁶ համատարած բացակայությունը և 2011թ. սովը Աֆրիկայի հյուսիս-արևելյան տարածաշրջանում դանդաղ վրա հասնող աղետների վերջերս տեղի ունեցած օրինակներից է: Անձրևների տևական բացակայությամբ պայմանավորված երաշտը՝ մշտական աղքատության և թերսնման հետ միասին, սննդի և վառելիքի բարձր գները, անասունների վաճառքի անբարենպաստ պայմանները, ինչպես նաև որոշ տարածքներում երկարատև և դաժան բռնությունները հանգեցրեցին աղետի, որի արդյունքում տուժեց 13 միլիոն մարդ: Եվ սա այն դեպքում, երբ դեռևս շատ ամիսներ առաջ մոտալուտ արտակարգ իրավիճակի մասին առկա էին վաղ ազդարարման բոլոր նշանները:

Դանդաղ վրա հասնող աղետները կարող են լինել⁶.

- **Կրկնվող՝** բազմամյա երևույթների պատճառած վտանգների և իրավիճակների արդյունքում, օրինակ՝ Էլ-Նինոյի հարավային տատանումները (ENSO):
- **Լայնատարած՝** ունեն ազդեցության մեծ տարածքներ, անգամ կարող են ներառել բազմաթիվ երկրներ:
- **Կենսապահովման միջոցների⁶ և առողջության համար վնասակար՝** երբ անմիջական մահվան ելքով կորուստների թիվը փոքր է ի տարբերություն հանկարծակի վրա հասնող աղետների, իսկ մյուս ազդեցություններն աճում են իրավիճակի վատթարացմանը համընթաց:
- **Դժվար հաշվարկելի տնտեսական կորուստներով՝** ունեցվածքի կորուստը կարող է հանգեցնել հետագա տարիների եկամտի և հնարավորությունների կորստի:
- **Կանխատեսվող՝** դանդաղ վրա հասնող աղետները սովորաբար ուղեկցվում են վաղ ազդարարման նշաններով, որոնք կարող

են վերահսկվել՝ ժամանակին համապատասխան գործունեության պլանավորման և արձագանքման գործողությունների ճիշտ իրականացման համար:

5.3 Դանդաղ վրա հասնող վտանգների և իրավիճակների օրինակներ

- **Երաշտ՝** երկար ժամանակահատված միջինից ցածր անձրևային տեղումների քանակով, որը հաճախ ուղեկցվում է ջրի խիստ պակասով:
- **Շրջակա միջավայրի դեգրադացիա՝** աղտոտում թունավոր նյութերով, անտառահատում, էկոհամակարգի խաթարում, երոզիա, անապատացում և այլն:
- **Ծովի մակարդակի բարձրացում՝** աղաջրերի ներթափանցում մերձափնյա գյուղատնտեսական հողատարածքներ, տների և կենսապահովման միջոցների ոչնչացում:
- **Օվկիանոսի թթվայնացում՝** կորալյան խութերի բնական միջավայրի խաթարում, որտեղ հիմնականում բազմանում են ձկները:
- **Յիվանդության բռնկումներ/համաճարակներ՝** հիվանդություն և մահացություն նրանց համար, ովքեր շփվել են հիվանդության հետ, օրինակ, ջրիեղեղներից հետո խոլերայի կամ լուծի բռնկումների ժամանակ:

Աղետների ռիսկի նվազեցումը և կլիմայի փոփոխության հարմարվողականությունը դանդաղ վրա հասնող աղետների համատեքստում

Քանի որ դանդաղ վրա հասնող աղետները կանխատեսելի են հուսալի տեղեկատվության առկայության շնորհիվ, դրանց հետևանքները կարելի է նվազեցնել վաղ ազդարարման և համապատասխան գործողությունների ձեռնարկման միջոցով: Մասնավորապես, քանի որ դրանք հաճախ առաջանում են պարբերաբար կրկնվող վտանգների արդյունքում, ցանկացած գործողություն պետք է ուղղված լինի երկարաժամկետ հեռանկարում խոցելիության ու նման երևույթներին ենթարկվելու աստիճանի նվազեցմանը և վտանգի ենթակա համայնքներում աղետներին նախապատրաստվելու ու արձագանքելու կարողությունների զարգացմանը: Դանդաղ վրա հասնող աղետների դեպքում մարդասիրական օգնության ճգնաժամի պատճառն այդ աղետներից խուսափելու/կանխելու բավարար կարողությունների կամ կամքի պակասն է:

5.1 Վաղ ազդարարման և արագ գործողությունների իրականացման օրինակներ ջրհեղեղի ժամանակ		
Ժամանակ	Վաղ ազդարարման օրինակներ	• Արագ գործողությունների օրինակներ
Տարի	<ul style="list-style-type: none"> Անձրևային տեղումների հաճախականության և ուժգնության աճ 	<ul style="list-style-type: none"> Կանոնավոր կերպով վերանայել ռիսկի բարտեզները և արտակարգ իրավիճակների գործողությունների պլանը: Աշխատել վտանգի ենթակա բնակչության հետ այնպիսի գործողությունների անհրաժեշտության բացահայտման և իրականացման համար, ինչպիսիք են անտառների վերականգնումը և տների ամրացումը:
Ամիս	<ul style="list-style-type: none"> Միջինից ուժեղ անձրևային տեղումների կանխատեսում գալիք սեզոնի համար: 	<ul style="list-style-type: none"> Վերանայել արտակարգ իրավիճակների գործողությունների պլանը: Տեղեկացնել ռիսկի ենթակա բնակչությանը մոտալուտ վտանգի և դրա ազդեցությունը նվազեցնելու միջոցառումների մասին, օրինակ՝ դրենաժային առվակների և ջրանցքների մաքրում:

5.1 Վաղ ազդարարման և արագ գործողությունների իրականացման օրինակներ ջրհեղեղի ժամանակ		
Ժամանակ	Վաղ ազդարարման օրինակներ	<ul style="list-style-type: none"> • Արագ գործողությունների օրինակներ
Շաբաթ	<ul style="list-style-type: none"> • Շարունակական անձրևային տեղումների կանխատեսում, որը հավանականորեն կարող է հանգեցնել ջրհեղեղի: 	<ul style="list-style-type: none"> • Մշտադիտարկել անձրևային տեղումների կանխատեսումները: • Մոբիլիզացնել աղետներին նախապատրաստվելու և դրանց արձագանքելու համար պատասխանատու տեղական խմբերին: • Հավաքել միջոցներ կարճաժամկետ ռիսկերը նվազեցնելու և արձագանքելու համար, օրինակ՝ ավազի պարկեր, սնունդ, ջրի պաշարներ արտակարգ իրավիճակներում անհրաժեշտ կացարանների համար: • Համակարգել աշխատանքս արձագանքող այլ կազմակերպությունների հետ:
Օր	<ul style="list-style-type: none"> • Ուժեղ անձրևներ և ջրի բարձր մակարդակ, որոնք կարող են հանգեցնել ջրհեղեղի: 	<ul style="list-style-type: none"> • Տեղափոխել անասուններին առավել բարձր տարածքներ, պահեստավորել սնունդը և արժեքավոր իրերը բարձրության վրա գտնվող տարածքներում: Համայնքներին տեղեկացնել տարհանման գործընթացի մասին և համայնքներին ուղարկել վաղ ազդարարման ուղերձներ:
Ժամ	<ul style="list-style-type: none"> • Ազդակիր տարածքների հեղեղում՝ գետի երկայնքով հոսող վարարաջրերով: 	<ul style="list-style-type: none"> • Տարհանում:

Կլիմայի փոփոխությունը կարևոր գործոն է բազմաթիվ դանդաղ վրա հասնող աղետների ժամանակ, քանի որ փոփոխության են ենթարկվում անձրևային տեղումների դրսևորումները: Կանխատեսվում է, որ կլիմայի փոփոխությունը կարող է բարձրացնել նման դրսևորումների հաճախականությունն ու ուժգնությունը: Այն կարող է հանգեցնել նաև ծովի մակարդակի և ջերմաստիճանի բարձրացման, որի արդյունքում հավանական են շրջակա միջավայրի երկարաժամկետ փոփոխություններ, ինչպես նաև փոփոխություններ՝ կապված բնական ռեսուրսների հասանելիության, մարդկանց և կենդանիների առողջության հետ:

Աղետների ռիսկի նվազեցումը և կլիմայի փոփոխության հարմարվողականությունը խիստ կարևոր են դանդաղ վրա հասնող աղետների համատեքստում ծրագրեր մշակելու համար, քանի որ.

- հիմք են հանդիսանում փոփոխվող համատեքստերում ռիսկերի վերլուծության և կառավարման երկարաժամկետ և համալիր մոտեցումների համար,
- մարդկանց մոտ ստեղծում են մի շարք իրավիճակների նախապատրաստման կարողություններ, որոնք կարող են ազդել մարդկանց/երկրների/տարածաշրջանների վրա՝ կիրառելով վտանգների մեղմացման, աղետներին նախապատրաստվելու և հարմարվելու միջոցներ (տարբեր վտանգների հետ կապված մոտեցումներ),
- խրախուսում են մարդկանց և տարբեր հաստատություններին նախապատրաստվել դիմակայելու ապագա անորոշ իրադարձություններին՝ մշակելով սցենարներ և կիրառելով հարմարվողականության «ոչ մի զրջում» տարբերակներ⁶,
- կանխում են կրկնվող վտանգների և վատթարացող բնապահպանական պայմանների հետևանքով առաջացող շարունակական կամ խորացող աղբատությունը և ընդհատում ծախսատար միջամտությունների շարքը:

5.4 Աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության միջոցառումների օրինակներ կապված երաշտի արդյունքում առաջացող սննդի անվտանգության բացակայության հետ

- **Սննդի արտադրության պաշտպանություն.** ոռոգում, հողի և ջրային ռեսուրսերի պահպանում, գրունտային ջրերի հոսքի կանխում, մշակաբույսերի համատեղում, մշակաբույսերի բազմազանացում, չորադիմացկուն և աղադիմացկուն սերմերի օգտագործում:
- **Սննդի հասանելիության պահպանում.** կանխիկ դրամի փոխանցում սոցիալական անվտանգության ցանցերի միջոցով, սննդի բաշխում, վարկերի տրամադրում արտոնյալ պայմաններով, վճար/մուծող աշխատանքի դիմաց:
- **Սննդի պահպանում.** բերքի և սերմերի պահեստավորում, համայնքներում ցորենի և սերմերի բանկի ստեղծում:
- **Ջրի հասանելիության պահպանում.** ջրհորների հորատում և սպասարկում ստորգետնյա ջրերի հասանելիությունն ապահովելու համար, անձրևաջրերի հավաքում և պահեստավորում, ջրի արդար բաշխում:
- **Անասունների պահպանում.** սերմահատիկների և անասնակերի պաշարների ավելացում, ավելցուկային անասունների վաճառք, անասնաբուժական ծառայությունների բարելավում և պատվաստումների շրջանակի ընդլայնում, վարկային միջոցների հասանելիության ապահովում՝ կենդանիների պարտադրված վաճառքը կանխելու համար, երաշտից հետո անասունների նոսրացած հոտի վերականգնում, անասունների տեղափոխում դեպի արտավայրերով և ջրային ռեսուրսներով ավելի հարուստ տարածքներ:
- **Կենսապահովման միջոցների պաշտպանություն և բազմազանացում.** ապահովագրում, գյուղատնտեսական արտադրանքի բազմազանացում (ցանել տարբեր մշակաբույսեր, գցել տնամերձ այգիներ, խրախուսել ընտանի թռչուններ պահելը կամ ձկնաբուծարաններ հիմնելը, ինչպես նաև ֆերմայից դուրս աշխատանք, գների և տեղական շուկայի մասին տեղեկատվության հասանելիություն, բնական ռեսուրսների պաշտպանություն, այդ թվում՝ անտառներ, արոտավայրեր, ջրադեղյուրներ):
- **Տեղական և միջազգային վաղ ազդարարման համակարգեր.** կլիմայի մշտադիտարկում և կանխատեսում, երաշտների մշտադիտարկում, տնային պայմաններում օգտագործվող սննդի անվտանգության մշտադիտարկում, տեղեկատվության և ցուցումների տարածում, սցենարների պլանավորում:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները դանդաղ վրա հասնող աղետների համատեքստում կիրառելու համար

<p>1. Բարձրացնել վտանգի և կլիմայի փոփոխության համատեքստի ըմբռնման մակարդակը</p>	<ul style="list-style-type: none"> • Վերլուծել կլիմայի հետ կապված վտանգների վրա կլիմայի փոփոխության ազդեցության վերաբերյալ առկա տվյալները, բացահայտել ծրագրի իրականացման տարածքում վտանգների նոր միտումները (օրինակ՝ առավել հաճախ տեղի ունեցող երաշտներ, նոր հիվանդություններ և հիվանդության նոր դրսևորումներ, ուժեղ անձրևներ): • Միավորել վտանգների վերլուծությունը կլիմայի փոփոխության այլ երկարաժամկետ միտումների վերլուծության հետ, օրինակ, օդի և ջրի ջերմաստիճանի բարձրացում՝ ծրագրի համատեքստի վերաբերյալ ընդհանուր ըմբռնում ապահովելու համար: • Դիտարկել դանդաղ վրա հասնող վտանգների և կլիմայի փոփոխության ազդեցությունների առավել լայն աշխարհագրական ընդգրկույթը (ծրագրի իրականացման տարածքից և թիրախային բնակչության շրջանակներից դուրս) և նպաստել աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերի դիմակայմանը:
<p>2. Բարձրացնել վտանգի ենթարկվելու, խոցելիության և կարողությունների ըմբռնման մակարդակը</p>	<ul style="list-style-type: none"> • Վտանգների ժամանակ համադրեք բնակչության բաշխման վերաբերյալ տվյալները (և միգրացիայի ուղիներն՝ ըստ անհրաժեշտության) առկա վտանգի մեծության և ուժգնության վերաբերյալ տվյալների հետ՝ վտանգի ենթարկվելու աստիճանը որոշելու համար: Երկարաժամկետ պլանավորման գործընթացներում օգտագործել անցյալի տվյալները և կլիմայի փոփոխության կանխատեսումները՝ վտանգի ենթարկվելու հնարավոր աստիճանը որոշելու համար:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները դանդաղ վրա հասնող աղետների համատեքստում կիրառելու համար

<p>2. Բարձրացնել վտանգի ենթարկվելու, խոցելիության և կարողությունների ըմբռնման մակարդակը</p>	<ul style="list-style-type: none"> • Կանոնավոր կերպով անցկացնել խոցելիության մշտադիտարկում՝ կիրառելով այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են Հաղթահարման ռազմավարությունների ցուցանիշը⁶ (CSI) և երեխաների սուր թերսնման միտումները, որպես դանդաղ վրա հասնող աղետների և կլիմայական պայմանների երկարաժամկետ փոփոխությունների վերաբերյալ վաղ ազդարարման մեխանիզմներ: • Մշակել գնահատման մեթոդներ և իրականացնել մեկնարկային ուսումնասիրություններ՝ հավաքելով վտանգի ենթարկված բնակչության կողմից դանդաղ վրա հասնող աղետների ժամանակ կիրառվող հաղթահարման միջոցների վերաբերյալ տվյալներ (ավանդական և ժամանակակից), մշակել ծրագրեր դրանց հզորացման համար: • Կրթել և օգտագործել ազդեցիկ զանգվածային լրատվության միջոցները խոցելիության, վտանգի ենթարկվելու և վտանգի/կլիմայի փոփոխության ազդեցության միջև կապը հասկանալու ու այն հաղորդելու համար և շեշտել աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխություններին հարմարվելու համար ներդրումներ կատարելու անհրաժեշտությունը:
<p>3. Ճանաչել իրավունքներն ու պարտականությունները</p>	<ul style="list-style-type: none"> • Օգտագործել խոցելիության գնահատումները առողջապահական ծառայությունների, կրթության, շուկայի հասանելիության նկատմամբ անհավասարությունների և խոցելիության ազդեցությունների դեմ պայքարելու համար: • Երաշտների համատեքստում պայքարել ջրային ռեսուրսների և արոտավայրերի նկատմամբ սովորության իրավունքների ճանաչման համար: • Նպաստել այնպիսի քաղաքականությունների և օրենքների մշակմանը, որոնք ապահովում են պատեհ գործողություններ և միջոցների հատկացում դանդաղ, ինչպես նաև հանկարծակի վրա հասնող աղետների ժամանակ: • Նպաստել դոնորների և միջազգային հանրության ժամանակին արձագանքման գործընթացին՝ հիմնվելով վաղ ազդարարման տվյալների վրա:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները դանդաղ վրա հասնող աղետների համատեքստում կիրառելու համար	
<p>4. Խրախուսել ռիսկի ենթակա բնակչության մասնակցությունը և գործունեությունը</p>	<ul style="list-style-type: none"> • Ներգրավել վտանգի ենթակա բնակչությանը վաղ ազդարարման համակարգի ցուցանիշները հայտնաբերելու գործընթացում: Նրանց գիտելիքները և իմացությունը կօգնի որոշել ճգնաժամի մակարդակը և արտաքին միջամտության անհրաժեշտությունը: • Մինչ վտանգի ճգնաժամային կետին հասնելը՝ ապահովել սոցիալական աջակցության ցանցից դրամական օգնության տրամադրմանը, որի նպատակն է հնարավորություն տալ վտանգի ենթակա բնակչությանը ձեռնարկել միջոցներ՝ դիմակայմանը համապատասխանորեն նախապատրաստվելու համար: • Դանդաղ վրա հասնող ճգնաժամերի ժամանակ քննարկումներ անցկացնել վտանգի ենթակա բնակչության շրջանում համայնքի առաջնահերթ խնդիրների (օրինակ, ուղղված կենսապահովման միջոցների պաշտպանությանը), փորձի և ռեսուրսների վրա հիմնված ծրագրեր մշակելու համար: • Օժանդակել համայնքներին տեղեկատվության պակասը բացահայտելու համար, ինչը խոչընդոտում է ժամանակին համապատասխան գործողությունների նախաձեռնմանը, օրինակ, անասունների և բերքի հետ կապված շուկայական պայմանների փոփոխությանը, և օգնել վերջիններիս ուղիներ գտնել տեղեկատվության հասանելիության բարելավման համար:
<p>5. Խրախուսել համակարգված ներգրավման և փոփոխության գործընթացները</p>	<ul style="list-style-type: none"> • Նպաստել ժամանակին բոլոր համապատասխան դերակատարների միջև տեղեկատվության փոխանակմանը, որը պետք է շարունակական բնույթ կրի (մարդասիրական, զարգացման, պետական, ոչ պետական, մասնավոր հատվածի և քաղաքացիական հասարակության դերակատարների միջև)՝ որպես արտակարգ իրավիճակներում գործողությունների պլանի և արագ գործողությունների ձեռնարկման հիմք:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները դանդաղ վրա հասնող աղետների համատեքստում կիրառելու համար

<p>5. Խրախուսել համակարգված ներգրավման և փոփոխության գործընթացները</p>	<ul style="list-style-type: none"> • Նպաստել ՄԱԿ-ի և տվյալ երկրի կողմից բոլոր համապատասխան դերակատարների գործունեության համակարգմանը՝ բոլոր ոլորտների մասնակցությամբ արագ արձագանքման գործողության իրականացման և հիմնական դերակատարների պարտականությունների և պատասխանատվության շրջանակի հստակ սահմանման համար:
<p>6. Նպաստել տարբեր մակարդակների համատեղ գործունեության խթանմանը</p>	<ul style="list-style-type: none"> • Աջակցել տարբեր մակարդակների վաղ ազդարարման համակարգերի, արտակարգ իրավիճակների գործողության պլանների և չնախատեսված ծախսերի բյուջեների ստեղծմանը, ինչը կնպաստի գործողությունների արագ իրականացմանը տեղական և ավելի բարձր մակարդակներում և կհստակեցնի յուրաքանչյուր մակարդակի պարտականությունների և պատասխանատվության շրջանակները: • Նպաստել տեղական մակարդակի դերակատարների մասնակցությանն աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության վերաբերյալ հետադետային ազգային քննարկումներին և բաղաբաղականությունների մշակմանը, օժանդակել վերջիններիս կողմից տեղական տեսանկյունի վրա հիմնված տվյալների նախապատրաստման և ներկայացման գործընթացներին :
<p>7. Կիրառել և զարգացնել տարբեր աղբյուրներից ստացված գիտելիքներ</p>	<ul style="list-style-type: none"> • Նպաստել ռիսկի ենթակա բնակչության և կլիմայի փոփոխության տեղեկատվական աղբյուրների միջև կապի հաստատմանը, այդ թվում՝ նաև օդերևույթաբանական ծառայությունների հետ, և աջակցել, որպեսզի այդ տեղեկատվությունը տարածվի ռիսկի ենթակա բնակչության շրջանում և լինի մատչելի:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները դանդաղ վրա հասնող աղետների համատեքստում կիրառելու համար	
<p>7. Կիրառել և զարգացնել տարբեր աղբյուրներից ստացված գիտելիքներ</p>	<ul style="list-style-type: none"> • Օգտագործել կամ վերլուծել երկարաժամկետ զարգացման հեռանկարները՝ ծրագրի իրականացման տարածքում աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերի խորքային պատճառներն ավելի լավ ըմբռնելու համար: • Խորհրդակցել ռիսկի ենթակա բնակչության տարեց անդամների հետ՝ դիմակայման ավանդական ռազմավարությունների վերաբերյալ, խրախուսել համայնքների և այլ շահագրգիռ կողմերի միջև անցկացվող քննարկումները՝ կապված կլիմայի փոփոխության ներկա և ապագա սցենարների դեպքում այդ ռազմավարությունների հնարավոր արդյունավետության հետ: • Փաստաթղթային ձևակերպում տալ և տարածել նոր քաղված դասերը հանկարծակի վրա հասնող աղետների համատեքստում առկա հաջող փորձի վերաբերյալ:
<p>8. Ապահովել ճկունություն և արձագանքման հնարավորություն</p>	<ul style="list-style-type: none"> • Պարբերաբար գնահատել և վերահսկել աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերը բնական ռեսուրսների և էկոհամակարգերի համատեքստում կառավարման գործընթացը, փոփոխվող պայմաններից ելնելով՝ համապատասխանաբար ճշգրտելու և համապատասխան տարբերակների վերաբերյալ նոր տվյալներն ապագա պլանավորման գործընթացներում կիրառելու համար:
<p>9. Դիտարկել տարբեր ժամանակահատվածներ</p>	<ul style="list-style-type: none"> • Նպաստել ճկուն ֆինանսավորման աղբյուրների և մեխանիզմների ստեղծմանը դանդաղ վրա հասնող աղետներին արագ արձագանքելու նպատակով՝ վաղ ազդարարման վերաբերյալ տեղեկատվությունը ստանալուց հետո համապատասխան գործողությունների ուշացումը կանխելու համար: • Ներդրումներ կատարել նախապատրաստական գործընթացներում (ցորենի պաշարներ, կացարաններ ջրհեղեղի ժամանակ, երաշտի ժամանակ պահեստավորված պաշարների ժամանակին օգտագործման վերաբերյալ իրազեկում):

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները դանդաղ վրա հասնող աղետների համատեքստում կիրառելու համար	
9. Դիտարկել տարբեր ժամանակահատվածներ	<ul style="list-style-type: none"> • Աջակցել կամ իրականացնել ուսումնասիրություններ խոցելիության խորքային պատճառների, ինչպես նաև առկա կարիքների վերաբերյալ: • Ներառել դիմակայման կարողությունների զարգացման նախագծեր (օրինակ՝ շրաղբյուրների բարելավում/պաշտպանություն) մարդասիրական և արագ վերականգնման⁶ ծրագրերում, ինչը հնարավորություն կտա ռիսկի ենթակա բնակչությանը կառավարել ապագա աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերը:
10. Զվնասել	<ul style="list-style-type: none"> • Օգտագործել դանդաղ վրա հասնող աղետների երկարաժամկետ ընթացքը գործող հաստատությունական կառույցներին և սոցիալական օժանդակության ցանցերին համապատասխան անհրաժեշտ օժանդակություն ցուցաբերելու համար: • Նախապատրաստական աշխատանքների գործընթացում դիտարկել միջամտության հնարավոր ազդեցությունը տեղական շուկաների և սոցիալական առաջխաղացման գործընթացների վրա (ինչպիսիք են սննդի բաշխման ազդեցությունը տեղի շուկայական գների վրա, ինչպես նաև կանխիկ դրամի վրա հիմնված ծրագրերի ազդեցությունը տնային տնտեսությունների օժանդակմանն ուղղված համակարգերի վրա) և նախապատվությունը տալ այն միջամտություններին, որոնք արդյունավետորեն արձագանքում են գոյություն ունեցող կարիքներին և զարգացնում դիմակայման կարողություններ երկարաժամկետ հեռանկարում:



ԴԵՊՔԻ ՌԻՍԻԿՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ. ԶԱՐՄԱԲՆՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԲՈՒԿԻՎԱԾՅՈՒՄ ՍԱՌՑԱԴԱՇՏԵՐԻ ԱՐԱԳ ԶԱԼԿԵԼՈՒ ԴՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՏԱՄԱԲ

Բոլիվիա, CARE կազմակերպությունը GEF, WB, DIFD, CIDA, UN-HABITAT կազմակերպությունների հետ համատեղ

Անդյան լեռների սառցադաշտերի նահանջը, որը տալիս է երկրագնդի բաղադրահամ ջրի 10 տոկոսը, հանգեցնում է ջրային ռեսուրսների նվազեցման,

ինչպես նաև նպաստում հանկարծակի վրա հասնող աղետների (օրինակ՝ սողանքներ, ցեխաբարային հեղեղումներ, սառցադաշտային լճերի ճեղքում), ռիսկի աճին, ինչն անմիջական ազդեցություն է գործում այն աղբատ և խոցելի համայնքների վրա, որոնք տեղակայված են սառցադաշտերի նահանջի անմիջական ազդեցությունը կրող տարածքներում: CARE կազմակերպության կողմից (2008թ. հուլիսից մինչև 2012թ. սեպտեմբեր)՝ իրականացված «Անոյան լեռների տրոպիկական տարածքներում սառցադաշտերի նահանջի ազդեցությանը հարմարվելու» ծրագրի (PRAA) նպատակն էր հզորացնել տեղի էկոհամակարգերի և տնտեսության դիմակայունությունը:

Անոյան լեռների տրոպիկական շրջանների, Էկվադորի, Պերուի, Բոլիվիայի այն տարածքներում, որոնք տուժել էին սառցադաշտերի արագ նահանջի արդյունքում ծրագրից նախատեսում էր հզորացնել տեղի էկոհամակարգերի և տնտեսության դիմակայունության հնարավորությունները՝ կլիմայի փոփոխության հարմարվողականության հետ կապված փորձնական նախագծերի իրականացման միջոցով, հատկապես, կապված սառցադաշտերի նահանջի հետ:

Այս նպատակին հասնելու համար CARE կազմակերպությունը **կիրառել և զարգացրել էր տարբեր աղբյուրներից ստացված գիտելիքներ՝** հավաքելով դրանք համայնքներից, տեղական և տարածքային իշխանություններից, հասարակական կազմակերպություններից, ինչպես նաև համագործակցելով համալսարանների, գիտահետազոտական ինստիտուտների և օդերևութաբանական ծառայությունների հետ:

Յամայնքների կողմից ներկայացված տեղեկությունների համաձայն, վերջին տարիներին նկատվել էր ջերմաստիճանի բարձրացում և տեղումների դրսևորումների փոփոխություն: Ֆերմերները ստիպված են եղել աճեցնել կարճաժամկետ մշակաբույսերի տեսակներ, որոնք միշտ չէ, որ ցրտադիմացկուն կամ չորադիմացկուն են եղել, և անձրևային տեղումների փոփոխությունը ազդել է անձրևներից կախված մշակաբույսերի աճի վրա: Թեև համայնքների մեծ մասը նկատում էր, որ տարիների ընթացքում սառցադաշտի չափերը փոքրանում են, ուշադրություն չէին դարձնում դրա հետ կապված փոփոխություններին, (օրինակ, հոսքային ջրերի առաջացմանը), այնքան ժամանակ, մինչև այդ փոփոխության արդյունքում ջրի մատչելիությունը չսպառնաց դառնալ հետագա հակամարտությունների աղբյուր: Այն տարածքներում, որտեղ տղամարդիկ հիմնականում ընդգրկված են գյուղատնտեսության հետ չառնչվող աշխատանքներում, ինչպիսին է, օրինակ՝ հանքարդյունաբերությունը, գյուղատնտեսական աշխատանքների կատարման և ընտանիքի խնամքի պատասխանատվությունը կրում են կանայք, ինչը նրանց առավել խոցելի է դարձնում մշակաբույսերի աճեցման բացասական ազդեցությունների նկատմամբ: Կանայք խիստ մտահոգված են ջրի որակի հետ կապված հարցերով և բերքին ու առողջությանը սպառնացող ռիսկերով: Առանց անմիջականորեն խոսելով խոնավ տարածքների կորստի մասին, համայնքները նշում են կենսապահովման միջոցների վրա բացասաբար ազդող այնպիսի երևույթներ, ինչպիսիք են հաճախակի դարձած երաշտները, սառնամանիքները և կարկուտը, որոնք հանգեցնում են անասունների կորստի, բերքի քանակի նվազեցման, ինչպես նաև նախկինում լավ կառավարելի ցանքի և բերքահավաքի փուլերի փոփոխության, անասունների և մշակաբույսերի վնասատուների ու հիվանդությունների աճի, մշակաբույսերի կենսաբազմազանության կորստի, չորային եղանակին

աղբյուրների և ջրային ռեսուրսների անհետացման՝ առաջացնելով ընդհարումներ ջրօգտագործողների միջև, կարճ ժամանակում հաճախակի կրկնվող հորդառատ անձրևների՝ հանգեցնելով հաճախակի ջրհեղեղների և սողանքների և, վերջապես, ավելի կարճ տևող ցուրտ եղանակի, ինչն անհնարին է դարձնում ավանդական գյուղատնտեսության վարումը, այն է՝ կարտոֆիլի չորացումը (Անդյան լեռների տարածքում բնակիչների սննդի պահեստավորման գործընթաց)՝ սպառնալով սննդի անվտանգությանը:

CARE կազմակերպությունն օգտագործում է Կլիմայի փոփոխության նկատմամբ խոցելիության և կարողությունների վերլուծության ձեռնարկը՝ փորձնական ծրագրեր մշակելու և իրականացնելու համար: Թիրախային ջրային ավազանների համակարգման վրա հիմնված միջամտությունները ներառում են մարգագետինների պահպանումը և անտառների վերականգնումը՝ ջրատար շերտը վերականգնելու համար, կաթիլային ոռոգումը, երաշտի և ջերմաստիճանի նկատմամբ դիմացկուն մշակաբույսերի ցանքի օգտագործման հիմնավորումը, այլայլան տունդրայի (պարամոս) կառավարման պլանները, հողի պահպանման փորձերի հաստատումը, գյուղատնտեսությունից բացի, այլ գործունեության զարգացումը, որն ավելի քիչ է ճնշում գործադրում ջրի և այլ բնական ռեսուրսների վրա և ավելի քիչ է զգայուն կլիմայի փոփոխության հանդեպ:

Փորձնական նախագծերի արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ նախագծի տարածքներում հաստատութենական և քաղաքական կառույցներ կամ գոյություն չունեն, կամ էլ նոր են սկսում ստեղծվել և բնական ռեսուրսների կառավարում չի իրականացվում: Բնակչության շրջանում պակասում են պլանավորման գործընթացների վերաբերյալ գիտելիքներ՝ տարբեր մակարդակներում կլիմայի փոփոխության ազդեցություններին արձագանքելու կամ աղետների ռիսկի կառավարման քաղաքականությունների վերաբերյալ: Բացակայում է նաև կլիմայի սցենարների հետ կապված տեղեկատվությունը (քաղաքականություն մշակողների որոշումներին սատարելու համար) և այն, թե ինչպես են դրանք ազդելու ջրային պաշարների վրա:

Քաղված դասերը խոսում են այն մասին, որ անիրաժեշտ է (ա) հարմարեցնել CARE կազմակերպության «Կլիմայի խոցելիություն և կարողությունների վերլուծություն» ձեռնարկի գործիքները տեղական համատեքստի հետ, որպեսզի վերջինս առավել մանրակրկիտ տեղեկատվություն տրամադրի այն հատուկ բնական ռեսուրսների վերաբերյալ, որին պետք է անդրադառնա տվյալ ծրագիրը, (բ) ծրագրի աշխատակազմին ներկայացնել Կլիմայի խոցելիության և կարողությունների վերլուծության (CVCA) ակնկալվող արդյունքները և այն չորս ռազմավարությունը, որոնք կշված են CARE-ի համայնքահեն հարմարվողականության հայեցակարգում, քանի որ աշխատակիցներն, ընդհանուր առմամբ, կարող են համայնքային մակարդակի խոր վերլուծություններ կատարել, սակայն չունեն բավարար գիտելիքներ և կարողություններ նույն խորքային վերլուծություններն իրականացնել տեղային/քաղաքային և ենթազգային մակարդակներում: (գ) զարգացնել ծրագրի աշխատակազմի համապատասխան կարողությունները՝ կլիմայի փոփոխության և դրանց նկատմամբ հարմարվողականության տարբեր հիմնական հայեցակարգերը և Կլիմայի փոփոխության նկատմամբ խոցելիության և կարողությունների վերլուծության տարբեր գործիքներն ըմբռնելու և դրանց վերաբերյալ ուսումնական գործընթացը հեշտացնելու համար: (դ) բարելավել վերլուծությունը՝ համագործակցելով այլ մասնագիտացված

հաստատությունների հետ, բարելավել նաև տարբեր շահագրգիռ կողմերի միջև համակարգման գործընթացը. (ե) հզորացնել կլիմայի փոփոխության վտանգների հետ կապված բազմակողմանի վերլուծության արդյունքներն առավել ստույգ մեկնաբանելու այն իրադարձությունները, որոնք իրականում տեղի են ունենում տեղական մակարդակով և, այնուհետև, պլանավորել հիմնավորված հարմարվողականության և օգնություն ցուցաբերելու միջոցառումները և (զ) սահմանել սեմինար պարապմունքների ժամանակացույց ընդգրկված համայնքների համար՝ վերջիններիս հետ ժամկետների համաձայնությամբ, ինչը հնարավորություն կտա հավաքագրել տվյալ խնդրի հետ կապված խոցելի խմբերի ընկալումները:

Գործիքներ և ռեսուրսներ

Տեղեկատվության և հղումների համար *տես՝ էջ 288 Գործիքներ և ռեսուրսներ*:

6

**ԲԱՐԵՆՊԱՍՏ ՄԻԶԱԿԱՅՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ
ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ
ԵՎ ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ
ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ**

Գլուխ 6. Նախատեսվում է օգնել զարգացման և մարդասիրական գործունեության ոլորտում ընդգրկված աշխատակիցներին հասկանալ, թե ինչպես կարելի օգնել ռիսկի ենթակա համայնքներին և խրախուսել կառավարություններին և քաղաքացիական հասարակությանը⁵ ստեղծելու բարենպաստ միջավայր աղետների և կլիմայի փոփոխություններին դիմակայելու համար՝ ոլորտի շահերի պաշտպանության և կառավարման հետ կապված գործունեության միջոցով: Այն ներառում է.

- *Բացատրություններ.*
 - Առանցքային տերմիններ, հիմնական հայեցակարգեր և մոտեցումներ, որոնք վերաբերում են կառավարմանը, շահերի պաշտպանությանը և բարենպաստ միջավայրի ստեղծմանը,
 - Հիմնական հարցեր, որոնք վերաբերում են կառավարմանը, պաշտպանությանը, աղետների ռիսկի նվազեցմանը⁶ և կլիմայի փոփոխության հարմարվողականությանը⁶:
- *Ցուցումներ՝* աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության հետ կապված կառավարման և պաշտպանության գործընթացներում համալիր մոտեցում ցուցաբերելու համար, ներառյալ 10 սկզբունքների կիրառումը:
- *Դեպքերի ուսումնասիրություններ* կապված աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության կառավարման և շահերի պաշտպանության գործընթացների հետ:
- *Գործիքների և ռեսուրսների,* համապատասխան կազմակերպությունների հղումներ՝ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության գործընթացները կառավարման և շահերի պաշտպանության համատեքստում իրականացնելու համար:

6.1 Կառավարում

Կառավարումը⁶ քաղաքական, տնտեսական և վարչական իշխանության իրականացումն է երկրի կառավարման բոլոր մակարդակներում: Այն բաղկացած է պաշտոնական և ոչ պաշտոնական մեխանիզմներից, գործընթացներից և հաստատություններից, որոնց միջոցով քաղաքացիներն ու տարբեր խմբեր արտահայտում են իրենց հետաքրքրությունները, իրականացնում օրինական իրավունքները, կատարում պարտավորությունները և կարգավորվում հակասությունները: Եթե ղեկավարումն իրականացնում է կառավարությունը, այն ներառում է նաև հասարակության բոլոր համապատասխան խմբերին, այդ թվում նաև՝ մասնավոր հատվածը և հասարակական կազմակերպությունները, տնային տնտեսություններից և տեղական մակարդակից մինչև տարածքային, ազգային և միջազգային մակարդակներ: Աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության⁶ հարմարվողականության կարողությունների զարգացմանն ուղղված լավ կառավարումը իրականություն է դառնում է, երբ հմուտ, հաշվետու, թափանցիկ, մեծ ընդգրկույթ ապահովող և արագ արձագանքող կառավարություններն աշխատում են քաղաքացիական հասարակության, մասնավոր հատվածի և ռիսկի ենթակա բնակչության հետ համատեղ՝ հասարակության աղետներին⁶ նախապատրաստվելու և արձագանքելու ու կլիմայի փոփոխության հարմարվողականության կարողությունները⁶ բարելավելու համար բարենպաստ միջավայր ստեղծելու նպատակով: Մի շարք գործոններ ազդում են (դրականորեն կամ բացասաբար) այդ գործընթացի վրա, ներառյալ կառավարման պաշտոնական մեխանիզմները, ինչպիսիք են ուժային կառույցները, մշակութային և կրոնական նորմերը և քաղաքական գաղափարախոսությունը, որոնք նույնպես կարող են հանդես գալ որպես ռիսկի որոշիչ գործոններ:

Ձանի որ կառավարման համատեքստը սահմանում է, թե վտանգներից⁶ պաշտպանվելու, արդյունավետ վերականգնվելու և երկարաժամկետ հեռանկարում փոփոխություններին հարմարվելու համար ինչպես են ռեսուրսները, հմտություններն ու տեխնոլոգիաները հասանելի դառնում մարդկանց, ապա աղետների ռիսկի նվազեցման⁶ և կլիմայի փոփոխության հարմարվողականության ոլորտի աշխատակիցները պետք է հասկանան այդ համատեքստը: Անհատների և կազմակերպությունների դերի մասին տեղեկացված լինելը համայնքի ներսում և համայնքից դուրս, ինչպես նաև բնակչության տարբեր հատվածների հետ, մասնավորապես, վտանգի ենթակա խմբերի հետ նրանց փոխհամագործակցության մասին իմացությունը, մասնավորապես, և լավ կառավարմանը խոչընդոտող ու սահմանափակող գործոնների բացահայտումը կարող են օգնել այդ աշխատակիցներին պլանավորել և իրականացնել երկարաժամկետ և կայուն նախագծեր ու ծրագրեր՝ ընդգրկուն ազդեցությամբ:

6.1 կառավարման տարբեր բնույթի օրինակներ

Կազմակերպություններ

- **Ֆանրային.** գյուղատնտեսական գիտելիքների տարածման բաժիններ, որոնք ապահովում են կենսապահովման միջոցների վերաբերյալ տեղեկատվության հասանելիություն:
- **Մասնավոր.** ինսյոդավարկային կազմակերպություններ, որոնք աջակցում են բնակչության աղքատ խավերին, որպեսզի վերջիններս օգտվեն վարկային միջոցներից իրենց կենսապահովման համար ներդրումներ կատարելու կամ ինսյոդություններ անելու նպատակով:
- **Քաղաքացիական հասարակություն.** համայնքային կոոպերատիվներ քաղաքային բնակավայրերում, որոնք աջակցում են բնակիչների կարիքների բավարարմանը:

Քաղաքականություններ և գործընթացներ

- **Քաղաքականություն.** հողօգտագործման ազգային քաղաքականություններ, որոնք կարող են կրճատել վտանգի ենթարկվելու աստիճանը և արգելել կառուցապատումը ջրհեղեղների հակված տարածքներում:
- **Օրենսդրություն.** շինարարական կանոններ և նորմեր, որոնք սահմանում են վտանգների նկատմամբ դիմակայուն ենթակառուցվածքների, շենքերի ու շինությունների նվազագույն չափորոշիչները:
- **Չաստատություններ.** իշխանությունների հարաբերությունները միսկի ենթակա բնակչության շրջանում, որոնք վերահսկում են հողային, ջրային և այլ ռեսուրսներից օգտվելու հնարավորությունները:

Առանցքային խնդիրներ

Աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերը բազմաթիվ բարդ խնդիրներ են առաջացնում կառավարման համար:

- **Բաշխման և հավասարության կապը.** աղետները և կլիմայի փոփոխության ազդեցությունները տարբեր խմբերի վրա տարբեր ներգործություն են ունենում, այդ պատճառով գոյություն ունի միասնական մոտեցում բոլոր իրավիճակների համար: Սա նշանակում է, որ կիրառվող մոտեցումները պետք է հաշվի առնեն տվյալ տեղանքի համատեքստը և համապատասխանորեն ծրագրեն և իրականացնեն արձագանքման գործողությունները:
- **Սոցիալական ընդգրկույթ.** կլիմայի փոփոխություններն ազդում են հասարակության բոլոր հատվածների վրա: Նշանակում

Ե, որ կառավարությունները, հաստատությունները և այլ կազմակերպություններ պետք է ըմբռնեն միմյանց հետ կապված բազմաթիվ հարցերի եռությունը և դրանց փոխադարձ կապը կլիմայի փոփոխության հետ: Սա կառավարման գործընթացը դարձնում է դժվար և բարդ:

- **Գիտական անորոշություն.** թեև մենք այսօր ավելի շատ բան գիտենք կլիմայի փոփոխության վերաբերյալ, քան երբևէ, աղետները և կլիմայի փոփոխության ռիսկերը մեզ բազմաթիվ անորոշությունների առջև են կանգնեցնում՝ ավելի բարդացնելով որոշումների կայացման գործընթացը:
- **Ժամանակային գործոն.** այն ժամանակը, որն անհրաժեշտ է աղետների և կլիմայի փոփոխության համատեքստում դրական ազդեցությունների հասնելու համար, կարող է գերազանցել կառավարության ժամկետը, ինչը կարող է աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության գործընթացը ոչ գրավիչ դարձնել կառավարության որոշում կայացնողների նամար:
- **Գլոբալ հետևանքներ.** կլիմայի փոփոխության պատճառները և ազդեցությունները միջազգային բնույթ են կրում և արձագանքը պետք է ընդհանուր լինի: Համընդհանուր մակարդակով միջազգային ջանքերի համակարգումը դեռևս կարևոր խնդիր է՝ թողնելով գլոբալ մասշտաբով կառավարման հարցը, հիմնականում, չլուծված:

Շատ երկրներում մեծ ռիսկի ենթակա տարածքներում գործող կառավարման համակարգերի աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված գործունեությունը չի ծառայում իր նպատակին: Աղետների ազդեցության առաջնային գծում մեծանում է անջրպետը ՄԱԿ-ի Հյուսիս գործողությունների ծրագրի և դրա իրականացման միջև: Տեղական ռիսկերի կառավարումը սահմանվում է որպես տեղական մակարդակով ռիսկերի նվազեցման արագացմանն ուղղված արդյունավետ առանցքային գործունեություն, որը ներառում է տեղական իշխանությունների և տեղի շահագրգիռ կողմերի⁶ կողմից համատեղ որոշումների ընդունումը, բաց համագործակցությունը տեխնիկական և գործառույթային այնպիսի առաջադրանքների շուրջ, ինչպիսիք են ռիսկերի գնահատումը, պլանավորումն ու բյուջեի ձևավորումը, ինչպես նաև տեղական ռիսկերի կառավարման քաղաքական պատասխանատվության բարձրացումը, որտեղ մեծ է պետական հատվածի հաշվետվողականության դերը, ինչը չի կարող իրականացվել մեկուսացված պայմաններում: Տեղական ռիսկերի կառավարմանը պետք է օժանդակեն ազգային և միջազգային մակարդակի կոալիցիաներն ու դաշինքները:

6.2 Տեղական ռիսկերի կառավարման ցուցանիշների օրինակներ

Ներգրավում և մասնակցություն

- Բոլորի, հատկապես խոցելի և մարգինալ խմբերի մասնակցության ապահովում՝ բոլոր մակարդակներում որոշումներ կայացնելու և դրանք իրականացնելու համար:
- Գենդերային հավասարություն՝ ապահովելով կանանց և տղամարդկանց հավասար մասնակցությունը որոշումների կայացման և դրանց իրականացման գործընթացում:
- Երեխաների և երիտասարդների հատուկ կարիքների դիտարկում:
- Համագործակցություն տեղական իշխանությունների, համայնքի, մասնավոր հատվածի, քաղաքացիական հասարակության, գիտական շրջանակների և այլոց հետ՝ տվյալների համատեղ ստեղծման գործընթացը խթանելու համար:

Տեղական կարողություններ

- Ռիսկերի նվազեցման քաղաքականության առկայություն՝ խոցելի մարդկանց աղետներից և կլիմայի փոփոխության ազդեցություններից պաշտպանելու համար (տարեց մարդիկ, ազգային փոքրամասնություններ, երեխաներ և երիտասարդներ, հաշմանդամներ, միգրանտներ), որը պետք է պարբերաբար վերանայվի:
- Տեղական ռիսկերի նվազեցման փորձը հաշվի է առնում տեղերում առկա տվյալները, հմտություններն ու ռեսուրսները:
- Տեղական համատեքստի վրա հիմնված գործողությունների պլանի առկայություն՝ քաղաքականությունը գործնականում կիրառելու համար:
- Տեղական իշխանություններն ունեն ռիսկերի նվազեցման համար նախատեսված բյուջե:

Հաշվետվողականություն և թափանցիկություն

- Ելակետի կամ մեկնարկային կետի սահմանում՝ որից չափվում է ռիսկերի նվազեցման քաղաքականության առաջընթացը:
- Համայնքներն ու քաղաքացիական հասարակությունը տեղական իշխանությունների հետ միասին ընդգրկված են ռիսկերի նվազեցման մշտադիտարկման գործընթացում՝ բողոքներ ներկայացնելու և առաջընթացի բացակայության դեպքում պատասխաններ ստանալու համար:
- Տվյալների կանոնավոր հավաքագրում՝ աղետների ռիսկերը և կլիմայի փոփոխությունները դիտարկելու և քարտեզագրելու համար:
- Ռիսկերի և դրանց կանխարգելման վերաբերյալ թարմացված և մատչելի տեղեկատվության կանոնավոր տրամադրում խոցելի խմբերին:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները կառավարման համատեքստում կիրառելու համար

<p>1. Բարձրացնել վտանգի և կլիմայի փոփոխության համատեքստի ըմբռնման մակարդակը</p>	<ul style="list-style-type: none"> • Ռիսկի ենթակա բնակչության շրջանում բարձրացնել աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերի վերաբերյալ իրազեկման մակարդակը, որպեսզի վերջիններս կարողանան խրախուսել կառավարությանը և այլ համապատասխան կազմակերպություններին ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցներ ձեռնարկելու համար: • Գնահատել հայտնի վտանգների հնարավոր ազդեցությունը և կլիմայի փոփոխության կանխատեսվող ազդեցությունը կառավարման գործող կառույցների վրա, հատկապես այնտեղ, որտեղ գոյություն ունեն բազմաթիվ կառավարման կառույցներ (օրինակ, երբ ջրհավաք կառույցները ձգվում են մեկից ավելի վարչական տարածքներով):
<p>2. Բարձրացնել վտանգի ենթարկվելու, խոցելիության և կարողությունների ըմբռնման մակարդակը</p>	<ul style="list-style-type: none"> • Գնահատել գործող կամ առաջարկվող ծրագրերի հետ կապված կառավարման համատեքստը՝ բացահայտելու որոշումների կայացման գործընթացի այն ամենաանհրաժեշտ ելակետը, որը կարող է ազդել ռիսկի ենթակա բնակչության վրա: Սա ընդգրկում է պլանավորման գործընթացներ, համապատասխան հաստատություններ ու դերակատարներ՝ որոշումների կայացման գործընթացները և առկա քաղաքականություններն ու նախաձեռնությունները ավելի լավ հասկանալու համար, մասնավորապես, թե ինչպես են դրանք նվազեցնում բնակչության վտանգի ենթարկվելու⁶ ու խոցելիության աստիճանը և ստեղծում դիմակայման կարողություններ:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները կառավարման համատեքստում կիրառելու համար

<p>3. Ճանաչել իրավունքներն ու պարտականությունները</p>	<ul style="list-style-type: none"> • Մշտադիտարկման ենթարկել և վերահսկել սահմանված թիրախային հարցերի (եթե կան այդպիսիք) և նպատակների իրականացման առաջընթացը՝ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համար և այդ մասին տեղյակ պահել ռիսկի ենթակա բնակչությանը, տեղական իշխանություններին և այլն:
<p>4. Խրախուսել ռիսկի ենթակա բնակչության մասնակցությունը և գործունեությունը</p>	<ul style="list-style-type: none"> • Բարձրացնել պետական մարմինների հաշվետվողականությունը՝ տեղերում բարելավելով ժողովրդավարության մակարդակը (ներառյալ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության գործողությունների ապակենտրոնացումը): • Օժանդակել որոշումների կայացման ապակենտրոնացված և մասնակցային գործընթացներին՝ ռիսկի ենթակա բնակչության և ամենախոցելի խմբերի ձայնը հասանելի դարձնելու համար: Տեղական իշխանություններին տալ համապատասխան լիազորություններ, տրամադրել տվյալներ և ռեսուրսներ, որպեսզի նրանք շահագրգիռ կողմերի հետ միասին ավելի լավ կարողանան արձագանքել տեղական կարիքներին և սպասելիքներին:
<p>5. Խրախուսել համակարգված ներգրավման և փոփոխության գործընթացները</p>	<ul style="list-style-type: none"> • Վնդրադառնալ հիմնական համակարգային խնդիրներին, ինչպիսիք են ուժային կառույցների հետ կապված խնդիրները, քաղաքական գաղափարախոսությունը, մշակութային գործոնները և այլն, քանի որ դրանցից շատերն ազդում են ռիսկի ենթակա բնակչության վրա և խորացնում նրանց աղետների և կլիմայի փոփոխության նկատմամբ խոցելիության աստիճանը:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները կառավարման համատեքստում կիրառելու համար

<p>6. Նպաստել տարբեր մակարդակների համատեղ գործունեության խթանմանը</p>	<ul style="list-style-type: none"> • Խրախուսել պետական իշխանությունների և հաստատությունների համագործակցությունն աղետների և կլիմայի ռիսկերի նվազեցման գործընթացում՝ հաղթահարելով հաստատութենական խոչընդոտները կամ ստեղծել խմբեր, որոնք համագործակցում են բազմազան, այլ ոչ թե առանձին հարցերի շուրջ: • Ուժեղացնել կապերը տեղական, տարածքային կամ ազգային մակարդակներում՝ բոլոր մակարդակներում պաշտպանություն իրականացնելու , գործընթացներ մշակելու կամ կառույցներ ստեղծելու միջոցով, որոնք կնպաստեն տվյալների փոխանակմանը ներքևից վերև և՛ հակառակը:
<p>7. Կիրառել և զարգացնել տարբեր աղբյուրներից ստացված գիտելիքներ</p>	<ul style="list-style-type: none"> • Նպաստել բազմաթիվ շահագրգիռ կողմերի աղբյուրներից ստացված տվյալների ներառմանը կառավարման հետ կապված որոշումների կայացման գործընթացում՝ միջլորտային քաղաքականության մշակման և համակարգման գործընթացների ոժանդակելու համար:
<p>8. Ապահովել ճկունություն և արձագանքման հնարավորություն</p>	<ul style="list-style-type: none"> • Արագ արձագանքել քաղաքական դաշտի փոփոխություններին և դրա արդյունքում ստեղծվող կառավարման կառույցներին՝ ապահովելով աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության նախաձեռնությունների համապատասխանությունը փոփոխվող իրավիճակներին: • Նպաստել, որպեսզի կլիմայի փոփոխության ազդեցությունների վերաբերյալ լավագույն տեղեկատվությունը հասանելի լինի վտանգի ենթակա բնակչությանն ու կառավարությանը, հնարավորություն տալով վերջիններին համապատասխանաբար պլանավորել կամ շարունակել հարմարեցնել իրենց պլանները:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները կառավարման համատեքստում կիրառելու համար

<p>9. Դիտարկել տարբեր ժամանակահատվածներ</p>	<ul style="list-style-type: none"> • Համագործակցել կառավարության տարբեր մակարդակների հետ՝ որպեսզի վերջիններս կարողանան օգտվել տարբեր ժամանակների գիտական տվյալներից: • Ընդունել, որ այնպիսի խնդիր, ինչպիսին կլիմայի փոփոխությունն է, զարգանում է երկար տարիների ընթացքում և կարող է չհամապատասխանել քաղաքականության մշակման ժամանակահատվածի հետ, որը հակված է առաջնորդվել կարճաժամկետ ընտրական ցիկլերով և մշակել դրանց արձագանքելու ռազմավարություններ:
<p>10. Չվնասել</p>	<ul style="list-style-type: none"> • Համագործակցել կառավարության տարբեր մակարդակների հետ՝ ջերմոցային գազերի արտանետումների կրճատմանն ուղղված օրենքների մշակման կամ ընդունված օրենքների պարտադիր իրականացման համար: • Աջակցել քաղաքականություն մշակողներին և որոշում կայացնողներին՝ ապահովելով վերջիններիս համար աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերի վերաբերյալ տեղեկում առկա տեղեկատվության, ինչպես նաև գիտական տվյալների մատչելիությունը:

ԴԵՊԻ ՌԻՍԿՆԵՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ. ԲԱՂԱԶԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՐՆ ԱՐԵՏՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆՆ ՈՒՂՎԱԾ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ինդոնեզիա, ECB Indonesia կոնսորցիում, Ինդոնեզիայի մարդասիրական հարցերով ֆորումի նախագահ (HFI), Ինդոնեզիայի աղետների կառավարման միության նախկին գլխավոր քարտուղար (MPBI)

Ինդոնեզիան բաղկացած է 17,000 կղզիներից, որոնք ձգվում են հասարակածի երկայնքով, ունի 234.2 մլն բնակչություն և համարվում է երկրագնդի աղետների ազդեցությանն ամենահաճախ ենթարկվող երկրներից մեկը: Ինդոնեզիայում տարեկան ավելի քան 600,000 մարդ տուժում է աղետների հետևանքներից

(ՄԱԿ-ի Աղետների ռիսկի համընդհանուր գնահատում, 2009թ.): Միայն 2011թ. առաջին եռամսյակում Ինդոնեզիայում տեղի են ունեցել 67 զգալի ուժգնությամբ երկրաշարժեր (5.0 բալ և ավելի բարձր): Հրաբխային ժայթքումները, ջրիեղելները, սողանքներն ու ցունամիները շարունակական վտանգ են ներկայացնում: Համաձայն Պարենային քաղաքականության մշակման միջազգային հետազոտման ինստիտուտի տվյալների (IFPRI), կլիմայի փոփոխության արդյունքում Ինդոնեզիայում մինչև 2030թ. կանխատեսվում է ջերմաստիճանի բարձրացում մոտ 0.8°C-ով՝ ավելի վաղ ավարտվող անձրևային սեզոնով և անձրևային սեզոնի ընդհանուր տևողության կրճատմամբ:

2004թ. դեկտեմբերին Սումատրա կղզու հյուսիսային մասի Աչեի նահանգում տեղի ունեցած երկրաշարժն ու ցունամին առաջին պլան մղեցին մարդասիրական օգնության ցուցաբերման գործընթացում վաղ ազդարարման համակարգերի, նախաաղետային պատրաստվածության և շահագրգիռ կողմերի միջև համակարգման խնդիրների բարելավման անհրաժեշտությունը: Աղետների կառավարման վերաբերյալ օրենքի մշակումը դարձավ գերակա խնդիր, թեև դրան ուղղված բայլերը դանդաղում էին:

Հաշվի առնելով ռիսկի բարձր աստիճանը ամբողջ երկրով մեկ և **խրախուսելով համակարգված ներգրավման և փոփոխության գործընթացները**, ինչպես նաև **խթանելով ռիսկի ենթակա բնակչության մասնակցությունն ու գործողությունների ձեռնարկումը**, ECB Indonesia կոնսորցիումը քննարկումներ նախաձեռնեց փոքր խմբերի միջև, այդ թվում նաև մարդասիրական օգնության շահագրգիռ դերակատարների հետ, որոնք հետաքրքրված էին աղետների կառավարման ազգային օրենքի մշակման հարցում, և 2005թ. մարտին կազմակերպեց աշխատանքային քննարկում, որին մասնակցեցին անհատ շահագրգիռ կողմեր և 29 կազմակերպություն, այդ թվում քաղաքացիական հասարակության, տեղական և միջազգային ՀԿ-ների, ՄԱԿ-ի, նախարարությունների, ռազմական և ոստիկանության կառույցների ներկայացուցիչներ: Արդյունքում ստեղծվեց աշխատանքային խումբ, որը և ստանձնեց օրենքի նախագծի մշակումը: Ինդոնեզիայի Աղետների կառավարման միությունը շահույթ չհետապնդող կազմակերպություն է, որում ընդգրկված են աղետների կառավարման ոլորտի աշխատակիցներ, գիտնականներ, կառավարության ներկայացուցիչներ, միջազգային և տեղական կազմակերպություններ և հաստատություններ, որոնք գործում էին որպես այդ խմբի աշխատանքի համակարգողներ:

Այնուհետև, տեղի ունեցավ երկրորդ աշխատանքային հանդիպումը, որի ընթացքում համատեղ վերանայվեց աղետների կառավարման օրենքի սկզբնական տարբերակը և ներկայացվեց Ներկայացուցիչների պալատ՝ հանրային լուսմների: Արդյունքում Ներկայացուցիչների պալատի անդամները հայտարարեցին, որ օրենքի նախագիծը մշակված է, սակայն դեռևս ընդունված չէ:

Ճանաչելով իրավունքներն ու պարտականությունները, նախաձեռնվեց երկու միաժամանակ ընթացող օրենքի պաշտպանությանն ուղղված գործընթաց՝ Ներկայացուցիչների պալատի օրենսդրական օրակարգում օրենքին առաջնահերթություն տալու նպատակով: Զաղաքացիական հասարակության ուժերով սկսվեց համայնքների իրագեկման բարոգարչավ և կազմակերպվեցին մի շարք քննարկումներ տեղի շահագրգիռ կողմերի մասնակցությամբ այս նախաձեռնությանը սատար կանգնելու համար: Բազմաթիվ ձայների ներգրավման արդյունքում օրենքի նախագծի ընդունումը դարձավ գերակա խնդիր: Երկու տարվա ընթացքում օրենքի նախագիծը Ներկայացուցիչների պալատի 287

ամաչնահերթ նախաձեռնությունների ցանկում զբաղեցրեց երրորդ տեղը:

2007թ. ապրիլի 26-ին կառավարության կողմից ընդունվեց Ինդունեզիայի Զանրապետության Աղետների կառավարման թիվ 24 օրենքը: Օրենքն ընդունելուց հետո ստեղծվեց Աղետների կառավարման ազգային խորհուրդ, իսկ նահանգային ու շրջանային մակարդակներում ստեղծվեցին աղետների կառավարման տեղական մարմիններ, որոնք պատասխանատու են աղետների կառավարման համար (ներառյալ նախապատրաստվածությունը, օգնությունը, վերականգնման և վերակառուցման փուլերը):

2009թ. հունիսին «Բանակցություններ մարդասիրական գործունեության վերաբերյալ» ամսագիրը նշեց, որ «Աղետների կառավարման գործընթացում կա ամաչընթաց՝ նոր օրենքի մշակման հնարավորությամբ, իսկ աղետների հանդեպ վերաբերմունքը փոխվում է ճակատագրական ընկալումից դեպի պրոակտիվ կառավարման մոտեցում: Սակայն դեռևս անորոշ է, թե արդյոք այս շարժող ուժն ու էներգիան, որը ներկայում գոյություն ունի Ինդունեզիայում, կշարունակվի այլ վտանգների առաջացման դեպքում, օրինակ, տնտեսության անկման, կրոնական ծայրահեղականության, տարածաշրջանային անկայունության դեպքերում:

Գործիքներ և ռեսուրսներ

Տեղեկատվության և հղումների համար *տես էջ 288*. *Գործիքներ և ռեսուրսներ:*

6.2 Շահերի պաշտպանություն

Շահերի պաշտպանությունը մարդկանց, քաղաքականությունների, կառույցների և համակարգերի վրա ազդելու գործընթաց է՝ ուղղված դրական փոփոխությունների առաջացմանը: Այն նպատակ ունի ներգրավել մարդկանց, որպեսզի վերջիններս ավելի ակտիվ գործունեություն ծավալեն իրենց նպատակներին հասնելու համար: Պաշտպանության իրականացումը չպետք է թողնել մասնագետների կամ փորձագետների հույսին: Պաշտպանություն իրականացնողի դերը մարդկանց միջև հաղորդակցության հաստատման և կապի ստեղծման օժանդակում է, բանակցությունների վարումը, լավագույն փորձի ներկայացումը, ինչպես նաև այլ կազմակերպությունների և ցանցերի միջև միությունների և դաշինքների ստեղծումը:

Առանցքային խնդիրներ

Որպեսզի աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության գործընթացի պաշտպանությունը լինի առավել արդյունավետ և նպաստի դիմակայման կարողությունների ստեղծմանը, աշխատանքները պետք է իրականացվեն տարբեր մակարդակներում՝ սկսած տնային տնտեսություններից և տեղական մակարդակից մինչև տարածքային, ենթազգային, ազգային և միջազգային մակարդակներ, քանի որ աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերը տեղական մակարդակում դրսևորվելուց հետո պահանջում են տարբեր մակարդակների, մասնավորապես, գլոբալ մակարդակի միջամտություն: Օրինակ, 2010թ. Բանգլադեշում տեղի ունեցած «Այլա» ցիկլոնից հետո ECB ծրագրի կոնսորցիումը և այլ կազմակերպություններ տուժած բնակչության հետ համատեղ, տեղական և նահանգային մակարդակներում նախաձեռնեցին քարոզարշավ՝ գետի քանդված ամբարտակները վերականգնելու համար: Ազգային մակարդակով նույն խումբը նպաստեց Բանգլադեշի Աղետների կառավարման ակտի ընդունմանը: Աղետների ռիսկի նվազեցման գլոբալ ցանցը (GNDR) ՄԱԿ-ի աղետների ռիսկի նվազեցման միջազգային ռազմավարության (UNISDR) հետ համատեղ միջազգային մակարդակում ծավալեց պաշտպանական գործունեություն՝ ռեսուրսների կենտրոնացումն ազգային մակարդակով կանխելու և այդ ռեսուրսները տեղերում աղետների ռիսկի/կլիմայի փոփոխության հարմարվողականության գործընթացին հատկացնելու նպատակով, միաժամանակ՝ խրախուսելով մարդկանց մասնակցային իրավունքների իրականացումը և մասնակցությունը որոշումների կայացմանը:

6.3 Շահերի պաշտպանության մեթոդները

- **Չարաբերությունների հաստատում (կամ լրբբիւզ).** Չարաբերությունների հաստատման և երկխոսության նախաձեռնում է իշխանությունն ունեցող մարդկանց հետ՝ որոշ հարցերին կամ համայնքի կարիքներին անդրադառնալու համար: Այս գործընթացը ներառում է հարցի վերաբերյալ այդ մարդկանց իրազեկման բարձրացումը՝ նրանց վրա ազդելու և հնարավոր լուծումներ առաջարկելու համար:
- **Յանրության մոբիլիզացում (կամ քարոզարշավների ծավալում).** Յանրության իրազեկման բարձրացումն է իրավիճակի, ամկա ինդիքների և հնարավոր լուծումների վերաբերյալ՝ խրախուսելով նրան ծավալել գործունեություն կրթության միջոցով: Որոշ դեպքերում այս գործընթացն ընդգրկում է խմբակային քննարկումներ այն մասին, թե ինչ ազդեցություն կարող է ունենալ իրավիճակն իրենց վրա, ինչպես նաև խրախուսել դիմելու այն մարդկանց, ովքեր օժտված են անարդարությունը կանխելու համապատասխան լիազորություններով:
- **Չամագործակցություն զանգվածային լրատվամիջոցների հետ.** Պրակտիկ գործունեության ոլորտում ընդգրկված աշխատակիցները կարող են համագործակցել տեղական և ազգային լրատվամիջոցների հետ՝ իրավիճակի և հնարավոր լուծումների վերաբերյալ ուղերձներ հաղորդելու համար: Պետական պաշտոնյաները սովորաբար կարդում, դիտում և լսում են զանգվածային լրատվամիջոցները և սա կարող է հանդիսանալ ինդիքը նրանց հասցնելու արդյունավետ միջոց: Լրատվամիջոցները հասանելի են նաև բազմաթիվ ունկնդիրների, ովքեր կարող է հետաքրքրված լինեն իրավիճակով և ցանկանան ընդգրկվել գործընթացում:

Աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության և դիմակայման կարողությունների զարգացմանն ուղղված շահերի պաշտպանության գործունեությունը կարևոր է, քանի որ այստեղ անհրաժեշտ է անդրադառնալ աղետների և կլիմայի փոփոխության ինչպես արտաքին նշաններին, այնպես էլ խորքային պատճառներին: Պրակտիկ աշխատանքներում ընդգրկվածները պետք է աշխատեն տուժած մարդկանց, ինչպես նաև որոշումներ կայացնողների հետ, ինչը կարող է դրական կամ բացասական ազդեցություն գործել ռիսկի ենթակա մարդկանց վրա: Կառավարությունները պետք է համապատասխան պատասխանատվություն կրեն, նրանք պարտավոր են պաշտպանել իրենց քաղաքացիների իրավունքները, այդ թվում նաև վտանգներից պաշտպանված լինելու իրավունքը (*տես Մարդու իրավունքների պաշտպանության համընդհանուր հռչակագիրը*):

Աղետների ռիսկի նվազեցման/կլիմայի փոփոխության հարմարվողականության գործընթացի շահերի պաշտպանության հիմնական նպատակը ռիսկի ենթակա բնակչությանը պաշտպանվելու

հնարավորություն ընձեռելն է: Շահերի պաշտպանությունը հնարավորություն է տալիս ձայնագուրկ մարդկանց խոսել, լսելի լինել և ուրիշներին լսելի դարձնել իրենց ձայնը, ինչը վերջիններիս փոփոխությունների ակտիվ դերակատարներ դառնալու ուժ է հաղորդում (մարդիկ, ովքեր չգիտեն իրենց իրավունքները, սակայն ունեն իրենց կյանքը Եսպես փոխելու ռազմավարություններ):

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները շահերի պաշտպանության համատեքստում կիրառելու համար	
1. Բարձրացնել վտանգի և կլիմայի փոփոխության համատեքստի ըմբռնման մակարդակը	<ul style="list-style-type: none"> • Օգտագործել մասնակցային մոտեցմամբ տեղերում ձեռք բերված տեղեկատվությունը և առկա լավագույն տեղեկատվությունն ակնկալվող վտանգների, ինչպես նաև կլիմայի փոփոխության կանխատեսվող ազդեցությունների վերաբերյալ շահերի պաշտպանության գործունեությունն ախտաձեռնելու նպատակով:
2. Բարձրացնել վտանգի ենթարկվելու, խոցելիության և կարողությունների ըմբռնման մակարդակը	<ul style="list-style-type: none"> • Աշխատել ռիսկի ենթակա բնակչության և որոշակի բարձր ռիսկային խմբերի հետ՝ նրանց վտանգների և կլիմայի փոփոխություններին ենթարկվելու և խոցելիության պատճառներն ըմբռնելու համար: • Բացահայտել ռիսկի ենթակա բնակչության դիմակայման կարողությունները, որոնք կարող են ուժեղացվել պաշտպանության գործունեություն ծավալելու շնորհիվ՝ լրացուցիչ ռեսուրսների ընդգրկմամբ, քաղաքականության մեջ փոփոխություններ կատարելով և այլ գործողությունների միջոցով: • Օգտագործել այս տեղեկատվությունը շահերի պաշտպանության գործունեություն իրականացնելու համար:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները շահերի պաշտպանության համատեքստում կիրառելու համար

3. Ճանաչել իրավունքներն ու պարտականությունները

- Բարձրացնել իրազեկման մակարդակը ռիսկի ենթակա բնակչության շրջանում այն մասին, թե ինչ ազդեցություն են կրում իրենց իրավունքներն աղետների և կլիմայի փոփոխության արդյունքում, որպես շահերի պաշտպանության գործունեություն ծավալելու հիմք:
- Չանգվածային քարոզարշավների միջոցով աջակցել ռիսկի ենթակա բնակչությանը, որպեսզի որոշումներ կայացնողներն ու իշխանության մեջ գտնվողները պատասխանատվություն կրեն իրենց որոշումների համար:
- Աջակցել այնպիսի գործող միջազգային մեխանիզմների իրականացմանը, ինչպիսիք են Գլոբալի գործողությունների ծրագիրը (HFA) և ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիան, քանի որ դրանք կարևոր աշխատանքային սկզբունքներ են պարունակում աղետների և կլիմայի փոփոխության հետ կապված իրավունքների և պարտականությունների մասին:

Ցուցումներ արժեքների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները շահերի պաշտպանության համատեքստում կիրառելու համար

4. Խրախուսել ռիսկի ենթակա բնակչության մասնակցությունը և գործունեությունը

- Տեղեկատվություն տրամադրելու և գիտելիքներ հաղորդելու միջոցով սատարել ռիսկի ենթակա համայնքներին՝ շահերի պաշտպանությանն ուղղված ռազմավարություններ և գործողությունների պլաններ մշակելու համար, որպեսզի վերջիններս կարողանան ինքնուրույն քարոզարշավներ իրականացնել:
- Օգտագործել պաշտպանությունը քաղաքական տարածքի ստեղծմանն օժանդակելու համար (մասնակցություն և հաշվետվողականություն), որպեսզի ռիսկի ենթակա բնակչությունը կարողանա անմիջականորեն իրականացնել պաշտպանություն իր սեփական համայնքի անունից:
- Մասնակցային միջոցներով պարզել, թե ում պետք է լինի ուղղված պաշտպանության գործընթացը՝ սահմանելով շահագրգիռ կողմերին, դաշնակիցներին ու ընդդիմախոսներին և ընտրելով հիմնական ունկնդիրներին:
- Աջակցել ռիսկի ենթակա բնակչությանը մշակելու պաշտպանության ուղերձներ՝ որոնք ուղղված են որոշակի խմբերին, որոշակի խնդիրներին, ունեն կիրառական նշանակություն, պարզ են, մատչելի և ճշգրիտ:
- Օժանդակել ռիսկի ենթակա բնակչության մասնակցությունն այնպիսի նախաձեռնություններում, որոնք կնպաստեն Կիոտոյի կլիմայի փոփոխության բազմակողմանի և պարտադիր միջազգային համաձայնագրին հետևող զարգացումներին, հիմնված Կիոտոյի սկզբունքների, Յոգոյի գործողությունների ծրագրի (HFA) և կայուն զարգացման վրա⁶: Աջակցել ռիսկի ենթակա բնակչությանը մշակելու շահերի պաշտպանության ուղերձներ, որոնք ուղղված են որոշակի խմբերին, որոշակի խնդիրներին, ունեն կիրառական նշանակություն, պարզ են, մատչելի և ճշգրիտ:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները շահերի պաշտպանության համատեքստում կիրառելու համար

<p>5. Խրախուսել համակարգված ներգրավման և փոփոխության գործընթացները</p>	<ul style="list-style-type: none"> • Համագործակցել այլ դաշինքների կամ ցանցերի հետ՝ իշխանության մեջ գտնվողներին, այդ թվում՝ նաև, հիմնական որոշում կայացնողներին իրազեկելու և նրանց վրա ազդելու հնարավորությունների բարելավման համար: Մշակել համոզիչ, նպատակային և ազդեցիկ տվյալներ՝ քաղաքականություն մշակողներին և որոշում կայացնողներին համոզելու, որ իրականացվող գործողությունները նվազեցնում են կլիմայի փոփոխության ռիսկերը և կարող են լայն կիրառում ունենալ:
<p>6. Նպաստել տարբեր մակարդակների համատեղ գործունեության խթանմանը</p>	<ul style="list-style-type: none"> • Խրախուսել կառավարություններին, որպեսզի վերջիններս ընդգրկեն աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության գործընթացները պետական զարգացման պլաններում և ծրագրերում, ինչպես նաև խթանել պետական գերատեսչությունների համատեղ, այլ ոչ թե մեկուսացված աշխատանքը: • Մշակել և իրականացնել տարբեր մակարդակներին և հասարակության տարբեր ոլորտներին ուղղված շահերի պաշտպանության գործունեություն:
<p>7. Կիրառել և զարգացնել տարբեր աղբյուրներից ստացված գիտելիքներ</p>	<ul style="list-style-type: none"> • Հատուկ թիրախային խմբերի վրա ազդելու համար մշակել համապատասխան տվյալներ և ուղերձներ, օրինակ, դեկլարատիվ բնույթի տվյալների օգտագործումն ավելի հարմար է զանգվածային քարոզարշավների ժամանակ, այն դեպքում, երբ կառավարությունների վրա ազդելու համար ավելի արդյունավետ են ծախսերի և արդյունքների քանակական վերլուծությունները:
<p>8. Ապահովել ճկունություն և արձագանքման հնարավորություն</p>	<ul style="list-style-type: none"> • Շահերի պաշտպանության նախաձեռնություններ մշակելու ժամանակ ցուցաբերել ճկունություն և արձագանքել փոփոխվող քաղաքական միջավայրին՝ փոփոխվող համատեքստերին համահունչ խելամիտ պաշտպանական գործունեություն ծավալելու համար:

Ցուցումներ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համալիր մոտեցման 10 սկզբունքները շահերի պաշտպանության համատեքստում կիրառելու համար	
9. Դիտարկել տարբեր ժամանակահատվածներ	<ul style="list-style-type: none"> • Օժանդակել և իրականացնել այնպիսի շահերի պաշտպանության ծրագրեր, որով կապահովվի կարճաժամկետ, միջին և երկարաժամկետ պաշտպանության նպատակների իրականացման փուլային գործողությունների պլան, ինչը կենսական նշանակություն կունենա առաջընթացին հետևելու և պաշտպանության հիմնական նպատակներին հասնելու համար:
10. Չվնասել	<ul style="list-style-type: none"> • Վերահսկել և գնահատել շահերի պաշտպանության աշխատանքը՝ թույլ և ուժեղ կողմերը գնահատելու համար և կանխել այն պաշտպանությունը, որը կարող է վնաս հասցնել ռիսկի ենթակա բնակչությանը: • Համագործակցել տեղական իշխանությունների և կառավարության տարբեր մակարդակների հետ՝ ջերմոցային գազերի արտանետումների կրճատմանն ուղղված օրենքների մշակման կամ դրանց կիրառման համար:



ԴԵՊԵԻ ՌԻՍԻՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ. ԴԻՍԱԿԱՅՈՒՆ ԶԱՂԱՔԱՅԻՆ ԲՆԱԿԱԿԱՅՐԵՐԻ ՊԼԱՆԱԿՎՈՐՈՒՄ ՅԵՏԶՐԳԵՂԵՂԱՅԻՆ ՓՈՒՈՒՄ

Բոլիվիա, Oxfam, FUNDEPCO կազմակերպություններ

Բոլիվիայի Բենի նահանգի մայրաքաղաք Տրինիդադը, որն ունի 100,000 բնակչություն, Ամազոնյան տարածաշրջանի արագ աճող երկրորդ քաղաքն է: Այն կառուցվել է պահպանիչ օղակաձև ճանապարհի ներսում, որը ծառայում է որպես ջրհեղեղներից պաշտպանվելու պատնեշ: Սակայն քաղաքի տարերային զարգացման արդյունքում պաշտպանված տարածքից դուրս ստեղծվել են հյուղակային տիպի կացարաններով կառուցապատված բնակելի ավաններ:

2007թ. ուժեղ ջրհեղեղը վնասեց ենթակառուցվածքները, այդ թվում նաև, օղակաձև ճանապարհը, վնաս հասցրեց անասուններին և գյուղատնտեսությանը⁹: Տրինիդադի արվարձանների բնակչությունը՝ մոտ 3,200 ընտանիք, խիստ տուժեց ջրհեղեղից, նրանցից շատերը ստիպված եղան ապաստան փնտրել արագ և անտրակ կառուցված կացարաններում: Հաջորդ տարի տեղի ունեցավ ևս մեկ ջրհեղեղ, իսկ այդ երկու ջրհեղեղների միջև ընկած ժամանակահատվածում քաղաքը տուժեց այդ տարածքների համար ոչ բնորոշ խիստ երաշտից:

2007 և 2008 թվականների ջրհեղեղներից հետո Oxfam-ը և Բոլիվիայի FUNDEPCO հասարակական կազմակերպությունը, սերտ համագործակցելով քաղաքային իշխանությունների հետ, իրականացրեցին մի շարք օգնության ծրագրեր: Նկատելով, որ օգնությունից հետո իրավիճակը չի կայունանում, քաղաքային իշխանությունները Oxfam-ի և FUNDEPCO-ի տեխնիկական և ֆինանսական

աջակցությամբ մշակեցին մի շարք ծրագրեր՝ հիմնվելով կլիմայի փոփոխության հարմարվողականության և աղետների ռիսկին դիմակայելու մոտեցման վրա: Գործընթացը տևեց մոտ երկու տարի, որտեղ ներգրավվեցին 15 մասնագետ, այդ թվում՝ նաև երկրաբաններ, հիդրոլոգներ, տնտեսագետներ, ճարտարագետներ և սոցիոլոգներ: Զաղաքային պետական կառույցները, քաղաքացիական հասարակությունը և բնակչության որոշակի խմբերի ներկայացուցիչներ (երեխաներ, տարեցներ և այլն) նույնպես ակտիվորեն ընդգրկվեցին այդ աշխատանքներում՝ մասնակցելով հարցազրույցների, խորհրդատվությունների, թիրախային խմբերի հետ քննարկումների կազմակերպմանը, ինչը նպաստեց ծրագրի մշակման գործընթացին և այն որոշակի միջամտությունների մշակմանը, որոնք կարող էին ներառվել ծրագրում: Տարբեր շահագրգիռ կողմերի ներդրումների արդյունքում մշակվեցին մի շարք հոռոգագործման ծրագրեր՝ 15 տարի ժամկետով և սկիզբ դրվեց հնգայա քաղաքային զարգացման ծրագրին: Մինչև 2012թ. իրականացվեցին բազմաթիվ աշխատանքներ և միջոցառումներ, ներառյալ՝ ջրհեղեղների կառավարման կառույցների շինարարությունը, թափոնների կառավարման համակարգերի բարելավումը և տեղեկատվական քարտզարշավների ծավալումը: Զաղաքն այժմ համարվում է «Դարձնենք մեր քաղաքները դիմակայուն» գլոբալ քարտզարշավի լավագույն օրինակներից մեկը, որտեղ իրականացվեց այդ քարտզարշավի որդեգրած 10 կարևոր նպատակներից հինգը (*տես էջ 286. Գործիքներ և ռեսուրսներ*): **Խրախուսելով համակարգված ներգրավման և փոփոխության գործընթացները ու նպաստելով տարբեր մակարդակների համատեղ գործունեությանը**, հնարավոր եղավ իրականացնել ծրագրի նպատակները:

Գործիքներ և ռեսուրսներ

Տեղեկատվության և հղումների համար *տես էջ 290. Գործիքներ և ռեսուրսներ*:

6.3 Շահերի պաշտպանության ցանցեր

Գլոբալ

- Կլիմայի հետ կապված հարցերի միջազգային ցանց (CAN-I)։ Զաղաքացիական հասարակության կազմակերպությունների գլոբալ ցանց, որը զբաղվում է կլիմայի փոփոխության հարցերով՝ քաղաքականության վրա միջազգային և ազգային մակարդակներում ազդելու համար՝ www.climatenetwork.org
- Կլիմայի հետ կապված հարցերի գլոբալ քարոզարշավ (GCCA)։ Կլիմայի փոփոխության հարցերով զբաղվող միջազգային քարոզարշավ՝ <http://gc-ca.org/>
- Գենդերային և կլիմայի փոփոխության հարցերով գլոբալ դաշինք (GGCA)։ ՄԱԿ-ի և քաղաքացիական հասարակության 50 կազմակերպությունների դաշինք, որոնք համագործակցում են կլիմայի փոփոխության քաղաքականության, փորձի և գենդերային համատեքստի շրջանակներում՝ www.gender-climate.org
- Զաղաքացիական հասարակության կազմակերպությունների աղետների ռիսկի նվազեցման գլոբալ ցանց (GNDR)։ Զաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջազգային ցանց՝ աղետներից տուժած մարդկանց կյանքը բարելավելու համար՝ www.globalnetwork-dr.org

Տարածաշրջանային

- Զաղաքացիական հասարակության կազմակերպությունների աղետների նվազեցման գլոբալ ցանցը (GNDR) միմյանց է կապում աշխարհի տարբեր կազմակերպություններ։ www.globalnetwork-dr.org
- Կլիմայի հետ կապված հարցերի միջազգային ցանցը (CAN-I)՝ աշխատում է տարբեր տարածաշրջաններում, որոնց կոնտակտային մանրամասները ներկայացված են հետևյալ միջազգային կայքում՝ www.climatenetwork.org

Ազգային

- Գոյություն ունեն բազմաթիվ ազգային ցանցեր, որոնք պաշտպանում են աղետների և կլիմայի փոփոխության հետ կապված գործընթացների շահերը:

ՅԱԿԵԿԱԾՆԵՐ

Գործիքներ և ռեսուրսներ

1. Աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության ըմբռնում

Աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության ինտեգրման Էլեկտրոնային ուսուցման մոդուլներ 1-5 Էլեկտրոնային ինքնուսուցման փաթեթ՝ ԿՓՀ-ն ԱՌԿ-ում ներառելու համար: Raks Tai Foundation, CARE International, PECCN, CARE Nederland և CARE Australia

Չամայնքահեն հարմարվողականության ծրագրերի պրակտիկ գործիքներ՝ ինչպես ներառել ԿՓՀ-ն ծրագրային փուլերում Գործիքները նախատեսված են պրակտիկ աշխատողների համար և առկա են անգլերեն, իսպաներեն, ֆրանսերեն և պորտուգալերեն լեզուներով՝ CARE International (2010)

Կլիմայի փոփոխության նկատմամբ խոցելիության և կարողությունների վերլուծության (CVCA) ձեռնարկ Խրախուսում է ռիսկի ենթակա համայնքներին վերլուծել ռիսկի պատճառները և կապ հաստատել այն պետական մարմինների հետ, որոնք պատասխանատու են աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերի նվազեցման համար: CARE International (2009)

Չամայնքի դիմակայունության զարգացման ծրագրային մոդուլներ Ծրագրային մոդուլների շարք, որը հնարավորություն է տալիս դաշտային աշխատողներին և համայնքներին բացահայտել ռիսկերը՝ վճռորոշ խնդիրների վերլուծության շնորհիվ, ստեղծել դիմակայման կարողություններ, ինչպես նաև մշակել նախագծեր, որոնք հիմնված կլինեն Հյոգոյի գործողությունների ծրագրի (HFA) հիսգ գերակա ուղղությունների և կենսապահովման միջոցների վրա: World Vision International

Չամայնքներում խոցելիության և կարողությունների գնահատման գործիքի ձեռնարկ (COVACA) Վարժություններ, որոնք օգնում են համայնքներին բացահայտել աղետների հավանական ռիսկերը, այդ ռիսկերին դիմակայելու կարողությունները և նախապատրաստվածության համապատասխան միջոցները: World Vision International

Gerando Բազմակողմանի համայնքային մոտեցման վրա հիմնված գործիքներ՝ հանկարծակի վրա հասնող աղետների և քրոնիկական հիվանդությունների ազդեցությունները համայնքներում նվազեցնելու համար՝ բարելավելով համայնքների դիմակայման կարողությունները, որդեգրելով ինդիկներին դիմակայող, համայնքների հաղթահարման մեխանիզմներն ուժեղացնող և համայնքային կարողություններ ստեղծող պրոակտիվ ռազմավարություններ: World Vision Mozambik (2011)

ԱՌՆ գործիքներ. Ներառել աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականությունը տարածաշրջանային զարգացման ծրագրերում Պրակտիկ աշխատողներին օժանդակելու համար նախատեսված ԱՌՆ և ԿԳՅ գործիքաշար՝ ռիսկերի գնահատման և ծրագրի մշակման բաղադրիչները զարգացման երկարատև ծրագրերում ներառելու համար: World Vision International (2012)

Կարողությունների և խոցելիության մասնակցային վերլուծություն (PCVA) Պրակտիկ աշխատողների համար նախատեսված ուղեցույց, որն օգտագործում է տարբեր շահագրգիռ կողմերի ռիսկերի վերլուծությունները և պլանավորման գործընթացներն աշխատակազմին և գործընկեր կազմակերպություններին օժանդակելու համար, որպեսզի վերջիններս գործունեություն ծավալեն այն համայնքներում, որտեղ բնական աղետներն աղքատության և տառապանքի էական խթանիչներ են հանդիսանում: Oxfam GB (2012)

Հիմնավորումներ 9. Ռիսկերի նվազեցումը մեր համայնքներում Աղետների ռիսկի մասնակցային գնահատում (PADR): Մեթոդներ, որոնք հնարավորություն են տալիս գնահատել ցանկացած հնարավոր հզորության և մասշտաբի աղետին նպաստող գործոնները և մշակել տեղական համատեքստին համապատասխան ծրագիր՝ այդ գործոններին անդրադառնալու և աղետի ռիսկերը նվազեցնելու համար: *Tearfund (2011)*

Խոցելիության և կարողությունների գնահատման գործիքներ (VCA) Մասնակցային հետազոտական գործընթաց, որի նպատակն է գնահատել այն ռիսկերը, որոնց մարդիկ հանդիպում են իրենց բնակավայրերում, այդ ռիսկերի նկատմամբ նրանց խոցելիությունը և վտանգների դեմ պայքարելու և վերականգնվելու կարողությունները: IFRC (2007): Հղում խոցելիության և կարողությունների գնահատման (VCA) կայքին:

Խոցելիությունից դեպի դիմակայունություն Համայնքներում դիմակայման կարողություններ զարգացնելու համար անհրաժեշտ վերլուծության և գործողությունների շրջանակ: Practical Action Publishing (2001)

Պատրաստ ենք, թե՛ ոչ. Կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային կարողությունների հաստատութենական կողմերի գնահատում Բոլոր պետությունների համար անհրաժեշտ պետական գործառույթների շրջանակ, որը պետք է մշտապես հարմարեցվի փոփոխություններին, ներառյալ գնահատումը, գերակա խնդիրների սահմանումը, տեղեկատվության կառավարումը, համակարգումը և ռիսկերի նվազեցումը: WRI (2012)

Խորհրդատվական փաստաթուղթ. Աֆրիկայի կլիմայի փոփոխություններին դիմակայելու դաշինք (ACCRA) Հարմարվողական կարողությունների զարգացմանը նպաստող գործոնների վերլուծության շրջանակ, ներառյալ այդ գործընթացին նպաստող հաստատությունները և ծրագրերը, տեղեկատվությունը, որոշումների կայացումն ու կառավարումը: ACCRA

ՀԳԾ (HFA) ազգային մշտադիտարկում 2011-2013թթ. Առցանց գործիք HFA-ի առաջընթացի վերաբերյալ տարբեր շահագրգիռ կողմերի ուսումնասիրության արդյունքում հավաքված տվյալները ստանալու համար: UNISDR

Աղետներին դիմակայելու կարողություններ ունեցող համայնքների բնութագրիչ հատկանիշներ. Ուղեցույց Պրակտիկ աշխատողներին և համայնքներին օժանդակող փաստաթուղթ՝ ԱՌՆ և ԿՓՀ համապատասխան ցուցանիշներ ընտրելու համար, որոնցից մի քանիսը կարող են ծառայել որպես նվազեցված ռիսկի անուղղակի ցուցանիշներ: DFID, British Red Cross, Christian Aid, Plan International, Practical Action, Tearfund, Actionaid (2009), London University College

Sphere ձեռնարկ Մարդասիրական գործունեության կանոնադրություն և մարդասիրական օգնության նվազագույն չափորոշիչներ Ուղեցույց, որը կապում է մարդասիրական օգնությունն իրավունքների գերակայության և մասնակցային մոտեցման հետ: Sphere ծրագիր (2011)

Աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված հաշվետվողականություն. քաղված դասեր Ֆիլիպինների օրինակից Պետության հաշվետվողականության կարևորությունն ԱՌՆ հետ կապված պարտականությունների հանդեպ և հղումներ Ֆիլիպիններում կատարված դեպքի ուսումնասիրությանը: Climate and Disaster Governance (2010)

Կարմիր խաչի և Կարմիր մահիկի կլիմայի ուղեցույց Կլիմայի փոփոխության ռիսկերի կառավարման և հարմարվողականության ռազմավարությունների իրականացման մանրակրկիտ ցուցումներ: IFRC (2002)

Համայնքահեն ռիսկերի ուսումնասիրության գործիք. Հարմարվողականություն և կենսապահովում (CRISTAL) Որոշումների կայացմանն օժանդակող գործիք տեղերում հարմարվողական կարողությունների վրա ծրագրի ազդեցությունները գնահատելու և բարելավելու համար: IISD, SEI, IUCN, Inter Cooperation (2011)

CEDRA. Կլիմայի փոփոխության և շրջակա միջավայրի դեգրադացիայի ռիսկի և հարմարվողականության գնահատում Ծրագրի ուսումնասիրությանը և որոշումների կայացմանն օժանդակող գործիք: Tearfund (2012)

Ռիսկի քարտեզներ և կլիմայի կանխատեսումներ Կայք, որը միավորում է հայտնի վտանգների վերաբերյալ տեղեկատվությունը և աղետների արդյունքում տեղի ունեցած իրադարձությունների տեղանքը, ազդեցությունների ընդգրկված՝ ակնհայտ և կանխատեսվող կլիմայի փոփոխության ազդեցությունների տեսողական պատկերմամբ: Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի աղետների կենտրոն: www.pdc.org Pacific Disaster Centre

Կանխատեսումների վրա հիմնված որոշումների կայացման համար նախատեսված կարևոր ցուցումներ և ռեսուրսներ Ելակետային տվյալներ La Nina-ի՝ կլիմայի կանխատեսումների սեզոնային մեկնաբանությունների վերաբերյալ, կանխատեսումների կապը համապատասխան գործողությունների հետ, և միջոցներ՝ կանխատեսումների մշտադիտարկմանը և որոշումների կայացմանն աջակցելու համար: IFRC-ի կլիմայի հարցերով զբաղվող կենտրոն՝ (IRI)

Երկրների կլիմայի փոփոխության բնութագրերը Տվյալ երկրի հաշվետվությունը, որը պարունակում է կլիմայի ակնհայտ և կանխատեսվող փոփոխությունների վերաբերյալ քարտեզներ և գծապատկերներ (ոչ բոլոր երկրներն ունեն նման տվյալներ): UNDP, Օբսֆորդի համալսարանի աշխարհագրության և բնապահպանության ֆակուլտետ:

Կլիմայի էլեկտրոնային քարտեզներ Վեբ տեխնոլոգիաների վրա հիմնված ծրագիր, որը հնարավորություն է ընձեռում բոլորին օգտվել կլիմայի փոփոխության հետ կապված հիմնական տվյալներից: Վաշինգտոնի համալսարան, Յարավային Միսիսիպիի համալսարան (2009թ.):

Կլիմայի վերլուծության ցուցանիշների գործիք (CAIT) Ցուցանիշներ և վերլուծության գործիքներ՝ խոցելիության և հարմարվողականության կարողությունների քաղաքականության շուրջ քննարկումներ անցկացնելու համար: WRI

ԿՓՅ ներառումն անվտանգ կենսապահովման գործընթացում
Գործիքաշար 1. Կառուցվածք և մոտեցում Գործիքները նախատեսված են օժանդակել պրակտիկ աշխատողներին կլիմայի ապագա փոփոխությունների վերաբերյալ վերլուծություն իրականացնելու համար, որը կարող է ներառվել կենսապահովման բարելավման գործընթացում: Christian Aid (2010)

ԿՓՅ ներառումն անվտանգ կենսապահովման գործընթացում
Գործիքաշար 2. Կլիմայի փոփոխությունների վերլուծության իրականացում Գործիքները նախատեսված են օժանդակել պրակտիկ աշխատողներին այն փոփոխությունների աստիճանը հասկանալու համար, որոնք կարող են առաջանալ կլիմայի երկարաժամկետ միտումների և կարճաժամկետ փոփոխությունների արդյունքում՝ հիմնված կլիմայի փոփոխության գիտական և համայնքային տվյալների վրա: Christian Aid (2010)

ԿՓՅ ներառումն անվտանգ կենսապահովման գործընթացում
Գործիքաշար 3. Ծրագրի ռազմավարության և գործողությունների պլանի մշակում Գործիքները նախատեսված են օժանդակել պրակտիկ աշխատողներին՝ ԿՓՅ-ն կենսապահովման բարելավմանն ուղղված ծրագրերում ընդգրկելու համար: Christian Aid (2010)

2.1 Հիմնական խմբեր /երեխաներ

«Երեխաների իրավունքների մասին» կոնվենցիա (CRC) Պարտադիր իրավական ուժ ունեցող գործիք, որը սահմանում է երեխաների հիմնական իրավունքներն ամենուրեք: UNICEF (2009) Ամփոփ փաստաթուղթ:

Աղետների ռիսկի նվազեցման մանկական խարտիա Խարտիան նպատակ ունի բարձրացնել ԱՌՆ գործընթացում երեխաների կարևորման անհրաժեշտության, ինչպես նաև կառավարությունների, դոնորների և այլ կազմակերպությունների կողմից այդ հարցին առավել մեծ ուշադրություն դարձնելու վերաբերյալ իրազեկման մակարդակի բարձրացմանը համապատասխան քայլեր ձեռնարկելու համար, որի նպատակն է պաշտպանել երեխաներին և օգտագործել նրանց էներգիան և գիտելիքները ԱՌՆ և ԿՓՅ գործընթացներում: IDS, Plan International, Save the Children, UNICEF, World Vision (2011)

Երեխաները փոփոխվող կլիմայի պայմաններում Երեխաներին ուղղված ուսումնասիրությունների, զարգացման և մարդասիրական կազմակերպությունների կոալիցիա, որը տվյալներ է փոխանակում, համակարգում է գործունեությունը և աշխատում երեխաների և երիտասարդների հետ՝ շեշտելու երեխաներին ուղղված աղետների ռիսկերի նվազեցման և կլիմայի փոփոխությունները կանխելու և դրանց հարմարվելու գործընթացների կարևորությունը: IDS, Plan International, Save the Children, UNICEF, World Vision (2007)

Մեր կլիման և մեր ապագան Ծրագիր, որի շրջանակներում երեխաները ֆիլմ են դիտում՝ կլիմայի փոփոխության ազդեցություններն իրենց համայնքների նկատմամբ ուսումնասիրելու համար: Plan International (2009)

Աղետների ռիսկի նվազեցումը երեխաների կողմից գործնական ցուցումներ Ուղեցույց, որը ցույց է տալիս, թե ինչպիսի արդյունավետ և առաջատար դեր կարող են ունենալ երեխաները ԱՌՆ գործընթացում: Նախատեսված է երեխաների հետ աշխատող անձանց համար, ովքեր վերջիններիս ներկայացնում են այնպիսի օրինակներ և գաղափարներ, որոնք հնարավորություն են տալիս երեխաներին ղեկավարել աղետների ռիսկի նվազեցման գործընթացը: Save the Children (Շվեդիա) (2007)

Երեխաներին ուղղված ԱՌՆ գործիքաշար Երեխաներին ուղղված ԱՌՆ գործիքները նպատակ ունեն՝ 1) կրթել երեխաներին վտանգների, խոցելիության և կարողությունների գնահատման միջոցով, 2)

պլանավորել, վերահսկել և գնահատել երեխաներին ուղղված ծրագրերը, 3) մշակել գործողությունների պլան և 4) իրականացնել շահերի պաշտպանություն երեխաների հետ միասին: Plan International (2010)

2.2 Հիմնական խմբեր/ կանայք, տղամարդիկ, գենդերային հարցեր

Ուսուցողական ձեռնարկ գենդերային և կլիմայի փոփոխության վերաբերյալ Պրակտիկ գործիք, որը նախատեսված է քաղաքականություն մշակողների և որոշումներ կայացնողների կարողությունները բարելավելու համար՝ կլիմայի փոփոխության քաղաքականությունների և ռազմավարությունների մշակման գործընթացում գենդերային խնդիրները ներառելու նպատակով: IUCN, UNDP, UNEP, GGCA, WEDO (2009)

Գենդերային հարցեր, կլիմա և համայնքահեն հարմարվողականություն Գենդերային հարցերի կարևորմամբ համայնքների հարմարվողականության ծրագրերի և նախագծերի մշակում և իրականացում Ցուցումներ գենդերային հարցերը համայնքահեն հարմարվողականությանն ուղղված ծրագրերում ներառելու համար: UNDP (2010)

Աղետների ռիսկի նվազեցումը գենդերային առանձնահատկությունների դիտարկմամբ Զաղաքականություն և պրակտիկ ցուցումներ Զաղաքականության և պրակտիկ ցուցումների ուղեցույց կենտրոնական և տեղական իշխանությունների համար՝ Հյուսիսային գործողությունների ծրագրի հետագա իրականացման նպատակով: IUCN, UNDP, UNISDR (2009)

Հարմարվողականություն, գենդեր և կանանց հնարավորությունների հզորացում: CARE International-ը կլիմայի փոփոխության վերաբերյալ համառոտ Գենդերային հարցերի և կլիմայի փոփոխության հարմարվողականության համառոտ շարադրանք, ներառյալ գենդերային հարաբերությունները փոխող հարմարվողականության վերաբերյալ կետերի ընդգրկումը ռազմավարություններում: CARE International (2010)

Գենդերային հարցեր, աղետների ռիսկի նվազեցում և կլիմայի փոփոխության հարմարվողականություն. ինքնուրույն ուսուցման ձեռնարկ Պրակտիկ աշխատողների ուղեցույց գենդերային, ԱՌՆ և ԿՓՀ ծրագրերի մշակման համար: Oxfam GB (2010)

Գենդերային հարցեր և աղետների ռիսկի նվազեցում

Ուսումնամեթոդական ձեռնարկ Ուսումնամեթոդական ձեռնարկ գեղերային հարցերի և ԱՌՆ վերաբերյալ Oxfam GB (2011)

2.3 Հիմնական խմբեր / բարձր ռիսկային գոտու խմբեր

Հաշմանդամության խնդիրների ներառումն աղետների ռիսկի նվազեցման գործընթացում. Ուսումնական ձեռնարկ նախատեսված է բարելավելու դերակատարների կարողությունները՝ հաշմանդամների խնդիրները ԱՌՆ-ում ներառելու համար, Handicap International, Եվրախորհուրդ (2009)

Տնամերձ այգեգործություն. Ձեռնարկ ծրագրի ղեկավարների իրականացնողների, պրակտիկ աշխատողների համար Ձեռնարկը նախատեսված է մենդի անվտանգության, սնուցման, կենսապահովման ծրագրեր իրականացնողների համար և ուղղված է կենսապահովման, մենդամթերքի արտադրության և եկամտի ստեղծման գործընթացների բարելավմանը: Սա Լեսոտոյում Հարավային Աֆրիկայի երկրների Պարենի անվտանգության հարցերով կոնսորցիումի (C-SAFE) կողմից տնամերձ այգեգործության հաջողությամբ իրականացված ծրագրերի տեխնիկական մեթոդների և քաղված դասերի ընտրանի է: CRS (2008)

Աշխատունակության, հաշմանդամության և առողջության միջազգային դասակարգում Այս մոդելը հատուկ չէ ԱՌՆ և ԿՓՀ գործընթացներին, սակայն նպաստում է մարդու ակտիվության սահմանափակման հնարավոր հետևանքների և ԱՌՆ-ին և ԿՓՀ-ին մասնակցելու խոչընդոտների վելուծության իրականացմանը: WHO (2004)

3. Ծրագրի փուլային կառավարում/տվյալների հավաքագրում և կառավարում

ՀԳԾ (HFA) ազգային մշտադիտարկում 2011-2013 Առցանց գործիք HFA-ի առաջընթացի վերաբերյալ տարբեր շահագրգիռ կողմերի ուսումնասիրության արդյունքում հավաքված տվյալները ստանալու համար: (UNISDR)

Մասնակցային մշտադիտարկում, գնահատում, անդրադարձ և ուսուցում՝ համայնքահեն հարմարվողականություն ապահովելու համար (PMERL) Ձեռնարկ տեղի աշխատողների համար Ձեռնարկ, որը կարող է օգտագործվել խոցելի համայնքների համար և այդ համայնքների կողմից, որոնց աջակցում են ծրագիր մշակողները, պրակտիկ աշխատողները, քաղաքականություն մշակողները՝

կլիմայի փոփոխության հարմարվողականության պլանավորման և իրականացման գործընթացին անդրադառնալու համար: CARE (2012)

Նախագծի/ծրագրի մշտադիտարկման և գնահատման ուղեցույց
Ուղեցույցի նպատակը նախագծի/ծրագրի մշտադիտարկման և գնահատման ընդհանուր ընկալման և հուսալի մեթոդների խթանումն է: IFRC (2011)

Մշտադիտարկման և գնահատման ուղեցույցներ 14 մոդուլներից բաղկացած առցանց գործիքներ, որոնք ներկայացնում են մշտադիտարկման և գնահատման իրականացման մանրակրկիտ խորհուրդներ: WFP

Աղետներին դիմակայելու կարողություններ ունեցող համայնքների բնութագրիչ հատկանիշներ. Ուղեցույց Պրակտիկ աշխատողներին և համայնքներին օժանդակող փաստաթուղթ՝ ԱՌՆ և ԿՓՀ համապատասխան ցուցանիշներ ընտրելու համար, որոնցից մի քանիսը կարող են ծառայել որպես նվազեցված ռիսկի անուղղակի ցուցանիշներ: DFID, British Red Cross, Christian Aid, Plan, Practical Action, Tearfund (2009)

3.2 Ծրագրի փուլային կառավարում/վերլուծություն

Կլիմայի փոփոխության վերաբերյալ համառոտ. Զարմարվողականություն, գենդեր և կանանց հնարավորությունների հզորացում
Փաստաթուղթ, որը նկարագրում է կապը գենդերային խնդիրների և խոցելիության միջև, ինչպես նաև դրա արտացոլումը կյանքում: CARE International

Աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության Էլեկտրոնային ուսուցման մոդուլներ
Էլեկտրոնային ինքնուսուցման փաթեթ՝ ԿՓՀ-ն ԱՌԿ-ում ներառելու համար: Raks Tai Foundation, CARE International, PECCN, CARE Netherlands and CARE Australia

Կլիմայի փոփոխության նկատմամբ խոցելիության և կարողությունների վերլուծության (CVCA) ձեռնարկ
Խրախուսում է ռիսկի ենթակա համայնքներին վերլուծել ռիսկերի պատճառները և կապ հաստատել այն պետական մարմինների հետ, որոնք պատասխանատու են աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերի նվազեցման համար: CARE International (2009)

խոցելիության մատրիցա Խմբային գործունեության ցուցումներ՝ կենսապահովման հետ կապված վտանգները, խոցելիությունը և կարողությունները բացահայտելու համար: CARE International (2009)

Աղետներին դիմակայելու նախապատրաստվածությունն համայնքներում. Ինչպես ուղղորդել Համայնքներում աղետներին դիմակայելու նախապատրաստվածության մանրակրկիտ ուղեցույց՝ հիմնված Կաթոլիկ օգնության ծառայության (CRS) և գործընկերների, այդ թվում համայնքային և աշխատանքային խմբերի փորձի վրա՝ աղետներին նախապատրաստվելու և դրանց արձագանքելու համար: CRS, EC, (2009)

Համայնքային ռիսկի բացահայտման գործիք. հարմարվողականություն և կենսապահովում (CRiSTAL) Ռիսկերի բացահայտման գործիքի հետ կապված տեղեկատվություն և ռեսուրսներ: IISD, SEI, Inter Cooperation (2011)

Հարմարվողականության գործիքաշար. կլիմայի փոփոխության նկատմամբ հարմարվողականության ներառումը կենսապահովման բարելավման գործընթացում, Գործիքաշար 2. Կլիմայի փոփոխության վերլուծության իրականացում Գործիքները նախատեսված են կլիմայի փոփոխության նկատմամբ հարմարվողականությունը և դիմակայումը կենսապահովման բարելավման աշխատանքներում ներառելու գործընթացին աջակցելու համար: Christian Aid (2010)

Կարողությունների և խոցելիության մասնակցային վերլուծություն (PCVA). Ուղեցույց պրակտիկ աշխատողների համար Գործիք, որն օգտագործում է տարբեր շահագրգիռ կողմերի ռիսկի վերլուծությունները և պլանավորման գործընթացներն՝ օժանդակելու աշխատակազմին և գործընկեր կազմակերպություններին գործունեություն ծավալել այն համայնքներում, որտեղ բնական աղետներն աղքատության և տառապանքի էական խթանիչներ են հանդիսանում: Oxfam GB (2012)

Հիմնավորումներ 9. Աղետների ռիսկի նվազեցումը մեր համայնքներում Գործիք, որը հնարավորություն է տալիս գնահատել ցանկացած հնարավոր հզորության և ծավալի աղետին նպաստող գործոնները և մշակել տեղական համատեքստին համապատասխան ծրագիր՝ այդ գործոններն ուսումնասիրելու և աղետի ռիսկերը նվազեցնելու համար: Tearfund (2011)

Կլիմայի վերլուծության ցուցանիշների գործիք Ցուցանիշներ և

վերլուծության գործիքներ՝ խոցելիության և հարմարվողականության կարողությունների քաղաքականության շուրջ քննարկումներ անցկացնելու համար: WRI

Կլիմայի փոփոխության և շրջակա միջավայրի դեգրադացիայի ռիսկի և հարմարվողականության գնահատում (CEDRA) Ծրագրի ուսումնասիրությանը և որոշումների կայացմանն օժանդակող գործիք: Tearfund (2012)

Չարմարվողականության ազգային կարողությունների շրջանակ (NAC) Բոլոր պետությունների համար անհրաժեշտ պետական գործառույթների շրջանակ, որը պետք է մշտապես հարմարեցվի փոփոխություններին, ներառյալ գնահատումը, գերակա խնդիրների սահմանումը, տեղեկատվության կառավարումը, համակարգումը և ռիսկի նվազեցումը: WRI (2009)

Երկրների կլիմայի փոփոխության բնութագրերը Տվյալ երկրի հաշվետվությունը, որը պարունակում է կլիմայի ակնհայտ և կանխատեսվող փոփոխությունների վերաբերյալ քարտեզներ և գծապատկերներ (ոչ բոլոր երկրներն ունեն նման տվյալներ): UNDP, Oxford University

Ճնշման և ազատման մոդել Մոդել, որը հնարավորություն է տալիս կանխատեսել աղետի վրա հասնելու ժամկետը՝ վտանգների և խոցելիության խնդիրների ուսումնասիրության միջոցով:

Քարտուղարության կողմից ստացված I Զավելվածում չընդգրկված երկրների ազգային հաշվետվություն և հարմարվելու գործողությունների ազգային ծրագրեր (NAPAs) Յուրաքանչյուր երկրի ազգային հաշվետվություն, որտեղ ներկայացվում է տվյալ երկրում կլիմայի փոփոխության հետ կապված իրավիճակը: ՄԱԿ-ի կլիմայի փոփոխության հարցերով շրջանակային կոնվենցիա (UNFCCC): Չարմարվողականության գործողությունների ազգային ծրագրեր (NAPAs) ամենաքիչ զարգացած երկրների համար: Ազգային հաշվետվություններ

Ծրագրի մշակման ձեռնարկ Ծրագրի հայեցակարգային կառուցվածք և ծրագրի պլանավորում: CARE International (2002)

3.3 Ծրագրային փուլի կառավարում /Նախագծում

Աղետների ռիսկի նվազեցումը ծրագրի փուլային կառավարման գործընթացում. Ծրագրային աշխատողների և ծրագրի ղեկավարների համար **Նախատեսված գործիք** Կացարանների տրամադրման հետ կապված ուղեցույց՝ ռիսկի կառավարումը ծրագրային փուլում ներառելու համար: SDC (2007)

Համայնքների հարմարվողականության հիմնական խնդիրների և ցուցանիշների շրջանակ Նախատեսված է ԿՓՀ ներառող ծրագրերի հիմնական խնդիրներն ու ցուցանիշները սահմանելու համար: CARE International (2010)

Կլիմայի փոփոխության հարմարվողականության գործընթացը ծրագրերում ներառելու գործիքաշար Գործիքները նախատեսված են ծրագրերում ԿՓՀ ներառման գործընթացն ուղղորդելու համար: CARE International, IISD (2010)

Կլիմայի փոփոխության հետ կապված աղետների ռիսկի կառավարում. Կլիմայի փոփոխությանը դիմակայելու կարողությունների հզորացում Շրջանակ, որը ղեկավարում է ռազմավարական պլանավորման, ծրագրի զարգացման և քաղաքականության մշակման գործընթացները, ինչպես նաև գնահատում է գոյություն ունեցող ԱՌԿ քաղաքականությունները, ծրագրերն ու նախագծերը՝ կլիմայի փոփոխության համատեքստում: SCR, IDS (2010)

Ուղեցույցներ. աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմներ Ցուցումներ, թե ինչպես պետք է մշակվեն ԱՌՆ ազգային ծրագրերը բազմաթիվ շահագրգիռ կողմերի ներգրավմամբ, ԱՌՆ-ն զարգացման քաղաքականություններում, պլանավորման աշխատանքներում և ծրագրերում պետական մակարդակով ընդգրկելու գործընթացին օժանդակելու համար: UNISDR (2007)

Կլիմայի փոփոխության հարմարվողականության հայեցակարգերի և տարբերակների մշտադիտարկում և գնահատում Գործնական կառուցվածք մշտադիտարկման և գնահատման համակարգերի մշակման համար, որի միջոցով կարելի է հետևել, թե ինչպես են իրականացվում ԿՓՀ նախաձեռնությունները: WRI, BMZ, GIZ (2011)

3.4 Ծրագրային փուլի կառավարում / Իրականացում

Ծրագրի իրականացման հիմնական դրույթները. Ուղեցույց ծրագրի ղեկավարների համար Ուղեցույց դաշտային աշխատանքներում ներգրավված ղեկավարների համար: CARE International (2007)

Կլիմայի փոփոխության հարմարվողականության գործընթացը ծրագրերում ներառելու գործիքաշար Գործիքները նախատեսված են ծրագրերում ԿՓՅ ներառման գործընթացն ուղղորդելու համար: CARE International, IISD (2010)

Կարողությունների ինքնազնահատում Գործիք կազմակերպության մասին ընդհանուր պատկերացում ստանալու, զարգացման փուլի և ներկա ու հնարավոր ազդեցությունների վերաբերյալ կարծիք կազմելու համար: Tearfund (2003)

Պատրաստ ենք, թե՛ ոչ: Կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային կարողությունների հաստատութենական տեսակետների գնահատում Բոլոր պետությունների համար անհրաժեշտ պետական գործառույթների շրջանակ, որը պետք է մշտապես հարմարեցվի փոփոխություններին: WRI (2012)

4.1 Հիմնական ոլորտներ/ Սննդի անվտանգություն

Տնային տնտեսության պլանավորման գործնական ուղեցույց (HEA) Կենսապահովման վրա հիմնված կառուցվածք՝ տնային տնտեսությունների ներքին գործունեությունը հստակ և ճշգրիտ ներկայացնելու համար: RHVP, FEG, Save the Children

Սննդի անվտանգության փուլերի համալիր դասակարգման գործիք (IPC) Ստանդարտացված գործիք, որը տրամադրում է սննդի անվտանգության դասակարգման ընդհանուր սկզբունքները: FAO, WFP, Oxfam, Save the Children, FEWSNET, CARE International, Joint Research Centre EU

Բնակչության կենսապահովման անվտանգության վերլուծություն (HLSA) Պրակտիկ աշխատողների համար նախատեսված գործիքաշար, որը բնութագրում է HLSA-ը և ցույց է տալիս, թե ինչպես այն իրականացնել: CARE International (2002)

Շուկայի վերաբերյալ տեղեկատվության և սննդի անվտանգության բացակայության ուսումնասիրություն (MIFIRA) Ներկայացնում է տրամաբանորեն միմյանց հետ կապված հարցերի շարք և գործող կազմակերպություններին օգնելու համար նախատեսված համապատասխան վերլուծական գործիքներ՝ այլընտրանքային օգնության (սննդի կամ դրամի տեսքով) հավանական ազդեցությունները գնահատելու համար, որի հիման վրա սահմանվում է օգնության այն տեսակը, որը լավագույնս համապատասխանում է սննդի անվտանգության բացակայության տվյալ համատեքստին:

Խորհրդատվական փաստաթուղթ. Աֆրիկայի կլիմայի փոփոխության դիմակայունության դաշինքի (ACCRA) տեղական հարմարվողական կարողությունների ծրագիր (LAC) Ծրագիր, որը հնարավորություն է տալիս գնահատել այն գործոնները, որոնք նպաստում են հարմարվողականության կարողությունների բարելավմանը, ներառյալ տարբեր հաստատություններն ու ծրագրերը, գիտելիքը և տեղեկատվությունը, որոշումների կայացումը և ղեկավարումը: ACCRA

Գյուղատնտեսության վրա կլիմայի փոփոխության ազդեցության մոդելավորման համակարգ (MOSAICC) Համալիր գործիքաշար, որը նախատեսված է գյուղատնտեսության վրա կլիմայի փոփոխության ազդեցությունները գնահատելու համար և կարող է օգտագործվել կլիմայի փոփոխության տարբեր սցենարներ մշակելու, ինչպես նաև տնտեսական ազդեցությունների վերլուծության համար: EU, FAO (2010)

Կլիմայի փոփոխության նկատմամբ խոցելիության և կարողությունների վերլուծության (CVCA) ձեռնարկ Կառուցվածք, որը ներառում է ԿՓՀ-ն զարգացման գործընթացում՝ կլիմայի փոփոխության հանդեպ կայուն կենսապահովման միջոցների, ԱՌՆ-ի, կարողությունների զարգացման, պաշտպանության և սոցիալական մոբիլիզացման միջոցով: CARE International (2009)

Ինչպես իրականացնել սննդի անվտանգության գնահատում. Մանրակրկիտ ուղեցույց Աֆրիկայի ազգային միությունների համար Սննդի անվտանգության գնահատման ուղեցույց նրանց համար, ովքեր չունեն հիմնարար գիտելիքներ: IFRC (2006)

Ջարմարվողականության գործիքաշար. Կլիմայի փոփոխության հանդեպ հարմարվողականության ներառումը կենսապահովման բարելավման գործընթացում Գործիքաշար, որը հնարավորություն է տալիս վերլուծություն կատարել կլիմայի ապագա փոփոխությունների վերաբերյալ, որոնք կարող են ներառվել կենսապահովման բարելավման գործընթացում: Christian Aid (2010)

«SMART-Կլիմա» գյուղատնտեսություն. Քաղաքականություններ, գործելակերպ, սննդի անվտանգության ապահովման ֆինանսավորում, հարմարվողականության և մեղման գործընթացներ Տեխնիկական, հաստատութենական և ֆինանսական գործունեության որոշ հիմնական տեսակների ուսումնասիրության մեթոդ, որը պահանջվում է կլիմայից կախում ունեցող գյուղատնտեսության համար: FAO (2010)

Աղետների ռիսկի նվազեցումը կենսապահովման և սննդի անվտանգության ծրագրերում. Ինքնուսույց Oxfam-ի աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության ռեսուրսներ Ուղեցույց, որտեղ ներկայացվում է, թե ինչպես ներառել ԱՌՆ-ն կենսապահովման պլանավորման գործընթացում, ներառյալ նաև դեպքերի ուսումնասիրություններ և իրավիճակային օրինակներ: Oxfam GB

Կլիմայի փոփոխության մեղմացում՝ սննդի և հողօգտագործման միջոցով Ջերմոցային գազերի արտանետումների կրճատման և կլանման ռազմավարություններ Ներկայացված է հինգ հիմնական ռազմավարություն երկրագնդի ջերմոցային գազերի արտանետումները կրճատելու և կանխելու համար և հողօգտագործման մեղմացման նպատակով գործունեություն ծավալելու վեց սկզբունք: ECO Agriculture, World Watch Institute (2009)

Խոցելիությունից դեպի դիմակայունություն. Համայնքներում դիմակայման կարողություններ ստեղծելու համար անհրաժեշտ վերլուծության և գործողությունների շրջանակ Խոցելիության նվազեցմանը և անհատների, տնային տնտեսությունների և համայնքների դիմակայման կարողությունների հզորացմանն ուղղված վերլուծության և գործողությունների շրջանակ: Practical Action Publishing (2011)

4.2 Հիմնական ոլորտներ/Կենսապահովում

Համայնքային ռիսկերի բացահայտման գործիք. Հարմարվողականություն և կենսապահովում (CRiSTAL) Ռիսկերի բացահայտման գործիքի հետ կապված տեղեկատվություն և ռեսուրսներ: IISD, SEI, Inter Cooperation (2011)

Համայնքային խնայողությունների և վարկավորման միավորումների համար նախատեսված ծրագրային ուղեցույց Որև է այդ միավորումների ստեղծման նպատակը և ինչպես են դրանք աշխատում համայնքներում: VSL Associates (2007)

Կենսապահովումը միավորում է Կայք, որը պարունակում է կայուն կենսապահովման մեթոդների վերաբերյալ գործիքներ և ռեսուրսներ (SLA):

Հարմարվողականություն կլիմայի փոփոխականության և փոփոխության նկատմամբ. Չարգացման գործընթացի պլանավորման մեթոդական ձեռնարկ Կլիմայի փոփոխությունը զարգացման ծրագրերում ներառելու ձեռնարկ: USAID (2007)

Երբ աղետը վրա է հասնում. Սերմերի համակարգի անվտանգության գնահատման ուղեցույց Սերմերի անվտանգության գնահատման գործիք՝ սերմերի անվտանգության բացակայության սուր և քրոնիկական իրավիճակներին անդրադարձող թիրախային ռազմավարությունների խրախուսման համար: Catholic Relief Services (2008)

Սերմերի անվտանգություն. Գործնական խորհուրդներ Տաս գործնական ցուցում, որոնք խորհուրդներ են պարունակում սերմերի համակարգի կայունության ապահովման և հզորացման մասին աղետներին արձագանքման և վերականգնման ժամանակահատվածում: International Center for Tropical Agriculture and CRS, with CARE Norway (2011).

Սերմերի տոնավաճառներ և վաուչերներ. սերմերի վրա հիմնված գյուղատնտեսության վերականգնում Աֆրիկայում Ձեռնարկն ընդհանուր պատկերացում է տալիս սերմերի համակարգերի և դրանց բաղադրիչների մասին և նկարագրում է, թե ինչպես պլանավորել և իրականացնել սերմերի կտրոն/ սերմերի տոնավաճառ մոտեցումը: Catholic Relief Services (2002)

Կենսապահովման գնահատման գործիքաշար. Մարդկանց կենսապահովման մակարդակի վրա աղետների ազդեցության վերլուծություն և արձագանք Գործիքաշարը նախատեսված է հետադետյան շրջանում վերլուծության գործընթացին և գործողությունների իրականացմանն աջակցելու համար: FAO, ILO (2009)

Կենսապահովում և կլիմայի փոփոխություն Աղետների ռիսկի նվազեցման, բնական ռեսուրսների կառավարման և կլիմայի փոփոխության հարմարվողականության միավորումը խոցելիության և աղքատության դեմ պայքարի նոր մոտեցման մեջ IUCN, SEI, IISD, Inter Co operation (2003)

Հարմարվողականության գործիքաշար. Կլիմայի փոփոխության նկատմամբ հարմարվողականության ներառումը կենսապահովման բարելավման գործընթացում Գործիքաշար, որը նախատեսված է օժանդակել կլիմայի փոփոխությունները և աղետները կենսապահովման բարելավման աշխատանքներում ներառելու գործընթացին: Christian Aid (2010)

«Կլիմայից կախված գյուղատնտեսություն». Քաղաքականություններ, փորձ, սննդի անվտանգության ապահովման ֆինանսավորում, հարմարվողականության և մեղմացման գործընթացներ Տեխնիկական, հաստատութենական և ֆինանսական գործունեության որոշ հիմնական տեսակների ուսումնասիրության մեթոդ, որը պահանջվում է կլիմայից կախում ունեցող գյուղատնտեսության համար: FAO (2010)

Վերապատրաստման կարիքների վերլուծության (TNA) ուղեցույցներ. Կլիմայի փոփոխության հարմարվողականության տեխնոլոգիաներ. Գյուղատնտեսության ոլորտ Գյուղատնտեսության ոլորտի հարմարվողականության տեխնոլոգիաներ: UNEP (2011)

Տնային տնտեսության պլանավորման գործնական ուղեցույց (HEA) Կենսապահովման վրա հիմնված մոտեցում, որով նախատեսվում է հստակ և ճշգրիտ տեղեկատվություն տրամադրել տնային տնտեսությունների ներքին գործունեության մասին: RHVP, (FEG), Save the Children

4.3 Հիմնական ոլորտներ/Բնական ռեսուրսների կառավարում (ԲՌԿ)

Էկոհամակարգի ծառայություններ Ուղեցույց որոշում կայացնողների համար Էկոհամակարգի ծառայությունների ցանկ: WRI (2008)

Համայնքի և Էկոհամակարգի վրա հիմնված մոտեցումների ներառումը կլիմայի փոփոխության հարմարվողականությանն հետ կապված օգնության գործընթացում Հարմարվողականության հետ կապված հայեցակարգային ծրագիր, որը սատարում է տեղի համայնքներին Էկոհամակարգերի կառավարման, Էկոհամակարգի ծառայությունների մատուցման գործընթացում, որոնցից կախված են այդ համայնքները: ELAN

Էկոհամակարգի վրա հիմնված հարմարվողականություն՝ բնական արձագանք կլիմայի փոփոխություններին Էկոհամակարգի վրա հիմնված հարմարվողականություն և նրա դերը կայուն զարգացման գործընթացում: IUCN (2009)

Համառոտ պատմություն ֆերմերների կողմից ղեկավարվող բնական վերատադրության մասին. Նիգերի փորձը Համայնքների կողմից ծառերի վերարտադրության գործնական ծրագրային մոտեցում՝ ջրի հուսքի կանխման, կենսապահովման մակարդակի, գյուղատնտեսական ապրանքների արտադրության վրա ազդելու և հողի երոզիան նվազեցնելու համար: World Vision, SIM, ECHO (2010)

Աղետների ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցության արագ գնահատման ուղեցույցներ Ցուցումներ աղետների ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցության արագ գնահատման համար: Benfield Hazard Research Centre, University College London and CARE International (2005)

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ուսումնական ռեսուրսներ: UNEP

Կլիմայի փոփոխությունների նկատմամբ հարմարվողականության ուղղորդումը գյուղատնտեսական և բնական ռեսուրսների կառավարման ծրագրերում Ցուցումներ քաղված դասերի, լավագույն փորձի, առաջարկությունների և օգտակար ռեսուրսների համար՝ կլիմայի փոփոխության ռիսկերի կառավարումը և կլիմայի փոփոխության նկատմամբ հարմարվողականությունը զարգացման ծրագրերում ներառելու համար: WB (2010.)

4.4 Հիմնական ոլորտներ/ Ջրամատակարարում, ջրահեռացում և հիգիենա (WASH)

Ուսումնական ձեռնարկ՝ ջրակլիմայական աղետները ջրային ռեսուրսների կառավարման համատեքստում Ձեռնարկը բացատրում է կապը ջրային ռեսուրսների համակարգված կառավարման (IWRM) և ջրային աղետների միջև: Cap-Net UNDP, Nile IWRM-Net, UNISDR, UNOCHA (2009)

Ջրի անվտանգության ապահովման ձեռնարկ. ջրամատակարարման ռիսկերի կառավարում: Ցուցումներ ջրի անվտանգության ապահովմանը նպաստելու համար՝ կարևորելով ջրամատակարարումը ջրային կամ նմանատիպ ընկերությունների կողմից: WHO, IWA (2009)

Տեսլական 2030. Կայուն ջրամատակարարում և ջրահեռացում կլիմայի փոփոխության համատեքստում Կայք, որը պարունակում է կլիմայի փոփոխության, ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների վերաբերյալ միջոցներ: WHO (2010)

4.5 Հիմնական ոլորտներ /Կրթություն

Արտակարգ իրավիճակներում կրթության միջգերատեսչական ցանց (INEE) Գործիքներ, որոնք ցուցումներ են տրամադրում մարդասիրական օգնության ոլորտի աշխատակիցներին, պետական պաշտոնյաներին և կրթության ոլորտի աշխատակիցներին, ովքեր ընդգրկված են կրթության ասպարեզում արտակարգ իրավիճակների ժամանակ: The Inter-Agency Network for Education in Emergencies

Աղետների ռիսկի նվազեցումը երեխաների կողմից՝ գործնական ցուցումներ Ուղեցույց պրակտիկ աշխատողների համար, ովքեր աշխատում են երեխաների հետ՝ վերջիններիս այնպիսի օրինակներ և գաղափարներ տրամադրելու, որոնք հնարավորություն կտան երեխաներին առաջնորդել աղետների ռիսկի նվազեցման գործընթացը: Save the Children-Sweden (2007)

Երեխաներին ուղղված աղետների ռիսկի նվազեցման գործիքաշար Օգնում է պրակտիկ աշխատողներին երեխաների շրջանում նախաձեռնել մասնակցային կարողությունների և խոցելիության վերլուծություններ, վշակել, վերահսկել և գնահատել երեխաներին ուղղված աղետների ռիսկի նվազեցման ծրագրերը, գործողությունների պլանները և իրականացնել ծրագրի շահերի պաշտպանությունը Plan International (2010)

Գիտելիքների, դիրքորոշման և գործելակերպի (KAP) ուսումնասիրություն ռիսկերի նվազեցմանն ուղղված կրթական գործընթացում. Ինչպես իրականացնել KAP ուսումնասիրությունը Ցուցումներ KAP-ի մշակման և իրականացման վերաբերյալ: Handicap International (2009)

«Երեխաների իրավունքների մասին» կոնվենցիա (CRC) Պարտադիր իրավական ուժ ունեցող գործիք, որը սահմանում է ամենուրեք երեխաների հիմնարար իրավունքները: UNICEF (1990) Summary document:

Աղետների ռիսկի նվազեցումը սկսվում է դպրոցում. Աղետների ռիսկերի նվազեցման միջազգային քարոզարշավ 2006-2007 Ողջ աշխարհից վերցված լավագույն փորձի կիրառումը դպրոցների ԱՌՆ ծրագրերում: UNISDR, UNESCO (n.d.)

Երեխաները փոփոխվող կլիմայի պայմաններում Կազմակերպությունների կոալիցիա, որը փոխանակում է տվյալներ, համակարգում գործունեությունը և աշխատում է երեխաների ու երիտասարդների հետ՝ շեշտելու երեխաներին ուղղված աղետների ռիսկի նվազեցման և կլիմայական փոփոխությունները կանխելու և դրանց հարմարվելու գործընթացների կարևորությունը: IDS, Plan International, Save the Children, UNICEF, World Vision (2007)

Ցուցումներ անվտանգ դպրոցական շինություններ կառուցելու համար Ուղղորդող ցուցումներ և ընդհանուր դրույթներ՝ աղետների նկատմամբ դիմակայուն շինությունների կառուցումը օժանդակելու և դպրոցի շենքերը վերակառուցելու համար: INEE, WB, UNISDR (2009)

Կլիմայի փոփոխության ոլորտում իրականացվող կրթություն Կայք, որը պարունակում է կրթական ռեսուրսներ կայուն զարգացման համար: Education for Sustainable Development

4.6 Հիմնական ոլորտներ /Առողջապահություն

Հետադետային կարիքների գնահատում ու վերականգնում/փաստերի արագ հայտնաբերման թերթիկ (PDNA/RF) Ուղեցույց աղետներից հետո գնահատումներ կատարելու համար: UNDP (2009)

Առողջության խոցելիության գնահատման մեթոդ և առողջապահական գործունեություն՝ կլիմայի փոփոխություններին հարմարվելու համար Միջոց, որը ներկայացնում է այն քայլերը, որոնք պետք է նախաձեռնվեն

առողջապահության ոլորտում խոցելիությունն ու կարողությունները գնահատելու համար: (2006)

Խոլերայի բռնկումների դեմ պայքարի ուղեցույց Պատրաստվածություն, կանխում և վերահսկում Մանրակրկիտ ուղեցույց, որը ներկայացնում է խոլերայի բռնկումների դեմ ձեռնարկվող գործողությունները և ապահովում, որպեսզի առողջապահական ծրագրերը իրականացման տեսանկյունից լինեն արագ, համայնքամետ և հարմարեցված, ինչպես նաև հաշվի են առնված գենդերային և բազմազանության հարցերը: Oxfam GB (2012)

4.7 Հիմնական ոլորտներ /Պաշտպանություն

Պաշտպանություն հաշվետվողականության և կատարողականության ակտիվ ուսուցման ցանցի ուղեցույց մարդասիրական գործակալությունների համար Խորհուրդներ և քաղված դասեր մարդասիրական օգնության անվտանգության ապահովման և պատերազմական իրավիճակներում և աղետների ժամանակ խոցելի մարդկանց պաշտպանության ապահովման գործնական ոլորտներում ընդգրկված աշխատակիցների համար: ALNAP, Overseas Development Institute (2005)

5.1 Հիմնական ոլորտներ /Հակամարտություն

Հակամարտությունների և աղետների ռիսկերի նվազեցման ներառումը կրթական ոլորտի պլանավորման գործընթացում Ուղղորդող ցուցումներ կրթական ոլորտի ծրագրեր մշակողների համար Ցուցումներ կրթական ոլորտի ծրագրեր մշակողներին՝ ԿՓՀ/ԱՌՆ-ն պլանավորման գործընթացում ընդգրկելու համար: Global Educational Cluster, UNESCO, IIEP, UNICEF (2011)

«Մի վնասիր». Հակամարտությունների ժամանակ օգնության ցուցաբերման ազդեցության գնահատման ձեռնարկ Մեթոդաբանության վերաբերյալ կարևոր տեղեկատվություն, հիմնական քայլերը և քաղված դասերը: CDA (2004)

Ցուցումներ խաղաղաշինական ծրագրերի մշակման, մշտադիտարկման և գնահատման համար՝ փոփոխության տեսությունների կիրառմամբ Խաղաղության ամրապնդման ծրագրերի մշտադիտարկման և գնահատման մեթոդ Ուղեցույցը նախատեսված է հակամարտությունների լուծման և խաղաղության ամրապնդման գործնական ոլորտում ընդգրկված աշխատողների, հասարակական և դոնոր կազմակերպությունների համար: Այս ուղեցույցը կարող է օգտակար լինել նաև հակամարտությունների լուծման և խաղաղության ամրապնդման այլ դերակատարների համար: CARE International, International Alert (2012)

Տագնապալի իրավիճակների ընկալում. Վերլուծական գործիքներ մարդասիրական օգնության դերակատարների համար Պատմական տվյալների, դերակատար խմբերի, քաղաքական տնտեսության վերլուծության մակրոհամատեքստային գործիք: World Vision International (2003)

Համաձայնության ձեռքբերում մասնակցային գործողությունների պլանի մշակման համար Համաձայնության ձեռքբերման գործիք՝ համայնքի աջակցությամբ և ներդրմամբ բնապահպանական կամ կենսապահովման խնդիրները բացահայտելու և լուծելու համար: Practical Action (2011)

Քաղաքական տնտեսության վերլուծություն Վերլուծություն, որի հիմքում ընկած է հակամարտության քաղաքական և տնտեսական խթանների ընկալումը և տարբեր խմբերի հարաբերական հզորությունը, բացառումը և խոցելիությունը երկարաժամկետ հեռանկարում: Կառավարման և սոցիալական զարգացումների ռեսուրսների կենտրոն: Բիրմինգեմի համալսարան

Աղետի և հակամարտության փոխադարձ կապը, համեմատական տվյալներ Աղետների և հակամարտությունների հարաբերություններից բխող միտումների և տվյալների համեմատական վերլուծություն: Ճգնաժամերի կանխման և վերականգնման աշխատանքների բյուրո: UNDP (2011)

5.2 Հիմնական ոլորտներ /Արագ վերականգնում

Ողորդող ցուցումներ կապված վերականգնման գործընթացի հետ. Կլիմայի փոփոխություն Ցուցումներ արագ վերականգնման և կլիմայի փոփոխության վերաբերյալ: UNISDR, UNDP, Վերականգնման միջազգային պլատֆորմ

Ընդհանուր տվյալներ արագ վերականգնման կլաստերի վերաբերյալ
Կայք, որը պարունակում է արագ վերականգնման հետ կապված տեղեկատվություն, գործիքներ և միջոցներ: One Response, Արագ վերականգնման կլաստերի աշխատանքային խումբ: UNDP

5.3 Հիմնական համատեքստեր/քաղաքային

«Երկրաշարժեր և մեգաթափեր» նախաձեռնություն (EMI)
Միջազգային գիտական նախաձեռնություն, որը ստեղծվել է որպես շահույթ չհետապնդող կազմակերպություն՝ մեգաթափներում և արագ զարգացող մեգապոլիսներում ռիսկերի նվազեցման քաղաքականությանը, տվյալների ձեռքբերմանը և պրակտիկ աշխատանքներին նպաստելու համար: EMI

Կլիմայի փոփոխություններին դիմակայող քաղաքներ. Աղետների ժամանակ խոցելիության նվազեցմանն ուղղված ուղեցույց
Նախատեսված է տեղական իշխանությունների համար՝ կլիմայի փոփոխության հայեցակարգերն ու հետևանքներն ավելի լավ ըմբռնելու նպատակով, ինչպես նաև հասկանալու, թե ինչպես են կլիմայի փոփոխության հետևանքները նպաստում խոցելիությանը քաղաքային բնակավայրերում, և ինչ են անում քաղաքային իշխանություններն ամբողջ աշխարհում ուսուցման, կարողությունների ստեղծման և կապիտալ ներդրումային ծրագրերի հետ կապված՝ դիմակայուն համայնքներ ստեղծելու համար: WB (2009)

Քաղաքները դիմակայուն դարձնելու 10 գերակա ուղղությունները
Հյուգոյի գործողությունների ծրագրի հինգ գերակայությունների համաձայն մշակված 10 կետից բաղկացած ստուգաթերթիկ և կառուցվածքային տարրեր: UNISDR (2012)

Ինչպես քաղաքները դարձնել դիմակայուն. Ձեռնարկ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների համար
Ներկայացնում է քաղաքապետերի, նահանգապետերի, համայնքային խորհրդի անդամների համար նախատեսված ընդհանուր ղեկավար սկզբունքներ՝ աղետների ռիսկի նվազեցման համար, ինչպես նաև այն լավագույն փորձը և գործիքները, որոնք արդեն իսկ կիրառվում են քաղաքներում այդ նպատակով: UNISDR (2012)

Տեղական իշխանությունների ինքնազնահատման գործիք (LGSAT) Տեղական իշխանությունների ինքնազնահատման գործիքը ներկայացնում է քաղաքներն ավելի դիմակայուն դարձնելու 10 գերակա ուղղությունները հիմնվելով Հյուգոյի գործողությունների ծրագրի գերակայությունների և ազգային ցուցանիշների վրա: UNISDR (2012)

Կլիմայի փոփոխության հետ կապված պլանավորում. Ռազմավարական արժեքների վրա հիմնված մոտեցում քաղաքաշինության ոլորտի պլանավորողների համար Արժեքների վրա հիմնված, ռազմավարական, մասնակցային մոտեցում մշակելու համար նախատեսված ուղեցույց՝ կլիմայի փոփոխությունները քաղաքաշինության պլանավորման և զարգացման գործընթացում ներառելու համար: UN-HABITAT (2011)

Մարդասիրական գործերի համակարգման գրասենյակը (OCHA) և դանդաղ վրա հասնող աղետներ. Լրացուցիչ հրահանգների շարք. թիվ 6 Ռազմավարական փաստաթուղթ, որը առաջարկություններ է ներկայացնում, թե ինչպես ազգային և միջազգային մարդասիրական կազմակերպությունները կարող են պատրաստվել և արձագանքել հանկարծակի վրա հասնող աղետներին: UNOCHA (2011)

Պարենային ճգնաժամից դեպի արդար առևտուր՝ կենսապահովման վերլուծություն, պաշտպանություն և աջակցություն արտակարգ իրավիճակներում Կենսապահովման պլանավորմանն ուղղված գործնական ուղեցույց արտակարգ իրավիճակներում: Oxfam (2006)

Տնային տնտեսության պլանավորման մոտեցում (HEA). Լրացուցիչ ձեռնարկ գործնական ոլորտում ընդգրկված աշխատողների համար Ձեռնարկը ծանոթացնում է դաշտային աշխատողներին տնային տնտեսության պլանավորման հետ, իսկ նրանց, ով ծանոթ է այս մեթոդը, այն ծառայում է որպես հղում: Save the Children (2000)

5.4 Հիմնական համատեքստեր/ Դանդաղ վրա հասնող աղետներ

Հաղթահարման ռազմավարությունների ցուցիչ (CSI). Դաշտային պայմաններում կիրառվող մեթոդների ձեռնարկ Հաղթահարման ռազմավարությունների ցուցանիշը բնակչության պարենային անվտանգության ցուցանիշն է և այն համահունչ է պարենային անվտանգության առավել բարդ միջոցների հետ: CARE International, WFP (2003թ)

Դանդաղ վրա հասնող աղետներ՝ երաշտ, պարենի և կենսապահովման անվտանգության բացակայություն Անցյալում տեղի ունեցած դանդաղ վրա հասնող աղետների ժամանակ ցուցաբերած օգնության և վերականգնողական աշխատանքների գնահատումից բաղկացած հիմնական դասերի ընդհանրացում, մասնավորապես, կապված երաշտների և պարենի ու կենսապահովման անվտանգության բացակայության հետ: ALNAP, ProVention Consortium (n.d.)

6.1 Բարենպաստ միջավայր/Կառավարում

«Powercube» Ուժերի հարաբերակցությունն ըմբռնելու առցանց միջոց սոցիալական փոփոխություններ իրականացնելու համար: IDS

Խոցելիությունից դեպի դիմակայունություն. Համայնքներում դիմակայման կարողություններ զարգացնելու համար անհրաժեշտ վերլուծության և գործողությունների շրջանակ Խոցելիության նվազեցմանը և անհատների, տնային տնտեսությունների և համայնքների դիմակայման կարողությունների հզորացմանն ուղղված վերլուծության և գործողությունների շրջանակ: Practical Action Publishing (2011)

Ասիական երկրներում ԱՌՆ ղեկավարման հետ կապված նորարարությունները և լավագույն փորձը. Քաղված դասեր ADPC-ի կողմից ԱՌՆ ղեկավարման հետ կապված նորարարությունների և լավագույն փորձի ներկայացում: Asia disaster Preparedness Centre (ADPC) (2007)

Աղետների ռիսկի նվազեցում, կառավարում և ուղղորդում Աշխատանքային փաստաթուղթ ԱՌՆ-ն տեղական և ազգային կառավարման մարմիններում ընդգրկելու համար: UNDP Bureau for Crisis Prevention and Recovery (2010)

Կառավարման գործընթացների պլանավորման շրջանակ (GPF) Կառավարումը ծրագրերում ներառելու համապարփակ շրջանակ: CARE International

6.2 Հիմնական ոլորտներ /Շահերի պաշտպանություն

Գործնական ուղեցույց աղետների ռիսկի նվազեցման գործընթացի պաշտպանության վերաբերյալ Նպատակն է զարգացնել ԱՌՆ ոլորտում ընդգրկված պրակտիկ գործունեությամբ զբաղվող անձանց հմտությունները, գիտելիքները և փորձը՝ աղետների ռիսկի նվազեցման գործընթացին ուղղված պաշտպանություն իրականացնելու համար: IFRC (2009)

Շահերի պաշտպանության գործիքներ և ուղեցույցներ. քաղաքականության փոփոխության խթանում Ծրագրի ղեկավարների համար նախատեսված գործիքներ և ուղեցույցներ, որոնք նպաստում են պաշտպանության արդյունավետ գործունեություն ծավալելու գործընթացին: CARE International (2001)

Շահերի պաշտպանության ուղեցույց. Աղետների ռիսկի համայնքահեն կառավարման ընդգրկումը տեղական իշխանությունների քաղաքականություններում և ծրագրերում Ցուցումներ, թե ինչպես ընդգրկել աղետների ռիսկի կառավարումը տեղական իշխանությունների քաղաքականություններում և ծրագրերում: ADPC, EC, UNESCAP (2006)

Տերմինների բառարան

Անբավարար հարմարվողականություն

Գործողություններ, որոնք մեծացնում են խոցելիության մակարդակը կլիմայի փոփոխությունների հանդեպ, ինչը ներառում է զարգացման և ներդրումային գործունեության վերաբերյալ որոշումների կայացում՝ անտեսելով կլիմայի փոփոխականության, ինչպես նաև երկարաժամկետ կլիմայական փոփոխությունների բացասական ազդեցությունները: (Burton (1998)

Ազդեցության ենթարկվելը

Ազդեցության ենթակա միջոցները կարող են ներառել տվյալ տարածքի մարդկանց կամ ակտիվների տեսակները: Սրանք կարող են զուգակցվել որևէ մասնավոր սպառնալիքի նկատմամբ վտանգված տարրերի հատուկ խոցելիության հետ՝ տվյալ տարածքում այդ վտանգի հետ կապված որակական ռիսկերը գնահատելու համար: (UNISDR, 2009): Մեկնաբանություն. Ազդեցության ենթարկվելը սովորաբար նշանակում է ֆիզիկապես ենթարկվել կամ կախված լինել ակտիվներից, համակարգերից, ինստիտուտներից կամ այլ անհատներից, որոնք գտնվում են վտանգից կամ կլիմայական որևէ երևույթից ազդեցություն կրած տարածքներում:

Աղակալում

Աղերի կուտակումը հողում IPCC (2000)

Աղաջրերի ներթափանցում

Քաղցրահամ մակերևութային ջրերի կամ ստորգետնյա ջրերի տեղաշարժ՝ աղաջրերով ողողման արդյունքում՝ վերջինիս ավելի բարձր խտության պատճառով, սովորաբար, ափամերձ և գետաբերանների շրջանում: IPCC (2000)

Աղետ

Համայնքի կամ հասարակության գործունեության լուրջ խաթարում, որն ուղեկցվում է լայնածավալ մարդկային, նյութական, տնտեսական կամ բնապահպանական կորուստներով ու հետևանքներով և գերազանցում է ազդակիր համայնքի կամ հասարակության սեփական ուժերով այն հաղթահարելու կարողությունը (UNISDR, 2009): Ծանոթագրություն. Աղետները հաճախ բնութագրվում են որպես վտանգի ենթարկվելու, խոցելիության առկա պայմանների և պոտենցիալ բացասական հետևանքներն նվազեցնելուն կամ հաղթահարելուն ուղղված միջոցների կամ կարողությունների անբավարարության համադրության արդյունք: Աղետների ազդեցությունը իր մեջ կարող է ներառել մարդկային զոհեր, վնասվածքներ, հիվանդություններ, մարդկանց ֆիզիկական,

հոգեբանական և սոցիալական վիճակի համար այլ բացասական հետևանքներ՝ ունեցվածքի կորստի, ակտիվների ոչնչացման, ծառայությունների կորստի, սոցիալական և տնտեսական ցնցումների և շրջակա միջավայրի դեգրադացման հետ համակցված:

Աղետի ռիսկ

Աղետի հետևանքով առաջացող կյանքի, առողջական վիճակի, կենսապահովման միջոցների, ունեցվածքի և ծառայությունների հնարավոր կորուստ, որը կարող է առաջանալ որևէ առանձին համայնքում կամ հանրության մեջ ապագա որևէ ժամանակահատվածում: UNISDR (2009):

Աղետների ռիսկի նվազեցում

Պարբերաբար իրականացվող աշխատանքների միջոցով աղետների ռիսկի նվազեցման հայեցակարգ և գործելակերպ՝ աղետների պատճառահետևանքային գործոնները վերլուծելու և կառավարելու համար, այդ թվում, նվազեցնելով վտանգի ենթարկվելու հավանականությունը և մարդկանց ունեցվածքի խոցելիության աստիճանը՝ հողի և շրջակա միջավայրի խելամիտ կառավարմամբ և բացասական դրսևորումների նկատմամբ նախապատրաստվածության մակարդակի բարելավմամբ: UNISDR (2009)

Անապատացում

Հողի դեգրադացիա չոր, կիսաչոր և կիսախոնավ տարածքներում, որոնք առաջանում են տարբեր գործոնների, այդ թվում, կլիմայի փոփոխության և մարդկային գործունեության արդյունքում: IPCC (2000)

Անտառազրկում

Անտառի վերածումն այլ նպատակով օգտագործվող հողատարածքի, կամ երկարատև ժամանակահատվածում անտառային ծածկույթի հատում՝ 10 տոկոսի շեմից ցածր սահմանում: Անտառազրկումը նշանակում է անտառային ծածկույթի երկարատև կամ մշտական կորուստ և նրա վերափոխումն այլ նպատակով օգտագործվող հողատարածքի: Միջիգանի համալսարան (2011)

Ավելի լավ կառուցելու հայեցակարգ

Հետադետային վերականգնողական գործընթացներ և միջամտություններ, որոնք ոչ միայն վերականգնում են նախկինում եղածը, այլև կատարում են ավելին, օգտվելով ճգնաժամի արդյունքում կառավարությունների այն հոգեբանական, քաղաքական, կառավարման և ֆինանսական հնարավորություններից, որոնք համայնքներին տանում են ավելի լավ և անվտանգ զարգացման ուղիով (Ցունամիի ազդեցություններից վերականգնվելու հարցերով ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հատուկ հանձնարարականների գծով դեպի, 2006)

Արագ վերականգնում

Աղետից հետո արագ վերականգնումն անցում է կյանքը փրկելու գործողություններից դեպի կենսապահովման միջոցների վերականգնում: Արագ վերականգնման գործողությունների նպատակն է կայունացնել տնտեսական, կառավարման, մարդկանց անվտանգության և սոցիալական հավասարության հետ կապված իրավիճակը: Արագ վերականգնման գործողությունները փորձում են նաև ընդգրկել ռիսկի գործոնների նվազեցմանն ուղղված աշխատանքները ճգնաժամերին արձագանքման գործընթացի ամենավաղ փուլերում և հիմք ստեղծել երկարաժամկետ վերակառուցողական գործունեության ծավալման համար: UNISDR (2009)

Արտակարգ իրավիճակների գործողությունների պլան

Կառավարման գործընթաց, որը վերլուծում է հատուկ հնարավոր իրադարձությունները կամ իրավիճակները, որոնք կարող են սպառնալ հասարակությանը կամ շրջակա միջավայրին, և նախօրոք մշակում է գործողություններ, որոնք հնարավորություն են տալիս ժամանակին, արդյունավետ և համապատասխան ձևով արձագանքել այդ իրադարձություններին և իրավիճակներին: UNISDR (2009)

Արտակարգ իրավիճակներում շուկայական համակարգերի վերլուծություն/ գնահատում (EMMA)

EMMA-ն շուկայի արագ վերլուծություն է, որը նախատեսվում է կիրառել հանկարծակի վրա հասնող ճգնաժամերի առաջին երկու-երեք շաբաթվա ընթացքում: Սրա տրամաբանական հիմնավորումը կայանում է նրանում, որ արտակարգ իրավիճակներում ամենատագնապալից վիճակում գտնվող շուկաների վիճակի լավ ընկալումը հնարավորություն է տալիս որոշում կայացնողներին (օրինակ, դոնորներին, ՀԿ-ներին, կառավարությանը, մարդասիրական գործունեության այլ դերակատարների) դիտարկել առավել մեծ ծավալի օգնություն ցուցաբերելու հնարավորությունը: Այն նպատակ չունի փոխարինել գոյություն ունեցող արտակարգ իրավիճակների գնահատումները, և ավելին, տնային տնտեսությունների և տնտեսական իրավիճակի վերլուծությունը, ինչպես օրինակ, ՏՆային տնտեսությունների պլանավորման մեթոդն է: Այն նախատեսված է նպաստել ճգնաժամերից հետո հիմնական տվյալների և գիտելիքների աճին:

Բնական ռեսուրսների կառավարում (NRM)

Բնական ռեսուրսների կառավարումը կյանքի է կոչվում, երբ այն տնտեսապես կենսունակ է, սոցիալապես նպատակահարմար և բնապահպանական առումով՝ կայուն: Հագեն (2001)

Բնական վերարտադրություն ֆերմերային տնտեսությունների կողմից (FMNR)

FMNR-ն հիմնված է նախկինում ոչնչացված թփերի և ծառերի հասուն

արմատային համակարգերից այդ տեղանքին բնորոշ թփերի և ծառերի վերարտադրության վրա: Գյուղատնտեսական հողատարածքներում ծառերը վերականգնելու նպատակով օգտագործում են վերարտադրության տեխնիկական մեթոդներ՝ որպես ֆերմերային տնտեսության վարման մի մաս: Դաշտերում ընտրված երիտասարդ ծառերի պահպանման և էտելու միջոցով, դրանք արագ վեր են ածվում ծառերի և ապահովում փայտանյութի կայուն մատակարարումը: Թափված տերևները հողը հարստացնում են սննդարար նյութերով և ապահովում խոնավության պահպանումն ուժասպառ եղած հողում: Այլ օգուտների թվում է նաև անասնակերի, անտառային մթերքների և դեղաբույսերի ապահովումը, ինչպես նաև ապաստանի ապահովումը բույսերի վնասատուներով սևվող թռչունների և սողունների համար:

Գենդերային հարցեր

Սոցիալական տարբերություններ կանանց և տղամարդկանց, աղքիկների և տղաների միջև կյանքի փուլի ընթացքում: Գենդերային այս տարբերությունները հայտնի են ու, թեև, բոլոր մշակույթներում խոր հիմքեր ունեն, ժամանակի հետ փոխվում են, և նույն ու տարբեր մշակույթներում ունեն բազմաթիվ դրսևորումներ: «Գենդերը», սոցիալական ինքնության այլ կողմերի հետ միասին, ինչպիսիք են դասը և ռասան, սահմանում է յուրաքանչյուր մշակույթում կանանց և տղամարդկանց դերը, իշխանությունը և հասանելիությունը ռեսուրսների նկատմամբ: Oxfam GB (2010)

Գենդերային հավասարություն

Կանանց, աղքիկների, տղաների և տղամարդկանց հնարավորությունների, ռեսուրսների և խրախուսման հավասար իրավունքների, խոսքի հավասար իրավունքի, արժանապատվության և հարգանքի հավասար մակարդակի ապահովում: Հավասարությունը չի նշանակում, որ կանայք և տղամարդիկ նույն են, այլ նշանակում է ընտրություն կատարելու հավասար իրավունք և այդ ընտրության հիման վրա գործելու հավասար հնարավորություններ: Oxfam GB (2010)

Գենդերային հավասարության ձեռքբերման ռազմավարություն

Ապահովել գենդերային հայեցակարգի և գենդերային հավասարության հարցերի կարևորությունը բոլոր այն գործողություններում, ինչպիսիք են քաղաքականության մշակում, ուսումնասիրություններ, պաշտպանություն/ երկխոսություններ, օրենսդրություն, ռեսուրսների բաշխում և պլանավորում, ծրագրերի և նախագծերի իրականացում ու մշտադիտարկում: UN Women (2011)

Գիտելիքների, դիրքորոշման և գործելակերպի (KAP) ուսումնասիրություն

KAP-ի ուսումնասիրությունները բացահայտում են մարդկանց

գիտելիքները որոշ հարցերի վերաբերյալ, վերջիններիս զգացողություններն ու վարքագծի դրսևորումները: KAP-ի ուսումնասիրությունների հիմքում ընկած է գիտելիքների, դիրքորոշման և գործելակերպի (վարքագծի) բացահայտումը որևի առանձին հարցի վերաբերյալ, այն դեպքում, երբ սոցիալական հարցումները կարող են ընդգրկել լայնածավալ սոցիալական արժեքներ և գործողություններ: Գիտելիքը վերաբերում է որոշակի առանձին հարցի ընկալմանը համայնքի կողմից: Դիրքորոշումն այդ հարցի նկատմամբ զգացողությունն է, ինչպես նաև ցանկացած կողմնակալ գաղափարներ, որ կարող են մարդիկ ունենալ այդ մասին: Գործելակերպը վերաբերում է այն եղանակներին, որտեղ մարդիկ ցուցաբերում են իրենց գիտելիքներն ու դիրքորոշումը գործողությունների միջոցով: FAO

Գյուղատնտեսություն

Գիտություն կամ գյուղատնտեսական աշխատանքներ, ներառյալ բերք աճեցնելու և անասուն պահելու համար հողի մշակումը՝ սնունդ, բուրդ և այլ ապրանքներ ստանալու նպատակով: (Օբսֆորդի անգլերեն լեզվի բառարան)

Դանդաղ վրա հասնող աղետ

Արտակարգ իրավիճակ, որը չի առաջանում մեկ, հստակ երևույթից, այլ ի հայտ է գալիս աստիճանաբար, հաճախ կախված բարդ և միմյանց հետ փոխկապակցված հանգամանքներից: UNOCHA (2011)

Դիմակայունություն

Դիմակայունությունը վերաբերում է անհատի, տնային տնտեսության, բնակչության խմբի կամ համակարգի վտանգների և(կամ) կլիմայի փոփոխության և այլ ցնցումների ու սթրեսային⁶ իրավիճակների ազդեցությունները կանխատեսելու, դիմակայելու և վերականգնվելու կարողություններին՝ առանց վնասելու (կամ բարդացնելու) երկարաժամկետ հեռանկարները: Ծանոթագրություն. «Դիմակայունություն» տերմինը բազմաթիվ ուսումնասիրությունների առարկա է և նրա սահմանումը հավանաբար պարբերաբար փոփոխության կենթարկվի մոտ ապագայում: Այս ուղեցույցում օգտագործված սահմանումը հիմնված է UNISDR-ի տերմինաբանության (2009թ.) և DFID-ի աշխատանքային սահմանման վրա:

Դիմակայունությունն ամրագրված վերջնական վիճակ չէ, այն դինամիկ իրավիճակների և գործընթացների շարք է: Դիմակայունության հզորացումն անհրաժեշտ է տարածական և ժամանակային տարբեր հարթություններում ռիսկերի լավագույնս վերլուծության և այն վերլուծությունների համար, որոնք պետք է վերահսկվեն և թարմացվեն ծրագրերի մշակման և բարելավման գործընթացներում:

Երեխաներին ուղղված աղետների ռիսկի նվազեցում

Աղետների ռիսկի նվազեցում, որի գործողությունների առանցքում

գտնվում են երեխաները, որն ընդունում է խոցելիության այն հատուկ տեսակները, որոնց հետ առնչվում են երեխաներն աղետների արդյունքում, ուշադրությունը կենտրոնացնում է երեխաների կարիքների և իրավունքների վրա, ինչպես նաև աջակցում է նրանց մասնակցությանը՝ կարիքների բացահայտման և իրավունքների պաշտպանության գործընթացներին: Save the Children (2011)

Էկոհամակարգի ծառայություններ

Օգուտ, որ մարդիկ և համայնքները քաղում են էկոհամակարգերից: Սա ներառում է այնպիսի ծառայությունների մատուցում, ինչպիսիք են սննդի և ջրամատակարարման ծառայությունները, կարգավորող ծառայությունները, ինչպիսիք են ջրիեղեղների և հիվանդությունների վերահսկումը, մշակութային ծառայությունները, ինչպիսիք են հոգևոր, զվարճանքի և մշակութային օգուտները, և օժանդակող ծառայությունները, ինչպիսին սնուցող նյութերի շրջանառությունն է, որն ապահովում է կյանքը երկրագնդի վրա (Չազարամյակի էկոհամակարգի գնահատում, 2005թ.):

Էկոհամակարգի վրա հիմնված հարմարվողականություն

Էկոհամակարգի վրա հիմնված հարմարվողականությունը միավորում է կենսաբազմազանության և էկոհամակարգերի ծառայությունների կիրառումը մեկ ընդհանուր ռազմավարության մեջ, որի նպատակն է օգնելու մարդկանց հարմարվել կլիմայի փոփոխության բացասական ազդեցություններին: Այն ներառում է կայուն կառավարում, էկոհամակարգերի պահպանում ու վերականգնում այնպիսի ծառայությունների մատուցման համար, որոնք կօգնեն մարդկանց հարմարվել ինչպես կլիմայի ներկայիս փոփոխականությանը, այնպես էլ կլիմայի փոփոխություններին: UNISDR (2009)

Իրավունքների վրա հիմնված մոտեցում

Կառուցվածք, որը զարգացման ծրագրերում և գործընթացներում ներառում է մարդու իրավունքների միջազգային իրավական նորմերը, սկզբունքները, չափորոշիչները և նպատակները: Այն բնութագրվում է այնպիսի մեթոդներով և գործողություններով, որոնք կապում են մարդու իրավունքների համակարգը և իշխանության անբաժանելի հասկացությունն ու պայթարը զարգացման հետ, (Դանիայի մարդու իրավունքների ինստիտուտ, 2007թ.): Մեկնաբանություն. Իրավունքների վրա հիմնված մոտեցումը ճանաչում է բոլոր մարդկանց՝ իրենց հնարավորություններն իրացնելու, աղքատությունից գերծ, անվտանգ և առավել արդար աշխարհում ապրելու իրավունքները: Այն ներառում է կյանքի և անվտանգության, կայուն կենսապահովման, լսելի լինելու, ինքնության և հիմնական սոցիալական ծառայություններից օգտվելու իրավունքները:

Խոցելիություն

Համայնքի, համակարգի կամ միջոցների բնութագրիչ հատկանիշներ և հանգամանքներ, որոնք դրանց դյուրընկալ են դարձնում կլիմայի փոփոխության և այլ վտանգների կործանարար ազդեցության նկատմամբ: Խոցելիությունը կարող է սահմանվել որպես վտանգների ենթակայության և զգայունության փոխներգործություն՝ մի շարք միմյանց հետ փոխկապակցված սոցիալական, տնտեսական, քաղաքական, կառավարման և էկոլոգիական գործոնների վրա (Oxfam GB, 2010): Մեկնաբանություն. Խոցելիությունն ունի տարբեր կողմեր, որոնք պայմանավորված են տարբեր ֆիզիկական, սոցիալական, տնտեսական և բնապահպանական գործոններով: Օրինակները կարող են ներառել շենքերի անորակ նախագծումն ու կառուցումը, ունեցվածքի անբավարար պաշտպանությունը, հանրային տեղեկատվության և իրազեկման բացակայությունը, ռիսկերի և նախապատրաստական միջոցների սահմանափակ պաշտոնական ճանաչումը, շրջակա միջավայրի խելամիտ կառավարման անտեսումը: Խոցելիությունը զգալիորեն տարբերվում է համայնքներում և տարբեր է նաև ժամանակային առումով:

Կայուն զարգացում

Չարգացում, որը բավարարում է ներկա սերնդի կարիքները և, միաժամանակ, ռիսկի չի ենթարկում իրենց կարիքները բավարարելու ապագա սերունդների կարողությունները: UNISDR (2009)

Կանխարգելում

Վտանգների և դրանց հետ կապված աղետների բացասական ազդեցությունների ամփոփական կանխում ((UNISDR, 2009): Մեկնաբանություն. Կանխարգելումը (այսինքն աղետների կանխարգելումը) սահմանում է այն հայեցակարգերն ու մտադրությունները, որոնք անհրաժեշտ են նախօրոք ձեռնարկված գործողությունների միջոցով բացասական ազդեցություններից ամբողջությամբ խուսափելու համար, օրինակ, ամբարտակների կամ պատվարների կառուցումը՝ ջրհեղեղների ռիսկերը վերացնելու համար, հողօգտագործման գործընթացի կանոնակարգումը՝ բարձր ռիսկային գոտում բնակավայրի կառուցումն արգելելու համար, սեյսմիկության գործոնի դիտարկմամբ ինժեներական նախագծերի մշակումը, որն ապահովում է ռիսկի ենթակա շենքերի դիմակայունությունն ու շահագործումը երկրաշարժի ժամանակ:

Կառավարում

Քաղաքական, տնտեսական և վարչական իշխանության կիրառում երկրի ղեկավարման բոլոր մակարդակներում: Այն բաղկացած է տարբեր մեխանիզմներից, գործընթացներից և հաստատություններից, որոնց միջոցով քաղաքացիներն ու խմբերն արտահայտում են

իրենց հետաքրքրությունները, իրականացնում իրենց օրինական իրավունքները, կատարում են պարտականությունները և լուծում իրենց տարածայնությունները: Կառավարման գործընթացը ներառում է պետությունը, սակայն դուրս է գալիս նաև նրա շրջանակներից: Այն ընդգրկում է բոլոր համապատասխան խմբերին, այդ թվում նաև, մասնավոր հատվածը և քաղաքացիական հասարակության կազմակերպությունները: UNDP (1997)

Կարողություն

Համայնքում, հասարակությունում կամ կազմակերպությունում առկա բոլոր ուժեղ կողմերի, հատկանիշների և ռեսուրսների միասնություն, որը կարող է օգտագործվել սահմանված նպատակներին հասնելու համար (ՄԱԿ-ի աղետների նվազեցման միջազգային ռազմավարություն, UNISDR, 2009թ.): Մեկնաբանություն. Կարողությունը կարող է ներառել ենթակառուցվածքները և ֆիզիկական միջոցները, ինստիտուտները, հասարակության հաղթահարման ունակությունները, ինչպես նաև մարդու գիտելիքները, հմտությունները և հատկանիշները, ինչպիսիք են սոցիալական հարաբերությունները, ղեկավարումը և կառավարումը:

Կենսաբազմազանություն

Կենդանի օրգանիզմների փոփոխականությունը տեսակների մեջ, տեսակների միջև, և օրգանիզմների միջև: Կենսաբազմազանությունն ինքնին Էկոհամակարգի ծառայություն չէ, այն ավելի շուտ աջակցում է բոլոր ծառայություններին: WRI (2009)

Կենսապահովում

Կենսապահովումը բաղկացած է այն ռեսուրսներից (այդ թվում նաև հմտություններ, տեխնոլոգիաներ, կազմակերպում) և գործողություններից, որոնք պահանջվում են ապրելու և կյանքի լավ որակ ապահովելու համար: Pasteur (2011)

Կլիմայի զգայունություն

Չափանիշ, որով հնարավոր է գնահատել, թե որքանով է կլիմայական համակարգի շերմաստիճանը փոփոխվում ռադիացիայի ազդեցությունից (հիմնականում ածխածնի երկօքսիդի): Կլիմայական զգայունությունը, մասնավորապես, ածխածնի երկօքսիդի պատճառով, հաճախ արտահայտվում է երկրագնդի մթնոլորտի շերմաստիճանի բարձրացմամբ ըստ Ցելսիուսի՝ ածխածնի երկօքսիդի խտության կրկնապատկման հետ միասին: IPCC (2001)

Կլիմայի փոփոխականություն

Կլիմայի միջին վիճակի և այլ վիճակագրական հատկանիշների

(ինչպիսիք են ստանդարտ շեղումները, ծայրահեղ դրսևորումները և այլն) տատանումներ՝ տարածական և ժամանակային տեսանկյունից, որոնք մասնակի եղանակային դրսևորումների շրջանակից դուրս են: Փոփոխականությունը կարող է ի հայտ գալ կլիմայական համակարգի ներքին բնական գործընթացների շնորհիվ (ներքին փոփոխականություն), կամ բնական կամ մարդկային գործունեության արտաքին ուժերի միջոցով առաջացած տատանումների շնորհիվ (արտաքին փոփոխականություն): IPCC (2000)

Կլիմայի փոփոխություն

Փոփոխություն կլիմայի դրսևորումներում, որն ի հայտ գալով՝ բնական գործընթացների կամ մարդկային գործունեության արդյունքում կարող է տևել տասնամյակներ կամ ավելի երկար: IPCC (2000)

Կլիմայի փոփոխության ազդեցություններ

Կլիմայի դրսևորման փոփոխություններ՝ ջերմոցային գազերի չափազանց մեծ քանակությամբ արտանետումների արդյունքում, ներառյալ ցամաքի և ծովի ջերմաստիճանի բարձրացումը, ծովի մակարդակի բարձրացումը, սառցադաշտերի և սառցաբեկորների հալոցքը, փոփոխվող և անկանոն տեղումները:

Կլիմայի փոփոխության հարմարվողականություն

Բնական կամ մարդկային համակարգերի կարգավորում՝ ի պատասխան կլիմայի փաստացի կամ ակնկալվող ազդեցությունների, որը մեղմացնում է վնասը կամ օգտագործում է նպաստավոր հնարավորությունները (IPCC, 2000), կամ ա) հարմարեցնում է զարգացումները միջին ջերմաստիճանի, ծովի մակարդակի և տեղումների աստիճանական փոփոխություններին, բ) նվազեցնում և կառավարում է ռիսկերը կապված առավել հաճախակի, խիստ և անկանխատեսելի դարձած ծայրահեղ եղանակային դրսևորումների հետ: UNISDR

Կարողությունների և խոցելիության մասնակցային վերլուծություն (PCVA)

Վերլուծական և պլանավորման գործընթաց (և նույն անվամբ համապատասխան գործիք), որն, ի սկզբանե, կիրառվում է տեղերում համայնքի կողմից իրականացվող աղետների ռիսկի գնահատմանը նպաստելու համար: Գործընթացը կիրառում է մասնակցային մոտեցում և մեթոդներ՝ խոցելիության և վտանգի ենթարկվելու իրավիճակի ընկալման և տվյալների հավաքագրման, ինչպես նաև աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված գործողությունները կարևորելու համար: PCVA-ն և նրա տարբերակները սկսում են ավելի հաճախ կիրառվել լայնածավալ վերլուծության և զարգացման գործընթացների, ներառյալ կլիմայի փոփոխության հարմարվողականության գործողությունների պլանավորման համար, (Յեղիմակի սահմանում):

Հակամարտություն

Բաց, հաճախ երկարատև պայքարի վիճակ, կռիվ կամ պատերազմ (Անկախ բառարան): Ծանոթագրություն. Հակամարտությունը կարող է վերաբերվել և՛ թշնամական խմբերի միջև բաց առճակատմանը, և՛ ընդհիմադիր խմբավորումների միջև պայքարին:

Հակամարտություն (թաքնված)

Թաքնված համակարտությունն առկա է այնտեղ, որտեղ անհատները, խմբավորումները, կազմակերպությունները կամ ազգերը տարածայնություններ ունեն, որոնք անհանգստացնում են մեկին կամ մյուսին, սակայն այդ տարածայնություններն այնպիսի չափերի չեն հասնում, որպեսզի կողմերից մեկը գործողություններ ձեռնարկի իրավիճակը փոխելու համար (Wehr, 1975): Ծանոթագրություն. Թաքնված հակամարտության հիմքում հաճախ ընկած է երկարատև տևտեսական անհավասարությունը կամ այն առկա է այն խմբերի միջև, որոնց համար քաղաքական իշխանությունը հավասարապես մատչելի չէ: Կառավարությունը կարող է չարձագանքել փոքրամասնությունների կամ փոքր հնարավորություններ ունեցող խմբերի կարիքներին: Կարող է գոյություն ունենալ արժեքների և կարգավիճակների տարբերություն: Այս իրավիճակներից յուրաքանչյուրը, հրահրումից հետո, կարող է վերածվել բաց հակամարտության:

Հանաժոներից ստացված վառելիք

Քարածխային հիմքով վառելիքներ, որոնք ստացվում են ածխածնային հանաժոներից, ներառյալ քարածուխը, նավթը, բնական գազը: IPCC (2000)

Հարմարվողականության կարողություն

Կլիմայի փոփոխություններին հարմարվելու (անհատ կամ համայնք) համակարգ (ներառյալ կլիմայի փոփոխականությունն ու ծայրահեղ դրսևորումները)՝ հնարավոր վնասները մեղմելու, հնարավորություններն օգտագործելու և/կամ հետևանքները հաղթահարելու համար: IPCC (2000)

Հարմարվողականության «անպարտելի» տարբերակներ

Տարբերակներ կամ միջոցներ, որոնք կարող են արդարացվել (և կարող են արդյունավետ լինել) կլիմայի փոփոխության հետագա հնարավոր սցենարների պայմաններում: Հարմարվողականության «անպարտելի» տարբերակներն ազդեցություն չեն կրում կլիմայի ապագա անորոշ փոփոխություններից, քանի որ օգնում են անդրադառնալ այն խնդիրներին, որոնք կապված են կլիմայի առկա փոփոխականության հետ և, միաժամանակ, ստեղծում են հարմարվողականության

կարողություններ կլիմայի ապագա փոփոխություններին դիմակայելու համար: Հարմարվողականության «անպարտելի» տարբերակներ կարող են հանդիսանալ կլիմայի փոփոխության հետ կապված տեղեկատվության տրամադրման և տարածման գործընթացի բարելավումը, ինչպես նաև ջրհեղեղի և(կամ) երաշտի հակված տարածքներում տեղակայված համայնքների համար վաղ ազդարարման համակարգերի հասանելիության ապահովումը: WB

Հաղթահարման ռազմավարությունների ցուցիչ (CSI)

Բնակչության պարենի անվտանգության ցուցանիշ, որը սահմանում է փոխադարձ կապը պարենի անվտանգության առավել բարձր միջոցների միջև: Հարցաշար, թե ինչպես են տնային տնտեսությունները հաղթահարում սննդի պակասի հետ կապված ռիսկերը, որի արդյունքներն ամփոփվում են միավորային համակարգով: Ամենապարզ տարբերակով CSI-ի միավորների փոփոխության մշտադիտարկումը ցույց է տալիս բնակչության պարենի անվտանգության կարգավիճակի վատացումը կամ բարելավումը: Maxwell et al (2003)

Հետադետային կարիքների գնահատում ու վերականգնում. փաստերի արագ հայտնաբերման շրջանակ (PDNA/ RF)

Կառավարության կողմից իրականացվող գործընթաց, որը միավորում է տեղեկատվությունը մեկ միասնական հաշվետվության մեջ, որտեղ տվյալներ են ներկայացվում աղետի ֆիզիկական ազդեցության, վնասների և կորուստների տնտեսական արժեքների, տուժած բնակչության կողմից կրած ազդեցության, ինչպես նաև արագ և երկարաժամկետ հեռանկարում վերականգնման կարիքների և առաջնահերթությունների վերաբերյալ: UNDP (1997)

Հողօգտագործման փոփոխություն

Մարդու կողմից հողի օգտագործման կամ կառավարման փոփոխություն, որը կարող է հանգեցնել հողի և բուսական ծածկույթի փոփոխությանը: Հողաբուսական ծածկույթի և հողի օգտագործման փոփոխությունը կարող է ազդել կլիմայի վրա տեղական կամ լայնածավալ մասշտաբով: IPCC (2000)

Մեղմացում (աղետների հետ կապված)

Վտանգների և դրա հետ կապված աղետների բացասական ազդեցությունների նվազեցում կամ սահմանափակում: (UNISDR, 2009) Մեկնաբանություն. Վտանգների բացասական ազդեցությունները հաճախ չեն կարող ամբողջությամբ կանխվել, սակայն դրանց ծավալը կամ խստության աստիճանը կարելի է զգալիորեն նվազեցնել տարբեր

ռազմավարությունների և գործողությունների միջոցով: Մեղմացման միջոցները ներառում են ինժեներական տեխնոլոգիաներ, աղետներին դիմակայող շինություններ, ինչպես նաև բնապահպանական քաղաքականության բարելավումն ու հանրային իրազեկումը:

Մեղմացում (կլիմայի փոփոխության հետ կապված)

Ջերմոցային գազերի արտանետումների ծավալների կրճատում: UNISDR (2009)

Մշտադիտարկում, գնահատում և ուսուցում (MEL)

Մշտադիտարկումը ծրագրի կատարողականության պարբերաբար գնահատումն է երկար ժամանակահատվածում: Այն ներառում է տվյալների շարունակական հավաքագրում և ուսումնասիրություն, այդ թվում նաև առաջընթացի ցուցանիշներն՝ ի համեմատ ծրագրի նախատեսված պլանների և նպատակների, որը ներկայացվում է ծրագրի ղեկավարներին և շահագրգիռ կողմերին (Oxfam, GB): Գնահատումները լրացնում են մշտադիտարկման շարունակական գործունեությունը՝ ապահովելով ծրագրերի համապատասխանության, արդյունավետության, կայունության առավել խոր իրատեսական գնահատումներ որոշակի ժամանակահատվածի համար: Oxfam, GB Ուսուցումն արդյունավետ մշտադիտարկման և գնահատման արդյունք է և փոխանակում է տվյալ և այլ կազմակերպությունների կողմից իրականացված ծրագրերից քաղված փորձը:

Շահագրգիռ կողմ

Ցանկացած կողմ (անհատ կամ կոլեկտիվ), որն ակտիվորեն ընդգրկված է որևէ գործընթացում, ունի հետաքրքրություններ, որի վրա դրական կամ բացասական ազդեցություն կարող է գործել ծրագրի իրականացումը կամ ավարտը և, որը կարող է ազդեցություն գործել ծրագրի իրականացման, նրա արդյունքների կամ մասնակիցների վրա (Ծրագրի կառավարման ինստիտուտ, 1996թ.):

Շրջակա միջավայրի դեգրադացիա

Շրջակա միջավայրի կարողությունների նվազում, որն անհրաժեշտ է սոցիալական և բնապահպանական նպատակների իրականացման և կարիքների բավարարման համար (UNISDR, 2009): Ծանոթագրություն. Շրջակա միջավայրի դեգրադացիան կարող է փոխել բնական աղետների հաճախականությունն ու ուժգնությունը և ավելացնել համայնքների խոցելիությունը: Մարդկային գործնով պայմանավորված դեգրադացիայի տեսակները ներառում են՝ հողային ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործում, հողի էրոզիա և կորուստ, անապատացում, անտառային հրդեհներ, կենսաբազմազանության կորուստ, անտառազրկում,

մանգրային թփուտների ոչնչացում, հողի, ջրի և օդի աղտոտում, կլիմայի փոփոխություն, ծովի մակարդակի բարձրացում, օգոնային շերտի բայթայում:

Շրջակա միջավայրի ազդեցության գնահատում

Գործընթաց, որով գնահատվում է առաջարկվող նախագծի կամ ծրագրի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա: Այն հանդիսանում է պլանավորման և որոշումների կայացման բաղկացուցիչ մաս, որի նպատակն է սահմանափակել կամ նվազեցնել նախագծի կամ ծրագրի բացասական ազդեցությունները: UNISDR (2009)

Պաշտպանություն

Բոլոր այն գործողությունները, որոնք ուղղված են անհատի բոլոր իրավունքների ամբողջական իրականացմանը՝ համաձայն համապատասխան օրենսդիր մարմինների կողմից ընդունված նորմերի, դրույթների և ոգու թելադրանքի (օրինակ՝ մարդու իրավունքներ, մարդասիրական գործունեության և փախստականների մասին օրենք): Մարդու իրավունքների և մարդասիրական գործունեության դերակատարները պետք է անկողմնակալ ձևով իրականացնեն այս գործողությունները և չպետք է հիմնվեն ռասայի, ազգության, էթնիկ կամ կրոնական պատկանելության, լեզվի կամ սեռի վրա (Կարմիր խաչի միջազգային կոմիտե: CRC (1999)

Պատրաստվածություն

Կառավարությունների, մասնագիտական օգնություն ցուցաբերող և վերականգնողական գործունեություն ծավալող կազմակերպությունների, համայնքների և անհատների գիտելիքներ և կարողություններ՝ հավանական, անխուսափելի կամ առկա վտանգները կամ իրավիճակներն արդյունավետ ձևով կանխատեսելու, դրանց արձագանքելու և վերականգնվելու համար (UNISDR, 2009): Ծանոթագրություն. Նախապատրաստական գործողություններն իրականացվում են աղետների ռիսկի կառավարման համատեքստում և ուղղված են այնպիսի կարողությունների ստեղծմանը, որոնք անհրաժեշտ են տարաբնույթ արտակարգ իրավիճակների կառավարման և կանոնակարգված ձևով օգնության փուլից դեպի կայուն վերականգնման փուլ անցնելու համար: Նախապատրաստման գործընթացը հիմնված է աղետների ռիսկերի ողջամիտ վերլուծության և վաղ ազդարարման համակարգերի հետ կապի վրա և ընդգրկում է այնպիսի գործողություններ, ինչպիսիք են արտակարգ իրավիճակների գործողությունների պլանի մշակումը, սարքավորումների և պաշարների պահեստավորումը, համակարգման նպատակով համաձայնեցումների ձեռքբերումը համակարգման ու տարհանման վերաբերյալ, ինչպես նաև հանրությանն ուղղված տեղեկատվությունը և հարակից վերապատրաստումներն ու դաշտային վարժանքները:

Ջերմային գնդեթ

Քաղաքային տարածքի գոտի, որն ի համեմատ շրջապատող տարածքի ջերմաստիճանի բնութագրվում է ավելի բարձր օդի ջերմաստիճանով՝ արևի էներգիայի կլանման պատճառով այնպիսի կյուրթերի շնորհիվ, ինչպիսին ասֆալտն է: IPCC (2000)

Ջերմոցային գազեր

Բնական և մարդու գործունեության արդյունքում առաջացած մթնոլորտի գազային բաղադրիչներ, որոնք կլանում և տարբեր երկարության ալիքներ են արձակում երկրագնդի մակերևույթի, մթնոլորտի և ամպերի ինֆրակարմիր ռադիացիայի սպեկտրում: (IPCC 2000): Ծանոթագրություն. Հիմնական ջերմոցային գազերն են ջրի գորորոշիները, ածխածնի երկօքսիդը, ազոտի օքսիդը, մեթանը և օզոնը:

Ջրի սակավություն

Երկրում ջուրը սակավ է, եթե քաղցրահամ ջրերի մատակարարումն՝ ի համեմատ ջրառի, հանդես է գալիս որպես զարգացումը սահմանափակող կարևոր գործոն: Եթե ջրառը գերազանցում է վերականգնվող ջրամատակարարման 20 տոկոսը, ապա սա համարվում է ջրի սակավության ցուցանիշ: IPCC (2000)

Ռիսկ

Իրադարձության հավանականության և նրա բացասական ազդեցությունների համակցում: UNISDR (2009)

«SMART» ցուցանիշներ

Ցուցանիշ, որը հստակ է, չափելի և հասանելի ծախսարդյունավետ եղանակով, համահունչ է ծրագրին և հասանելի է ժամանակի, առումով (Եվրախորհուրդ):

Սթրեսային իրավիճակ

Ժամանակի ընթացքում տեղի ունեցող բացասական ճնշում, որը սահմանափակում է անհատի, տնային տնտեսության, բնակչության խմբի, միջոցների կամ համակարգի կարողություններն իրենց հնարավորություններն ամբողջությամբ իրականացնելու համար, օրինակ, սեզոնայնության փոփոխություն, տեղումների անկանոն դրսևորումներ, ծովի մակարդակի բարձրացում, բնակչության աճ և (կամ) այլ բացասական երկարատև միտումներ:

Սննդի անվտանգության բացակայություն

Գոյություն ունեցող իրավիճակ, երբ մարդկանց համար հասանելի չէ բավարար քանակով և սննդարար պարենի առկայություն՝ բնականոն աճի, զարգացման և ակտիվ ու առողջ կյանք վարելու համար: Նման իրավիճակ կարող է ստեղծվել սննդի անհասանելիության, գնման

անբավարար կարողության, անհամաչափ բաշխման կամ տնային տնտեսություններում պարենի անբավարար օգտագործման պատճառով: Սննդի անվտանգության բացակայությունը կարող է պարբերական բնույթ կրել, լինել սեզոնային կամ անցումային: IPCC (2000)

Վաղ ազդարարման համակարգ

Կարողությունների շարք, որն անհրաժեշտ է նախագուշացնող տեղեկատվության մշակման և ճիշտ ժամանակին ու նպատակային տարածման համար, ինչը հնարավորություն կտա վտանգի ենթակա անհատներին, համայնքներին և կազմակերպություններին նախապատրաստվել ու գործել համապատասխանաբար և բավարար ժամանակի մեջ՝ վնասի և կորստի հավանականությունը նվազեցնելու համար: (UNISDR, 2009)

Ծանոթագրություն. Այս սահմանումը ներառում է մի շարք գործոններ, որոնք անհրաժեշտ են տազնապետին արդյունավետ արձագանքելու համար: Մարդկանց ուղղված վաղ ազդարարման համակարգը պետք է անպայմանորեն ներառի չորս հիմնական տարրեր՝ տվյալներ և գիտելիքներ, ռիսկերի իմացություն, վտանգների մշտադիտարկում, վերլուծություն և կանխատեսում, տազնապի և զգուշացումների ազդարարում կամ տարածում և տազնապետին արձագանքելու տեղական կարողություններ:

Վտանգ

Վտանգավոր երևույթ, իրադարձություն (օրինակ՝ ջրիեղել, ցիկլոն, երկրաշարժ), մարդկային գործունեություն (օրինակ՝ քաղաքացիական հակամարտություն) կամ իրավիճակ, որը կարող է հանգեցնել կյանքի կորստի, վնասվածքի կամ այլ առողջական խնդիրների, ունեցվածքի վնասի, կենսապահովման միջոցների և ծառայությունների կորստի, սոցիալական և տնտեսական խաթարումների կամ բնապահպանական վնասների: Իրենց բնույթով և ազդեցությամբ վտանգները կարող են լինել տեղի ունեցող առանձին, կրկնվող կամ միավորված: Յուրաքանչյուր վտանգ բնութագրվում է տեղանքով, ուժգնությամբ, հաճախականությամբ և հավանականությամբ: IPCC (2000)

Տեղեկատվական, կրթական և հաղորդակցության (IEC) նյութեր

IEC նյութերի նպատակն է օժանդակել թիրախային համայնքներում իրագեկման մակարդակի բարձրացման, գիտելիքների ձեռքբերման, վարքի փոփոխության գործընթացներին: Այդ նյութերի շարքում են տպագիր նյութերը (օրինակ՝ գրքույկներ, պաստառներ, հայտարարություններ), զանգվածային լրատվության միջոցները (հեռուստատեսություն, ռադիո, տպագիր մամուլ), նպատակն ընդգծող գովազդային առարկաները (օրինակ՝ վերնաշապիկներ, բանալիներ, գլխարկներ) և համայնքային միջոցառումները: Նյութերը պետք է լինեն

մշակութային առումով զգայուն և ընդունելի թիրախային բնակչության համար, պետք է ակտիվորեն ընդգրկեն բնակչությանը զարգացմանն ուղղված իրենց աշխատանքներում:

Ցնցում

Բնական կամ մարդածին վտանգ, որը կարող է հանգեցնել կյանքի կորստի ու վնասվածքների կամ մարդու առողջության վրա այլ ազդեցություններ գործել, վնաս հասցնել ունեցվածքին, հանգեցնել կենսապահովման միջոցների և ծառայությունների կորստի, սոցիալական և տնտեսական խաթարումների և բնապահպանական վնասների: Դրանց թվում են, օրինակ, երաշտը, ջրհեղեղը, երկրաշարժը, հրաբխային ժայթքումները, համաճարակները, փոթորիկները, ուժեղ տեղումները, քիմիական նյութերի արտահոսքը, հակամարտությունները⁶ և այլն: (Տես նաև «վտանգ» տերմինը):

Փոթորկաբեր ալիքներ

Առանձին տարածքում ծովի մակարդակի բարձրացում՝ ծայրահեղ եղանակային պայմանների արդյունքում: IPCC (2000)

Քաղաքացիական հասարակություն

Ոչ պետական և շահույթ չհետապնդող կազմակերպություններ, որոնք առկա են հասարակական կյանքում, արտահայտում են իրենց անդամների և այլոց հետաքրքրություններն ու արժեքները, հիմնված են էթիկական, մշակութային, գիտական, կրոնական կամ մարդասիրական նկատառումների վրա: Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ են հանդիսանում կազմակերպությունների մի մեծ շարք, ինչպիսիք են համայնքային խմբերը, ոչ պետական կազմակերպությունները (ՂԿ-ները), աշխատանքային միությունները, տեղաբնիկ խմբերը, բարեգործական կազմակերպությունները, կրոնական կազմակերպությունները, մասնագիտական ընկերակցություններն ու հիմնադրամները: WB

Բառարանի հղումներ

- Boesen, J.K. and Martin, T. (2007) *Applying a Rights-based Approach: An Inspirational Guide for Civil Society*. Copenhagen, Denmark: Danish Institute for Human Rights.
- Burton, I. (1998) 'Adapting to Climate Change in the Context of National Economic Planning and Development', in Veit, P. (ed.) *Africa's Valuable Assets: A Reader in Natural Resource Management*. Washington, DC, USA: World Resources Institute.
- European Commission: European Network for Rural Development (n.d.) 'FAQs > Indicators' for Rural Development Programs. Brussels, Belgium. Available at: <http://enrd.ec.europa.eu/evaluation/faq/en/indicators.cfm>
- FAO (n.d.) 'Knowledge Attitude and Practice (KAP) Survey' [online] Available at: http://www.fao.org/Participation/ft_more.jsp?ID=8468
- TheFreeDictionary.com (n.d.). 'Conflict'. Huntingdon Valley, PA, USA: Farlex Inc. Available at: www.thefreedictionary.com/conflict
- Hughes, D. M. (2001) 'Cadastral Politics: The Making of Community-Based Resource Management in Zimbabwe and Mozambique', *Development and Change*, Vol. 32, Issue 4, pp.741–768. The Hague, The Netherlands: International Institute of Social Studies.
- ICRC (1999) *ICRC Ecogia Protection Seminars (1996-2000)*. Geneva, Switzerland.
- IPCC (2000) 'Glossary of Terms used in the IPCC Fourth Assessment Report WGII'. Geneva, Switzerland. Available at: www.ipcc.ch/publications_and_data/publications_and_data_glossary.shtml
- IPCC (2001) *Climate Change 2001. Working Group III: Mitigation*. Geneva, Switzerland. Available at: www.grida.no/publications/other/ipcc_tar/
- IPCC (2007) *Climate Change 2007. Working Group I: The Physical Science Basis*. Geneva, Switzerland. Available at: www.ipcc.ch/publications_and_data/ar4/wg1/en/contents.html
- IUCN (2009) *Ecosystem-based Adaptation: A natural response to climate change. (Convention on Biological Diversity, Chapter 2)*. Gland, Switzerland.
- Maxwell, D., Watkins, B., Wheeler, R., and Collins, G. (2003) *The Coping Strategies Index: Field Method Manual, CARE and World Food Programme*. Available at: http://www.fao.org/crisisandhunger/root/pdf/cop_strat.pdf
- Millennium Ecosystem Assessment (2005) *Ecosystems and Human Wellbeing: Synthesis*. Washington, DC: Island Press. Available at: www.maweb.org/documents/document.356.aspx.pdf
- Oxfam GB (n.d.) *Rough Guide to Monitoring and Evaluation*. Oxford, UK.
- Oxfam GB (2010) *Gender, Disaster Risk Reduction, and Climate Change Adaptation: A Learning Companion*. Oxfam Disaster Risk Reduction and Climate Change Adaptation-Resources. Oxford, UK.
- Oxford English Dictionary 'Agriculture' [online] Available at: <http://oxforddictionaries.com/definition/english/agriculture>
- Pasteur, K. (2011) *From Vulnerability to Resilience: A framework for analysis and action to build community resilience*. Rugby, UK: Practical Action Publishing.
- Pettengell, C. (2010) *Climate Change Adaptation: Enabling people living in poverty to adapt*. Oxford, UK: Oxfam International.
- Project Management Institute (1996) *A Guide to the Project Management Body of Knowledge*. Newton Square, Pennsylvania, USA.
- Save the Children International (2011) *Reducing Risks, Saving Lives: Save the Children's approach to Disaster Risk Reduction and Climate Change Adaptation*. London, UK.
- The Sphere Handbook: *Humanitarian Charter and Minimum Standards in Humanitarian*

- Response, Rugby, UK: Practical Action Publishing.
- UNDP (1997) Governance for sustainable human development. Division Bureau for Policy and Program Support. New York, USA.
- UNISDR (n.d.) Briefing Note 03, Strengthening climate change adaptation through effective disaster risk reduction.
- UNISDR (2009) Terminology on Disaster Risk Reduction. Geneva, Switzerland. Available at: www.unisdr.org/files/7817_UNISDRTerminologyEnglish.pdf
- UNOCHA (2011) OCHA and slow-onset emergencies. Occasional Policy Briefing Series No. 6. Available at: http://ochanet.unocha.org/p/Documents/OCHA_OPB_SlowOnsetEmergencies190411.pdf
- University of Michigan (2011) 'Global deforestation'. Ann Arbor, Michigan, USA. Available at: www.globalchange.umich.edu/globalchange2/current/lectures/deforest/deforest.html
- UN Women (2011) Strategy for Promoting Gender Equality, New York. Available at: <http://www.un.org/womenwatch/osagi/gendermainstreaming.htm>
- Wehr, P. (1975) 'Conflict Emergence' in Online Training Program on Intractable Conflict. Boulder, Colorado, USA: Conflict Research Consortium, University of Colorado. Available at: www.colorado.edu/conflict/peace/problem/cemerge.htm
- WFP (2000) Contingency Planning Guidelines. Rome, Italy. Available at: www.fews.net/docs/special/1000284.pdf
- World Bank (n.d.) 'Climate Change' [online] Available at: <http://climatechange.worldbank.org/climatechange/content/note-6-identification-and-analysis-possible-adaptation-options>
- World Resources Institute (2009) Ecosystem Services Indicators Database. Washington, DC, USA. Available at: www.esindicators.org/glossary

Հապավումներ և կրճատումներ

ACCRA	<p>Africa Climate Change Resilience Alliance (Made up of Oxfam GB, Overseas Development Institute, Save the Children, CARE International, and WorldVision International. Funded by DFID and CDKN)</p> <p>Աֆրիկայի կլիմայի փոփոխություններին դիմակայելու դաշինք (ընդգրկված են՝ Oxfam GB, Overseas Development Institute, Save the Children, CARE International և World Vision International կազմակերպությունները: Ֆինասավորվում է DFID-ի և CDKN կազմակերպությունների կողմից:</p>
ADP	<p>Area Development Program</p> <p>Տարածքի զարգացման ծրագիր</p>
ALNAP	<p>Active Learning Network for Accountability and Performance</p> <p>Հաշվետվողականության և կատարողականության ակտիվ ուսուցման ցանց</p>
BMZ	<p>[Germany] Federal Ministry for Economic Cooperation and Development</p> <p>Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարություն</p>
BNPB	<p>National Board for Disaster Management, Indonesia</p> <p>Աղետների կառավարման ազգային խորհուրդ, Ինդոնեզիա</p>
CAIT	<p>Climate Analysis Indicators Tool</p> <p>Կլիմայի վերլուծության ցուցանիշների գործիք</p>
CAN-I	<p>Climate Action Network International</p> <p>Կլիմայի հետ կապված հարցերի միջազգային ցանց</p>
CBA	<p>Community-based Adaptation</p> <p>Համայնքահեն հարմարվողականություն</p>
CBDRM	<p>Community-based disaster risk management</p> <p>Աղետների ռիսկի համայնքահեն կառավարում</p>

CCA	Climate change adaptation Կլիմայի փոփոխության հարմարվողականություն
CDA	Collaborative for Development Action Չարգացման համատեղ գործունեություն
CDKN	Climate and Development Knowledge Network Կլիմայի և գիտելիքների զարգացման ցանց
CDM	Clean Development Mechanism Մաքուր զարգացման մեխանիզմ
CEDRA	Climate Change and Environmental Degradation Risk and Adaptation Assessment Կլիմայի փոփոխության և շրջակա միջավայրի դեգրադացիայի ռիսկի ու հարմարվողականության գնահատում
COVACA	Community Owned Vulnerability and Capacity Assessment Համայնքների խոցելիության և կարողությունների գնահատում
CRC	(UN) Convention on the Rights of the Child ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների մասին կոնվենցիա
CRiSTAL	Community-based Risk Screening Tool - Adaptations and Livelihoods Համայնքապահեստ ռիսկերի ուսումնասիրության գործիք՝ կենսապահովման միջոցների և հարմարվողականության սահմանման համար
CRS	Catholic Relief Services Կաթոլիկ օգնության ծառայություն
C-SAFE	Consortium for Southern Africa Food Emergency Հարավային Աֆրիկայի երկրների պարենի անվտանգության հարցերով կոնսորցիում
CSI	Coping Strategies Index Հաղթահարման ռազմավարությունների ցուցիչ

CSO	Civil society organization Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
CVCA	Climate Vulnerability and Capacity Analysis Կլիմայի փոփոխության նկատմամբ խոցելիության և կարողությունների վերլուծություն
DFID	(United Kingdom) Department for International Development (Միացյալ Թագավորություն) Միջազգային զարգացման դեպարտամենտ
DMC	Disaster management committee Աղետների կառավարման հանձնախումբ
DRR	Disaster risk reduction Աղետների ռիսկի նվազեցում
DRRP	Disaster risk reduction plan Աղետների ռիսկի նվազեցման պլան
ECB	Emergency Capacity Building Project Արտակարգ իրավիճակներում կարողությունների զարգացման ծրագիր
ECHO	European Commission Directorate General for Humanitarian Aid and Civil Protection Եվրահանձնաժողովի մարդասիրական օգնության և քաղաքացիական պաշտպանության գլխավոր տնօրինություն
EMI	Earthquakes and Megacities Initiative «Երկրաշարժեր և մեգաքաղաքներ» նախաձեռնություն
EMMA	Emergency Market Mapping Analysis/Assessment Արտակարգ իրավիճակներում շուկայական համակարգի վերլուծություն/ գնահատում
ENF	Earth Net Foundation Օրգանական հողագործության հիմնադրամ

ENSO	El Nino Southern Oscillation Էլ-Նինոյի հարավային տատանման երևույթ
FAO	Food and Agriculture Organization of the United Nations ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն
FEG	The Food Economy Group Պարենի խնայողության հարցերով զբաղվող խումբ
FMNR	Farmer Managed Natural Regeneration Բնական վերարտադրությունները ֆերմերային տնտեսությունների կողմից
FUNDEPCO	Fundacion para el Desarrollo Participativo Comunitario Համատեղ զարգացման հիմնադրամ
GCCA	Global Campaign for Climate Action Կլիմայի փոփոխությունները կանխելու գլոբալ քարոզարշավ
GGCA	Global Gender and Climate Alliance Գենդերային և կլիմայի փոփոխության հարցերով գլոբալ դաշինք
GHG	Greenhouse gases Ջերմոցային գազեր
GIZ	Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit Գերմանիայի միջազգային համագործակցության միություն
GNDR	Global Network of Civil Society Organisations for Disaster Reduction Քաղաքացիական հասարակության կազմակերպություն- ների աղետների նվազեցման գլոբալ ցանց
GPF	Governance Programming Framework Կառավարման գործընթացների պլանավորման շրջանակ

HEA	Household Economy Approach Տնային տնտեսության պլանավորման գործնական ուղեցույց
HFA	Hyogo Framework for Action Յյոգոյի գործողությունների ծրագիր
HLSA	Household Livelihood Security Analysis Բնակչության կենսապահովման անվտանգության վերլուծություն
HVCA	Hazard vulnerability capacity assessment Վտանգների հանդեպ խոցելիության և կարողությունների գնահատում
IDP	Internally displaced persons Ներքին տեղահանված անձինք
IDS	Institute of Development Studies Չարգացման ուսումնասիրությունների ինստիտուտ
IEC	Information, Education and Communication materials Տեղեկատվական, կրթական և հաղորդակցության նյութեր
IFPRI	International Food Policy Research Institute Պարենային քաղաքականության ուսումնասիրության միջազգային ինստիտուտ
IFRC	International Federation of Red Cross and Red Crescent Societies Կարմիր խաչի և կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիա
IIEP	International Institute for Educational Policy Կրթական քաղաքականության միջազգային ինստիտուտ
IISD	International Institute for Sustainable Development Կայուն զարգացման միջազգային ինստիտուտ
ILO	International Labour Organization Աշխատանքի միջազգային կազմակերպություն

INEE	Inter-Agency Network for Education in Emergencies Արտակարգ իրավիճակներում կրթության միջգերատեսչական ցանց
IPC	Integrated Food Security Phase Classification Սննդի անվտանգության փուլերի համալիր դասակարգում
IPCC	Intergovernmental Panel on Climate Change Կլիմայի փոփոխության միջկառավարական հանձնաժողով
IRI	International Research Institute for Climate and Society Կլիմայի և հասարակական հետազոտությունների միջազգային ինստիտուտ
IUCN	The World Conservation Union Բնության և բնական ռեսուրսների պահպանության միջազգային միություն
IWA	International Water Association Ջրի միջազգային ընկերակցություն
IZA	Institute for the Study of Labor Աշխատանքի ուսումնասիրության ինստիտուտ
KAP	Knowledge, Attitudes and Practices survey Գիտելիքների, դիրքորոշման և գործելակերպի ուսումնասիրություն
LAC	Local Adaptive Capacity framework Տեղերում հարմարվողական կարողությունների շրջանակ
LGSAT	Local Government Self-Assessment Tool Տեղական իշխանությունների ինքնազնահատման գործիք
LULUCF	Land Use, Land Use Change and Forestry Հողօգտաործում, հողօգտագործման փոփոխություն և անտառային տնտեսություն
MEA	Millennium Ecosystem Assessment Հազարամյակի էկոհամակարգի գնահատում

MEL	Monitoring, Evaluation and Learning Մշտադիտարկում, գնահատում և ուսուցում
MIFIRA	Market Information and Food Insecurity Response Analysis Շուկայի վերաբերյալ տեղեկատվության և սննդի անվտանգության բացակայության ուսումնասիրություն
MOSAICC	Modeling System for the Agricultural Impacts of Climate Change Գյուղատնտեսության վրա կլիմայի փոփոխության ազդեցության մոդելավորման համակարգ
MPBI	Indonesian Society for Disaster Management Ինդոնեզիայի աղետների կառավարման ընկերություն
NAC	National Adaptive Capacity framework Հարմարվողականության ազգային կարողությունների շրջանակ
NAPAs	National Adaptation Programmes of Action Հարմարվողականության գործողությունների ազգային ծրագրեր
NRM	Natural Resource Management Բնական ռեսուրսների կառավարում
OFDA	Office of US Foreign Disaster Assistance ԱՄՆ-ի Արտասահմանում տեղի ունեցած աղետների զոհերին ցուցաբերվող օգնության գրասենյակ
ORP	Oral rehydration point Դեհիդրատացիայի իրականացման կետ
ORS	Oral rehydration solution Դեհիդրատացիայի համար նախատեսված խմելու հեղուկ
PADR	Participatory Assessment of Disaster Risk Աղետների ռիսկի մասնակցային գնահատում

PCM	Program Cycle Management Ծրագրի փուլային կառավարում
PCVA	Participatory Capacity and Vulnerability Analysis Կարողությունների և խոցելիության մասնակցային վերլուծություն
PDNA	Post-Disaster Needs Assessment Հետաղետային կարիքների գնահատում
PDNA/RF	Post-Disaster Needs Assessment/Recovery Framework Հետաղետային կարիքների գնահատում ու վերականգնում. փաստերի արագ հայտնաբերման շրջանակ
PECCN	Poverty, Environment and Climate Change Network Աղքատության, բնապահպանության և կլիմայի փոփոխության ցանց
PEDRR	Partnership for Environment and Disaster Risk Reduction Բնապահպանության և աղետների ռիսկի նվազեցման գործընկերություն
PMERL	Participatory Monitoring, Evaluation, Reflection and Learning Մասնակցային մշտադիտարկում, գնահատում, անդրադարձ և ուսուցում
RHVP	Regional Hunger and Vulnerability Programme Սովի և խոցելիության տարածաշրջանային ծրագիր
SDC	Swiss Agency for Development and Cooperation Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալություն
SEI	Stockholm Environment Institute Ստոկհոլմի բնապահպանության ինստիտուտ
SIM	Serving in Mission Ծառայել առաքելությանը

SLA	Sustainable Livelihoods Approach Կայուն կենսապահովման մեթոդ
SMART	Specific, Measurable, Achievable, Relevant and Timely Յստակ, չափելի, հասանելի, համապատասխան և ժամանակին
TNA	Training Needs Analysis Ուսուցման գործընթացի կարիքների վերլուծություն
UN	United Nations Միավորված Ազգերի կազմակերպություն՝ ՄԱԿ
UNDP	United Nations Development Programme ՄԱԿ-ի զարգացման ծրագիր
UNEP	United Nations Environment Programme ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագիր
UNESCAP	United Nations Economic and Social Commission for Asia and the Pacific ՄԱԿ-ի Ասիայի և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հարցերի հանձնաժողով
UNESCO	United Nations Educational, Scientific and Culrural Organization ՄԱԿ-ի Կրթության, գիտության և մշակույթի կազմակերպություն
UNFCCC	United Nations Framework Convention on Climate Change ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա
UNICEF	United Nations Children’s Fund ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ
UNISDR	United Nations International Strategy for Disaster Reduction ՄԱԿ-ի Աղետների ռիսկի նվազեցման միջազգային ռազմավարություն

- UNOCHA** United Nations Office for the Coordination of Humanitarian Affairs
ՄԱԿ-ի Մարդասիրական գործերի համակարգման գրասենյակ
- USAID** United States Agency for International Development
ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն
- VCA** Vulnerability and Capacity Assessment
Խոցելիության և կարողությունների գնահատում
- VS&LA** Village Savings and Loans Associations
Գյուղական բնակավայրերում խնայողությունների և վարկերի տրամադրման ընկերակցություններ
- WASH** Water, Sanitation and Hygiene
Ջրամատակարարում, ջրահեռացում և հիգիենա
- WEDO** Women’s Environment and Development Organization
Կանանց բնապահպանական և զարգացման հարցերի կազմակերպություն
- WHO** World Health Organization
Առողջապահության համաշխարհային կազմակերպություն
- WRI** World Resources Institute
Համաշխարհային ռեսուրսների հետազոտության ինստիտուտ

Աջակցող կազմակերպություններ

Դիմակայելու նպատակով. Աղետների ռիսկերի նվազեցման և կլիմայի փոփոխություններին հարմարվելու ուղեցույցը մշակվել է 2010թ-ի նոյեմբերին մեկնարկած բազմաթիվ քննարկումների արդյունքում՝ աշխատանքային հանդիպումների, դաշտային աշխատանքների, էլեկտրոնային հաղորդագրությունների և հեռախոսային քննարկումների միջոցով և հիմնված է դաշտային աշխատակազմի, տեխնիկական խորհրդատուների, Արտակարգ իրավիճակներում կարողությունների ստեղծման ծրագրի վեց մասնակից կազմակերպությունների աշխատակազմի ներդրումների վրա: Ուղեցույցի ստեղծմանը նպաստել են նաև Աղետների ռիսկերի նվազեցման միջազգային ցանցի, ՄԱԿ-ի աղետների ռիսկերի նվազեցման միջազգային ռազմավարության (UNISDR), Ֆայնշտայնի միջազգային կենտրոնի, Վայրի բնության պաշտպանության միջազգային հիմնադրամի, Գեներային հարցերի և աղետների ազդեցությունների վերացման ցանցի, Մարդասիրական օգնության ապագայի ծրագրերի (HFP), «Plan International», «Christian Aid», Լոնդոնի թագավորական քոլեջի, Ամերիկայի կարմիր խաչի և այլ կազմակերպությունների աշխատակիցներն իրենց մասնագիտական խորհուրդներով:

Արտակարգ իրավիճակներում կարողությունների ստեղծման ծրագիրն (ECB) իր խորին շնորհակալությունն է հայտնում այն կազմակերպություններին և անհատներին, որոնք աջակցել են իրենց աշխատանքներին:

Ծրագիրն իրականացնող կազմակերպություն

Կաթոլիկ եկեղեցու օգնության ծառայություն՝ «Catholic Relief Services» (CRS)

Ծրագրի աշխատակազմ

Ծրագրի ղեկավար՝ Էմի Զիլբոու

Հրատարկման և ծրագրի աշխատանքների համակարգող՝ Ան Կաստելթոն
Ծրագրի իրականացմանն օժանդակող անձինք՝ Անջելա Օուեն, Դավիդ Զոբոլդեյ, Դրիս Մուման, Գաբրիել Ֆոբս, ԼիԱն Զագեր, Զեյթ Լավ, Անդրեաս Ստյուրտ

Արտակարգ իրավիճակներում կարողությունների ստեղծման ծրագրի ԱՌՆ խորհրդատվական հանձնախումբ

Էմի Զիլբոու՝ «CRS», Ան Կաստելթոն՝ «Mercy Corps», Էրիկ Ռոթեր՝ «Care Netherlands», Յան Ռոջերս և Մալկա Օլդեր՝ Older «Save the Children», Իզաբել Բրեմոդ՝ «Oxfam» ՄԹ և Ռիչարդ Ռամսեյ՝ «World Vision» կազմակերպություններ:

Խմբագրական խորհուրդ

Ռիչարդ Էվբանկ, Նիկ Յոլ, Ջիմ Ջարվի, Մարկուս Օբսլեյ, Ռոդ Սևայդեր, Պետեր Ուոլկեր, Բեն Վիսներ, Էմմա Վիսման:

ECB-ի ծրագրի կոնսորցիումի ներկայացուցիչներ

Ադե Դարմավանսիահ, Ադի Սուրիադինի, Ալֆոնսո Ռուիբալ, Աշլի Յագես Բիշոփ, Բալարամ Չանդրա Թապադեր, Բայջոու Կրիշնա Նաթ, Յարուն Ռաշիդ, Յելմի Յամիդ, Իդրիսիս Լեկո, Ինգրիդ Տերազաս, Ջակլին Ռիբերո, Ջաֆեր Մուտիսյա Մուլի, Լուիս Ալբերտո Սալամանչա Մագուելու, Մարթա Կիհարա, Մասիմո Նիկոլետտի Աթիմարի, Օմար Սարանչո, Օյոկո Օմոնդո Յուլիուս, Ռոջեր Զուլիրոզա, Շամինա Ախթար, Վահու Վիդայանտո, Չահայրու Մամանե Սանի:

Խորհրդատուներ

Յեդինակներ՝ Մարիլիզ Թորնբուլ և Շարլոտ Լ. Ստերեթ
 Խմբագիր՝ Սոլվեյգ Մարինա Բանգ
 Թարգմանիչներ՝ Սեգա Նոյե (ֆրանսերեն), Պատրիցիա Ռամոս (իսպաներեն)
 Թարգմանության խմբագրիչներ՝ Էլգա Բոֆիլ Պոլսկի (ֆրանսերեն), Ռոդոլֆո Վալդեզ (իսպաներեն)

Ծրագրին օժանդակող այլ անձինք

Քրիս Անդերսոն, Սոֆի Բլաքբորն, Քրիստոֆեր Բրաուն, Նիաշա Չիշակվե, Կարլ Դիերին, Դավիդ Ռ. Դիշման, Դավիդ Դոդման, Գիլան Դան, Վին Ֆլատեն, Ռաբել Յուզտոն, Նիկ Այլանդ, Լուիս Ալբերտո Սալամանկա Մագուելու, Սուսան Ռոմանսկի, Կեմի Սիսինք, Անիտա Սվորափ, Սուսաննա Տկալեց, Էդուարդ Թուրվիլ:

Աշխատանքային հանդիպումներին և դաշտային աշխատանքներին աջակցող աշխատակազմ

Նենսի Վու, Վանեսա Ուիրթ, Վարինյուֆա Սանգկաու, ինչպես նաև «CRS» Յնդկաստան, «CARE» Մադագասկար, «Mercy Corps» Նեպալ, «Mercy Corps» Տաջիկստան և «World Vision» Նիկարագուա կազմակերպությունների աշխատակիցներ:

Արտակարգ իրավիճակներում կարողությունների ստեղծման ծրագիր



Այս գիրքը, որպես հիմնական միջոց, մշակվել է Արտակարգ իրավիճակներում կարողությունների ստեղծման ծրագրի (ECB) շրջանակներում՝ հետևյալ վեց կազմակերպությունների համատեղ ջանքերով. «CARE International», «Catholic Relief Services», «Mercy Corps», «Oxfam», «Save the Children» և «World Vision International»: Այս կազմակերպությունների հիմնական խնդիրը, գործընկերների հետ համագործակցելով, համատեղ նախաձեռնությունների մշակումն է՝ տեղական աշխատակազմի զարգացման, աղետների ազդեցությունը կրած մարդկանց հաշվետվողականության, ազդեցությունների գնահատման և աղետների ռիսկերի նվազեցմանն ուղղված հարցերին անդրադառնալու համար:

«ECB» ծրագրի նպատակն է բարելավել մարդասիրական կազմակերպությունների աշխատանքի տեմպը, որակը և արդյունավետությունը՝ մարդկանց կյանքեր փրկելու, բարեկեցությունը բարելավելու և արտակարգ իրավիճակներում հայտնված մարդկանց իրավունքները պաշտպանելու համար: Այս նպատակին հասնելու համար «ECB» ծրագրի կազմակերպությունները ձգտում են բարձրացնել մարդասիրական և զարգացման կազմակերպությունների համագործակցության համակարգման մակարդակը և բարելավել կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի միջև հետևողական և համաձայնեցված գործողությունները:



EUROPEAN COMMISSION



Humanitarian Aid

«ECB» ծրագրի և այս գրքի ստեղծման համար միջոցներ են հատկացրել «Bill & Melinda Gates» հիմնադրամը, Եվրամիության մարդասիրական օգնության և բաղաբացիական պաշտպանության գլխավոր տնօրինությունը (ECHO) և ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (USAID) Արտասահմանում տեղի ունեցած աղետների զոհերին ցուցաբերվող օգնության գրասենյակը, որի համար մենք խորին շնորհակալություն ենք հայտնում: